

Հուլիսի Ակիզնան

Հոսանք



1976

A(47 325)

ԼԿ-38

ՆՈՒՊԱՐ ԱԿՏԵԱՆ

49



ՀՈՍԱՆԲՆ Ի ՎԱՐ

• ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ •



1976
Տպ. ՍԵՒԱՆ
ՊԵՂՐՈՒՔ

SEVAN Printing House
P. O. Box 6651
Beirut, Lebanon

437

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՄԱՐ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՄԱՐ ԿՈՄՍՏԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՆԵՐԱԾԱԿԱՆ

Ներածական կամ նախաբան գրելու անհրաժեշտութիւնը կը ծագի, երբ գրող մը պաշտպանութեանը պէտք ունի համբաւեալ գրիչի մը, առաջին օրէն ուշադրութիւն գրաւելու եւ ճանաչում երաշխաւորելու դիտաւորութեամբ:

Այս պարագային, ո՛չ ներածականին հեղինակը յաւակնութիւններ կը սնուցանէ եւ ոչ ալ ներկայացուած գրողը կարիքն ունի որեւէ պաշտպանութեան:

Ուրեմն, այստեղ ներկայացուածը վկայութիւն մըն է երիտասարդ այլ հասուն գրողի մը անձին ու գործին մասին. վկայութիւն՝ որուն մասին ո՛չ զիրքը պիտի խօսի եւ ոչ ալ զիրքէն դուրս որեւէ աղբիւր: Վկայութիւն՝ երկունքի մը մասին որ Նուպար Ակիշեան գրողինը եղաւ, եղափոխութեան երկար ու ինքնանուած ընթացքով մը:

Հաւանաբար այս գիրքը երբեք լոյս աշխարհ չգար, եթէ համակրալիր թելադրանք մը չխրախուսէր հեղինակը, իր ընտիր պատմուածքները ծածկի մը տակ ամփոփելով հրապարակ գալու: Պատճառը այդ վարանումին՝ ինքնավստահութեան պակասէն աւելի գիտակցութեան մը կշիռն էր: Արդարեւ, Նուպար Ակիշեանի համար փորձարկութիւններ եղան այս պատմուածքները, ներքին պահանջի մը արուեստագէտ պոռթկումները, որոնց վաւերականութեան մասին վկայութիւններու անհրաժեշտութիւն մը չզգաց գրողը, գերագոյն եւ անվերածելի արտայայտութիւն մը տուած ըլլալու յաւակնութեամբ: Այլ իր փորձադաշտէն ոստումով մը առաջ անցաւ ան, իր անցեալէն միայն իր փորձառութիւնը տանելով իր հետ, եւ ոչ անպայման փորձուածը:

Ակիշեան այսօր կը գտնուի աճման նոր հանգրոուանի մը վրայ, տարբեր տարածութիւններ (dimensions) պեղելու վճռակամութեամբ:

Բայց իր պատմուածքները կը հանդիսանան հոգեկան վաւերագրութեան հաստատագիրներ որոնք արուեստի առոյգ որոնման մը ծիրին մէջ կը սեւեռեն իրականութիւններ՝ ազգային-հոգեբանական մեր տազնապներէն: Անոնք մեզի կը բերեն կնիքը արուեստագէտ խռովքի մը՝ շահնուրեան դպրոցի տարբեր մէկ դասարանէն:

Դժուար է բնորոշել թէ շահնուրեան գրականութեան յաճախա՞նքը սեւեռեց Ակիշեանի ակնարկը պանդուխտ իրականութեան մը պեղումին, թէ այդ պեղումն

էր որ առաջնորդեց գրողը համապատասխան ոճով ու մթնոլորտով գրականութեան մը մկրտութեան...:

Թէ Ակիշեան շահնուրապաշտ մըն է՝ այդ կարելի է կռահել նման հանգոյցներէ խորժող ոճէն, աշխարհն ու ազգային կեանքը դիտելու իր կերպէն եւ իր նիւթը նուաճելու իւրայատուկ մերձեցումէն:

Սակայն ամէն գրող գեղարուեստական առաքելութիւն մը ունի եւ այդ առաքելութեան վախճանին՝ իր պատգամը: Եւ այս երկուքը քաղաքական հանգանակներէն չեն ծնիր: Արդարեւ, երբ Ակիշեան սկսաւ իր գրականութիւնը մշակել՝ Հահնուր արդէն քալած էր իր առաքելութեան ճամբան եւ պոռագած իր պատգամը՝ թիչ մը խրոխտ ձայնով:

Իսկ եթէ այսօր կը կարդացուի Ակիշեան հաճոյքով՝ Հահնուրին նմանելէ աւելի, անկէ տարբերելուն համար է առաւելաբար: Ան նոր պայմաններու մասին նոր խօսք մըն է որ կը բերէ: Հահնուր տուած էր առաջին ցնցումին «պատկերապարզ պատմութիւնը», առաջին գաղթին ողբերգութիւնը, մեկնակէտ ունենալով բնիկ հողի խաբիսխը: Պոլիսը (կամ երբեմն գաւառը) Ֆրանսայի կեանքին հակադրելով ան հանդէս եկաւ ցնցիչ պատկերներով: Իսկ Ակիշեանի պարագային կրկնազաղթն է մեկնակէտը, արդէն արմատախիլ բեկորներու երկրորդ տարագրումով: Մակարդակներու փոխանցման պատմութիւն մըն է իրը՝ տարբեր մթնոլորտով, եղանակով, դերակատարներով, բայց միեւնոյն եղերակաւնութեամբ:

Ինչ որ իւրայատուկ է Ակիշեանի գրականութեան՝ ազգային-ընկերային նոր իրականութեան մը պարզումն է՝ գրական ընդհանրացումով մը. ատիկա արմատախիլ հայուն (ու նաեւ՝ արմատախիլ մարդուն) հոգեբանական վերլուծումն է: Կրկնագաղթի հերոսը ծնունդն է իր բնակավայրին, որուն հետ սակայն իր կապը այն չէ՝ ինչ որ էր իր հայրերունը. ան նաեւ օտար է իր նոր շրջապատին: Իր կապը հայրենական հողին հետ աւելի վերացական բնոյթ մը ունի: Ան չունի իր ռուսներուն հողին անդաստաններուն բոյրը, ան կը տարբերի Համաստեղի եւ Նուրիկեանի հերոսներէն անով որ իր անցելապաշտութիւնը գուրկ է խարիսխէ մը: Ակիշեան եւս ընթերցողին կը թողու երեւակայել իր հերոսին ճապատագիրը իր հօրենական հողին վրայ, որուն հետ իր կապը առհաւական պզգում մըն է, աւելի քան վաւերական ապրում մը, ինչ որ էր առաջին գաղթի գոհերունը, որոնք մինչեւ գերեզման ապրեցան հայրենի գիւղին կարօտով եւ անոր աւերակներուն յիշատակներով: Այստեղ Ակիշեան կը պարզացնէ թաղարի մէջ աճած բոյսի մը նմանութիւնը, որ թէեւ սկզբունքով հողին ծնունդն է, սակայն լեռնային բնակութեան մը վայրի միջավայրը վայն ապրեցնելէ աւելի փճացնելու վտանգներով է յղի: Նոյնպէս, պատմուածքներուն հերոսը դժգոհ է իր նոր միջավայրէն, ընտելացման ցաւը ծանր կը կշռէ անոր հոգիին, բայց նաեւ, տխրութեամբ կը նայի իր ծննդավայրին, որ աւելի հիւրընկալ չի թուիր իր նոր միջավայրէն, եւ ան մատնուած է հոգեկան շուարումի մը («Քարլոս», «Բաժնուած տունը»):

Յետոյ նաեւ հոս կը ներկայացուի խուճապահար պանգուածը միւս սերունդին, որ մինչեւ այսօր չէ ունեցած իր սեփական նկարիչը: Համալսարաններու ապագայապաշտ խառնարանին մէջ շփոթահար տղաք, որոնք կեանքին կը նային անորոշ ու շուարուն ակնարկով, եւ առարկայապաշտ մթնոլորտի մը մէջ կորսուած, ներքին աղմուկներուն անձնատուր, կը փորձեն իմաստ մը գտնել իրենց ջանքերուն մէջ, առանց երբեք տարուելու վերացական իտէալներու սահմանափակ հոսանքէն: Համատարած պայքար մըն է այս, չափանիշներու որոնումով ալեծուփ գոյավիճակ մը, որուն արմատները այլեւս չունին հաստատ ու տոկուն հողը, երբեմնի մտայնութանց, ուր ամէն ինչ կ'արձակուէր գրեթէ միեւնոյն նպատակով: Կեանքն ու նպատակը այլեւս կորսնցուցած են իրենց նախկին շարունակականութիւնը, ուր կար դասաւորում՝ ներդաշնակ ու անշեղ: Հոս կայ շփոթութիւն մը, ներսդին աղմկող հարցաքննութիւն մը, առանց ելքի ու լուծումի: Արուեստական լաւատեսութիւնը կը բացակայի, երբ իրապաշտութիւնը կը փոխարինուի իրողութեամբ, եւ երբ հեղինակը իր կամքը չի պարտադրեր երկրաչափական նշանագրերով կեանք մը կառուցանելու: Ասիկա ձեւական նորութիւն մը ըլլալէ աւելի՝ իմացական-հոգեկան գիտակցութիւն մը կը թելադրէ, մեր օրերու եռեւեփուն շարժութեան համապատասխանող:

Ակիշեան նաեւ գրականութեան բերած է ամերիկահայ կեանքի յատկանշական ուրիշ մէկ երեւոյթը որ ցարդ չէ ունեցած իր երգիչը, ատիկա տարեց սերուն-

դին ողբերգութիւնն է, իր մաշած կարօտներով, ժամանակավրէպ բաղձանքներով, անկարեկիր մթնոլորտի մը ճակատագրապաշտ համակերպումով: Երէց սերունդը, հակառակ տասնամեակներու հսկայ անջրպետին, միշտ իր մէջ կ'ապրեցնէ իր հում հայրենաբաղձութիւնը՝ անկէ քաղելով իր կեանքին աւիշը, միւս կողմէ կը տեսնէ ընձիւղիլը իր վաւակներուն ու թոռներուն, որոնք բնախօսական հպարտութիւն մը կ'արթնցնեն իր մէջ, հպարտութիւն, որ դժուարութիւն ունի տարապուելու՝ լեզուական ու բարբերու պատուարներով տարանջատուած ըլլալուն: Ան կը տեսնէ ասիկա իր Փիթըրին ու Ճոնիին կեանքի յաջողութիւններով հպարտանալու խաբկանքին մէջ, ջանալով համակերպիլ կեանքի պայմաններուն ու մթնոլորտին, մթնոլորտ՝ որ կը մերժէ այս արմատախիլ հոգիները: Տարեց սերունդը կանգնած է իր իսկ հարապատ վաւակներուն դիմաց օտարականի նման, կարծէք երկու օտար ազգեր ըլլային անոնք իրարմէ բաժնուած դաժան սահմանագծումով մը:

«Արիւնոտ Տապակը» յատկապէս եւ կարգ մը ուրիշ պատմուածքներ դառն հիւմուրով մը կը սեւեռեն եղբրական այս կեանքը, հիւմուր՝ որ գրողին եւ ընթերցողին փրկութեան վերջին լաստը կը մնայ, խխուր իրականութեան մը դիմաց:

Այսօր առանց երգի կը մեննի այդ սերունդը: Կը մեննի ոսկի դագաղներուն մէջ, մինչ ան պիտի նախընտրէր իր հարապատ գիւղին կտոր մը անտաշ հողը իբրեւ դամբան: Անոր կեանքին արիւնոտ դրուագները

մեծ հայրիկի անհաւատալի պատմութիւններ են, եւ անոր համար կառչումը ազգային երազներուն, հապիւ հանդուրժելի ու տաղտկալի յանկարգ մըն է որ գերեզման պիտի մտնէ իրեն հետ, եւ անոր ընծայուելիք երկիւղածութիւնը՝ մեռելի մը յիշատակին սահմանուած անհասկնալի բաղձանքի մը յարգանքն է միայն:

Ակիշեանի գրականութեան այսպիսի բնորոշումը հաւանաբար ծխական բնոյթի մը ուրուագծումը թուի ըլլալ. սակայն բարեբախտաբար անոր գրիչը աւելի խորունկ մխրճում մը ունի հայուն հոգեբանութեան մէջ, հասնելով անոր մարդկային երակներուն. եւ այս՝ աւելի հաստատուն երաշխիք մըն է անոր գրականութեան, որ ի վերջոյ պիտի ապահովէ անոր տեւականացումն ու ձգտումը համապարփակին:

Ըսինք թէ երիտասարդ արձակագիրը գիտակից փորձարկութեան շրջանէ մը կ'անցնի դէպի գրականութեան ճշմարիտ տարերքին նոր ու ընդարձակ հնարաւորութիւնները: Ներկայ հաւաքածոն (գրուած՝ 1959—68 ժամանակաշրջանին) առաւելաբար կը յենի պատմուածքի անհնդական չափանիշներուն վրայ: Սակայն, չի սահմանափակեր ան գրողին կարելիութիւնները՝ աւելի արդիական հայեացքով, չափանիշներով ու մեթոտներով մօտենալու իր նիւթերուն, այսուհետեւ: Որովհետեւ ան գիտէ թէ արուեստը յաւիտենական հոլովոյթի մը շարունակումն է, թէ ան չունի սկիզբ եւ վերջ եւ թէ՛ անհնդութենէն ապահով կերպով հեռանալու եւ նոր ոլորտներուն մէջ խիզախելու միակ վստահելի միջոցը,

աւանդական թեքնիքին հաստատ իւրացումն է: Առանց
աւանդական արուեստի տիրապետման՝ արդիականու-
թեան ոլորտներէն ներս արշաւելը, աւանդականը ուրա-
նալու եւ վայն ծիծաղելի հռչակելու փորձութիւնը՝ ան-
խարխիս ֆումիստներու տրուած վարկ մըն է, որ դժուար
թէ կարենայ դիմանալ ժամանակին եւ արուեստի բարդ
խաղերուն:

Ակիշեան իր այս գործով կու տայ վկայութիւնը
աւանդական արուեստի իր ծանօթութեան, նովին բա-
նի վաստկելով իրաւունքը արդիական խիպախումնե-
րուն: Այս իրողութիւնը նաեւ կը վկայէ թէ ան դիւրին
(facile) արուեստի մը հաւատացողը չէ. այլ ունի եր-
կիւղածութեան հասնող պաշտամունք մը գրականու-
թեան հանդէպ — մենակեացի մը կուռ հաւատքն է որ
վինք կը կապէ գրականութեան. դժուար է գտնել սահ-
մանագիծը որ պատրոշէ իր կեանքը՝ իր գրականութե-
նէն — այս սահմանումը գուցէ ճշմարիտ ըլլայ որեւէ
գրողին համար, միակ տարբերութեամբ որ Ակիշեան իր
հերոսներուն հետ կ'ապրի միշտ, անոնց գրականու-
թեան յանձուելէն ալ վերջ — կը վերադառնայ անոնց
տեսութեան, կը կենակցի անոնց հետ, անոնց կեանքի
հոլովոյթին կը պատշաճեցնէ իր շունչին հեւքը եւ իր
տաղանդին վաւերական վարկը կը քաշէ անոնց ճակա-
տագրի լուծումէն:

Կարծէք թէ բոլոր ազգերու մէջ ալ պատմուածքի
վարպետները երկակենցաղ տաղանդով մը կը յատկա-
նշուին, Չոհրապ փաստաբան էր իր առօրեային մէջ ու

պետական գործիչ, Չելսով բժշկութիւնը կը նկատէր
իր օրինաւոր կիւնը, մինչ գրականութիւնը՝ իր հոմա-
նուտին: Թէեւ տաղանդի այս երկճիւղումը արժէքի վկա-
յութիւն մը նկատելը արդար պիտի չըլլար միշտ, սա-
կայն ան բնորոշ դեր մը ունի կարծէք գրողին հոգե-
կան կառոյցին մէջ. հաւանաբար պուզադիպութիւն մը
չէ որ Ակիշեան եւս օժտուած է տաղանդի միեւնոյն
իւրայատկութիւնով — արդարեւ, իր առօրեային մէջ
յարգուած գիտնական մըն է, մաթեմաթիք ճշգրտութիւն-
ներով սահմանուած միտքի կարգապահութեան մը անձ-
նատուր. այսպիսի կեանք մը յաճախ չոր ու անզգայ
կեանքի մը կ'առաջնորդէ շատերը, սակայն տարբեր ուղ-
ղութիւններու մղած է Ակիշեանը, որ իր գրա-
կանութեան մէջ անձնատուր է երապին, անորոշ տըրտ-
մութիւններով ուրուագծուող տրամադրութիւններու եւ
զգացական յորդ պեղումներու. երկու հակասական
տրամադրութիւններ կ'ապրին իր մէջ, ամբողջական
ներդաշնակութեամբ ու համադրութեամբ, առանց վնաս-
ելու իրարու, ընդհակառակն, պիրար հաւասարակշռե-
լով եւ պիրար ամբողջացնելով:

Ահաւասիկ գրող մը որ իր առաջին գիրքով կու գայ
իր խիղճը բանալ ընթերցողին դիմաց, անոր հետ կիսել
իր հոգւոյն փոթորկումները, արուեստագէտի իր ստեղ-
ծագործ տառապանքը եւ իր նուաճումներուն հըր-
ճուանքը:

Եթէ ընթերցողը իմանայ հեղինակին սիրտին վար-

կերը՝ արդէն յաջողած է այս վերջինը, իր առաջին իսկ հանգրուանին, վստահօրէն նուաճած իրաւունքը՝ գալիք հանգրուաններուն:

ԵՐՈՒԱՆԴ ԱԶԱՏԵԱՆ

Տիբրոյք

ՀՈՍԱՆՔՆ Ի ՎԱՐ

... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...
... անհատական կյանքի մասին ...


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆՍԻՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

484

ԵՐԻՈՐ գլխաւոր դուռէն ներս մտան ու պահակին յայտնեցին իրենց այցելութեան նպատակը, խոժոռադէմ ու յաղթակազմ ոստիկան մը զիրենք առաջնորդեց սպասման սրահը: ժամանակէն կանուխ հասած ըլլալուն, ստիպուած էին առնուազն ժամ մը սպասել հոն, մաշած տախտակամածով, աղտոտ ու պփղալի հիւրասրահին մէջ, ուր իրենցմէ առաջ ժամանողներ արդէն իսկ զբաւած էին հոս ու հոն նետուած տախտակէ աթոռները: Թէեւ լքազիրներու միջոցաւ որոշ զաղափար մը կազմած էին բանտերու մէջ տիրող անհանդուրժելի կացութեան մասին, բայց որեւէ ատեն չէին անդրադարձած թէ նկարագրուածը այսքան ճշգրիտ կրնար ըլլալ:

— Եթէ սպասման սրահը այսքան զզուելի ու ընկճող վիճակ մը ունի, ա՛լ կրնաս երեւակայել թէ ինչ լքուածութիւն կը տիրէ բանտերուն մէջ, ըսաւ երկտասարդներէն մէկը, ուշադրութիւնը կեդրոնացնելով աթոռներու շուրջ զուարճացող սեւամորթ երկու փոքրիկներու վրայ:

— Վերջապէս տսիկա բանտի միջավայր է, ի՞նչ



կ'ակնկալես, պատասխանեց միւսը, բոլորովին վերացած:

Բանտի միջավայր կամ ոչ, Սուրէն չէր կրնար զսպել ընդվզումը, զայրոյթը, եւ քանի ակնարկը կը պտըտցնէր սրահին մէջ հաւաքուած մեռելատիպ դէմքերու վրայ, այնքան աւելի կը փրփրէր, կ'անհանգրտանար եւ կ'ուզէր թոքերուն ամբողջ ուժովը աղաղակել, թէ՛ այո՛, ոճրադործներ, դողեր, հիւանդներ էին հոս արգելափակուածները, բայց ի վերջոյ, ամէն բանէ առաջ մարդ էին անոնք, մա՛րդ: Յետոյ նաեւ կ'աւելցնէր, թէ՛ ոճրադործները դատելէ, դատարարտելէ առաջ, ընկերութիւնը պէտք է նախ ինքզինքը քննէ, ինքզինքը դատաւարութեան քաշէ երկուսն հանելու համար յանցանքի իր բաժինը, իր մեղսակցութիւնը գործուած այս ոճիրներուն, որովհետեւ կ'ըսէր ան, երբ ընկերութիւն մը այսքան յանցապարտներ ունենայ, նեխած բան մը ըլլալու է այդ ընկերութեան մէջ, այո՛, փտած, ապականած, վատասերած բան մը, անպայման:

Սեւամորթ փոքրիկները դադրեցուցին իրենց խաղը եւ հիմա, կը փորձեն իրենց մօր զիրկը մաղցիլ: Անշարժ է կիներ, ճիշդ արձանի մը պէս: Ամէն կողմ, մարմիններ նետուած են աթոռներու վրայ, սակայն մեծ մասամբ հոն չեն անոնք, միայն քանի մը երիտասարդ կիներ կը խօսին՝ ցած ձայնով, բայց ժպիտ չկայ դէմքերու վրայ, որովհետեւ ցասումի զիծերն են որ կ'երկարին բերաններէն ու չեն կորուիր: Ոստիկաններ կը շրջին ամբոխին մէջ, եւ տիրապետող, անհասանելի բան մը կայ այդ կեցուածքին մէջ, զբացումէ, կեանքէ զուրկ շարժում մըն է անոնցը կարծես: Քոյմտի պատուհանէն արեւը դժուարութեամբ կը մտնէ ներս, մե՛ծ դժուարութեամբ, որովհետեւ ապակիները սեւցած են փոշիի ծանր կեղեւով, բայց

էրիզ մը կը կախուի այդ բարձունքէն եւ մթնոլորտին կու տայ եկեղեցիի տպաւորութիւն, դրեթէ նոյն խորհրդաւորութեամբ:

— Դեռ որքա՞ն պիտի սպասենք արդեօք, վայրկեանները չեն յառաջանար հոս, կարծես դար մը եղաւ մեր դալուն, դա՛ր մը, ըսաւ Սուրէն, խօսքը ուղղելով Գէորգին որ կը ժպտէր ընկերոջ անհանդարտութեան ի տես:

— Երանի՛ Միսաքն ալ եկած ըլլար, վստահ եմ որ յուսախաբ պիտի ըլլայ Կարպիս, պատասխանեց Գէորգ, դիտումնաւոր կերպով խօսակցութեան նիւթը փոխելով: Յետոյ սիկարէթ մը հրամցուց Սուրէնին ու շարունակեց.

— Գիտե՛ս ինչ կը մտածէի այս պահուն. չեմ հասկնար ինչո՞ւ յանկարծ յիշեցի այն խանդալառ օրերը մեր համալսարանական կեանքին, զուարթ օրեր էին, չե՞ս կարծեր...

Նախադասութիւնը աւարտելու ժամանակ չունեցաւ Գէորգ, որովհետեւ ազդարարութեան զանդը հնչեց այդ վայրկեանին եւ սրահը խուճապի մատնուեցաւ: Ծանր ու շուարուն քայլերով սկսան հետեւիլ ոստիկանին: Ամիսներու բաժանումէն ետք, դժբախտ ու անսրբազրելի իրողութիւնը զանոնք բերած էր իրարու մօտ, եւ հիմա, ուղեկորոյս ճամբորդներունման կիսամութ նրբանցքներուն դաժանութիւնը կ'ապրէին հոգեւլիչ լուսութեան մէջ: Կ'ուզէին խօսիլ, այո, վերջապէս բաներ մը ըսել, որպէսզի կարելի ըլլար թեթեւցնել սա վիշտը, որ բրտօրէն, անողոքօրէն նստած էր կուրծքերու տակ: Եւ ներքին այդ ապրումներու տուայտանքին մէջ, ահաւոր իրողութիւնն է որ յանկարծ կը ցցուէր արիւնշուայ ճիւղաններով, եւ անըմբռնելի խստութեամբ կը հարուածէր երիտասարդ հայերը: Հակառակ ներքին այդ մղումին սակայն, ան-

զըսպելի այդ բաղձանքին, չխօսեցան անոնք, չկրցան կազմել անհրաժեշտ նախադասութիւնը եւ թոյլ տուին որ քայլերու աղմուկը արձագանդէ պատերէն, անհունէն: Անմիջապէս որ աջ դարձան, լոյսի բարակ թեւը պրկուեցաւ ինքն իր վրայ եւ մութը աւելի զրաւի եղաւ խորքին մէջ: Քայլ մը անդին, երկաթէ ձողերուն ետեւ կանգնած էր Կարպիս...

Լուռ ու անշարժ դիտեցին զիրար: Բառերը յանկարծ չորցան կոկորդներու մէջ, չորցան՝ անակնկալ այս հանդիպումին բռնութենէն զարնուած: Բայց երբոր վայրկենական շուարումէն վերադարձան անոնց ակնարկները, երբ շուտով դիտակցեցան պատահածին, իրողութեան, այն ատեն է որ ուրախութիւնը կայծկլտաց Կարպիսին աչքերուն մէջ, եւ ըսաւ ան.

— Գիտէի որ պիտի դայիք, անշուշտ կ'ակնկալէի, այդ ալ խօսք է մը, ո՞վ ունիմ որ ձեզմէ զատ, հին մտերիմներէն զատ, բայց Միսաքը ո՞ւր է, այսքան շուտ մոռցաւ զիս, վա՛յ խայտառակ...

Հակառակ Կարպիսին ցուցադրած աշխուժութեան, զուարթութեան, գրեթէ բռնազրօսիկ ժպիտին, Սուրէն չկրցաւ շուտով ձերբազատուիլ ճնշիչ դառնութենէն, չկրցաւ անմիջապէս ջնջել տրտմութեան դիծերը այտերէն եւ փոխադարձել՝ բարեկամին անրնական եռանդը: Այո՛, չէր կրնար մէկէն դուրս գալ այդ վիճակէն, որովհետեւ տակաւին չէր կրնար հաշտուիլ զաղափարին հետ, չէր կրնար մոռնալ մօտիկ անցեալի մէջ պատահած այնքան յիշատակելի, հաճոյալի դէպքերը, վիճաբանութիւնները, որոնց ընթացքին Կարպիս յաճախ կը բորբոքէր անտեղիօրէն, կեանքի մոռյլ երեսներուն կը նայէր քիչ մը ծիծաղելով ու կը զուարճանար անդադար: Հիմա սակայն, վանդակի մէջ արդելափակուած թեւաթափ թռչունի մը պէս՝ թեւերը կը զարնէր ան, իբրեւ թէ պատահա-

ծը սովորական երեւոյթ մը ըլլար, իբրեւ թէ յանկարծ պիտի թեւածէր ազդարարութեան առաջին հընչիւնին վրայ:

— Մեռելատուն չէք եկած եղբայր. վա՛ր առէք այդ ողբալի դիմակները, տեսէք, դեռ ողջ եմ, այո՛, գոնէ ողջ եմ տակաւին... լսուեցաւ Կարպիսին ձայնը:

Այդ խօսքերու վրայ, սթափեցաւ Սուրէն, քովտի ակնարկ մը նետեց Գէորգին, ու պաղատագին, ազաչական, ըսաւ յուզումով.

— Ինչո՞ւ Կարպիս, ինչո՞ւ. չէի՞ր կրնար ուրիշ լուծում մը գտնել, չէի՞ր կրնար ձգել ու հեռանալ, եթէ նոյնիսկ գլինով էիք, եթէ նոյնիսկ խարուած ու անտեսուած էիք, չէի՞ր կրնար հաշտուիլ կացութեան հետ եւ դարմանել դժբախտութիւնը տարբեր միջոցի մը զիմելով. այս ըրածդ անհաւատալի, անհասկնալի բան մը եղաւ, իրապէս անըմբռնելի, Կարպիս:

— Գեղեցիկին հանդէպ մեր ունեցած սէրը չի բացատրուիր, Սուրէն: Ապակնած այս կեանքին մէջ, մզլոտած ու նեխած այս միջավայրին մէջ, մեզի վերապահուած է այդ զգացումը միայն, եւ բնաւ կարելի չէ դաւաճանել անոր հանդէպ, կամ ուրանալ զայն առանց մեղանչելու ճշմարտութեան դէմ, որովհետեւ զգացում մըն է ատիկա, որուն վրայ հիմնուած է մեր գոյութիւնն իսկ, առանց անոր, այսինքն այդ անաղարտ յուզումին, մեր կեանքը պիտի պարպուէր իր իմաստէն, կամ ինչ որ մնացած է անկէ, գիտեմ բնականաբար, որ յարաբերական է մեր ըմբռնումը ճշմարիտին ու գեղեցիկին, ի՞նչպէս բացատրեմ այս պարադան ձեզի, երբոր խաբուած ու անարդուած մարդու հոգեվիճակին թափանցել չէք կրնար...

— Ոչ ամբողջութեամբ, սակայն թերեւս մասամբ կ'ընդունիմ ըսածներդ, բայց սիրելիս, գոնէ պահ մը

փորձէ հեռանալ վերացական այդ թռիչքներէդ եւ ըսէ ինծի, թէ՛ ի՞նչպէս պիտի պաշտես գեղեցկութիւնը, ճշմարտութիւնը, սա չոր ու ցամաք պատերուն մէջ, ան ալ՝ կեանքիդ ամբողջ տեսողութեան. կ'ըմբռնեմ թէ գեղեցիկ գաղափարի մը համար զոհուելը հերոսութիւն է, բայց նոյնքան կարեւոր ու իմաստալից է պայքարելը գաղափարի մը համար՝ առանց զոհուելու. գաղափարի մը արժէքը մատուցուած զոհողութեամբ կարելի չէ պայմանաւորել, դուն ատիկա լաւ գիտես, բայց որ անկիւնէն ալ դիտելու ըլլամ քու պարագադ, չեմ կրնար մեծ իմաստ մը գտնել ըրածիդ մէջ, յետոյ մի մոռնար նաեւ՝ որ քու խի սիրած բանաստեղծդ ըսած է առիթով մը, թէ՛ «Ամենէն մեծ մեղքը անճարակութիւնն է», եւ քու այս ըրածդ անճարակութեան մեծագոյն նմոյշն էր, Կարպիս :

Պահ մը մոռցուեցաւ Կարպիսին ցկեանն բանտարկութեան դատապարտուած ըլլալու իրողութիւնը, եւ հին բարեկամները շարունակեցին սաստիկ կերպով վիճել, մինչեւ որ Գէորդ միջամտեց, հանդարտեցուց զանոնք, ըսելով թէ եղածը եղած է արդէն, եւ այդ մասին զլուխ յոգնեցնելը նպատակի մը պիտի չծառայէր ի վերջոյ : Բայց Կարպիս որոշապէս ուրացաւ իրեն վիճակուած պատիժին սաստկութիւնը եւ լաւ օրերու տրամադրութիւնը վերադառած՝ եւ ժպտելով բացատրեց, թէ՛ «Փորձութենէն ձերբազատուելու միակ միջոցը անոր յանձնուիլն էր ամբողջութեամբ», այո՛, յանձնուիլ ամէն զնով, առանց փոյթ ընելու հետեւանքներուն մասին, նոյնիսկ մահուան՝ որ անխուսափելի վախճանն է սպասումներու, որոնք ուշ կամ կանուխ դասալիք պիտի ընէին մարդ արարածը :

— Յետոյ մանաւանդ, եթէ քիչ մը լրջութեամբ անդրադառնանք կեանքին, որ այնքան աղուորնալ կը ջանայ ձեր մտածումին մէջ, ի՞նչ է որ խորքին մէջ,

եթէ ոչ բանտ մը, որուն մէջ մարդ կը դալարուի, կը տուայտի զգացումներու շղթային տակ հծծելով :

Կարպիս խօսեցաւ, անընդհատ հակաճառեց, շիթթութեան մատնուեցաւ դառիթափին եւ կարմրեցաւ, եւ տժգունեցաւ .

— Ես լաւ կ'ըլլամ, իմ մասիս մի մտածէք, ըսաւ, թէ եւ այս դուռը միշտ փակ պիտի մնայ, բայց ես ազատ եմ զգացումներուս աշխարհին մէջ, այդպէս եղած եմ միշտ, եթէ դժուար է, ալ մի գաք զիս տեսնելու, արդէն քանի մը շարաթէն պիտի փոխադրուիմ կղզիի բանտը, հոն աւելի լաւ կ'ըլլամ թերեւս . . .

Երբոր այցելութեան պահը աւարտեցաւ ու մեկնումի աղաբարբութիւնը ողբազին ճիչերով զարնուեցաւ անոնց սիրտերուն, այն ատեն է որ միայն տաք արցունքը ցայտեց աչքերէ, աչքեր՝ որոնց մէջ մինչեւ վերջին վայրկեան յամեցած էր հպարտութեան կայծը, գեղեցիկ օրերու տեսիլքին վրայ կախուող յոյսին նման, որ այդ պահուն ցաւազնօրէն փլաւ յանկարծ, լուռ, անձայն, անաղմուկ . . .

II

Հանրակառքը ճանչելով, երերալով կը թաւալի սեւ գիծերու վրայէն ու քաղաքին սիրտէն բաժնուելով կը կորսուի՝ փապուղիին մութ երախին մէջ : Հոն է որ իրարանցումը կը սաստկանայ անմիջապէս, երբ ուշ մնացող ուսանողներ, քրքիջներու տարափին տակ խեղդել կը ջանան իրենց անհոգութիւնը եւ Պլեքսթոն չհասած, վայրկենաբար աղմկալի կը դառնան : Այդ գիծերուն վրայ, եւ մանաւանդ օրուան բացառիկ ժամերուն, հանրակառքը արտակարգօրէն կը խոնուի

ուսանողներով, անոնց անտանելի ժխտով, եռանդով, զուարթութեամբ: Այդ պատճառաւ է որ դորձաւորներ, ընդհանրապէս կը խուսափին այդ ժամերէն ու խստորէն կը դանդատին այլասերած երիտասարդներէն, անոնց վերաբերումը, վարուելակերպը բազդատութեան զարնելով այն կենցաղին, որ իրենցն էր եղած նուազ բարեացակամ արեւի մը տակ:

Համալսարանի արդիական ու պատկառազրու շէնքերու կողքին, բոլորովին համեստ ու անշուք կառուցուածք մըն էր ճաշարանը, ուր առաւօտուն կանուխ ժամանող ուսանողներ, սուրճի դաւաթներուն շուրջ օրուան ծրագիրները կը պատրաստեն՝ միշտ կատակելով, զուարճալի պատմութիւններ պատմելով, անընդհատ խօսելով: Ոչ բոլորը սակայն: Որովհետեւ ընդգրկուած ասպարէզներով եւ իւրացուած մտայնութիւններով պայմանաւորուած երեւոյթ մըն է առիկա, որուն քիչ մը բարձրէն կը նային աւելի լրջախոհները երիտասարդներուն, եւ այդպէս է որ յարաբերութիւններ կը հաստատուին նախասիրութիւններէ մեկնելով: Այս բոլորին մէջ սակայն, օտար երկիրներէ եկած ուսանողներ ընդհանրապէս կը ցուացնեն տարբեր երանդ մը: Առաջին օրերուն, այս նոր միջավայրին մէջ, հեղնանքով ու շուարումով է որ անոնք կը դիտեն տարօրինակ այս տեսարանը, եւ ի վերջոյ կը փորձեն միախառնուիլ զանդուածին, ջնջել ջանալով հեռաւոր բարձր մը խստապահանջ ու ժամանակավրէպ օրէնքները, եւ բարեկրթութեան վրայ կը նետեն խորթ ակնարկ մը:

Իսկական խառնարան մըն է այս միջավայրը, ուր շնչելու եւ տոկալու համար նախագծուած սկզբրունքներու ապաւինիլը գրեթէ անհնար կը դառնայ: Բայց հակառակ այս խառնիճազանճին, քառասային վիճակին, տակաւին իրարու կառչած կը մնան քանի

մը երիտասարդներ, որոնք ուսանող ըլլալու դիտակցութեամբ արեւցած, սովորականէն տարբեր նիւթեր կը փորձեն շօշափել, ընդհանրապէս անտեսելով դիմացի պոռոտախօսը, որ քմայածին յերիւրանքներով կը ջնանայ՝ ծիծաղող աղջիկներուն ուշադրութիւնը գրաւել:

Այդ սեղաններու շուրջ է որ կամաց կամաց ծանօթացան իրարու եւ խմբակ մը կազմելով քաշուեցան ամբոխէն հեռու, եռուզեռէն դուրս: Արտակարգ ոչինչ կար այդ պահանջին մէջ, որովհետեւ օտարութեան ցուրտին դէմ պաշտպանուելու ներքին մղումն է որ զանոնք միացուց, կապեց իրարու: Սուրէն կու դար Պէյրութի թիթեղաչէն տուներէն, նեխած ու յուսալքող փողոցներէն, իսկ Գէորդ, Թեհրանը՝ նոր բարձունքներու կը հասցնէր, բարեկամներուն նախանձը շարժելով: Իր բնատուր անկեղծութեամբ եւ գրեթէ մանկունակ պարզութեամբ, կարպիս, բոլորովին տարբեր էր միւսներէն, եւ այդ բացառիկ իւրայատկութիւններուն շնորհիւ է որ շուտով կրցաւ ինքզինք պարտադրել ու իր անհատնում զուարթութեամբ անմիջապէս կեդրոնական դէմքը դարձաւ այս երրորդութեան: Ծանօթացումի ընթացքին՝ այդ միեւնոյն անկեղծութեամբ խօսած էր ան, ըսելով թէ Պոլսէն կու դար ինք, աւելի ճիշդը փախած էր հոնկէ, եւ առանց վարանելու, առանց մտածելու հետեւանքներու մասին. ծնողքը շուտով կորնցուցած ըլլալուն, հեռաւոր աղղականներու հոգածութեան տակ մեծցած էր եւ հակառակ ատոր սակայն, մեծ ու անդասելի սէր մը ունէր դեղեցիկ բաներու հանդէպ, ինչպէս ջութակին, որուն տիրապետելու որեւէ փափաք չունէր այլեւս: Սուրէն՝ իրապէս խանդավառուած էր անոր անկեղծութենէն, որոշեց անպայման ճանչնալ այս տղան, որ անակնկալ մըն էր իր թարմութեամբ, կորովով եւ անսեթեւեթ արտայայտութիւններով:

Գէորգն էր միայն որ այլայլած աչքերը դժուարութեամբ վերցուց հաստափոր դիրքէն ու ըսաւ, թէ ապագայ բժիշկի մը հետն էր որ կը խօսէին, բժիշկ մը որ անպայման ազատ մուտք պիտի դործէր Շահին պալատէն, «Եթէ Աստուած կամենար...»:

Հակառակ ծանօթացումի այս տարօրինակ շեշտին, հակառակ նաև Պէյրութէն Պոլիս եւ հոնկէ թեհրան նետուող ազազուն կամուրջին, մանաւանդ մասնադիտութեանց հակոտնեայ ուղղութիւններուն, հայ էին անոնք եւ այդ կապով ալ, պանդուխտ կեանքի ճամբաներուն վրայ միացան իրարու:

Թաւալող տարիներու ընթացքին, անոնց սէրը աւելի եւս զօրացաւ իրենց ասպարէզներուն հանդէպ, եւ ատիկա պատճառ եղաւ որ ամէն հանդիպում մրցակցութեան առիթ մը ստեղծէր անոնց համար: Եւ այդ վիճարանութիւններու ժամանակ, ամենէն արագ տաքցողը, ամենէն շուտ եզրակացութեան յանդողը կ'ըլլար Կարպիս եւ կատաղութեան նոպայէն տարուած, դայթակղեցուցիչ արտայայտութիւններով կը ջանար նուաճել միւսները, որոնք աւելի ինքնազուսպ եւ լուրջ շեշտեր կը դնէին արտասանուած նախադասութիւններու, մտածումներու վրայ: Նման վիճարանութեան մը ընթացքին էր որ օր մը, Կարպիս յանկարծ ինքն իրմէ դուրս ելլելով փրփրեցաւ անտեղիօրէն եւ առանց վերապահութեան բացազանչեց անոնց երեսին.

— Գէորգ, դուն որեւէ ատեն պիտի չյաջողիս յաղթական մուտք դործել Շահին պալատէն, որդէս բժիշկ կամ սպասաւոր, որովհետեւ քեզի կը պակսի քաջութիւնը փորձառութեամբ զինուելու, որովհետեւ քեզի համար նուաճումը անուշ հնչիւններով բառ մըն է միայն եւ դուն կորովը չունիս զայն իրականացնելու, չունիս նաև բացառիկ այն տաղանդը՝ որ քեզ զատէ սովորական բժիշկներէն, ան ալ արժանիքի մը կշիռով: Եւ

դուն, Սուրէն, դուն որ կամուրջներ շինելու աննչէն բռնուած կը յաւակնիս ըլլալ, որեւէ ատեն պիտի չկարենաս հիացումի առարկայ դործ մը արտադրել, քանի որ ո՛չ երազելի զիտես եւ ոչ ալ հիանալի զեղազլտական կառուցուածքի մը վրայ: Եւ ձեր ձգտումները, ձեր չքնաղ ծրարիքները պիտի կղզիանան ճիշդ հոս, հիւանդանոցի մը կամ ընկերութեան մը գրասենեակին մէջ, որովհետեւ պիտի չունենաք ամենէն տարրական քաջութիւնը այս երկիրը ձգելու, հեռանալու անոր մակերեսային հրապոյրներէն նիւթական խոստումներէն, որոնք կաշիի մը փրկութեամբ պայմանաւորուած են միայն, եւ ոչ աւելի...

Քանի՞, քանի անգամներ լրջութեամբ, խանդալատութեամբ եւ անկեղծ հետաքրքրութեամբ սկսած խօսակցութիւն մը աւարտած էր նման պոռթկումի մը մէջ, հակառակ ատոր սակայն, հակառակ նաև վիրաւորական ժայթքումներուն, միշտ ներողամտութեամբ եւ սապէս թաքուն սէրով մը ընդունած էին Կարպիսը, վստահ ըլլալով որ չափազանց անկեղծութիւնն էր անոր ուժի աղբիւրը եւ դիտումնաւոր ոչինչ կար այդ արտայայտութիւններուն մէջ: Բայց երբ որ խօսակցութիւնը դառնար ազգային հարցերու շուրջ, Կարպիս կը լռէր յանկարծ, անկիւն մը կը քաշուէր ու անյադօրէն կը հետեւէր արտասանուած կարծիքներուն, ի վերջոյ եզրակացնելով, որ ինք զլուս չունէր նման նիւթերու համար, եւ թէ իր աշխարհը միայն արուեստով ու զեղեցիկով շաղախուած էր, եւ թէ...

Այսպէս է որ տարիները սահեցան իրարու ետեւէ, եւ երիտասարդ հայերը շարունակեցին հեւասպառ կեանքը, մինչեւ որ անակնկալ զէպք մը պատահեցաւ մասամբ պղտորելով անոնց զուարթութիւնը: Այդ առաւօտ սովորականէն քիչ մը աւելի արտում էր Կարպիս: Յայտնի էր որ կ'ուզէր բան մը ըսել, սակայն կը

տատամսէր, ակնարկը կը պտըտցնէր սեղանին վրայ և պարապ դաւաթը անդադար կը դարձնէր ասիւն մէջ. կնճիռներ կը կազմուէին գանգուրներու տակ հանդէտը լայն ճակատին վրայ ու կը տուայտէր ան: Երբ որ ալ անտանելի դարձաւ լուսթիւնը, Սուրէն գլուխը վեր առաւ տետրակէն ու հարցուց.

— Ի՞նչ պատահեցաւ, Կարպիս...

— Կարծեմ վշտացուցի մարդը... բուռն բախում մը ունեցանք, շուտով ինքզինքս կորսնցուցի եւ աւելորդ պակաս խօսքերով վշտացուցի հօրեղբայրս... ալ խզեցի կապերս, որով հիմա ստիպուած եմ դիշերային գործ մը դտնել ապրուստս հոգալու համար, ողբերգութիւն չէ պատահածը, սակայն եթէ քիչ մը աւելի շարունակէի ենթարկուիլ իր քմահաճոյքներուն, վստահ եմ՝ անպայման դժբախտութիւն մը պիտի պատահէր, որովհետեւ թէեւ քիչ մը կ'օգնէր ինծի, բայց ատիկա որպէս պատրուակ բռնելով կը փորձէր կեանքս իր անփերուն մէջ առնել, դիտես թէ որքան յարգի է իմ ազատութիւնս ինծի համար, բայց այդ խռճածը չի կըրնար ըմբռնել, որ ես իրեն պէս չեմ կրնար ըլլալ, չեմ կրնար դողալ դրամին վրայ, չեմ կրնար բոլորովին խզուիլ հաճոյքներէ, պարզապէս իրեն հաճելի ըլլալու համար, իմ խառնուածքիս դէմ է ատիկա, բոլորովին հակառակ... պէտք չէ փորձէր զիս փոխել, որովհետեւ ասիկա իրենց ճանչցած Ամերիկան չէ ալ, ասիկա իրենց ճանչցած երիտասարդութեան պիտի չմամնի երբեք, քանի որ մենք ալ մարդ ենք հակառակ նիւթապէս տկար ըլլալնուս, երիտասարդ ըլլալնուս. ես Պոլիս ալ այդպէս էի, այսպէս կը մտածէի եւ այդ պատճառաւ ալ յաճախ խնդրներ կ'ունենայի ազգականներուս հետ, շատ դժուար է ինծի համար փոխուիլ, կաղապարուած մարդ ըլլալ, ենթարկուիլ ուրիշներու զծած օրէնքներուն, սեղմումներուն, ես իմ ազատութիւնս կ'ուզեմ,

որքան ալ սուղ ըլլայ զայն անփոփոխ պահելու դինը...

— Բան մը կ'ընենք Կարպիս, հոգ մի ըներ այդ մասին, հարկաւ բան մը կը յարմարցնենք, ձգէ որ ես Միսսֆին հետ խօսիմ, ինչ մնաց որ հոս, գրեթէ վեց ամիսէն կ'աւարտենք մեր ուսումը եւ այն ատեն հարցը կը դիւրանայ, այս օրերն ալ կը մոռնանք, ըսաւ Սուրէն մեղմօրէն:

— Ո՛չ, ո՛չ, ատիկա անկարելի է, հարկաւ բան մը կ'ընեմ ես, անշուշտ որ բան մը կ'ընեմ, առարկեց Կարպիս:

Գաւաթը դարձաւ աջէն ձախ: Լուսթեան մէջ որոշումը անմիջապէս մտրակեց դաւնութեան հանգոյցը եւ յուսալքուած տղուն դէմքը պայծառացաւ, նախկին դուարթութիւնը վերադառաւ ու պայծառացաւ: Արագօրէն չքացան այդ մոլթ ամպերը: Պատահական ամպերը:

Եւ նոյն արագութեամբ Կարպիս հասաւ հոն, այսինքն՝ նպատակակէտին: Թէեւ երեկոն նոր էր իջած քաղաքին վրայ, սակայն Պրոտուէյ արդէն կը խայտար լոյսերու մէջ, աղմուկով մը որ յատուկ է նման փողոցներու, մանաւանդ երեկոյեան այդ ժամուն:

«Floor show,
Ամէն երեկոյ
Ներածուած աղջիկներ
Ամէն ճաշակի համար
Ազատ մուտք
Ամէն ինչ առատ...»

Խորհրդաւոր դուռ մը: Երկու կողմերուն զետեղուած են ցուցատախտակներ: Կիսամերկ աղջիկներ, պատկերներու մէջ: Գունաւոր լոյսերու տակ՝ Սան Ֆրանսիսկոյի մէջ: Քովնտի դուռէն ներս մտաւ Կարպիս, եւ կարմիր լոյսի մը առաջնորդութեամբ կիսա-

մութ նրբանցքէն անցնելով հասաւ գրասենեակին գուռը:

— Պարոն ձէյմս, կերին է, ըսաւ գուռը զարնելով...

Անմիջապէս ոտքի ելաւ պարոն ձէյմս եւ լայն ուսերուն վրայ նետելով փայլուն բաճկոնը, ժպիտի մը հետ ձեռքերը երկարեց տղուն: Նախ խօսեցան սովորական նիւթերու շուքը, ասկէ ու անկէ, յետոյ անդրադարձան Կարպիսի նպատակներուն, ծրագիրներուն եւ երբ որ սղան անդրդուելի մնաց իր որոշումներուն վրայ եւ յստաւորէն բացատրեց այցելութեան տուն տուող պատճառները, այն ատեն պարոն ձէյմս քիչ մը սրտնեղած, քիչ մը յուսախաբ, ըսաւ.

— Գիտես որ քեզի հանդէպ տարբեր զգացում մը ունեցած եմ միշտ, այո՛, թէ եւ հօրդ տարիքը չունիմ, բայց վերջապէս դաւակի մը պէս վերաբերած եմ հետդ, ճիշդ է որ շատ յաճախ բառերով չեմ կրցած արտայայտել զանոնք, բայց միշտ ալ միեւնոյն զգացումը ունեցած եմ քեզի հանդէպ, այդ պէտք է ընդունիս: Այնքան անդամներ ըսած եմ քեզի, որ այս ասպարէզին մէջ մեծ ու փայլուն ասպարայ մը ունիս, ունիս նաեւ սա ջութակը... Ի՞նչ պիտի ընես բանաստեղծութիւնը, արուեստը, բաւ է որ քիչ մը ուսում ունիս, յետոյ՝ ի՞նչ կը շահի ուսուցիչ ըսածդ, զիս մտիկ ըրէ կերի, չես զղջար, բնա՛ւ... Մ՛օ՛, տակաւին քանի տարեկան ես որ ատանկ բաներով կը զբաղիս... քսանըհինգ ըսածդ ինչ է որ, բան մը չէ, մանաւանդ որ հոս ասպարայ մը ունիս այդ տարիքիդ շնորհիւ, չէ՛, մի ըսեր որ առժամեայ է այս գործը, ատիկա մի ըսեր, զիս կը վշտացնես, քեզի նման երիտասարդ մը պէտք չէ սպառի գրասեղանի մը ետին, ան ալ՝ այդ պայմաններով, այդ մէկը ըլլալիք բան չէ, կերի, հաւատա՛ ինձի...

Պարոն ձէյմսի խման, վաւաշոտ ու քիչ մը ուռած

չրթները անընդհատ շարժեցան, պաղատանքով ու խոստումներով:

— Սեւեղ զլուխդ ժողովէ կերի, եւ օգտուէ ներկայացող այս պատեհութենէն, զիտես որ ձեռքէս եկածը կ'ընեմ քեզ դո՛ւ ձգելու համար, բայց վերջապէս պիտի նեղացնես զիս, եթէ շարունակես առժամեայ նկատել այս գործը, ըսել է որ սիրտդ մէջը պիտի չըլլայ, ըսել է որ անտարբեր պիտի ըլլաս գործիդ հանդէպ, ինձի հանդէպ...:

Եւ երբ պարոն ձէյմս մեծ գոհունակութեամբ աւարտեց խօսքը, շեշտելէ ետք ապագայի կարեւորութիւնն ու դրամին արժէքը, այն ատեն է որ յաղթանակի ժպիտը տարածուեցաւ մինչեւ երկրորդ կզակը, եւ մը թեւը հանդէսնելով Կարպիսին ձախ ուսին վրայ ըսաւ.

— Գիտես, կերի, նոր պարուհիներ ունինք հիմա... չէ՛, յամառ պիտի չըլլաս, այս մէկը չես տեսած բնաւ, նոր բան մըն է, բոլորովի՛ն նոր... տեսնելիք բան է կերի, տեսնելիք շատ բաներ ունի այս աղջիկը...

Առաջին անգամը չէ որ Կարպիս կը մտնէր այդ սրահէն ներս, բայց նոր է որ կը նշմարէր կարգ մը մանրամասնութիւններ, որոնք նման վայրի մը սովորականէն տարբեր երեւոյթ մը տալու հոգածութիւնը կը մատնեն: Բաց ու պոռոտ գոյներով ներկուած պատերը ոչ մէկ տպաւորութիւն կը ձգեն զիտողին վրայ, եթէ չըլլան սա խորհրդաւոր պատկերները որոնք կախուած են անոնց երկայնքին: Ա՛յ կողմի վրայ զետեղուած է խմբիքի բաժինը, ուր բարձր ու ձիւ անթոռներու վրայ շարուած են խարուած ամուսիններ, մնայուն ամուրիներ, կեանքին վերատիրանալ փորձող տարեցներ, եւ երիտասարդներ՝ որոնք իրապէս կը գուարճանան նման վայրի մը մէջ: Տակաւին, սրահի

երկայնքին համաչափօրէն շարուած են կլոր սեղաններ, որոնց վրայէն ծուխը կը բարձրանայ սունկի նման, շրջուած բուրգերու նման: Դասակարգի խտրութիւնը գաւաթներու դիմով կը ծախուի հոս, եւ մերկ պարանոցներու վրայ ծաղկող թարմութիւնը կը քանդէ ամէն արդելք: Կիսամութ խորքի մը վրայ կը բարձրանայ բեմը, ուր ահա, տարօրինակ շփոթութիւն մը կը տիրէ կորսուած նոթատեսերու փնտրուքէն մեկնելով:

— Հէ՛՛յ, Կերի, կը լսեմ որ մնայուն կերպով մեզի հետ ես ալ, ըսաւ թմրկահարը, օճիքը շտկել ձեւացնելով:

— Համալտարանը այդքան կանոնօրէն փակուեցաւ, տղայ՛, բացազանչեց տարեց ջութակահարը, որուն աչքերը կորսնցուցեր են ամէն արտայայտութիւն:

Կարպիս բարեւեց բոլորին, ժպտեցաւ քովնորի եւ դբաւեց իր աթոռը: Այդ պահուն է որ թմրուկին յանկարծական պայթիւնը շուարումի մատնեց առաստաղէն կախուած լոյսերը, բեմը հետզհետէ ընկղմեցաւ մութին մէջ, եւ լուսթեան կամուրջը երկարեցաւ սեղաններէն մինչեւ հոն, մինչ շրջանակուած կարմիր լոյսին հետ բեմ կը նետուէր պարուհին, հիացական բացազանչութիւններ խլելով ներկաներէն: Ու պարեց ան, մեղմ, հանդարտ, նազանուտ, ու ապա՝ օճալըտոյտ գալարումներով, դիւահարի ոստումներով, մշտափոփոխ լոյսերու հետ, գոյներու հետ: Եւ ջութակը լացաւ, լարերը տաքցան արագութեան մէջ, ու լացաւ, մինչեւ որ թմրուկը կատարելապէս տիրապետեց նաւագին, եւ կիսամերկ պարուհիները բացառիկ ճշգրտահոսութեամբ, վայելուչ կանոնաւորութեամբ կատարեցին իրենց դերը՝ ցանկութեան ալիքները սփռելով ամէն կողմ:

Եւ վերջապէս եկաւ նորը: Պարոն ծէյմսի չբաց-

ուած խոստումը: Ժանեկաւոր լանջակայք դժուարութեամբ կը զսպէր ըմբոստացող, խայտացող, հպարտայդ կուրծքերը, մինչ մետաքսէ պսպղացող կարծներքնաչապիկը մեծ հաճոյքով կանգ կ'առնէր հոն, ուր սեւ դուլպաները կը կորսուէին պրկումի մը տակ: Քանի կը պարէր ան, ճկուն ու վարժ շարժումներով կը գալարուէր, կ'ոլորուէր ինքն իր վրայ, նայուածքները կը դառնային աղաչական, եւ սրտի տրոփիւններ կը լսուէին ասկէ ու անկէ: Յետոյ, երաժշտութեան հրահանգներուն հնազանդելով, դանդաղօրէն ու նազանքով սկսաւ հանել իրարու ետեւէ, նախ դուլպաները, հոս ու հոն դբուած ժանեկաւոր կապերը, ներքնաչապիկը ու հոն կանգ առաւ, յաղթանակը կատարելապէս վայելելու համար: Այդ պահուն է որ, ա՛լ կորսնցուցած հակակշիռը, ինքզինք զսպելու կարողութիւնը, սրահը թնդաց պոռչուքներու մէջ եւ հանդիսականներ բացազանչեցին դրեթէ միարեւան. «Հանէ՛, հանէ՛, բոլորը հանէ՛...»: Լանջակայք ինկաւ ոտքերուն առջեւ, եւ կոնքերուն վրայ հանգչող լայնիկէկ գօտին սահեցաւ կրունկներուն մօտ, հիմա, արծաթագոյն բարակ երիզն է որ կը հանգչի սրունքներու վերջամասին, որպէս ծածկոց մերկութեան: Ու կը պարէր ան, վերացած, յաղթական, բոլորովին դիտակից իր ունեցածին, իր առաւելութիւններուն, միտի կախարդական ուժին: Համաչափ ու բարեձեւ սրբունքները կը պսպղային համբոյրին դէմ լոյսերու, մինչ չբեղ ու պիրկ ստինքները կը խայտայտին եզանակին համաձայն: Ջիղերու, զգայարանքներու վրայ նետուող կրակն էր ան փողփողուն, լուսաշող չքնաղութիւն մը, հեթանոսական հաճոյքներու կնիքովը քանդակուած...

Հետաքրքրութեամբ եւ քիչ մը յափշտակուած, դիտեց զայն: Ծարժումները, ողորկ ու ցանկայարոյց

մարմինը, փարթամ կուրծքերը: Մովորականէն տար-
բեր նշանակութիւն մը չգտնելով այդ բոլորին մէջ,
երբոր կը պատրաստուէր հեղնել պարոն ձէյմսի վա-
ղահաս խանդավառութիւնը, պատահաբար անոր ակ-
նարկը բռնեց ակնթարթի մը համար եւ թեթեւ սար-
սուռ մը զգաց մարմնին մէջ: Կարպիս շիկնեցաւ, յան-
ցանքի վրայ բռնուած մանուկի մը պէս...

Երբ փողոց իջաւ առաւօտեան ժամերուն, յոգնած
էր ալ ու գրեթէ անկարող մտածելու: Բայց պատե-
հութենէն օգտուելով զօրաւոր կերպով ներշնչեց
թարմ ու կաղզուրիչ օդը եւ սկսաւ յառաջանալ մայ-
թերու վրայէն:

2

Քանի կը ջանար դէպքերու ազդեցութիւնը վանել
մտածումէն, քանի կը փորձէր մոռնալ այդ նայուած-
քին հմայքը, այնքան աւելի կը յանձնուէր անոր պա-
հանջին ու կը արտմէր ակամայ: Կ'ուզէր դուրս գալ
քաջողական այդ ուժէն, կը ջանար յստակ ուղղութիւն
մը տալ հնազնետէ ցրտոզ մտածումներուն, սակայն
կարծես, յանկարծ կը կորսնցնէր բանականութեան
ղեկը եւ քմայածին հաճոյքէ մը տարուելով կը հեռա-
նար բուն նպատակէն: Կը փորձէր կարգալ, բայց չէր
կրնար, կը փորձէր մէկ հարուածով ջնջել վերջին քա-
նի մը շարթթներու տպաւորութիւնը, նորէն չէր յա-
ջողեր ու կը յուզուէր սաստիկ կերպով: Միծաղելի,
զուարճալի, խիստ անբնական բան մը կը տեսնէր այս
չփոթին մէջ, բայց իրապէս չէր կրնար կեղբոնանալ
կէտի մը վրայ, տողերուն՝ որոնք կը հանդէշին էջին
մէջ, կարմիր գիծի մը վրայ, եւ անորոջ գիծեր կը հե-

ռանային էջին չորս կողմէն եւ ճառագայթներու պէս
կը կորսուէին անհունին մէջ: Եւ անհուն, եւ ճառա-
գայթներ, եւ երազ կորսուեցան, անմիջապէս որ նայ-
ուածքը ինկաւ տողի մը վրայ եւ շնչառութիւնը դան-
դադեցաւ ընթերցումի ժամանակ. «Փորձութենէն
ձերբազատուելու լաւագոյն միջոցը յանձնուիլն է ա-
նոր, ամբողջութեամբ, էութեամբ»: Մօ', վայրի գա-
ղան, այս ի՞նչ չքնազ գաղափար, ի՞նչ համարձակու-
թիւն, պիտի ըսէր ընթերցումը աւարտելուն, սակայն
չուտով անդրադարձաւ անոնց լրջութեան, խորու-
թեան եւ սկսաւ դողալ՝ տերեւի մը պէս: Արդեօք ե՞ս
ալ պիտի իյնամ այդ ծուղակին մէջ, ես ալ պիտի եր-
կըրպագեմ... չէ', ըլլալիք բան չէ, շեշտեց, մտա-
ծումէն վանելով վախի վերջին փշուրն խակ:

Լոյս մը կար անշուշտ, թերեւս վերը, պատուհա-
նէն կախուող երկնքին վրայ, թերեւս վարը, փողոցին
մէջ, ուր աղմուկը կը սաստկանար՝ երեկոն տուն
կանչելով: Մինչդեռ պատուհանին տակ կը բարձրա-
նար այդ հսկայ ծառը, ուր բոյներ կային տակաւին
ամիս մը սոսաջ, հիմա սակայն, քանդուած են անոնք,
թռչունները մեկնած են ապրելու համար, եւ ահա
անձրեւն է որ կը խաղայ հոն, խոշոր կաթիլներով,
տառապանքի ծանրութեամբ:

Միայն ամիս մը անցած էր պարոն ձէյմսի պա-
րասրահը վերադառնալէն ի վեր եւ արդէն սկսած էր
խոր ատելութեամբ մը լեցուիլ այդ միջամտային ու
հոն յաճախող մարդկային խլեակներու հանդէպ: Բը-
նականաբար իր միակ միտիթարանքը այն էր այս բո-
լորին մէջ, որ ասիկա առժամեայ գործ մըն էր իրեն
համար, եւ դանդատելու ալ պատճառներ չունէր դը-
րեթէ, որովհետեւ պարոն ձէյմս իրապէս լաւ կը
վարձատրէր զինք եւ մանաւանդ կը հանդուրժէր իր
անվերջանալի խճրճանքին: Ասկէ առաջ ալ, ամառ-

ուան եղանակներուն ատեն մը նուազած էր հոն եւ այնքան եռանդով, յոյսով, երազով, այո՛, իր երազին իրականացումը տեսած էր այս գործին մէջ եւ ազատօրէն, առանց քաշուելու խաղացած էր թարմ ու աղւոր կուրծքերու հետ: Ծիշդ է որ այդ օրերուն, հօրեղբօր մասնակի օգնութեան շնորհիւ, բնաւ չէր մըտածեր խնայելու մասին եւ ընդհանրապէս կը ծախսէր շահածէն աւելի ու միշտ պարտական կը մնար պարոն ձէյմսին: Երբեմն, պարոն ձէյմս կը զդուշացնէր զինք, ու կը սաստէր այն ատեն միայն, երբոր գործի կ'ուշանար աղջկայ մը պատճառաւ եւ կամ...: Հաճելի, դուարթ, թեթեւ օրեր էին անոնք:

Ու կը յիշէր, այո՛, անշուշտ որ չէր կրնար մոռնալ զուարճախառն այն դէպքերը, որոնք ճապաղ ու դունատ օրերու վրայ պզտիկ գիծեր կը քաշեն, պըղպըջակներ կու տան միապաղաղ օրերուն ու կը ծփան՝ թեթեւ ալիքներու վրայ: Արհեստին վարժ ինքնավրատահուութեամբ, Ֆիզիքական առաւելութիւններուն դիտակից եւ մանաւանդ քիչ թէ շատ կեանքը տեսած երիտասարդի մը փառասիրութեամբ կը մօտենար աղջիկներուն, մեղմ ու խոստումնալից բառերով փորձեր կը կատարէր անոնց վրայ եւ ամենէն տաք պահուն, ամենէն վտանգաւոր բոպէին, երբ անոնցմէ մէկը կը պատրաստուէր լրիւ յանձնուելու, այն ատեն կը քաշուէր յանկարծ, յուսահատութեան մէջ կատղեցնելով զանոնք: Մանաւանդ չէր կրնար մոռնալ այդ մէկը, օ՛, պիտի ճաթէր, Աստուած վկայ պիտի ճաթէր խրնդակէն: Ահա թէ ինչ պատահած էր այդ առթիւ: Բացառիկ տրամադրութեամբ զինուած էր այդ օր, այսօրուան պէս կը յիշէր. հոն էր նաեւ «պէյալի տալը»՝ այդպէս կը կոչէին զայն, փոքր կազմին եւ մանաւանդ փարթամ կուրծքերուն համար, որոնք արուեստական ըլլալու տպաւորութիւնը կը թողէին դիտողին

վրայ: Սոստացած էր, այո, զբաւի եկած էր տղոց հետ, որ անպայման պիտի տեսնէր զանոնք՝ մերկութեան մէջ: Եւ պատահեցաւ այնպէս, ինչպէս ծրագրած էր ինք: Արդուզարդի սենեակին մէջ էին, բեմին ետեւ: Աղջիկը նախ բողբոջեց, «ես, մերկանալ չեմ սիրեր անձանթիներու առջեւ», ըսաւ, «այլապէս ես ալ պարուհի կ'ըլլայի ու կ'ազատէի սա կամի՞թնեւրէն», աւելցնելով, փէշը վեր առաւ ցոյց տալու համար սրունքներուն վրայ զրոյմուած կապոյտ տեղերը. սպասարկող մըն էր ան, եւ ստիպուած էր նման անպատեհութիւններ հանդուրժել, գործը պահելու համար: Բայց Կարպիս կարեւորութիւն չընծայելով այդ գանդատներուն, խնդրած էր անկէ որ անպայման քակէ լանջակալը եւ թոյլ տայ իրեն որ... եւ յանկարծ ինկած էին անոնք ոտքերուն տակ, արեւելքի տղան անզուսպ խնդուքի մը մէջ նետելով: Եւ այդպէս, զսպանակէ արձակուած, Կարպիս ճաթած էր վայրկենարար, «է՛հ չեմ կրնար կոր դիմանալ, օղնութեան հասէք, չեմ կրնար կոր դիմանալ» ըսած ու մէջքին վրայ երկուքի ծալուած էր ի տես այդ գունդերուն, որոնք մինչեւ վերջին վայրկեան կեղծ ըլլալ թուած էին իրեն, այո՛, լաստիկ էր կարծած զանոնք եւ այդպէս ալ զբաւի էր եկած: Հապա, անոր կարմըրիլը, անմեղ ու կոյս աղջկայ ձեւեր առնելը, ալ աւելի կատղեցուցեր էին խնդուքը եւ ինք ստիպուած դուրս փախած էր, նետուող շիշի մը սպանալիքին տակ: Այդ դէպքէն ետք, ամբողջ շաբաթ մը քէն պահած էր իրեն դէմ, «արեւելքի կոշտ երիտասարդին դէմ», եւ առարկած էր թէ՛ օտարները դնահատել չեն դիտեր բնական հարստութիւնները... եւ Կարպիս փորձած էր, իրապէս ջանացած էր ընդունուած, չափուած ու կոկուած չափանիշով մը դնահատել բընութիւնը, որ երբեմն այնքան առատաձեռնութեամբ

կ'աղուորացնէր, կը հարստացնէր նոյնիսկ ամենէն ան-
նշան նկատուած երեւոյթները:

Եւ հիմա...

Բայց հիմա...

Ինչո՞ւ անպայման հիմա...

Փչրուեցաւ տրամադրութիւնը, նուրբ ու գունա-
ւոր յախճապակիի մը պէս ինկաւ դետին ու կորսուե-
ցաւ ուրախութեան, խանդավառութեան վերջին փըշ-
րանքը: Ինչ որ մնացած էր պահ մը առաջուան աշ-
խուժութենէն, սա անհիւրընկալ հոյժը քշեց տարաւ,
և հայ երիտասարդը երկարօրէն ինքզինք դիտեց հա-
յելիին մէջ: Երբոր մութը թանձրացաւ սենեակին
մէջ, եւ երբ պատին վրայ ժամացոյցին սլաքները
փայլեցան ութին վրայ, այն ատեն ան հաւաքեց ինչ
որ մնացած էր գուարթութենէն եւ իջաւ փողոց: Հոն
է որ բարեւեց անկիւնի ծաղկավաճառը, անտեսեց
կռուող զոյգը ու քալեց լոյսերու մէջէն:

Պարասրահէն ներս պատահեցան այն բոլոր բա-
ները, որոնք սովորաբար կը պատահին շարաթ դիշեր-
ներով: Սպասեակները ի գուր փորձեցին խուսափել
մերկ սրունքներու վրայ մատներու խաղէն, բայց բա-
ժակները աւելի արագ պարպուեցան մութին մէջ, ու
պարուհիները ինկան զպացումի դիւրադրվիւ լարե-
րուն վրայ եւ դիւրահաճ ակնարկներու մէջ թափեցին՝
ցանկութեան կրակը: Միջնարարին է միայն որ պա-
տահեցաւ, ինչ որ ընդհանրապէս չի պատահիր. գի-
նով սիրահարը, երեքացող սրունքներուն վրայ բարձ-
րանալով շոռաշուն ասպակ մը տուաւ քովը նստած
աղջկան եւ դլորուեցաւ սեղանին տակ: Իրարանցու-
մին վերջ տրուեցաւ, անմիջապէս որ ոտտիկանը դուրս
հանեց գինով մարդը: Թմբուկն էր դարձեալ որ կ'ըշ-
խէր միւս գործիքներուն վրայ, ան ալ՝ անպատկառ-
օրէն:

Այս շրջանին, Կարպիսին ունեցած յառաջիմու-
թիւնները ուրախութիւն պատճառեցին պարոն ձէյմ-
սին, ինչ որ ան արտայայտեց պարզ ու հասկնալի բա-
ռերով.

— Գեղի ըսի որ այս մէկը բացառիկ պատառ է,
բայց չուղեցիր հաւատալ ինծի, հիմա կը տեսնեմ որ
չատ տաք կերպով բռնուած ես, ա՛հ, այս երիտասար-
դութիւնը, ինչո՞ւ այդքան հապճեպով փախաւ ինձ-
մէ, բացաղանչեց կեղծ ժպիտով մը, զոր փոյթ չըբաւ
ծածկելու: Յետոյ, պարոն ձէյմս քիչ մը լրջացաւ,
բառերը արտասանեց ծանր շեշտերով ու շարունակեց.

— Ես քեզ իմ խոստումներովս չկրցայ հեռացնել
դէրքերէդ, սակայն ան պիտի յաջողցնէ այդ բոլորը
ևւ աւելին, զգուշ եղիր Կերի, զո՛հ չըլլաս անոր... որ-
քան որ ալ ինքզինքդ փորձառու նկատես, յաւակնու-
թիւններ ունենաս քու կարողութիւններուդ վրայ,
պէտք է դիտնաս որ կ'ինը, մանաւանդ ասոնց նմաննե-
րը՝ մեծապէս կը հաճոյանան քեզի պէս երիտասարդ-
ներ քայքայելով: Ես աշխարհը տեսած մարդ եմ, Կե-
րի, դէ՛ն ալ տեսած եմ, աղէկն ալ, ուշադիր եղիր ը-
սածներուս եւ խուսափէ վրիժառու էգերէն, անոնց
համար հպարտութիւն, փառասիրութիւն է քեզ ծու-
կի բերելը, իշխելը վրադ եւ ապա ուրիշի մը հետ
պառկելը, այս բոլորը անոնց կեանքին բնական մէկ
մասը կը կազմեն, եւ որովհետեւ անոնց կեանքը բնա-
կան չէ, կը սպաննեն քեզ բարոյապէս...: Եւ պարոն
ձէյմս որպէս վերջաբան, հօր մը դուրգութեանքով
ձեռքը դրաւ երիտասարդին ուսին վրայ ու ժպտեցաւ,
այդ հի'ն ժպիտով:

Երբ դուրս ելաւ զրասենեակէն, Վիքի արդէն
պատրաստուած էր ու կը յառաջանար փողոցի դուռը:
Կարպիս հասաւ անոր ետեւէն ու արագ եւ անտարբեր
ակնարկ մը նետեց անոր վրայ եւ չկրցաւ ծածկել յու-

զումը, որ այլափոխուած էր պարոն ձէյմսի թելա-
դրութիւններուն ազդեցութեան տակ: Աղջիկը անմի-
ջապէս անդրադարձաւ այս փոփոխութեան եւ մարմի-
նը սեղմեց անոր, մտերմիկ շէշտով մը:

Սիրատարփ զոյգերու հոսանքը մեղմօրէն կ'ըն-
թանար հասունցած գիշերին մէջէն եւ լուսաւոր պո-
ղոտան՝ վեր առած ամօթխածութեան քողը, թոյլ կու
տար որ դինով քայլեր դանդաղին մայթերու վրայ եւ
փեղկերու տրամութեան խառնուի յոգնութեան կան-
չը: Կը քալէին անոնք՝ լուռ ու անխօս: Ծանրացող
տրամութիւնը փարատելու աղջկան ճիգը կը խառ-
նուէր ընդհանուր ժխորին, մինչ միսին ջերմութիւնը
կ'այրէր տղուն աջ գիստին վրայ: Գլխաւոր երակէն
բաժնուելով քովնոր փողոցը մտան ու աստիճաններէն
բարձրանալով աւելի վեր ելան: Գոց ճամբու մը եր-
կայնքին, ծառերու հսկողութեան տակ պահուրտած
էր աղջկան յարկարաժինը. կանդ առին հոն, դրան ու
ծառին մէջտեղ, ուր նեղ բացուած քէ մը վեր կը մագլ-
ցէր լոյսի երիզը, սանդուխներուն հետեւելով:

— Վեր ելլենք, Կերի, սեւ սուրճ մը պիտի մեղմէ
խմիչքին ազդեցութիւնը, կ'երեւի շատ խմեցիր այս-
օր, այլապէս տրամադրութիւնդ ինչո՞ւ ասանկ մէկէն
պիտի փոխուէր...

Վեր ելան, բայց սուրճ չուզեց երիտասարդը:
Լոյսի կոճակին վրայ դաստակէն անշարժացուց աղջ-
կան ձեռքը, որպէսզի դուրսէն ներս մաղուող լոյսը
հանդարտութեամբ ծփայ կարասիներուն վրայ, ան-
կիւնի մահճակալին վրայ, դիմացի հայելիին մէջ, ուր
այժմ աղջկան ժպիտը կը մեծնար լայնցող կուրծքին
հետ: Կարպիս դիտեց զայն, յափշտակուած, անյազ
աչքերով, քիչ մը յաղթական. յետոյ մօտեցաւ աւելի
ու կարօտակէզ ափերուն մէջ առաւ փունջը մագլերուն
ու դւուեց զանոնք, շոյեց զանոնք, դողալով, տենչա-

լով, մինչեւ որ մատները մխրճուեցան ալիքներուն
մէջ ու շրթները հպեցան այդ տաք ծոծրակին: Թե-
թեւօրէն սարսուց աղջիկը ու քայլ մը ետ քաշուելով,
զլխու արագ շարժումով անմիջապէս արձակեց ոսկի
փրփուրը մետաքսին եւ թոյլ տուաւ որ տղուն ակնար-
կը վառի, հեռաւոր կրակի մը ջերմութեան դէմ: Յե-
տոյ սակայն, երբ երիտասարդ տղան կամաց կամաց
վերադառաւ իր հանդարտութիւնը, երբ ալ մատները
դադրեցան դողալէ, այրելէ, այն ատեն ուզեց որ աղ-
ջիկը հանուի իր առջեւ, բայց ոչ սովորականին պէս,
անոր որ ակնատես եղած էր այնքան անզամներ:
Այո, ուզեց որ այս անգամ հանուի միայն իրեն հա-
մար, բեմերէն հեռու, անյազ ու ցանկացող ամբօխէն
հեռու, այնպէս ինչպէս որ պիտի ընէր սիրող աղջի-
կը, անմեղ ու մաքուր աղջիկը սիրոյ պատմութեան:
Եւ հետեւեցաւ ան այդ շարժումներուն, հետաքրքրու-
թեամբ, ուշադրութեամբ, սիրող, պզուտ, յանդի-
մանող աչքերով: Ծրջազդեասէն ետք, կրք իրարու ե-
տեւէ ինկան ներքնաշապիկը, լանջակալը... և վեր-
ջապէս, կատարելապէս մերկացած աղջիկը իր լուսա-
թոյր մարմինը յանձնեց տղուն նայուածքին...: Աղ-
ուոր էր, իրապէս դեղեցիկ էին անոր զիծերը, եւ հա-
կառակ իր դերին, հակառակ իր արհեստին, երազա-
յին քաղցրութեամբ, հմայքով, լոյսերով ողողուած
էին այդ աչքերը, այդ մարմինը: Մազին ալիքը կը
նետուէր կուրծքերէն վար եւ հրաշալի կորութիւն մը
կը դժէր այդ կաթնահամ ստինքներուն վրայ, մինչեւ
պորտը հասնելով: Ու երիտասարդին ակնարկը կ'եռար
այդ աղուորութեան վրայ, լոյսէ շղարշ մը կը դառ-
նար ու կը պարուրէր, խանդադատանքով կը գրկէր
զայն, բոլոր մանրամասնութիւններով: Կը կարմրէր
աղջիկը, ակնարկը կը խոնարհեցնէր զեանի դորդին
ու մատներով հանգոյց մը կը շինէր գիստերուն կո-

բութեան վրայ, ու կը շիկնէր, ալ աւելի կատղեցնելով երիտասարդ հայը, որ կը տառապէր ցանկութեան կրակին նետուած: Եւ հակառակ փրփրացող այդ զգացումներուն, ցատկատող յուզումին, Կարպիս կը վախնար որ յանկարծ պիտի տեսնէր անոր իսկական նկարագրերը, պիտի անդրադառնար անոր էութեան, ու կորսնցնէր իր մէջ կայլակող սէրը անոր հանդէպ, եւ որպէսզի փորձութեան ջրվէժը կասեցնէր փուլուումէն առաջ, յանկարծ թեւերուն մէջ առաւ քայլ մը անդին կանգնող աղջիկը ու ինկան անկողինին վրայ:

— Հիմա բոլորովին քուկդ եմ, այո՛, միայն քուկդդ, փսփոսաց աղջիկը, թեւերը շղթայելով տղուն միջին շուրջ:

Կարպիս չխօսեցաւ, կուրծքին սեղմեց փսփուկ այդ իրանը ու թաղուեցաւ անոր մէջ, դէմքը մխրճեց միտերուն մէջ եւ ստինքներու հովիտէն ծծեց զգլխիչ բոյրը այդ թարմութեան, մինչ մատներով կը սիրէր, կը համբուրէր զիստերը, կոնքերը, ու շրթները կը պտըտցնէր ստինքներուն վրայ, անոնց հետ խաղալով, հաճոյանալով, ու ապա կը յանձնուէր անվերջանալի համբոյրին որ շրթները կ'այրէր այդ զօրաւոր հեւքին մէջ: Պահ մը առաջուան նազանուտ, մեղկ ու դողտրիկ ալիքները սկսան ուռիլ, տարփանքի փոթորիկին ելեւէջներ պարզեւելով, մինչեւ որ ահաւոր բարձրութիւններու վրայ աստղեր շողացին այնքան խոստումով, եւ վերջին անկումը եղաւ կատարեալ ահեղասաստ, սիրաղեղ, որովհետեւ աղջիկը կը դալարուէր տղուն դէմ, ու անհասկնալի մրմունջներով կը կատղեցնէր, կը բորբոքեցնէր պրկուած երիտասարդը, կորսուած երիտասարդը: Հիմա ալ, աղջիկը չէր կրնար զսպել ինքզինք, այլեւս կ'ուզէր յանձնուիլ, կ'ուզէր վերջապէս հասնիլ աստղերուն, երկնքին, որպէսզի այդ բարձունքէն իյնար ամբողջ ուժովը, եւ սար-

ստիւած կիրքի հարուածէն, եւ դինովցած միտերու շունչով, ալ աւելի կը փաթթուէր, կը նոյնանար տղուն հետ, ճանկոտելով, բզկտելով անոր թեւերը, եւ յանկարծ, ահագին աղմուկով փչրուեցաւ ան...

Յաջորդ առաւօտ համալսարանէն աղաքարագիր մը ստացաւ Կարպիս:

Աղաքարագիրը ստացաւ, որովհետեւ դասերու մէջ կրած ձախողանքը վրայ հասած էր, դուարթ ու հաճոյալի օրերը մէկէն ամպոտելով: Հակառակ ակնկալութեան, յուսախար եղաւ Կարպիս, յուսախար եղաւ՝ ցուցարեբած անտարբերութեան համար, իրողութիւնը շուտով ճանչնալով, անոր հետ հաշտուած ըլլալու կամակորութեան համար: Այդ պատճառաւ է որ, զղջումի ո՛չ մէկ տրամութիւն, անկումի ո՛չ մէկ ստուեր երեւցաւ անոր դէմքին վրայ: Յետոյ միայն անդրադարձաւ պատահածին ահաւորութեան, բայց չխօսեցաւ, չլիճեցաւ արուեստի սիրահար իր հօգիին հետ, քանի որ ան լեցուած էր Վիքիով, գեղեցիկով, խոստումով: Համալսարան հասնելուն անմիջապէս ուղղուեցաւ ճաշարան, ուր դաւաթներու մէջ սուրճը կը շողիանար, բարեկամներուն առջեւ:

Պօսակցութիւնը դարձաւ նախ սովորական հարցերու, երեւոյթներու շուրջ: Գէորդ ըսաւ թէ քեզ տեսնողը հաճի կ'ըլլայ. յետոյ մոռցուեցաւ հաճին, եւ անմիջապէս անդրադարձան Սուրէնին ամուսնութեան: Ամիս մը կար միայն, միայն ամիս մը վկայուելու եւ յաջորդ օրն իսկ ամուսնանալու համար: Տուն պիտի բերէր օտար աղջիկ մը եւ վերջ պիտի տար Լիրանանի մէջ կամուրջներ կառուցանելու երազին, այդ պահուն, Կարպիս, յանկարծ մոռցաւ իր դայթակղութիւնները, իր կեանքը պղտորող իրողութիւնները, եւ իր նախկին ինքնալստահութեան, դոռողութեան տիրանալով ըսաւ մէկ շունչով.

— Գիտէի որ այդպէս պիտի աւարտէր այս պատմութիւնը, որովհետեւ կը զգայի թէ ինքնախաբէութիւն էին քու նախապէս որոճացած դադափարներդ, յղացած ծրարիւրներդ: Ես գիտէի քու ինչ ապրանք ըլլալդ. վաղը դուն ալ պիտի ըլլաս բոլորին պէս, եւ նիւթականի արշաւին մէջ պիտի խեղդես հոգեկան բոլոր արժանիքներդ ու վերջապէս պիտի դառնաս կաշիի փրկութիւնը որոնող միջակութիւն մը: Այո, ինծի այնպէս կը թուի թէ բոլորդ ալ շինուած էք նոյն կաշիին, եւ դայն փրկելու համար բնաւ չէք մտածէր պահանջուած գինին մասին, այն ժողովուրդին որ ձեզ ծնաւ՝ աւելի փայլուն նպատակի մը համար: Ու այսպէս, ձեր անձը կուռք դարձուցած ապագայի մը սիրոյն, ու անոր առջեւ անբնական կը խնկարկէք, մտնալով որ մայր մը եւս արցունք կը թափէ այս պահուն, հեռաւոր երկրի մը մէկ սղարլի ծերպին մէջ: Հակառակ քու մասիդ ունեցած վերապահութիւններու, համոզուած էի որ դուն աւելի ուշիմ ես անոնցմէ, որոնք այս հողին վրայ ոտք դնելուն պէս կը մոռնան իրենց անցեալը, երազ մը ամբողջ որ կ'արժեւորէ ապրելու իմաստը, շարձարանքը: Ձեզի նման ճարտարապետներ, ճարտարագէտներ ու ճարտասաններ կը վխտան հոս, դրասնեակներու փոշիին մէջ, բայց հոն, այո, հոն է որ քու ունեցած պատրաստութեամբդ, մտքի ուժովդ պիտի կարենայիր իրական բարիք մը դառնալ... Բայց հոս պիտի կորսուիս դուն ալ, սպառող այս վաղքին մէջ պիտի վերածուիս մեքենայի մը, եւ շուտով մոռնաս երէկուան խոստումներդ. եթէ ամուսնանալ էր միտքդ, փափաքդ, գոնէ հայ մը առնէիր, հայ, հիմա ինչպէ՞ս պիտի հանդուրժես այն դադափարին որ քեզմէ ծնածները պիտի ըլլան օտար, պիտի խօսին այն լեզուն, որուն վար-

ժուել չէիր կրնար իբր թէ, ասոր ի՞նչ կ'ըսես Սուրէն, սիրելիս:

Եւ որպէսզի իր անձին հետ կապուած հարցերուն ակնարկութիւն չընեն բարեկամները, քիչ մը մտածելէ ետք, Կարպիս ոտքի ելաւ ու շարունակեց մեղմութեամբ.

— Ինծի մի նայիք դուք, ես մէկը չունիմ, ինծի համար լացող չկայ, իսկ Պոլիս վերադարձուելիք միջավայր մը չէ, ատիկա դուք ալ գիտէք...

Այո, Կարպիս յաճախ խօսած էր Պոլսոյ նշանաւոր փողոցներուն մասին, իր թշուառ մանկութեան եւ տառապանքներուն մասին: Բայց այս անգամ, խանդավառութեան թափը չկոտրած շարունակեց խօսել Վիքիին մասին: Այնքան ոգեւորուեցաւ, այնքան յուզուեցաւ այդ պահուն, որ Գէորդին մտածումը կեղբոնացաւ վաղահաս այն վտանգին շուրջ, որ վերջակէտը կ'ըլլայ սիրային նման արկածախնդրութիւններու: Վերջին քանի մը ամիսներու ընթացքին, Կարպիսին բացակայութենէն դատելով անոնք դուշակած էին արդէն որ ան անպայման կապուած էր բանի մը, բայց բնաւ չէին ուզած հաւատալ որ ստեղծուած այս հեռաւորութեան պատճառը աղջիկ մըն էր, ան ալ սովորական տեսակէն, հասարակ, բոլորին պատկանող պարուհի մը:

Երբ կրկնուեցան այն բոլոր նախադասութիւնները, որոնք նման առիթներուն կ'արտասանուին, Կարպիս անմիջապէս զգաց փոթորիկի մը մօտենալը ու փախաւ շուտով, մեծ քայլերով, շփոթած, հեռացաւ բարեկամներէն ու ինկաւ՝ իսկական փոթորիկին մէջ...

Ալիքները կը յառաջանային վէտովէտուն խաղերով, թեթեւ ու փոքր ծփանքներով ու աւազին վրայ կը սպառէին մըմունջներ արձակելով: Ահագին բարձրութենէն արևը կ'իյնար ցից սպառաժներու դադաթին եւ անոնց կողերէն կը հոսէր այնքան նազանքով, աղբիւրներու պէս: Այդ ժայռերու ոտքերուն տակ, բոլորովին մեկուսացած ամբոխէն, կատակելով կը զուարճանային անոնք, ու ապա մանուկներու պէս զիրար հալածելով կ'իյնային կակուղ աւազին վրայ: Հիմա, ալ յոգնած վազելէն ու ցատկոտելէն, երկընցած են իրարու քով ու երիտասարդին մատները խենթութիւններ կ'երազէ:

— Ձէ', կերի, խելօք եղիք, նորէն կատղեր ես... , չըլլալիք բան ես, տղա՛յ... շունչս կը կտրի կոր, տե՛ս, մարելիք կու գայ կոր վրաս... քաշէ սա անօթի ձեռքերդ, քաշէ՛ կ'ըսեմ կոր...

— Ինչպէս քաշեմ ձեռքերս, երբ ունեցածդ ամբողջութեամբ թափեր ես անոնց առջեւ...

Երբոր ձեռքերը քաշեց ու ափերը դրաւ դիտուն տակ, մտածումները խռնուեցան հոն, հին օրերու վէրքերը կրկին բացուեցան, ու պանդուխտ տղան ուղեց ըսել, թէ իր այս ըրածներուն պատասխանատու չէր ինք, որովհետեւ ծովուն առջեւ կենալը անպայման տեղ մը երթալ կը նշանակէ, ու ինք տակաւին դամուսած է հոս ու նոյնխի չի համարձակիր խօսիլ, պատմել իր ցաւերը, իր վիշտերը, քանի որ զեփիւռն է այս խենթութիւններուն բուն պատասխանատուն: Ալիքներ կան որոնք կը խօսին, երբեմն մեղմ ու երբեմն ալ շատ ուժղին: Հիմա սակայն, ալիքները լուռ էին կարծես, որովհետեւ կարպիս կը խօսէր, անդա-

դար կը խօսէր իր ականջին տակ: Եւ այդ առանձնութենէն օգտուելով, քաջալերուելով այդ ամայի ծովափին զմայլելի խորհուրդներէն, երիտասարդ տղան կ'ուզէր ըսել թէ իր զուարթութեան, իր անհատում խանդավառութեան բուն աղբիւրը ահա հոս է, բայց անդիտակից իր այդ մեծ դերին կարծես կ'ուրանայ ներկայութիւնը այրող այդ սիրտին, ու կը վերանայ: Բեւ կը խօսէր ան, նախ ինքն իրեն, ապա՝ աղջկան, եւ ամենայն լրջութեամբ իր սէրը կը յայտնէր այլալուծ պարուհիին, մանկացած աղջկան:

Վիքի նախ չհասկցաւ թէ ինչ ըսել կ'ուզէր կարպիս, բայց երբ յստակօրէն անդրադարձաւ անոր խօսքերուն, եւ երբ կրկնել տուաւ պահ մը առաջուան արտասանուածը, յուզուեցաւ յանկարծ, ազդուեցաւ բացառիկ սաստկութեամբ, որովհետեւ բնաւ չէր ակընկալեր որ անանկ բան մը կրնար պատահիլ իրեն, եւ այնքան դեղեցիկ կերպով: Բայց երբ յուզումին ազդեցութենէն դուրս ելաւ ան, երբոր վերագտաւ իր հանդարտութիւնը, խօսեցաւ իսկոյն.

— Ձէ, կերի, լուրջ չես կրնար ըլլալ, պէտք չէ որ լուրջ ըլլաս, թոյլ տուր որ մեր բարեկամութիւնը մընայ իր ներկայ ձեւին մէջ ու դոհանանք այս վիճակին առաւելութիւններէն... շնորհակալ եմ ազնիւ դատմանքուդ համար, բայց ալ շատ ուշ է ինձի պէս մէկու մը համար համակերպիլ սիրոյ օրէնքներուն, կաշկանդումներուն...

— Այդքան շուտով պատասխանելու պատճառ մը չունիս Վիքի, դուն չես գիտեր, թերեւս ալ չես անդրադառնար որ բազմաթիւ ձեւերով մենք իրարու կը նմանինք, մենք զիրար կը լրացնենք, եթէ ատոր վրաս հըլլայի, նման յայտարարութիւն մը ընելու համարձակութիւնը երբեք պիտի չունենայի, հաւատա ինձի... Թոյլ տուր որ սիրեմ քեզ, սիրեմ այնպէս,

ինչպէս կը ցանկայ սիրտս, այնպէս ինչպէս երեւակայած եմ մութ դիշերներու պարապութեան մէջ, տուն չունեցող իմ հոգիով...

Երիտասարդին այդ անկեղծ արտայայտութեան վրայ շուտով տրամեցաւ աղջիկը եւ փորձեց ժպտիլ յուզումին մէջէն, որովհետեւ յստակօրէն կ'ըմբռնէր ալ, որ բաղմամբիւ արդելքներ կային զորս չէր կրնար բառնալ, չէր կրնար խորտակել տաք ու սրտաբուխ զգացումներով: Եւ որպէսզի սխալ չհասկցուի իր այդ շուարումը, լռեց վայրկեան մը, նայուածքը հեռուն, ծովերու բացը, ու մտածումները զասուորելով ըսաւ դրեթէ վերացած.

— Չէ, Կերի, չեմ կրնար ընդունիլ սիրոյ առաջարկդ. այդ խոստովանութիւնդ որքան ալ հրապուրիչ թուի պապակած սիրախ, ստիպուած եմ դարձեալ մերժել զայն, որովհետեւ բաներ կան, որոնց վրայ իշխելը իմ կամքէս վեր է ալ, իմ կարողութիւնէս վեր, բաներ որոնք անբաժան մասը կը կազմեն իմ կեանքիս. թերեւս աւելի լաւ պիտի ըլլայ եթէ առջարկեմ վերջնականօրէն բաժնուիլ, սակայն մի մոռնար որ բեմի լոյսերէն, խրախճանքներէն ու գինարբուքներէն ետք, ես ալ կ'ունենամ առանձնութեան դժուարին պահերը եւ անոնց սոսկումէն ազատելու համար պէտք ունիմ քեզի, քու մօտիկութեանդ, քու անկեղծութեանդ... Անբացատրելի պարապութիւն մը կը տիրէ այդ պահերուն մէջ, անբացատրելի պարապութիւն մը:

Ձուրերը պղտորեցան հետզհետէ եւ նաւակներուն պայքարը շարունակուեցաւ բարձրացող ալիքներուն դէմ, ամպտոտած ու վտանգաւոր երկինքի մը տակ: Եւ ներքին պայքարի մը մէջ ինկած, երիտասարդ տղան փորձեց տարհամոզել աղջիկը, ուղեց անտեսել անոր անդրդուելի կեցուածքը եւ ըսաւ թէ ասանկ առա-

ջարկներու շուտով պէտք չէր պատասխանել, պէտք է ժամանակ տալ զգացումներուն որպէսզի խաղաղին անոնք, հանդարտին անոնք եւ իրավիճակները դատեն առարկայօրէն, տրամաբանութեամբ: Բայց երբոր ջղայնացաւ ու լռեց Կարպիս, երբ յուսահատութեան նշաններ սկսաւ ցոյց տալ բարկութիւնը քողարկելու ժամանակ, Վիքի շտկուեցաւ եւ արտասովոր հանդարտութեամբ սկսաւ խօսիլ.

— Գուն պէտք է դիտցած ըլլաս որ քեզմէ աւելի ապրած եմ կեանքը, տեսած եմ զայն իր բոլոր տղեղութիւններուն մէջ, դիտես նաեւ որ... բայց անշուշտ որ կը կատակես, Կերի, այո՛, ըսածներդ պարզապէս առանձնութեան արդիւնք են, սակայն մենք չափահաս ենք կարծեմ, եւ պէտք է դիտնանք մեր առած քայլերուն հետեւանքները... Ալ չկրցաւ շարունակել, որովհետեւ բառերը սկսան դիբար հրմշտկել զողացող շրթներու վրայ եւ նախադասութիւնները դարձան անկապակից ու չիթթ:

Երեւութական այդ յուզումին ի տես կատղեցաւ տղան, եւ այլեւս ընելիքին, ըսելիքին չանդարդառնալով, զայրոյթը թափեց ահաւոր բացազանչութիւններով.

— Այո՛, դերասանութիւն է ըրածդ, պարզապէս դերասանութիւն, որովհետեւ ըսածներդ տրամաբանական ոչ մէկ հիմք ունին այս պարադոքսին, եւ ճարպիկ դարձուածքներովդ միայն ինքզինքդ կը խաբես, միայն դուն քեզ կը հակասես առանց դիտակցելու ըրածիդ, կամ դիտումնաւոր կերպով, բայց վստահ կրնաս ըլլալ որ ո՛չ այդ արուեստական յուզումդ եւ ոչ ալ քողարկուած արտայայտութիւններդ կրնան աղդել իմ վրաս... Ինչ է տարիքդ որ ելեր ես ինձի փորձառութեան դաս կու տաս, յուսալով թերեւս որ խորհրդաւոր այդ մօտեցումդ կրնայ սպաւորել դիս,

կրնայ մեղմել յուսախաբութիւնս, դառնութիւնս... լոյսերու եւ հիացական բացազանչութիւններու գերի դարձած հողիդ ինչպէ՞ս կրնայ հասկնալ խորութիւնը այն տառապանքին որուն մէջ կը բզկտուի մերժուած սիրտ մը...

Վերջին բառերը արձագանդեցին հեռաւորութեան մէջէն, որովհետեւ Կարպիս արդէն հասած էր մօտակայ ժայռը եւ հագուստները հաւաքելով կը պատրաստուէր մեկնել, երբոր աղջիկը հասաւ ետեւէն, ամուր մը կտուչեցաւ անոր թեւերուն, ամբողջ ուժովը փարեցաւ այդ մերկ ուսերուն եւ թոյլ չտուաւ որ մեկնի տղան:

— Կ'արդիլեմ, կ'արդիլեմ որ այսպէս չարչարես զիս, սխալ դատես իմ զգացումներս եւ այս վիճակով հեռանաս ինձմէ... Եկո՛ւր, հանդարտէ քիչ մը, այլապէս բնաւ պիտի չգիտնաս սխալած ըլլալդ, դիտեմ պիտի չարչարուիս, պիտի տառապիս անտեղիօրէն...

— Խօսելիք ինչ մնաց. ինչ որ պէտք է ըսուէր, ըսինք արդէն, ասկէ աւելին նպատակի մը պիտի չձառայէ այլեւս...

— Կը տեսնես որ բնաւ չես հասկցած զիս, ըսաւ աղջիկը դողացող ձայնով, եթէ երբեք միայն պահուած մը համար ակնարկդ հեռացնէիր սա մարմնական առաւելութիւններէս եւ փորձէիր դէպի ներս նայիլ, այն ատեն գուցէ բոլորովին տարբեր դադափար մը կազմած ըլլայիր իմ մասին, եւ խօսքերուս չտայիր անդոյ իմաստ մը:

— Պարապ խօսք, դռնից տղան, թեւերը ազատելով աղջկան կաշկանդումներէն, կը մոռնաս որ քեզ ճանչնալէս առաջ քանի, քանի աղջիկներ ունեցեր եմ տրամադրութեանս տակ, այո, քեզի չափ աղուոր, եւ թերեւս աւելի, շատ աւելի, բայց անոնցմէ ոեւէ մէկուն առջեւ սիրտս չեմ բացած, որովհետեւ անոնցմէ

ոեւէ մէկուն հանդէպ չէի ունեցած այն զգացումը, որուն վրայ ծիծաղել կը փորձես դերասանուհի մը պէս, ան ալ՝ դէչ խաղարկութեամբ...

— Օ՛, Կերի, եթէ մարդիկ իրենց ժամանակէն վայրկեան մը միայն տրամադրեն ու անձնուրաց դիտեն իրենց շուրջը, այն ատեն պիտի ըմբռնեն շուտով, պիտի գիտակցին շուտով, թէ կեանքի թշուառութեան, տառապանքներուն մենատէրերը չեն իրենք բնաւ, եւ թէ իրենց ունեցած մտայլ վիճակը ուրիշի մը համար բախտաւորութիւն կրնայ սեպուիլ միայն...

— Ատիկա ի՞նչ կապ ունի իմ սէրիս հետ, ըսաւ տղան յանդիմանական շեշտով մը, իմ դժուարութիւններս ինձի կը բաւեն, ուրիշներունը բաժնելու չափ զօրաւոր չեմ ես:

— Հապա ի՞մս, Կերի, եթէ զիս իրապէս կը սիրես, եթէ քիչ մը կը յարգես իմ զգացումներս, այն ատեն այդքան խստութեամբ պիտի չդատես զիս, որովհետեւ, որովհետեւ...

— Եթէ ըսելիք մը ունիս, շուտ ըրէ, կը մտիմ կոր, միջամտեց Կարպիս, դրեթէ կորսնցուցած նախկին շեշտը, եւ շապիկը հագուելով կոթնեցաւ ժայռին:

Երբոր տեսաւ որ տղան հանդարտած էր այլեւս, ու դրեթէ պատրաստ էր զինք մտիկ ընելու, ծունկերուն վրայէն աւազը թօթուեց եւ կոնակէն սահեցուց ծովեզերքի յատուկ շրջազգեստը, եւ ապա եկաւ ու նստեցաւ անոր ոտքերուն տակ: Յետոյ, նոյն դիրքին մէջ, առանց շարժելու, գլուխը կախ, նայուածքը յանձնած գետնի խճաքարերուն, ըսաւ մեղմ ձայնով.

— Սիկարէթ մը կու տա՞ս...

Երբ սիկարէթը վառեց ու երկարեց աղջկան, փորձեց խուսափիլ անոր կողմ նայելէ, բայց քովնտի նետուած ակնարկով նշմարեց անոր ընկճուած, փըշ-

բուած վիճակը ու կարծես առաջին անգամ ըլլալով ըմբռնեց խորութիւնը իր սէրին եւ ուզեց անմիջապէս թեւերուն մէջ առնել զայն, սփոփել, գոռել, շոյել, խանդաղատանքով ու անսահման սիրով պարուրել զայն: Այո, սիրել զայն, անհատնում, անվերջանալի սիրովը իր պանդուխտ սիրտին, որովհետեւ, որովհետեւ... Զղջումի հեկեկանքը կը բարձրանար թոքերէն, կոկորդէն, ու ամբողջ մարմնով կը ցնցուէր, կը սարսուար ու կ'աղերսէր, բայց քանի որ չէր կրնար ընկճել արեւելքցիի հպարտութիւնը, չէր կրնար կոխկրտել երիտասարդի իր անպէտք փառասիրութիւնը եւ ծոնկի դալ այդ պաշտելի էակին առջեւ, իր աննման, զմայլելի սէրին առջեւ, այո, ձեռքերը իրարու միացնել ու խոնարհիլ եւ խոնարհիլ մինչեւ որ մաքրուի, սրբուի իր տկարութիւններէն, իր փառասիրութիւններէն ու վերջապէս, եւ վերջապէս... Օ՛, պիտի խենթանար, յանկարծ պիտի կորսնցնէր բանականութիւնը ու սարսափահար աչքերով քալէր ծով, քալէր խենթի մը պէս, կորսուած, վերացած, տարբալուծուած: Ահա, այլեւս կորսնցուցած է նախկին հպարտութիւնը, նախկին գոռոզութիւնը ու կը սպասէ...

— Ուրկէ՞ սկսիմ, ես ալ չեմ գիտեր, որովհետեւ ինչ ձեւով ալ մօտենամ այդ տարիներուն, կը վախնամ որ բառերը պէտք եղած զօրութիւնը չունենան իսկական պատկերը ներկայացնելու, պատկեր մը որ ճարթկուած է ճիշդ մեր կեանքին պէս, անոր, որ իմ սեղանի գիտակցութեան գալէս ի վեր:

«Հայրս գինեմոլ մըն էր, որքան որ կը յիշեմ, յետոյ միայն հասկցայ որ անոր այդ վիճակին ենթարկուելուն գլխաւոր պատասխանատուն մայրս էր եղած: Այդ տարիներուն բնակութիւն հաստատած էինք ասկէ երկու հարիւր մղոն հեռաւորութեան վրայ գլխաւոր փոքր քաղաքի մը մէջ: Գեղեցիկ քաղաք մըն

էր, մինչեւ հիմա ալ, երբեմն կ'այցելեմ այդ շրջանը, կը քալեմ այն փողոցներէն ուր կեանքը ճանչցայ իր սոսկալի, ահաւոր երեսներով: Չեմ յիշեր թէ քանի տարեկան կայի, երբոր առաջին անգամ անդրադարձայ որ մեր ընտանեկան մթնոլորտը սովորական չէր, որովհետեւ ամէն անգամ որ հայրս ու մայրս իրարու քով գային, միայն պոռչտուք ու հայհոյանք կը լըսուէր անոնց բերաններէն: Անխնայօրէն կը կռուէին անոնք, եւ օր մըն ալ, չեմ գիտեր ինչ պատճառաւ, հայրս դարձեալ ինկաւ այդ նոպաներէն մէկուն մէջ ու սաստիկ կերպով ծեծեց մայրս, մինչեւ որ արիւնը ժայթքեց անոր քիթէն ու բերնէն ու տապալեցաւ ճաշանոցանին տակ: Այն ատեն, սարսափահար վազեցի հօրս, փաթթուեցայ անոր սրունքներուն ու սկսայ փոքր ձեռքերովս անընդհատ զարնել, զարնել, զարնել, մինչեւ որ զիս բռնեց մէջքէս, վեր առաւ յանկարծ ու երեսիս թքնելով պոռաց բարկացայտ. «Փի՛ճ, փի՛ճ, փի՛ճ, վաղը երբ քիչ մը մեծնաս, դուն ալ անոր պէս բող մը պիտի ըլլաս...»:

«Երբ քիչ մը աւելի մեծցայ եւ բառերուն իմաստը սկսաւ պայծառանալ այդ փոքրիկ ուղեղիս մէջ, այն ատեն ըմբռնեցի, թէ ինչու զիս այդպէս կ'անուանարկէր հայրս, ամէն անգամ որ զայրանար մօրս դէմ: Տասը տարեկան էի, սակայն այդ միջավայրին մէջ շուտով կը հասունանար դատողութիւնս, գիտակցութիւններէս հասկցայ ի վերջոյ, որ մայրս ժամանակին մեծ մասը կ'անցընէր գինետուններու մէջ եւ ուրիշ մարդոց հետ անկողին կ'երթար, ալ աւելի բորբոքեցնելով հայրս: Մինչեւ այսօր ալ տակաւին չեմ հասկցած թէ ինչպէս սկսած էր անոնց այս անտանելի կենակցութիւնը, թէ ինչպէս կը հանդուրժէին միեւնոյն յարկի տակ ապրել, հրէշներու պէս զիրար խոչտանքելէ, զի-

բար արիւնեւէ կտք. միայն այն կը յիշեմ որ, օր մըն ալ, այդպիսի աննկարագրելի կռիւէ մը վերջ, մայրս փախաւ ու ալ երեսը չտեսանք անոր...»:

Այլջկան սաստկացող յուզումին ի տես, կարպիւս, կամաց կամաց իջաւ իր բարձունքէն, եւ եկաւ ու նըստեցաւ անոր կողքին: Յետոյ թեւը դրաւ անոր ուսերուն ու աղաչական շեշտով մը ըսաւ.

— Պէտք չունիս շարունակելու, կը բաւէ ալ, կը բաւէ:

— Ոչ, ոչ, պէտք է վերջացնեմ, պէտք է որ անպայման վերջացնեմ, որպէսզի դիս իրապէս ճանչնաս, լաւ դիտնաս նաեւ թէ ես քու կարծածիդ չափ ալ անմեղ չեմ, անփորձ չեմ բնաւ...»

«Երբոր մայրս փախաւ, հայրս սկսաւ ալ աւելի խմել, ալ աւելի դինովնալ ու իր բարկութիւնը կեղբոնացնել իմ վրաս. բայց երկար չտեսեց այդ վիճակը, որովհետեւ քանի մը շարաթ ետք ինքնաշարժի արկածով մը մահացաւ ան: Այն ատեն դիս բռնեցին ու տարին մեծ մօրս տունը: Հոն է որ տառապանքս սկըսաւ մեծնալ, անկրելի դառնալ, որովհետեւ մօրս պարզան ի մտի ունենալով, թէ՛ մեծ մայրս, եւ թէ՛ մեծ հայրս դիմեցին անմարդկային խստութիւններու, որպէսզի մեծնալով անոր պէս փողոցային կին մը չըլլայի, անբաղձալի մէկը չըլլայի: Եւ այս վախը կը սերմանէին մէջս, գրեթէ ամէն օր յիշելով մօրս ինկածութիւնը, եւ անոր անարդանքը կը դամէին իմ ճակտիս, կարծես թէ ես եղած ըլլայի այդ բոլոր դժբախտութիւններու պատասխանատուն, անոր անպարկշտութեան, անբարոյութեան պատճառը:

«Տասներեք տարեկան հազիւ կայի, երբոր առաջին անգամ փորձեցի փախիլ անոնց մօտէն ու հռչակել իմ ազատութիւնս, անկախութիւնս, որովհետեւ այլեւս մարմինս կը կազմուէր եւ այդ տարիքի աղջկայ

մը յատուկ փորձութիւններ կը չարչարէին դիս: Քաղաքէն դուրս չելած, ոստիկանութիւնը բռնեց դիս ու մեծ հօրս թեւադրութեան վրայ դիս տարին, անբաղձալի պատանիներու զգաստարանը: Եւ ի՞նչ չքնաղ զգաստարան: Հոն է որ աչքերս իրապէս բացուիլ սկըսան, ու մինչեւ այն ատեն ինչ որ չէի գիտեր, քանի մը ամիսէն, այդ դարձելի միջավայրին մէջ սորվեցայ ամէն բան, ու այդպէսով է որ ամբողջացաւ դաստիարակութիւնս, եւ վճռեցի առաջին պատեհութեամբ իսկ վերջնականօրէն հեռանալ այդ տունէն ու քաղաքէն:

«Առաջին փորձիս ձախողութիւնը պատճառ եղաւ որ անկէ ետք, մեծ մայրս հսկէ առած բոլոր քայլերուս վրայ, ինչ որ աւելի տաժանելի դարձուց կեանքըս, եւ ստիպուեցայ նոր հնարքներու մասին մտածել՝ կտրելու համար անոնց խստութիւնը: Բայց չյաջողեցայ, մինչեւ որ տասներհինգ տարեկան եղայ ու սկսայ աշխատիլ մօտակայ ճաշարանի մը մէջ:

«Հոն է որ զգացի թէ այլեւս դժուար պիտի չըլլար հին երազս իրագործել, որովհետեւ մարմինս կատարելապէս հասունցած էր ալ, եւ յաճախորդներ երկարօրէն կը դիտէին կուրծքերս, սրունքներս եւ երբեմն նոյնիսկ լիտի առաջարկներ կ'ընէին, արտաքին այդ հասունութիւնը տարիքի հետ չփոթելով: Ինչու սուտ խօսիմ, ընծայուած այս ուշադրութիւնը դադարնօրէն կը հրճուեցնէր դիս եւ շատ յաճախ, սկսուած խօսակցութիւնը շարունակելու համար կը ստէի տարիքիս մասին, ըսելով որ տասներութէն վեր էի արդէն, եւ թէ...»

«Այդպէս է որ, օր մըն ալ, չըջուն վաճառորդ մը առաջարկեց իր հետ երթալ, մեծ քաղաքներու մէջ բախտս որոնելու համար: Չես կրնար երեւակայել թէ որքան խանդավառուեցայ, ուրախութեանէս ինչ ընելու

չէի գիտեր, բնաւ չէի մտածեր հետեւանքներու մասին, անկումին մասին, մարդոց զազանութեան, անխղճութեան մասին: Կ'ուզէի հեռանալ այդ տունէն եւ պատրաստ էի պահանջուած դինը վճարելու: Եւ վճարեցի, այնքա՛ն անգամներ: Քառասուննոց մարդ մըն էր ձանը եւ անկեղծ՝ իր արտայայտութիւններուն մէջ, բայց ես էի որ միամտութեանս մէջ թաղուած, չէի ըմբռներ նոյնիսկ բացատրուածը: Եւ ընդունեցի, ինչ որ առաջարկեց ան:

«Սան Ծրանսիսկօ հասնելնուս, իր յարկարածինը դացինք ու դրեթէ երեք օր դուրս չելանք հոնկէ: Հակառակ իր մեղմ արտաքինին, անուշ խօսքերուն, քաղաքավար վերաբերումին, չափազանց կոշտ սիրող մըն էր ձանը: Կոյս էի տակաւին, ու զիս ցաւցուց, օ՛, վայրագօրէն ցաւցուց զիս, մինչեւ այսօր ալ, երբոր յիշեմ այդ օրերը, սանկ, անզսպելի փափաք մը կու դայ վրաս, զինք սպաննելու մարմաջ մը կարծես: Մեր բարեկամութիւնը երկար չտեւեց սակայն, երբ տեղեկացայ իր ամուսնացած ըլլալուն, այն ատեն յուսահատութենէս ինչ ընելս չգիտցայ, ու արցունքներուն մէջէն յայտնեցի տարիքս եւ սպառնացի ոստիկանատուն երթալ, եթէ խոստումը յարգելով ինծի գործ մը չգտնէր անմիջապէս: Եւ յարգեց խոստումը: Բարեկամներուն միջոցաւ գործ մը կարգադրեց ինծի, եւ այդպէս է որ սկսան պարասրահներու զեխ ու համարձակ օրերը...»:

— Սիկարէթ մըն ալ տուր հաճիս, ըսաւ Վիքի, միշտ գլուխը կախ, նայուածքը խճաքարերուն:

Այս անգամ երկու հատ վառեց Կարպիս: Մէկը զետեղեց աղջկան շրթներուն վրայ, իսկ միւսը առաւ իր մատներուն մէջ եւ հաղիւ թէ պիտի ըսէր, որ այլեւս չչարունակէ, թէ ինք ա'լ պէտք չունէր մինչեւ վախճանը հասնելու, թէ ինք հասած էր իր նպատա-

կին, եւ ահա, կը գտնուէր անոր մօտ եւ հանդարտօրէն կ'ունկնդրէր զարկերը այդ սիրտին, բայց պատեհութիւն չունեցաւ բերանը բանալու, քանի որ Վիքի սկսած էր արդէն.

«Յաջորդող տարիներուն, կեանքս սկսաւ նոր ուղղութիւններ ընդգրկել: Վարժուեցայ բեմի լոյսերուն, ծափահարութիւններուն, հիացական բացազանչութիւններուն, մարդոց սին ու անպէտք փառասիրութիւններուն, ունայնամտութիւններուն եւ վերջապէս կեանքը տեսայ միայն լոյսերու մէջէն ու շնորհիւ մարմնական առաւելութիւններուս կրցայ ընկճել հարուստն ալ, երիտասարդն ալ, եւ զուարճացայ եւ գինովցայ ամէն օր տարբեր խնձոյքի մը մէջ, տարբեր մարդու մը ընկերակցութեամբ եւ ասիկա եղաւ իմ կեանքս, անկէ տարբեր մը տեսած չըլլալուս համար: Չեմ կարծեր որ ասկէ ետք ալ, ինծի համար հնարաւոր ըլլայ տարբեր կենցաղի մը վարժուիլ, տարբեր ուղղութիւն մը տալ փափաքներուս, տենչերուս, ապրելակերպիս, որովհետեւ այս ձեւով միշտ ազատ եմ, բոլորովին ազատ, եւ ոչ ոք կրնայ բռնանալ վրաս, այո, թոյլ պիտի չտամ որ ոեւէ մէկը կաշկանդէ զիս, շըդթայէ զիս, ես ազատ եմ, ազա՛տ, ազա՛տ, բոլորովին ազա՛տ...»

Եւ մատներով բռունցք մը շինած, ծունկերուն կը զարնէր անընդհատ, բարկացայտ, մոլեղնած, սարսափելի ձեւեր առնելով: Յետոյ երբ անդրադարձաւ որ երիտասարդը իրեն կը նայէր բոլորովին ապշահար, այլալա՛ծ, հարցական, անմիջապէս վերադառաւ իր հանդարտութիւնը եւ թեթեւ ժպիտ մը ուրուադճելով բերնին շուրջ, ըսաւ.

— Կը տեսնե՞ս սիրելի Կերի, որ մեզմէ ամէն մէկը երկու անհատականութիւն ունի, անոնցմէ առաջինը արտաքինն է, այն որ մենք աճուրդի կը հանենք ծիծա-

դելով, զուարճանալով, դիմացինը խարելու, տպաւորելու մտադրութեամբ, ասոր է որ մենք կու տանք Հանրային դիմադիծ, լոյսեր, շպարներ, վայելչութիւն մը որ ամենուն հաճելի է, խսկ միւսը կը պահենք մեր ներսդին, խորունկ ու անհասելի տեղ մը, եւ կը դուրս դուրանք անոր վրայ, որովհետեւ միայն անիկա է անազարտը, անպղծելին, անհասկնալին, իրապէս արժէքաւորը, եւ քանի որ ոչ ոք կը հետաքրքրուի անով, ոչ ոք կ'ուզէ հասկնալ ու դնահատել զայն, այդ պատճառաւ ալ արտաքինը կը տիրապետէ անոր վրայ, մինչեւ որ օր մըն ալ, յանկարծ կը չքանայ ան, ու մենք կը կորսնցնենք ինչ որ թանկարժէք էր, էական էր, արժանի էր ապրելու, մշակուելու, զօրանալու... եւ ես տակաւին չեմ գիտեր, թէ մէջս կ'ապրի՞ ան, թէ ոչ բոլորին պէս... Օ՞ր, ինչ խենթ բաներ կ'ըսեմ, խենթ եմ չէ՞, իրապէս խենթ եմ, Կերի...

— Ո՛չ, ըսաւ Կարպիս, ոչ, խենթ չես դուն, այլ պարզապէս զոհն ես կեանքի դժբախտ պայմաններուն, տնօրինումներուն, վիճակներուն, որոնք անողորբէն քեզ նետած են բարդութիւններու դիրկին մէջ, չիտթեցուցիչ անորոշութեան մէջ, եւ այդ պատճառաւ է որ ներքին ճայներուդ կու տաս արտասովոր բացատրութիւն, քու տառապանքդ կ'ուզես ջնջել ինքնամոռացութեան խարուսիկ վայելքին մէջ, բայց ինչ որ ալ ես, ինչ ձեւով ալ փորձես բացատրել այդ անստուգութենէն ցայտող ցաւերը, ես կը սիրեմ քեզ ու կ'ուզեմ ճանչնալ այդ միւս աղջիկը, կորսուած, լքուած, անտեսուած աղջիկը այդ պատմութեան:

Յայտնի չէր թէ այդ պահուն ինչ կը մտածէր աղջիկը, սակայն բացորոշ կերպով զգալի էր տղուն արտայայտութեան ներգործութիւնը անոր վրայ, որովհետեւ վայրկենաբար պայծառացաւ տրտմաթախիծ այդ դէմքը, դիժերը յստակացան ու մանկացաւ ան: Ու

այդ փոփոխութենէն օգտուելով կծկուեցաւ երիտասարդին մօտ, կծկուեցաւ վերացումին մէջ, յիշատակի մը թեւերուն կառչելով մոռցաւ թէ կ'ապրէր, կը շնչէր, անհունօրէն կը տառապէր: Յետոյ սակայն, անմիջապէս լրջացաւ, ինքզինք հեռացուց Կարպիսին զգուանքներէն, յուզումէն եւ անոր աչքերուն մէջ նայելով ըսաւ, քիչ մը զուարճանալով.

— Վստահ եմ որ կը սիրես զիս եւ ես ալ բոլորովին անտարբեր չեմ քեզի հանդէպ, բայց պէտք չէ մոռնալ այն իրողութիւնը, որ քու ուշադրութեանդ զխաւոր առարկան մարմինս էր ամէն բանէ առաջ... Բայց մենք ինչո՞ւ այսքան ժամանակ կը վատնենք աւելորդ խօսքերու մէջ, ե՛լիւր, ելիւր քիչ մը զովանանք:

Ու վազեցին ցատկոտելով, կայտառ, աշխոյժ: Զուրին մէջ զուարճացան անհոգ պատանիներու պէս, զիրար հրմշակելով, պոռալով, պոռչտալով, ապա եկան ու հեռասպառ տարածուեցան աւազին վրայ, մինչեւ որ ալիքները քուեցան ու անոնց ոտքերը լուացին, մինչեւ որ երիտասարդը թեւերուն մէջ առաւ աղջկան թաց մարմինը, ու ալիքները բարձրացան խաղաղ ջուրերէն, բայց երբ տղուն պահանջկոտ զգուանքները դարձան անդապելի, այն ատեն աղջիկը ինքզինք ազատեց դիրկընդխառնումէն ու հծծեց մեղմօրէն.

— Տուն երթանք, Կերի, նորէն չարացար...



Յայտնի էր որ ատենէ մը ի վեր սաստիկ կերպով կը վիճարանէին, որովհետեւ արտասովոր լարուածութիւնը նշմարելի էր դէմքերու վրայ եւ մոխրամանին մէջ կուտակուած աւելցուքները սիկարէթին, որոշ գազափար մը կու տային սահած ժամերու մասին: Հիմա

լուծ էին ալ, եւ կարծես պատրաստութիւն կը տեսնուէր երկրորդ յարձակողականին համար: Անակնկալ ու խիստ անհաճելի որոշում մը պատճառ եղած էր այս հանդիպումին, եւ հակառակ նախապէս եղած ազդարարութեան, շուտով ինկած էին բուռն վէճի մը կատարութեան մէջ:

Շատ պարզ ու յստակ բառերով եւ առանց սեթեւեթի, Կարպիս փորձեր էր բացատրել թէ ինք վերջապէս վճռած էր ամուսնանալ, ի հարկին թողուլ համալսարանը, լքել ամէն ինչ, ու ամուսնանալ պարուհիին հետ: Խիստ դուարճալի գտնելով Կարպիսին այս անկեղծ յայտարարութիւնը, նախ կատակած էին քիչ մը, ծիծաղած էին կարճ պահ մը, յետոյ միայն անդրադառնալով որ իրապէս լուրջ էր Կարպիս եւ երեւութական ոչինչ կար այդ որոշումին մէջ, յանկարծ լրջացած էին նաեւ իրենք, սրբած էին ժպիտը դէմքերու վրայէն ու փորձեր էին տարհամոզել յամառող տղան: Երբ սակայն, Կարպիս անդրդուելի էր մնացեր իր դիրքին վրայ, այն ատեն է որ Սուրէն փրփրած էր յուսահատութեանը մէջ, ըսելով թէ մարդ խենթ ըլլալու էր նման որոշում մը տալու համար, իրապէս խենթ մը, պարզապէս խելագարած մը, ան ալ կապուելիք տեսակէն:

Ծնող լուծութիւնը իրապէս անհանդուրժելի կը դառնար ալ, եւ Գէորդին այդ փոքր յարկաբաժինը հետըզհետէ կը նեղնար Կարպիսին ակնարկին դէմ: Թէեւ մինչեւ այդ վայրկեան կրցած էր ձեւով մը զսպել ինքզինք, հակահշուտ իր զգացումները, իսկական յուզումը, բայց այլեւս չկարենալով տոկալ իրեն պարտադրուած այս անըմբռնելի վիճակին, մօտեցաւ Գէորդին ու ապաւինելով անոր լրջախոհութեան, հոգեբանական տեսութիւններուն, դատողութեան մանաւանդ, ըսաւ.

— Դուն մեր մէջէն ամենէն խելացին ես Գէորդ, եւ

վստահ եմ որ այս հարցին պիտի մօտենաս առարկայօրէն ու ապա արձակես վճիռդ...

Եւ Գէորդին շուարումէն, անճրկումէն վհատած, Կարպիս բողոքեց: Բուռնցքը հնչեցուց սեղանին վրայ ու ըսաւ թէ ինք արդէն զլացած էր որ նման ընդունելութեան մը պիտի արժանանար իր անկեղծութիւնը, գիտէր որ զինք պիտի չհասկնային, այո, պիտի չփորձէին հասկնալ: Այդ խօսքին վրայ, Սուրէն, յանկարծ ցատքեց աթոռէն, բարկացայտ աչքերով նայեցաւ Կարպիսին ու մատը ցցելով օդին մէջ ըսաւ.

— Մօ՛, յիմար, հոս քանի մը ամիս ունիս, քանի մը ամիս, այդ ի՞նչ չքնաղ մտածում է, ինչ տեսակ դատողութիւն է քուկդ, որ անանկ աղջկայ մը համար կ'ուզես ձգել համալսարանը, կ'ուզես մէկէն լքել ամէն ինչ. տարիներու աշխատանքդ, յոգնութիւնդ, զրկանքներդ ոսնակոխ ընել, առանց մտածելու, առանց մտատանջուելու: Գեղեցիկին սիրահար ես եղեր: Աւելորդ խօսք. չըսե՛ս որ պարտուեցար, ալ չես կրնար կոր դիմանալ դժուարութիւններուն, ծանր կու դայ կոր բեռդ. այո, չես կրնար կոր ինքզինքդ զրկել պատահական հաճոյքներէ, կիներէ, անանկ չըսե՛ս, որ մենք ալ աւելորդ տեղ գլուխ չյոզենցնենք, չմտահոգուինք... Մի՛ ըսեր ինձի սակայն որ գեղեցիկը պաշտելուդ համար է որ կ'առնես նման քայլ մը, անխոհեմ քայլ մը, ատիկա գոնէ ինձի չըսես, կ'աղաչեմ... Ինչպէ՞ս կրնաս մոռնալ, լքել այն երազը որուն մասին ամենէն աւելի խօսողը, քարողողը դուն էիր, հիմա ի՞նչ եղաւ քեզի, ո՞ր մնաց այդ խստութիւնդ, մեր թերութիւնները յոխորտանքով մատնանշելու արիութիւնդ... այսքան փափօն պիտի ծախէիր նուիրական այդ հետապնդումդ, նպատակի մը հասնելու բաղձանքդ, վճիռդ, ի՞նչ եղաւ քեզի, Կարպիս, ինչ... զիս կը մեղադրէիր օտար աղջկայ մը հետ ամուսնանալ փափաքելուս համար, ահա ես ալ փոխեցի

միտքս, ես ալ ըմբռնեցի տրուած որոշումին սխալ ըլլալը, ու հիմա, շատ աւելի երջանիկ եմ, շատ ալ հրպարա՝ չգայթակղած ետ քաշուելուս համար, դուն ի՞նչ կ'ըսես, Կարպիս, ի՞նչ կ'ըսես ասոր:

Լոյսը կ'իյնար սեղանին վրայ, գիրքերուն վրայ ու այնքան կ'ազուրնար հանդարտութեան մէջ: Հատ մը միայն կար հոն, լոյսերէն հեռու, մութ անկիւնին մէջ, հաստափոր, դունատ գիրք մը, որուն ետեւ ինկած էր Գէորգին մտածումը ու կը շրջուէր: Անհանդարտ էր սակայն Կարպիս, գոգոհ էր անպայման, որովհետեւ ջղայնոտ քայլերով կը շրջազայէր սենեակին մէջ, երբեմն գլուխը վեր առնելով, երբեմն ձեռքերը ճօճելով օդին մէջ: Պատուհանին դիմաց կանգնած է հիմա, ու մութին մէջ աչքերուն խորութիւնը կը չափէ, մտածումները դասաւորելով: Յայտնի է որ Սուրէնին ծանր արտայայտութիւններէն ազդուած է ան, որովհետեւ կը ջանայ բաներ մը ըսել, հակազդելու համար անոր մեղադրանքներուն, վերադրումներուն, դիւրահաս վրձիւներուն:

— Չէի խորհեր որ այսքան պիտի դռնակացնէիք ազնիւ ու ճշմարիտ զգացումները սիրոյ, բայց յետոյ, աւելին ալ պէտք չէ ակնկալէի քեզմէ, որովհետեւ նիւթական յաջողութեան տիրանալու մարմաջ գրեթէ մեքենայացուցած է քեզ, բթացուցած է ազնիւ զգացումներդ, նեղացուցած է շրջահասակացդ, եւ ի վերջոյ... Եթէ մեր գերագոյն նպատակը վկայականով մը կը պայմանաւորուի հիմա, եթէ կեանքին մէջ յաջողելու համար ատոր պիտի ապաւինինք ասկէ ետք, այն ատեն պէտք է ողբանք մեր թշուառութեան վրայ, քանի որ մինչեւ հիմա մենք պէտք էր սորված ըլլայինք՝ թուղթի այդ կտորէն վեր պահել մեր զգացումը, մեր դատելու, տեսնելու եւ գնահատելու կարողութիւնը: Ըսել չեմ ուզեր, թէ ամէն մարդ, դաստիարակուած ամէն անհատ,

նոյն չափանիշները պիտի գործածէ ապրելու նպատակը վերլուծելու ժամանակ, բայց կ'ակնկալէի դոնէ որ մերը ըլլար քիչ մը տարբեր, սովորականէն քիչ մը բարձր: Այո, ըսել կ'ուզեմ որ այս խուճապին մէջ, քառաստիպ այս ժխորին մէջ, երբեմն անհրաժեշտ կը դառնայ որ կանգ առնենք պահ մը, դիտենք մեր շուրջը, եւ մեր ներքին յոյզերուն ակնարկ մը նետելով փորձենք հասկնալ, թէ ինչ է մեր ուզածը, մեր փնտածը, մեր նպատակը: Կ'ընդունիմ որ մեզմէ ամէն մէկը ձեռով մը զոհն է փոքր ու ճղճիմ փառասիրութիւններու, չգոհացուած փափաքներու, չիրազործուած խոհալնեւորու, բայց ատիկա չի նշանակեր որ ամէն ինչ պէտք է բնութագրել վկայականի մը տիրանալու երեւութական ու խիստ շուկայիկ պայմաններով: Ինչո՞ւ չէք ուզեր ընդունիլ այն իրողութիւնը, թէ տակաւին գոյութիւն ունին ինծի նման անհատներ, որոնք կը բաղձան պարզ ու զեղեցիկ ցանկութիւններով լեցուիլ, հարստանալ, եկեանքը դիտել բոլորովին տարբեր պրիսմակի մը մէջէն: Ինծի համար կարեւոր է տենչալ զայն, շօշափել զայն, ընդունիլ զայն, որպէսզի վերջնականապէս համոզուիմ թէ հասած եմ նպատակիս, եւ կամ խարուած եմ որոնումիս մէջ, ամէն պարագայի, ինչ որ ալ արժէ այդ փորձառութիւնը, դոնէ փորձառութիւն մըն է, որուն մէջ նիւթական հաշիւներ տեղ չունին բնաւ, որովհետեւ զեղեցիկն է անոր մեկնակէտը, նպատակակէտը...

Գէորգ անհամբեր կը սպասէր որ Կարպիս աւարտէր իր վերացական զեղումները, այդ պատճառաւ ալ գլուխը առած ակերուն մէջ, անընդհատ կը շարժէր աթոռին վրայ: Երբոր Կարպիս վերադարձաւ իր մտորումներէն, երբոր ձեռքերը ծալլեց ու նստեցաւ սեղանին առջեւ, այն ատեն խօսեցաւ Գէորգ.

— Շատ աւելին կը սպասէի քեզմէ, Կարպիս, շատ

աւելին: Ճիշդ է որ անվիճելի է մարդուս ըրած ընտրութիւնը կեանքին մէջ, ճիշդ է նաեւ որ միայն մէկ կեանք ունինք ապրելու համար, եւ հետեւաբար մեզմէ ամէն մէկուն իրաւունքն է այդ կեանքը իր նախընտրած ձևով ապրիլը, պայմանաւ որ ստեղծուած վիճակները բնականոն ըլլան եւ հարկադրութիւններ չկայան, չսանձեն անոր ազատութիւնը, այլապէս եղած ընտրութիւնը կ'ըլլայ ժամանակաւոր եւ չի ցոլացներ ենթակային հարազատ ձգտումը, իտէսլը: Կը խնդրեմ սակայն, որ սա իտէսլ բառը շատ թեթեւօրէն չառնենք, որովհետեւ շատերուս համար միայն պարզ բառ մըն է ստիկա, բառ մը, որուն ետեւ կը պահուրտինք խուսափելու համար քննադատութիւններէ, եւ կամ զայն որպէս վաճան գործածելով կը հարուածենք դիմացինը: Եւ քու պարագագ այս վերջինն է, Կարպիս, քանի որ անխմաստ խօսքերով կը ջանաս քողարկել քեզ իրապէս տառապեցնող ճշմարտութիւնը: Քու փնտռածը սէր մըն է պարզապէս, ու այս հասկնալի է, փոքր տարիքէդ ծնողքդ կորսնցուցած ըլլալուդ համար, եւ սիրոյ այդ պակասը, ծնողական սէրէն զրկուած ըլլալուդ իրողութիւնը կը տրամեցնէ քեզ եւ դուն այժմ կը փորձես այդ պարասլը լեցնել: Բայց պէտք չէ՞ որ նախ վստահ ըլլաս թէ այս գեղեցիկ ու անծանօթ աղջիկը պիտի կարենայ քեզի տալ այդ սէրը... Ճիշդ այս կէտին վրայ է որ պէտք է կեղծոնացնես ուշադրութիւնդ եւ զո՞հ չըլլաս զզացական աշխարհի պատրանալից խոստումին: Ճիշդ հոս է որ մանուկը կը զատուի հասունցած մարդէն, եթէ երեք այդ երկու վիճակները կարելի է իրարմէ զատել:

— Կը մոռնաս Գէորգ, որ սիրոյ մէջ վստահութեան հարց դոյութիւն չունի, եւ մանաւանդ որ երկու անձերու կողմէ սկսուած յարաբերութիւն մը ենթակայ է կարգ մը վտանգներու, որովհետեւ պարզ բախտախաղ

մըն է այս մէկը, եւ ես ստիպուած եմ գրաւի դնել իմ չունեցած երջանկութիւնս:

Հակառակ կէս գիշերը անցած ըլլալուն, վիճարանութիւնը ատեն մը եւս շարունակուեցաւ նոյն թափով, նոյն կատաղութեամբ, մինչեւ որ աւարտեցին ինչ որ կ'ուզէին ըսել, մինչեւ որ սպառեցան պոռչտուքին մէջ, բայց Կարպիս դարձեալ անդրդուելի մնաց իր տեսակէտներուն մէջ, ու չընկրկեցաւ այդ հարուածներուն տակ: Յետոյ սակայն, երեքով նստեցան սեղանին շուրջ, աւելի հանդարտ, աւելի մեղմ ու շարունակեցին խօսակցութիւնը, վերջին յոյսի մը ապաւինելով. այդ պահուն միայն, Գէորգ, առանց նայելու Կարպիսին յուզուած դիմադիմին, առանց կարեւորութիւն ընծայելու տառապող տղուն անվերջանալի մտահոգութիւններուն, ծանր շեշտեր դնելով բառերուն վրայ, ըսաւ.

— Թէեւ պէտք չկայ այս մասին աւելի երկար խօսելու, բայց լաւ կ'ըլլայ որ խենթ քայլ մը չառած, քիչ մը եւս մտածես հետեւանքներուն մասին, որովհետեւ ի վերջոյ, մարդ պէտք է իրապաշտ ըլլայ յաջողելու համար այս կեանքին մէջ:

Այն ատեն է որ յանկարծ սկսաւ տեղատարափը: Ապակիները դողացին այդ հարուածին տակ ու լռութեան մէջ, համանուազը սկսաւ դիմացի շէնքէն: Կարպիս շտկուեցաւ, անմիջապէս որ աղմուկը դադրեցաւ, եւ որպէսզի աւելի երկար մտածելու, տառապելու չստիպուի, ոտքի ելաւ մէկէն ու առանց բառ մը արտասանելու մեկնեցաւ շուտով:

Յ

Կարեւոր կամ ոչ, կարգ մը ղէպքեր պատահեցան վէճին վրայէն սահող երեք ամիսներուն ընթացքին:

Համալսարանը աւարտելուն, Սուրէն, ամուսնացաւ տուն մնացած բայց ունեւոր հայ աղջկայ մը հետ

եւ կազմեց կիսանկախ ընտանիք մը: Բոլորովին անկախ չէր ան, որովհետեւ աղջկան հարստութեան հետ իւրացուցած էր նաեւ այն բոլոր սեղմումները, տաղտուկները, պարտադրութիւնները, որոնք ընդհանրապէս կ'ընկերակցին նման ամուսնութիւններու: Նոյն ժամանակամիջոցին մտաւ նաեւ ընկերութեան մը գրասենեակէն ներս եւ շուտով սիրուեցաւ՝ ցուցաբերած բացառիկ կարողութիւններուն շնորհիւ: Այդպէս է որ անոր կեանքը նետուեցաւ ճամբու մը վրայ, որ թէեւ արտակարգ գնացք մը չունէր, բայց որ անպայման զայն կ'առաջնորդէր իր նպատակին:

Գէորգ ընդունուեցաւ բժշկական համալսարանը եւ հաստատուեցաւ մօտակայ քաղաքի մը մէջ:

Միայն Կարպիսն է որ նետուեցաւ իսկապէս գունաւոր հոսանքի մը մէջ: Նախ պաշտօնապէս ամուսնացաւ Վիքիին հետ, եւ շուտով դարձաւ մնայուն նուագող մը Պրոտուէյի վրայ, միեւնոյն պարասրահէն ներս: Անսահման խանդավառութեամբ փարեցաւ անոր, անհատնում սէրով կապուեցաւ աղջկան ու զուարթացաւ: Այնքան գինովցաւ, երջանկութեան զոյգ թեւերուն մէջ: Ի վերջոյ զգաց, թէ հասած էր նպատակին, երջանկութեան իսկական աղբիւրին, եւ չէր գիտեր թէ ինչպէս պիտի կարենար ընկալել այդ գեղեցկութիւնը: Ամուսնութեան յաջորդող օրերը եղան կատարեալ երազային, եւ երիտասարդ հայուն տուին ինչ որ կը ցանկար, ու նոյնիսկ աւելին: Վիքի ժպիտ մըն էր, նուրբ դէմքի մը վրայ: Սայտացող, կայծկլտացող, յորդազեղ ծիծաղ մըն էր ան, որ կը բացուէր տղուն ամէն մէկ շարժումին դէմ, փափաքներուն, քմահաճոյքներուն, խենթ խաղերուն դէմ: Եւ Կարպիս կը զուարճանար երջանկութեան զառիվերին յանկարծ կանգ կ'առնէր որպէսզի աւելի երկարէր տենդագին այդ պահերը, անմեկնելի ապրումները, հոգին օրօրող համայնապատ-

կերը ու կը զինովնար: Պարզուող այդ տեսարանէն յափռչտակուած, այդ գեղեցկութեան անձնատուր եղած կը բոցավառէր, հորիզոնին վրայ նետուած ամբան արեւին պէս: Եւ կրակ էր Վիքի, անսպառ, ճարճատուն, բայց ճշմարիտ կրակ մը, այդ նայուածքին դէմ, այդ յուզումին, աղաղակող ցանկութեան առջեւ:

— Բնաւ միտքէդ կ'անցնէր որ այսքան երջանիկ կ'ընայիր ըլլալ, բնաւ, ըսէ՛, ճշմարտութիւնը խօսէ...

— Իրապէս ոչ... բայց հարկաւ կը յուսայի, կ'ըլլար աղջկան պատասխանը, ինքզինք յանձնելով այդ գզուանքներուն, անյազ տարփանքին: Ու կ'աղուորնար ան, հրաշալիօրէն կ'անուշնար կիրքի բոցավառումին մէջ: Եւ երազային շարթը սպառեցաւ փաղաքշանքներու, ցանկութիւններու, անվերջ խայտացող կախարդանքին մէջ: Քաղաքէն հեռու, ամբոխէն ու խելացնոր վաղբերէն հեռու, այդ պանդոկին մէջ, կեանքը դարձաւ անվախճան սիրերգ մը, մինչեւ որ հոգեթող այդ առանձնութենէն վերադարձան իրական կեանքին:

Երբ քաղաք հասան, պայծառ ու այնքան գունազարդ երկինքը անմիջապէս ամպոտեցաւ եւ փոթորիկի մը ազդանշանը լուսեղէն դիժեր քաշեց հորիզոնի շրթներէն, որովհետեւ հակառակ Կարպիսին ընդդիմութեան, խիստ առարկութիւններուն, պատճառաբանութիւններուն, Վիքի վճռեց պարասրահ վերադառնալ ու գործը շարունակել ճիշդ նախկին թափով: Փառասիրութեան մէջ վերաւորուած երիտասարդ հայը վճատեցաւ քիչ մը, վարանեցաւ պահ մը, բայց ի վերջոյ, չդիմանալով կնոջ աղաչանքներուն, տեղի տուաւ, յուսալով որ ժամանակը կրնար ջնջել ամէն հետք:

Սխալած էր ան սակայն, որովհետեւ լոյսերու եւ հիացական բացազանջութիւններու սիրահար աղջիկը չկրցաւ սանձահարել իր արմատացած սովորութիւնները եւ հետզհետէ մխրճուեցաւ իրեն այնքան ընտանի

եւ կաղմեց կիսանկախ ընտանիք մը: Բոլորովին անկախ չէր ան, որովհետեւ աղջկան հարստութեան հետ իւրացուցած էր նաեւ այն բոլոր սեղմումները, տաղտուկները, պարտադրութիւնները, որոնք ընդհանրապէս կ'ընկերակցին նման ամուսնութիւններու: Նոյն ժամանակամիջոցին մտաւ նաեւ ընկերութեան մը գրասենեակէն ներս եւ շուտով սիրուեցաւ՝ ցուցարեւրած բացառիկ կարողութիւններուն շնորհիւ: Այդպէս է որ անոր կեանքը նետուեցաւ ճամբու մը վրայ, որ թէեւ արտակարգ գնացք մը չունէր, բայց որ անպայման զայն կ'առաջնորդէր իր նպատակին:

Գէորգ ընդունուեցաւ բժշկական համալսարանը եւ հաստատուեցաւ մօտակայ քաղաքի մը մէջ:

Միայն Կարպիսն է որ նետուեցաւ իսկապէս դունաւոր հոսանքի մը մէջ: Նախ պաշտօնապէս ամուսնացաւ Վիքիին հետ, եւ շուտով դարձաւ միայուն նուագող մը Պրոտուէյի վրայ, միեւնոյն պարասրահէն ներս: Անսահման խանդավառութեամբ փարեցաւ անոր, անհատնում սէրով կապուեցաւ աղջկան ու զուարթացաւ: Այնքան գինովցաւ, երջանկութեան զոյգ թեւերուն մէջ: Ի վերջոյ զգաց, թէ հասած էր նպատակին, երջանկութեան իսկական աղբիւրին, եւ չէր գիտեր թէ ինչպէս պիտի կարենար ընկալել այդ գեղեցկութիւնը: Ամուսնութեան յաջորդող օրերը եղան կատարեալ երազային, եւ երիտասարդ հայուն տուին ինչ որ կը ցանկար, ու նոյնիսկ աւելին: Վիքի ժպիտ մըն էր, նուրբ դէմքի մը վրայ: Ուստացող, կայծկլտացող, յորդազեղ ծիծաղ մըն էր ան, որ կը բացուէր տղուն ամէն մէկ շարժումին դէմ, փափաքներուն, քմահաճոյքներուն, խենթ խաղերուն դէմ: Եւ Կարպիս կը զուարճանար երջանկութեան զառիվերին յանկարծ կանգ կ'առնէր որպէսզի աւելի երկարէր տենդազին այդ պահերը, անմեկնելի ապրումները, հոգին օրօրոյ համայնապատ-

կերը ու կը գինովնար: Պարզուող այդ տեսարանէն յափշտակուած, այդ գեղեցկութեան անձնատուր եղած կը բոցավառէր, հորիզոնին վրայ նետուած ամբան արեւին պէս: Եւ կրակ էր Վիքի, անսպառ, ճարճատուն, բայց ճշմարիտ կրակ մը, այդ նայուածքին դէմ, այդ յուզումին, ազադակող ցանկութեան առջեւ:

— Բնաւ միտքէդ կ'անցնէր որ այսքան երջանիկ կրնայիր ըլլալ, բնաւ, ըսէ՛, ճշմարտութիւնը խօսէ...

— Իրապէս ոչ... բայց հարկաւ կը յուսայի, կ'ըլլար աղջկան պատասխանը, ինքզինք յանձնելով այդ գոլանքներուն, անյազ տարիանքին: Ու կ'աղուորնար ան, հրաշալիօրէն կ'անուշնար կիրքի բոցավառումին մէջ: Եւ երազային շարժք սպառեցաւ փաղաքշանքներու, ցանկութիւններու, անվերջ խայտացող կախարդանքին մէջ: Քաղաքէն հեռու, ամբոխէն ու խելացնոր վազքերէն հեռու, այդ պանդոկին մէջ, կեանքը դարձաւ անվախճան սիրերգ մը, մինչեւ որ հոգեթով այդ առանձնութենէն վերադարձան իրական կեանքին:

Երբ քաղաք հասան, պայծառ ու այնքան դունագարդ երկինքը անմիջապէս ամպոտեցաւ եւ փոթորիկի մը ազդանշանը լուսեղէն դիծեր քաղց հորիզոնի շրթներէն, որովհետեւ հակառակ Կարպիսին ընդդիմութեան, խիստ առարկութիւններուն, պատճառաբանութիւններուն, Վիքի վճռեց պարասրահ վերադառնալ ու դործը շարունակել ճիշդ նախկին թափով: Փառասիրութեան մէջ վիրաւորուած երիտասարդ հայը վհատեցաւ քիչ մը, վարանեցաւ պահ մը, բայց ի վերջոյ, չդիմաճախելով կնոջ աղաչանքներուն, տեղի տուաւ, յուսալով որ ժամանակը կրնար ջնջել ամէն հետք:

Սխալած էր ան սակայն, որովհետեւ լոյսերու եւ հիացական բացադանշութիւններու սիրահար աղջիկը չկրցաւ սանձահարել իր արմատացած սովորութիւնները եւ հետզհետէ մխրճուեցաւ իրեն այնքան ընտանի

այդ հին կեանքին մէջ, մինչեւ որ խոր ու բուռն սէրով սկսած այդ կենակցութիւնը իր առաջին փլուզումը ունեցաւ անողոք մանրամասնութիւններով: Եւ վիճեցան ահռելիօրէն: Կարպիսին մէջ արթնցաւ արեւելքցին, նախանձախնդիր, տիրապետող, անհանդուրժող հայր եւ բորբոքեցաւ ան, եւ ինքզինք կորսնցնելով, վիրաւորուած արժանապատուութեան մէջէն դուրսաց.

— Քեզի հազար անգամ կրկնեցի, բազմաթիւ ձեւերով ուղեցի բացատրել, ուղեցի հասկցնել որ իմ կինս ըլլալէդ ետք չես կրնար կիսամերկ վիճակով ներկայանալ այդ քաղցած աչքերուն: Գիտես որ ես պէտք եղած դրամը կը շահիմ, եւ կրնամ շատ դիւրաւ կին մը ապրեցնել, կրնամ քեզ խօսի դռնացնել, տակաւին ինչո՞ւ կը յամառիս եւ կ'ուզես այդ դրդռիչ պարերը շարունակել...

— Գու՛ն զիս ճանչցար այնպէս, ինչպէս որ եմ հիմա. ուղեցի խօսիլ իմ պահանջներուս մասին, բայց մտիկ չըբեր. «Ամուսնանանք եւ ամէն ինչ կը փոխուի», ըսիր, պէտք է գիտնայիր որ ես տունին մէջ ձեռնածալ նստելով քու ճամբադ չէի կրնար սպասել, սովորական կիներու պէս... Ես վարժուած եմ այս կեանքին, իմ կեանքս այս է, եթէ կ'ուզես հետս ապրիլ պէտք է վարժուիս ասոր, եւ չնեղես զիս:

Նախ չուզեց հաշտուիլ գաղափարին հետ, չուզեց ընդունիլ ահաւորութիւնը պարտութեան, բայց երբ անդրադարձաւ պատահածին, հետզհետէ կորսնցուց ինչ որ ունէր, այսինքն խաղաղութիւնը մտքին, անդորրութիւնը հոգիին, բայց չկրցաւ վանել, ջնջել Վիքիին հանդէպ ունեցած այդ սէրը, կարօտը՝ անոր թարմ ու այրող մարմնին, եւ զայն կորսնցնելու կասկածը, վախը, ցնցեց զինք մահուան չափ զօրաւոր: Եւ այդ պատճառաւ ալ, զայն ամբողջութեամբ կորսնցնելու սարսափէն զարնուած՝ աղաչեց, պաղատեցաւ, փորձեց

խաղալ անոր զգացումներուն հետ, զգուեց, շոյեց զայն, կակզեցնելու համար անտարբեր այդ սիրտը, բայց ի դուրս:

Այդ օրերէն մէկն է ահա: Վիքի նստած է դիմացի բազկաթոռին մէջ եւ ամբողջ ուժովը կը ներշնչէ սիկաբէթին ծուխը եւ կարծես չի լսեր տղուն սիրազեղ ազդրաները, դեղեցիկ, երջանիկ օրերու վերջի շումները: Երբեմն միայն, աղօտ ժպիտ մը կը կազմուի այդ դէմքին վրայ, երբ տղան կը մանկանայ իր արտայայտութիւններուն մէջ, ողորումին մէջ: Այդպէս է որ լուսթեան ճիրանները կը մխրճուին երիտասարդին կոկորդին մէջ, երբոր ազլկան անողոք բառերը մթնոլորտը կը պղտորէին: Եւ անկէ փախչելու համար, իր նուաստացումէն հեռանալու պատրուակով, Կարպիս դուռը փակեց զայրոյթով ու ինկաւ փողոց: Ատեն մը թափառեցաւ ամայի արահետներու երկայնքին, եւ յուսահատութենէն ձերբազատուիլ չկարենալով, այս անելին լուծում մը գտնել չկարենալով, յանկարծ որոշեց հեռանալ պարասրահի մթնոլորտէն եւ այդ վճռականութեամբ ալ հասաւ պարոն ձէյմսի դրասենեակը:

— Ձէ, պարոն, ձէյմս, այլեւս չեմ կրնար ձեր մօտ աշխատիլ, չեմ կրնար դիտել կինս այդ վիճակին մէջ... կ'ընդունիմ որ զիս զգուշացուցիք, խրատեցիք վտանգին առջեւ, սակայն տակաւին կը սիրեմ զինք, ու չեմ կրնար խեղդել այդ զգացումս:

Պարոն ձէյմս զարմացումէն պուստեց յօնքերը եւ իրապէս չկրցաւ հասկնալ, թէ ինչպէս կարելի էր սիրել կին մը, որ տասնըհինգ տարեկանին դօտին քակած էր անձանօթի մը դիրկին մէջ եւ անկէ ետք... բայց դարձեալ փորձեց համոզել արեւելքցի տղան, բացատրեց անոր, որ իր ապագան հոս էր, եւ թէ այս օրերը անպայման վերջ մը կ'ունենային համբերողին համար, հասկրցողին համար...: Կարպիս մեկնեցաւ շուտով, բայց

աղջիկը դարձաւ նոյն բեմին աստղը, գունաւոր լոյսերու տակ, եւ սոված ակնարկներու յանձնեց ինչ որ ունէր, եւ մեծ հաճոյքով, թաքուն մարմաջներուն գոհացում տալով:

Բոլորովին այլափոխուեցաւ Կարպիս: Գրեթէ անձանաչելի դարձաւ խրոխտ ու ինքնավստահ երիտասարդը պայծառ օրերու: Տարապայման լքուածութիւն մը ինկաւ անոր մէջ ու քայքայեց, խորտակեց, անդառնալիօրէն տապալեց անոր մէջ, ինչ որ կենսունակութիւն եւ ապրելու տենչ տուած էր անոր, այդքա՞ն տարիներ: Յերեկները, աննպատակ ու ցրուած կը շրջէր, կը թափառէր փողոցէ փողոց, իսկ երեկոյան կը վերադառնար տուն, եւ կը կծկուէր մութ պատուհանին առջեւ ու կը սպասէր մինչեւ ուշ գիշեր: Եւ աղջիկը կու գար սովորական անտարբերութեամբ, եւ կարծես, հիւանդազին հրճուանքով մը կը դիտէր հիւժումը՝ երիտասարդ տղուն: Իրարու արտասանելիք բառեր չունէին այլեւս, որովհետեւ ոչինչ մնացեր էր այդ հին օրերէն, զուարթ ու զմայլելի օրերէն: Եւ ահա այդպէս, հետքահետ կը ստեղծուէր այդ մութ պարապութիւնը, գայթակղեցուցիչ, ազազակող պարապութիւնը անոնց շուրջ, եւ Կարպիս կը դլորէր անոր մէջ, կը մխրճուէր գրեթէ կամայօրէն, բոլորովին չքացած:

Եւ հիմա, նստած է ան պատուհանին դիմաց, ու կը սպասէ անոր, որ այլեւս պիտի չգար նոյն խոստումով, նոյն զուարթութեամբ, հին օրերու գոյներով: Վարը, փողոցին մէջ աղմուկը հետզհետէ կ'աւլուէր, կը չքանար, կը մարէր: Յառաջացող գիշերին հետ կ'աւելնար նաեւ անոր անձկութիւնը: Գիտէր թէ ժամը մէկէն առաջ տուն չէր վերադառնար Վիքի, բայց ահա սլաքները արդէն երեքը կը դիմաւորեն, դժգոհ ու տրտում նայուածքի մը տակ: Պարպուած, յուսալքուած միժմակի մը մէջ կը ջանար խուսափիլ նուաստացումի հարուս-

ծէն, անկումէն, վերջնական քայքայումէն, եւ անդադար կը դիտէր թեւի ժամացոյցը, խորացող վիշտին կարեւորութիւն չընծայելով:

Երբոր այլեւս սկսան աչքերը փակուիլ եւ սպասումի դառնութիւնը կլանեց հոգին, այն ատեն միայն, անկիւնի լոյսին տակ Վիքի երեւցաւ կէս մը յենած անձանօթի մը ուսին, գրեթէ քալելու անկարող, գինով: Մարած այդ երակներուն մէջ արիւնը յանկարծ փրփրեցաւ կարծես եւ ամբողջ մարմնով սկսաւ դողալ, սպասող աղան: Եւ հոն մնաց անշարժ, նոյն դիրքին մէջ, մինչեւ որ քրտինքը ցայտեց ճակատէն, քունքերէն, մինչեւ որ ներս մտաւ կիներ ու ինկաւ անոր թեւերուն մէջ:

6

Հակառակ ժայռերու բարձրութեան, անոնց ոտքերը կը լուսաւորուէին լոյսերու ջուրով, ամայութեան մէջ, որ քաղաքէն փախչող իրականութեան վրայ կը հանդէպ բացարձակ չկամութեամբ: Նստած էր հոն, բարձր, սեպածեւ ժայռի մը վրայ ու կը դիտէր ներաշխարհը, կատղած, դալարուող փոթորիկը, որ ահագին աղմուկով կը զարնուէր ապառաժներու կուրծքերուն: Եւ այդ ժայռերէն վար, երիտասարդ տղուն խռոված հոգին անդադար կ'այրէր, եւ անդապելի կարօտի մը բոցավառումին մէջ անյուսօրէն կը փնտռէր ջերմութիւնը փափուկ մատներու, քաղցրութիւնը այն ժպիտին, որ հետզհետէ կը կորսուէր կարկաչող, խայտացող, զուարթ օրերու հետքերուն վրայ: Եւ կ'արիւնէր այդ սիրտը, վշտաբեկ, վիրաւոր, հեկեկացող այդ սիրտը: Մինչ այդ, ալիքները կը խօսէին վտանգաւոր մրմունջներով, եւ ձայներու ահռելի հարուածը կը զարնուէր սարսուացող այդ մարմնին, սարսափի մը

նախազդացումը կը կաղապարուէր, կը խտանար ծովե-
րու բացին, ուր աղօտ լոյս մը կը մաքառէր մահուան
դէմ: Բնազդական պայքար մըն էր այդ, աններող բնու-
թեան արհաւիրքին դէմ: Եւ հիմա, այդ ժխորին մէջէն
բարձրացող բառերը կ'ըլլային այնքան յստակ, այնքան
յանդիմանող, որ լքուած տղան կը դողդոջէր մատներու
ծայրով, զգացումներուն ամբողջ սաստկութեամբ եւ
կը շուարէր. «Յիմար ըլլալու է մարդ նման որոշում մը
տալու համար, այո՛, խենթ մը պարզապէս, ան ալ՝
կապուելիք տեսակէն...»: Գէորգին ձայնն էր արձա-
զանգոզը, Սուրէնին վշտալից ձայնը: Ձինք փրկելու
համար երկարող ձեռքեր էին անոնք, դառնութեամբ,
կարեկցութեամբ ողորուած նայուածքներ, բայց ինք...
Այո՛, յիմար մը եղած էր պարզապէս, խելագար մը ի-
րականին մէջ, ու չէր անսացած այդ խորհուրդներուն:

Ձեռքի արագ շարժումով բերանը տարաւ ըմպե-
լիին շիշը եւ խոտովքին թոյնը կլլեց վիշտին հետ: Երբոր
սակայն, երակներուն մէջ արիւնը կամաց կամաց սկսաւ
եռալ ու միտերը տաքցան այդ շարժումին հետ, այն ա-
տեն միայն, Կարպիսին թոքերէն ժայթքեց սրտաշարժ
հոռաչը եւ հիասթափութեան սրտառուչ ալիքները ար-
ձաղանգեցին ժայռերու կոնակին: Այդպէս է որ հետըզ-
հետէ թաղուեցաւ վերջիշումի դիտակցութեան մէջ եւ
դասաւորել փորձեց իր զգացումները, ջանաց համա-
կարգել՝ ցիր ու ցան եղած մտածումները: Այո՛, չէր
կրցած չափաւորել իր բաղձանքները, չէր կրցած սահ-
մանել անոնց սլացքը, եւ անզուսպ պահանջներու քմայ-
քին յանձնուած, ներքին տենչերու հովերէն քշուած,
խստապահանջ չէր եղած իր դատումին մէջ, իր որո-
նումին մէջ: Իր անսահման ու անխարդախ սէրէն տա-
րուած, չէր իսկ անդրադարձած որ, Վիքի, սովորա-
կան կին մը ըլլալէ չէր դադրած իր ամենէն զեղեցիկ
ու տաք արտայայտութիւններուն մէջ, զգուանքներուն,

զորովին մէջ: Այո՛, կոյր մը եղած ըլլալու էր այդ-
քանը չկարենալ տեսնելու համար, բացարձակ կոյր մը,
սիրոյ ուժին ապաւինած երիտասարդ մը պարզապէս:
Եւ որքան, որքան փորձած էր փոխել զայն, նոր ի-
մաստներ ներմուծել անոր կեանքին մէջ, նոր ուղղու-
թիւններ տալ անոր ներքին կրակին, որպէսզի անասնա-
յին կիրքի դերութենէն ձերբազատէր զայն, եւ այդ
պատճառաւ ալ, միայն այդ պատճառաւ դուցէ, բա-
ցատրած էր անոր որ մարմնական հաճոյքներու հրա-
պոյրէն վեր ու բարձր կը մնար խոտալ մը, նպատակ
մը, սէրը մանուսանդ: Եւ յաճախ, միամտորէն ուզած
էր հաւատալ որ նման համոզիչ խօսքերով կարելի պիտի
ըլլար բանալ անոր աչքերը, զգացումները, դարնան
թարմ ու զեղեցիկ առաւօտին պէս, որ կը ծնի բազմա-
թիւ խոստումներով, անակնկալներով: Բայց չէր յաջո-
ղած, չէր կրցած թափանցել անոր զգացումներուն,
մտածումներուն, բայց բաւականացած էր տիրող լու-
թեամբ, յուսալով որ ի վերջոյ խօսքերը ներգործու-
թիւն մը կ'ունենան, կը ներշնչեն զայն, բայց երկար չէր
տեսած խարուսիկ այդ ուրախութիւնը, որովհետեւ վը-
րայ հասած էր երկրորդ արարը, ուր ան կը ներկայա-
նար անծանօթի մը թեւերէն կախուած...

Եւ ահաւոր այդ հարուածին տակ, այլեւս լքեց ինք-
զինք, երազը, նպատակը, ու վաղելու փոխարէն նա-
խընտրեց նահանջել: Այո՛, ընկրկեցաւ, սայթաքեցաւ
սարսափազդու բարձունքէն ու բանականութեան կշիռը
կորսնցնելով, յամառօրէն փորձեց հոսանքներու ուղ-
ղութիւնը փոխել, անոնց դէմ թիավարել, համոզում-
ները փորձաքարին զարնելով: Սակայն հակառակ այդ
անկումին, անդարմանելի յուսախարութեան, դարձեալ
փարեցաւ վերջին նշոյլին, սիրոյ զօրութեան եւ սպա-
սեց որ ան վերադառնայ՝ ճիշդ երազածին պէս, ու յան-
կարձ նետուի՝ իր թեւերուն մէջ: Բայց մեկնեցաւ ան

իր զգացումներով, եւ իր հետ տարաւ հին օրերու կայտառութիւնը, կամ ինչ որ մնացած էր խայտարդէտ օրերէն, ու զինք լքեց լուսթեան, անտարբերութեան ճիւղաններուն մէջ: Տեսակցութեան կարճ ու միջին պահերը վերածուեցան մղձաւանջի եւ անկէ փախչելու անզօրութիւնը զինք դամեց պատուհանին առջեւ, յոյսի թեթեւ փշուրին:

Վերջիշումի զառիթափին շուտով շփոթեցաւ տղան, մոլեղնած դիտեց շուրջը խաւարը՝ որ կը փռուէր ջուրի անսահման տարածութեան վրայ, եւ մտիկ ըրաւ ներքին ծփանքներուն, իր ներսդին հարուածող կատաղի ալիքներուն ու նուաստացումի ամօթը ջնջելու համար բերանը տարաւ ձեռքին մէջ դռնուող շիշը: Իրապէս չէր դիտեր, թէ ինչ ձեւով պիտի կարենար վերջ տալ այդ փոթորիկին, որ հետզհետէ կը սաստկանար, թեւերուն մէջ կ'առնէր զինք, յանկարծ նետելու համար վրէժի մը բոցերուն մէջ: Բայց երբոր պարպեց ամօթիչ ըմպելին, ու փշուրող շիշին ճիշը լսեց դիմացի քարերէն, այն ատեն ոտքի ելաւ Կարպիս, ու հետեւեցաւ քաղաք տանող կիսամութ ճամբուն:

Մութէն քաշուած անոր հասակը դանդաղօրէն կը կքէր ծունկերուն վրայ եւ հեռաւորութենէն ինկող հառաչը կը տատանէր՝ ներքին ծալքերու վրայ: Ծանօթ ու մտերիմ մայրերէն հնչող այդ քայլերը գրեթէ կորսնցուցած էին հին օրերու զօրութիւնը եւ այժմ, ծանրացող իրանի մը տակ կորութիւններ կը քաշէին ստուերներու հետ: Այդ պահուն, գիշերուան զուարթութիւնը արդէն դանդաղած էր փեղկերու առջեւ եւ զոյգեր կը հետեւէին դունաւոր լոյսերու: Այո, նոյն փողոցներուն մէջէն քալած էին իրենք ալ, նոյն երազներով օրօրած՝ իրենց սիրտը, մտածումը, հոգին: Սակայն հիմա դատարկ էր ան, ամայի էր ան, եւ միայն փշրանքներ կային հոն, յամեցող փշրանքներ: Հոն է որ, թեւանցուկ,

եռանդով, քալած էին ուշ գիշերներով, երբ մայրերը մաքրուած էին ալ, երբ քայլերու աղմուկը սկսած էր դառնալ մեղմ ու կակուզ, հաճելի համբոյրին նման որ զողջած էր անկէ՝ սա անկիւններէն մէկուն վրայ, տամուկ գիշերի մը մէջ: Իսկ հիմա...

Իսկ հիմա առանձին էր Կարպիս... իր հետ ունէր ինչ որ մնացած էր կորովի ու յանդուզն այն երիտասարդէն որ արհամարհած էր խարուսիկ խաղերը կեանքին, ժամանակաւոր ու առարկիլի խոստումները անոր: Բայց այլեւս սիրտ չունէր բծախնդիր ըլլալու, քաջութիւնը չունէր ինքզինք հպարտութեամբ դիտելու, իր ըմբռնումներուն, իր զաղափարներուն այնքան ամուր կառչելու: Այո, անոնք լքած էին զինք, պատրանաթափ ըրած իր հոգին, ու մեկնած էին անդառնալիօրէն: Եւ հակառակ այդ դառն գիտակցութեան, երիտասարդ տղուն սիրտը դեռ կ'ալեկոծէր, անհուն փափաք մը կը ծնէր անոր մէջ, վերջին անգամ ըլլալով իր Վիքին տեսնելու, անոր զուարթախայտ դէմքին վրայ հին օրերը վերապրելու, որովհետեւ... Օ՛, չէր ուզեր ընդունիլ, չէր ուզեր խոստովանիլ որ այդ արիւնած, տապալած, սիրտին մէջ տակաւին լուսաւոր անկիւն մը կար անոր համար, թէեւ անտեսանելի, թէեւ աղքատ, բայց վերջապէս անկիւն մը, սիրոյ երգերով հիւսուած:

Բլուրէն վար իջնելով ճամբան անմիջապէս շեղեց ու մտաւ քովնտի փողոց մը: Պահ մը շարունակեց այդ ուղղութեամբ ու ապա կանգ առաւ ելեկտրական լոյսի մը տակ: Մատներու օգնութեամբ փորձեց շտկել շապիկը, բաճկոնը, մազերը եւ բարձրացաւ հանրակառք: Պրոտուէյ հասնելուն, շուտով կորսուեցաւ քաղմութեան մէջ ու դիմացի մայրը անցնելով, պարասրահէն ներս մտաւ, քիչ մը տատամսելէ ետք: Հազիւ երեք ամիս եղած էր այդ մտերիմ շրջապատէն բաժնուելուն, բայց կը զգար յանկարծ որ ամէն ինչ փոխուած էր հոն:

Փոխուած էին լոյսերը, սեղանները, պատերուն վրայէն կախուած պատկերները, յաճախորդները, ու մանաւանդ եղանակները: Այո, փոխուած էր խանդավառ ու զուարթ երիտասարդը՝ այդ միջավայրին:

Կիսովին լուսաւորուած սրահը հետզհետէ կը թաղուէր ծուխի թանձր մշուշին մէջ, մինչ նուազածոները անհամբերութեան նշաններ ցոյց կու տային, լուսիեան սպասելով: Երբոր ջութակին լարերը թրթրուացին, երբոր թմբուկը իր ներկայութիւնը անմիջապէս զգալի ըրաւ, այն ատեն բացազանչութիւնները ուղղութեան դէպի բեմ, ու խանդավառութեան մէջէն դուրս եկաւ աղջիկը: Այդ տեսարանին առջեւ յանկարծ փլուզում մը ունեցաւ Կարպիս: Եւ որպէսզի յիշատակներու վերակոչումին մէջ չսպաննէր բացառիկ այդ պահը, ուշադրութիւնը կեդրոնացուց պարող աղջկան, անոր շարժումներուն, համաչափ սրունքներուն, ու բաժակները պարպեց իրարու ետեւէ: Այն ատեն է որ վերագտաւ զուարթութիւնը, եռանդը եւ հին օրերու հաշուոյն խանդավառութեամբ առանց մտածելու, առանց յուզուելու: Բայց միջնարարին է որ մէկէն կորսնցուցին որ շահած էր մինչեւ այդ պահը: Մնայուն յաճախորդներէն ոմանք ճանչցան զինք ու հաւաքուեցան իր սեղանին շուրջ.

— Հէ՛՛յ, Կերի, լսեցինք որ դուն ալ կը միանաս կոր մեր ակումբին, խարուածներու ակումբին...

— Մօ՛, ինչ տեսակ էրիկ մարդ ես, որ չես կրնար կոր դոհացում տալ այդ կնիկին... Եւ զը՛հ, զը՛հ, զը՛հ...

— Եթէ ես քու տեղդ ըլլայի, եթէ ես քեզի պէս երիտասարդ ըլլայի... սանկ աղուոր ծեծ մը, աղուոր դաս մը... զը՛հ, զը՛հ, զը՛հ...

— Ատանկները միայն սատկելու արժանի են, Կերի,

միայն սատկելու, տես իմ վիճակս, լաւ մը նայէ ինձի, որպէսզի տեսնես քու ապագադ...

— Ո՛հ, ոչ, հոս չէ այսօր, հապա դուն ի՞նչ կ'ընես, կնիկիդ հետը չե՞ս, տղայ...

Յնցուեցաւ յանկարծ: Վերջին բաժակն ալ պարպեց ու ոտքի ելաւ: Աչքերուն մէջ բռնկող կրակը ահաւոր բոցեր արձակեց շուտով, ու կուրծքին տակ ճիրանները գալարեցան, արիւնեցին, բզկտեցին, մինչեւ որ կատաղութիւնը գրկեց զայն ու սաստիկ հարուածով, անխնայ զայրոյթով փողոց նետեց՝ փրփրած տղան:

Որքան քայլեց, որքան վազեց, ինչպէս հասաւ հոն, այլեւս չէր գիտեր: Պէտք չունէր գիտնալու, որովհետեւ թումբերը քանդուեցան այդ հեւքին դէմ ու մոլեղնութեան կայծերը շողացին սանդուխներուն վրայ: Այլեւս չէր տատամսեր, չէր ընկրկեր, քանի որ մտածելու, զգալու, դատելու հաւասարակշռութիւնը յանձնած էր վերջին բաժակին ու անկէ խլած էր ինչ որ կը պակտէր իրեն, ինչ որ պակսած էր այդ սիրող սիրտին: Մութ ջրագրողութիւնը զայն կը գրկէր ուսերէն եւ կը հրէր դէպի ներս, նրբանցքէն վեր, ուր կանգնած էր իրենց յարկաբաժինին մտերիմ դուռը: Կատաղութիւնը շուտով յորդեցաւ, երբ լոյսի գիծ մը նշմարեց քովնորի ճեղքէն եւ քրքիջներու սուր տրճազանդը զարնուեցան ջիղերուն: Թէեւ անծանօթ էր այդ զգայնութիւնը անոր համար, բայց կամովին մխրճուեցաւ անոր մէջ, յուզումով, սարսափով, բայց ի վերջոյ էութեամբ յանձնուեցաւ անոր թեւերուն եւ դուռը մէկէն բանալով անշարժացաւ մութ կէտին վրայ: Զխօսեցաւ: Բառ մը իսկ չարտասանեց: Երբոր սակայն, անծանօթ երիտասարդը հաւաքեց ինքզինք ու հեռացաւ առանց աղմուկի, առանց բողբոջի, այն ատեն շարժեցաւ Կարպիս:

Շուարեցաւ, այլայլեցաւ, բայց իրապէս սարսափեցաւ երիտասարդ կինը, եւ իր մերկութիւնը ծածկե-

լու ածապարանքին մէջ ողբալի, արզահատելի եւ կատարելագէտ խղճալի արտայայտութիւն մը ստացաւ այդ աղուոր դէմքը, որուն վրայ լոյսը կ'իյնար այնքան յուզումով: Վայրկեան մը մնացին նոյն դիրքերու վրայ, մինչեւ որ սոսկումի առաջին հարուածը խեղդուեցաւ լռութեան մէջ, եւ ահաբեկած կինը հետզհետէ վերադառաւ իր համարձակութիւնը եւ շուարումէն վերադարձող ձայնով մը փորձեց սիրաշահիլ երիտասարդ հայը.

— Ձէ, Կերի, սխալ մի հասկնար, ասիկա առաջին անգամն էր մեր ամուսնութենէն ի վեր... փորձեցի հաւատարիմ մնալ, շատ փորձեցի... բայց դուն պէտք է գիտցած ըլլայիր թէ ես չէի կրնար կաշկանդուիլ այդպիսի կապով... բայց հիմա, նորէն քուկդ եմ, բոլորովին քուկդ պիտի ըլլամ, հաւատա խօսքիս... խենթ մի ըլլար տղայ, կը սարսափեցնես կոր զիս... կը վախցնես կոր զիս, Կերի, հիմա պիտի ճշամ, պիտի պոռամ, անմիջապէս...

Կարծես բոլորովին կորսնցուցած էր դատողութիւնը եւ այլեւս ամէն ինչ կը պղտորէր ակնարկին մէջ: Բայլ մը եւս առաւ բնազդաբար ու մօտեցաւ անկողինին: Բայց երբ դանակը փայլեցաւ անոր ձեռքին մէջ, աղջիկը իրապէս ըմբռնեց ծանրութիւնը այդ վիշտին, խորութիւնը ցասումին եւ սկսաւ ողոքել, պաղատիլ, աղերսել.

— Ամէն ինչ առաջուան պէս պիտի ըլլայ, Կերի, համբերէ, ինծի քիչ մըն ալ ժամանակ տուր որ վարժուիմ... այո, հին օրերը պիտի վերադառնան նոյն քաղցրութեամբ, դեղեցիկ անուշ այդ օրերը, նորէն պիտի վայելենք... Ի՞նչ պիտի շահիս զիս մեռցնելով, եթէ ալ զիս չես ուզեր, թող որ երթամ... բայց այս ձեռով դուն ալ պիտի փճանաս ինծի հետ, զիս բոլորովին պիտի կորսնցնես ու փճանաս նաեւ դուն... խենթ մի ըլլար, Կերի՛, խենթ մի ըլլար, կ'աղաչեմ...

Ձեռքի ուժգին շարժումով պատուեց աղջկան բռնած մետաքսէ ծածկոցը եւ անտարբերութեամբ, բոլորովին կորսուած, դիտեց այդ մերկութիւնը: Այլեւս չէր լսեր արտասանուած բառերը, աղջկան լացը: Ձայներ կու գային ամէն կողմէ, բայց չէր լսեր ալ: Անզուպելի նուազալի մը մէջ ինկած, արադօրէն, անդադար, կը դառնար: Ու յանկարծ, դանակը լսեց աղջկան ձախ կուրծքին մէջ: Չշարժեցաւ ալ: Ակնարկը դամեց արիւնին եւ ահաբեկած աչքերով, սառեցաւ մէկէն...

Պոստոն, 1965.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.

ΕΥΡΕΤΗΡΙΟΝ

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.

ՈՒՍԷՆ եկաւ այս տղան: Աւելի ճիշդը Պոլսէն փախաւ եւ ծուռեկերուն վրայ ինկաւ սաքաղաքին մութ ու խոնաւ մայթերուն վրայ: Յետոյ փորձեց կանգնել, եւ սրունքներուն ամբողջ ուժովը վազել հովերու ուղղութեամբ: Երկար շտեւեց նաեւ այս վաղբը: Ուժերը սպառեցան հետզհետէ եւ առաջին օրերու խանդավառութիւնը նահանջեց, հեռացաւ եւ յանկարծ կորսուեցաւ հորիզոնին վրայ բացուող անորոշութեան մէջ:

Պոլսէն ոչինչ կրցած էր բերել հետը: Ունեցածը թաղած էր հօրը դաւաղին հետ եւ կրկին կեանքի գալու հրճուանքով՝ երիտասարդութեան փէշերուն փաթթուած՝ հասած էր Ամերիկա:

Ատեն մը ցաւեցան, վշտակցեցան սա հեռաւոր ազգականները. նոյնիսկ ըսին թէ դրամի մասին մտահոգուելու պէտք չունէր ինք. կրնար իրենց հետ մնալ մինչեւ վորձերը կարգի դնելը: Այն ատեն Գրիգոր ժպտեցաւ եւ ըսաւ թէ մարդիկ կարծուածին չափ ալ անդուծ չեն: Բայց այդ ժպլտն ալ երկար շտեւեց դէմքին վրայ: Որովհետեւ քանի մը օր հաք, տունէն դուրս նետեցին

զինք: Տանտիկինը սիրահարուած էր իր շունին, իսկ Գրիգոր չէր հանդուրժեր շփացած անասունին քայքայներուն:

Աւելի դաժան օրեր ապրած ըլլալուն՝ չընկրկեցաւ ան, չյուսահատեցաւ, ուժերը հաւաքեց եւ իր դառնութիւնն ու ցաւը տարաւ գործարանի մը մեքենաներուն: Շրջան մը վերջ սիրեց ալ այդ գործարանը, բանուոր բարեկամները, մտտ գրադրուէին որ ամէն շաբթու վերջաւորութեան աշխատավարձը բերաւ. յետոյ նաեւ վարժուեցաւ քաղաքին յարափոփոխ կլիմային, եւ անձրեւոտ գիշերներուն պատուհանէն դիտեց փոթորիկող կեանքը, որ կը փրփրէր իր շուրջ՝ առանձնութիւնը անհանդուրժելի դարձնելով:

Տարի մը ամբողջ ճգնաւորի մեկուսացումով ապրեցաւ ան: Ազատ բոլոր ժամերուն նստեցաւ սենեակին մէկ անկիւնը ու կարդաց. կարդաց ու խնայեց շահածը եւ յաջորդ տարեմուտին արձանագրուեցաւ համալսարանի դասընթացքներուն:

Համալսարանի դունազեղ եւ պատկերազարդ կեանքը նոր խանդավառութիւն մը ներմուծեց անոր երակներուն մէջ, եւ Գրիգոր հետզհետէ թօթափեց արեւելքը իր վրայէն: Առաւօտ մըն ալ արթնցաւ եւ հայելիին առջեւ կանգնած երկարօրէն դիտեց ինքզինք, եւ վճռական որոշում մը տուողի լրջութեամբ ըսաւ.

— Ալ հիմա, իմ անունս Քարլոս է. ես Քարլոս կը կոչուիմ եւ հետեւէ՛ պոլսեցի Քարլոս:

I

Գասապահերէն ետք համալսարանի ծառուղիները դունազեղ ծաղկաստաններու երեւոյթը կը ստանան: Հազարաւոր ուսանողներ կը խուժեն սրահներէն ներս, ուրիշներ՝ դուրս: Անկիւններու վրայ ազջիկներ իրարու

կը պատմեն սիրոյ եւ արկածի մասին. իմաստասիրութեան մօրուսաւոր ուսանողները իրենց քայլերը կը ծանրակշռեն, իսկ քննութեանց տաղնապէն տառապողները՝ դրադարան կը փութան:

Անձրեւոտ օրերուն՝ պատկերը տարբեր երեւոյթով կը պարզուի հոս: Ծառուղիները ամայի կը մնան գրեթէ, իսկ ճաշարանը կը վերածուի քաոսի. եւ ճիշդ այդ աղմուկին մէջ է որ հանդիպեցայ Քարլոսին:

Հակառակ կճող ցուրտին՝ հագած էր մետաքսէ շապիկ մը, որուն բացուածքէն կուրծքին մազերը դուրս ցցուած էին ըմբոստութեամբ եւ անձրեւի կաթիլները կը վազէին ճակտէն վար: Կանգնած էր սեղանին կից եւ թրքերէն լեզուի ամենէն քաղցր ելեւէջներով կը հայհոյէր քաղաքին ու անոր կլիմային. չեմ դիտեր թէ ամերիկացի բարեկամը ի՞նչ ձեւով կը թարգմանէր անոր ըսածները, սակայն քաղաքավարութեան կեղծ ժպիտը հանդամ էր դէմքին վրայ: Գլուխս վեր առի ու՝

— Հա՛յ ես, բարեկամ, ըսի, աչքերուն մէջ նայելով:

Անձրեւէն ետք բացուող արեւին նմանող ժպիտ մը ինկաւ աչքերուն մէջ եւ քովի տղուն դառնալով ըսաւ.

— Յետոյ կը տեսնուինք, կ'ըլլա՞յ...

— Վեսալա՛մ, մէկը գտանք, աղբար ասիկա դպրոց չէ, քաղաք է, ըսաւ, աթոռ մը մօտեցնելով սեղանին:

Յետոյ տուաւ իր կեանքին պատմութիւնը. արագ, հապճեպ ու կտրուկ. բացատրեց իր ունեցած դժուարութիւնները, թէ ինչպէս ազգականները զինք չպրտած էին դուրս. ըսաւ նաեւ թէ ինք Պոլսոյ մէջ հայկական դպրոցի երեսը պիլէ տեսած չէ. ասանկ աղուոր հայերէն խօսելուն պատճառն ալ ողորմած հոգի հայրը եղած էր. թէ եւ հայրը չըլլար նէ մայրը պիտի ըլլար, բայց հայրը աւելի գրոց-բրոց ըլլալուն հոգ տարած էր իր տղուն մայրենի լեզուին: Վեսալա՛մ, ինք հայերէն կը

խօսի հիմա. ի՞նչ հարկ կայ բացատրելու թէ ինտոր սորված էր, մանաւանդ որ այս երկրին մէջ այս լեզուին «հի՛նչ ալ պէտք չունիս, գիտցածդ պիլեմ կը մոռնաս», ըսաւ եւ սկսաւ ժպտիլ: Աւերակներու վրայ տարածուող լոյսի փշուրներուն նմանող բոն մը ինկաւ այտերուն վրայ, ու նորոգեց սիկարէթը:

Անձրեւը շարունակեց հարուածել ծառերը, ճաշարանին ապակիէ պատերը. դաս ունեցողները վազեցին սրահէ սրահ. մեկնողներուն տեղերը լեցուեցան նորերով. ծուխը թանձրացաւ, ծանրացաւ ու իջաւ սեղաններուն վրայ, մինչ մենք նստած՝ սուրճի դաւաթներուն առջեւ՝ կը խօսէինք արեւելքէն, Պոլսէն, Պէյրութէն, մանք ու աննշան բազմաթիւ բաներու շուրջ:

Մարդ որքան ալ արագ կեանքի մը պահանջներուն ինքզինք պատշաճեցնելու յատկութեամբ օժտուած ըլլայ, դարձեալ կու գայ պահ մը, ուր ջիղերուդ եւ երակներուդ ամբողջ ուժովը կը զգաս թէ՛ վայրեր կան, որոնց շէս կրնար պատկանիլ, հակառակ բոլոր ճիշտութեւ, հակառակ կամքիդ որ քեզի չի հնազանդիր ալ: Եւ այսպէս, ժամը կը հասնի յանկարծ եւ վերջապէս կ'անդրադառնաս թէ խարուսիկ են բոլոր երջանկութիւնները, երեւութական, մանաւանդ՝ ինքնախարհութեան առթած ժամանակաւոր յոյսերը: Ապացոյց՝ որ Գրիգոր կը խօսի Պոլսոյ պալլըխնիներուն մասին, եւ՝ Պէյրութի ձկնորսներուն, եւ կը խնդանք:

Գիմացի պատին վրայի ժամացոյցին խոշոր սլաքը քանի մը շրջան ըրաւ. մոխրամանին մէջ սիկարէթներու մնացորդներ շարուեցան իրարու վրայ եւ ես ոտքի ելայ:

— Վերջին դասս կ'աւարտի ժամը երեքին, եթէ կ'ուզես եկուր մեր բաժինը եւ դիս սպասէ թիւ չորս սրահին առջեւ, յետոյ տեղ մը կ'երթանք միասին, ըսի ու դուրս ելայ, մինչ Գրիգոր կը պոռար ետեւէս.

— Զիս շատ մի սպասցնէր, իմանը՛րգ:
Որքան ալ հայերէնդ թրքերէնի զոհ եղած ըլլայ, եթէ նոյնիսկ բառ մը ուղիղ չկարենաս արտասանել, ատով հանդերձ՝ հայու սեւ ու մեղամաղձոտ աչքերդ չեմ փոխեր ամբողջ քաղաքին հետ, ըսի մտովի, եւ թոյլ տուի որ անձրեւը թափանցէ մինչեւ միտերս:

Գասաժամերու հեւցող փոթորիկէն ետք, ուսանողներ հրաժեշտ կ'առնեն ու «տուն պէտք է երթանք» ըսելով կը վազեն տարբեր ուղղութիւններով: Այն ատեն խաւարը դանդաղօրէն կ'իջնէ համալսարանի շէնքերուն վրայ եւ ամայութիւնը գիշատիչ թռչունի մը շարութեամբ կը նստի ծառուղիներու երկայնքին. այդ պահուն, օտարութեան հովերուն յանձնուած սա տղաքը կը կենան ճամբու մը անկիւններուն վրայ, անորոշ, յուզախառն շեշտով կը նային ջրվիժող լոյսերուն ու կ'ընեն յուսահատ.

— Մենք ո՞ւր երթանք, ո՞ւր...

2

Այս քաղաքին մէջ Պրոտուէյ փողոցը նշանաւոր է իր զիշերային ահուժներով, պարասրահներով, խմիչքի սալոններով, յետոյ աղջիկներով: Շարժուան հինգ զիշերներուն՝ փողոցին լոյսերը տամուկ են ու լալկանայեցելուներու հոսանքը թեթեւ քայլերով կը սահի, եւ հիւանդագին զեպիւռ մը կը խաղայ պատուհաններու փեղկերուն հետ: Ուրբաթ երեկոյ, քաղաքին երիտասարդ երակը հոն կը նետուի: Լոյսերը կը պայծառանան, կ'երանդաւորուին, ու հրակէրի ազդատախտակը կը փակցնեն իրենց ճակտին, մինչ պարի զրգոխ եղանակները կը ծփան բոլոր անկիւններու վրայ:

Կիսամութիւն մէջ խեղդուած առաջին սրահը կը պատկանի պիթնիքներու: Հոս է որ կը հաւաքուին մօ-

բուսաւոր երիտասարդներ. անոնցմէ մէկը կը բարձրանայ սեղանի մը վրայ եւ կը կարդայ իր գրած մէկ բանաստեղծութիւնը: Ներկաները կը ծափահարեն կամ կը հայհոյեն կոպտօրէն, բանաստեղծը կը ինզայ կամ ինքն ալ կը հայհոյէ բարձրաձայն, ապա բաժակները կը լեցուին, պարի եղանակներ կը ցատկուտեն օդին մէջ եւ զոյգեր կը համբուրուին ազահօրէն. վերջապէս բան մը կ'ընեն, բան մը ըրած ըլլալու համար: Ապա լուծութիւնը կ'իջնէ առաստաղէն, լոյսերէն՝ եւ ուրիշ մը կը բարձրանայ աթոռին վրայ. նոյնանման պատիւի մըն ալ կ'արժանանայ ան եւ քառասյին վիճակը կը քակուի անկիւններէն: Հոս հաւաքուող բոլոր երիտասարդները կը յաւակին ըլլալ բանաստեղծ, գրագէտ, երաժիշտ կամ գերասան. իւրաքանչիւրը ունի յատկութիւն մը, ցաւ մը, հիւանդութիւն մը վերջապէս, եւ սրահին միջոցով կը ծանրանայ հիւանդազին նոյն շունչով:

Անոր կողքին կայ լատին ամերիկեան սրահը. չա՛, չա՛, չայի ալիքը կը զարնուի պատերուն եւ զոյգեր կ'ոլորուին, կը փաթթուին, կը գինովնան ու կ'իյնան աթոռներու վրայ, սեղաններու տակ, մինչ նոյն եղանակը ուրիշ զոյգեր կ'առնէ իր թեւերուն մէջ ու կը շարունակէ իր ելեւէջը:

Յետոյ կան նաեւ ամերիկեան արդիական պարերու սրահներ, դասական ու հին պարերու սրահներ, վերջապէս սրահներու կարաւան մըն է Պրոտուէյը:

Լուսաւոր այդ անկիւնին վրայ է որ կը բացուին Մուլէն Ռուժի դռները, աւելի ճիշդը կը գոցուին անոնք, քանի որ այդ դռները խորհրդաւոր վարադոյրներ ունին իրենց գէմբերուն վրայ եւ դուրսէն՝ կարելի չէ նշմարել լոյսը:

Այդ երեկոյ բացառիկ կերպով խոնուած էր Մուլէն Ռուժ: Ուսուցչական սեղանին ետեւէն զողջուած աստղ մը բերուած ու նետուած էր բեմին կրայ: Երբեմնի հը-

բազուրիչ ուսուցչուհին, դժգոհ իր ասպարէզին վճարումէն՝ հեռացած է անկէ, իր հանձա՛րը այլ ձեւով արժեւորելու համար: Եւ այդ երիտասարդ աղջիկը՝ կատարեալ մարմնացումն է հանձարի. ունի գեղեցիկ ու կապոյտ աչքեր, ոսկեգոյն մազեր, ողորկ, համաչափ ու փայլուն սրունքներ, յետոյ՝ խնամուած կուրծք մը. վերջապէս, երբեմնի ուսուցչուհին ունի ամէն բան... զրամ շահելու համար. ապացոյց՝ դիտէ սա բազմութիւնը, որ կարգի կանգնած՝ անհամբեր կը սպասէ տեսնելու համար բաներ, զորս տեսնելէ յոգնած է արդէն. բայց վերջապէս մարդիկ զոհն են նորութեանց. իսկ ուսուցչուհին՝ իրապէս նորութիւն մըն է բեմին վրայ, կիսամերկ ու հպարտ:

— Կարծես, վրաս կեանք կու դայ կոր պէ, ըսաւ Գրիգոր, բաժակը պարպելէ ետք:

— Հաւանաբար Պոլիսը կը յիշեցնէ, ըսի ծիծաղելով: Գրիգոր բերանը բացաւ բան մը ընելու համար ու լռեց: Մեր դիմացը նստող երիտասարդը տեղը փոխեց, ապա՝ համարձակութիւն տուաւ իր մատներուն եւ սկըսաւ փնտռել քովի աղջկան նուրբ մասերը:

— Սալթ կերէք, տուն չունի՞ք պէ...:

Գրիգոր չչարունակեց ալ որովհետեւ այդ պահուն լոյսերը սկսան նուաղիլ, եւ կրքոտ եղանակին հետ բեմ նետուեցաւ երիտասարդ ուսուցչուհին եւ պատկերը ամբողջացաւ ակնթարթի մը մէջ: Յետոյ եղանակը դանդաղեցաւ շուտով տաքնալու համար, ակնկալութիւնները հասունցնելու պատրուակով, մինչ աղջիկը կարգապահութեամբ կը հետեւէր անոր, այսինքն՝ երաժշտութեան նմանող այդ պոռտուքին, եւ իւրաքանչիւր ելեւէջին, ոլորումներուն յարմարցնելով իր մարմնին շարժումները եւ ատենը մէյ մը ձեռքը կը տանէր խոստումին, ներկաներուն խարուսիկ հրճուանք մը պարգեւելով: Եւ երբ եղանակը ալ բոլորովին շփոթութեան

մատնուեցաւ՝ կիսամերկ աղջկան մէջքէն մեկնելով, ու ներկաները սկսան իրենց զուարթութիւնը նետել ձայնի ալիքներուն մէջ, այն ատեն դարձայ Գրիգորին եւ՝

— Պէտք է երթանք այլեւս, ըսի, կէս գիշերը անցած է արդէն: Գրիգոր չխօսեցաւ, երկրորդ դաւաթը պարպեց ջղայնութեամբ, սիկարէթը վառեց ու նայուածքը բեմին վրայ պահելով ըսաւ.

— Այս ազտոտ բնաւորութիւնդ ջիղերուս կը դպի կոր ալ. դուն կեանքէն հաճոյք առնել հի՛շ չես սորված. քիթդ բերանդ խօթած ես գիրքերուն մէջ եւ ինքզինքդ փիլիսոփայ կը կարծես կոր, թոյլ տալով որ կեանքը արագօրէն անցնի քովէդ եւ դուն անմասն մնաս անոր հրապոյրներէն. ամէն ինչ իր տեղին պէտք է ընել՝ քիչ մը համեմելու համար սա միօրինակ ու զգուելի կեանքը:

— Իրաւունք ունիս, իրաւունք ունիս, բայց շատ ուշի կը մնանք կոր, ես ասոր մէջ մեծ բան մը չեմ տեսներ կոր, ըսի ցած ձայնով, մեր շուրջ գտնուող զոյգերը չխանդարելու զգուշութեամբ:

— Սերք գլուխ ես, օտուրնի պէս, ըսաւ Գրիգոր ու շարունակեց: Մինչ այդ ես հաւաքեցի մտածումս, սիկարէթին տուփն ու լուցկին ու կ'երթամ կոր, ըսի եւ դուրս ելայ:

Դրան առջեւ, օրօրուն քայլերով ինձի մօտեցաւ փողոցի աղջիկ մը եւ գինովութեան պատշաճող ձայնով մը ըսաւ.

— Ես տուն չունիմ, զիս հետդ կը տանի՞ս... ու ժպտեցաւ կարկանդակ աչտերով:

Փողոցը մաքրուած էր գրեթէ եւ հաճոյքի մնացորդները կը փայլէին տժգունօրէն՝ սալալատակին վրայ ինկող անձրեւին միախառնուելով: Այդ պահուն սիկարէթ մը տեղաւորեցի շրթներուս մէջ, օձիքս դարձուցի ծոճրակիս շուրջ եւ ձեռքերս մխրճեցի գրպան-

ներուս մէջ: Յետոյ կանգ առի փողոցին անկիւնը եւ դիտեցի լոյսերուն լուռ տարափը: Քանի մը ժամ առաջ եռուղեռը՝ կը յորդէր դռներու առջեւ, հիմա սակայն, յոգնութիւնը ծանր թեւերով կը սաւառնէր սրահներու վրայ, տժգոյն ու մահասարսուտ տրամութիւն մը կ'իջնէր պատուհաններէն ու կը միանար յամեցող եղանակներուն:

Պատկերաւոր պատմութիւնը մեր կեանքին, իմ կեանքիս դուցէ: Սա օտար մայթերէն բարձրացող անէճքով սնած պանդուխտ տղոց, որոնք երազի մը հետապնդումին մէջ կը սպառեն իրենց հողին, կաշկանդուած բանտարկեալներու նման հնազանդելով ներքին մղումի մը որ իմաստ չունի ալ, եւ ատոր համար, ահա կը պարզուի սարսափելի հարցականը եւ տակնուվրայ կ'ընէ քեզ, երկրաշարժ մը սկսելով ենթադիտակցութեանդ մութ ու անհասելի ծերպերուն մէջ: Բայց հակառակ արթնցող այս զգայնութեան, ըմբոստութեան խռովքին, տակաւին դերին կը մնամ անցեալէն հասնող շղթաներուն եւ ինքզինքս չեմ կրնար յանձնել խոստումնալից, արբեցնող սա հաճոյքի թեւերուն: Այո՛, այո՛, թերեւս Գրիգոր աւելի իմաստուն է իր պարզութեամբ, որովհետեւ, ի վերջոյ ան սորված է կեանքի դաժանութիւնը համեմել խարուսիկ երջանկութեամբ մը, որ հոս է հիմա, խզուած անցեալէն, մոռցած ապագան, նպատակը՝ որուն առջեւ մենք մեզ կը հրկիզենք հանդիսատեսի դիմակը անցընելով մեր փափաքներուն վրայ: Բայց ինչպէ՛ս, ի՞նչ ձեւով փախչիլ, հեռանալ՝ մեր անպէտք եսէն, նպատակներու եւ երազներու բռնաբարութենէն, եւ ըլլալ բոլորովին նոր մարդ մը, փայլուն ու կլայունած ներքինով մարդ մը, որ քաջութիւնը ունենայ ուրանալու, արհամարհելու եւ խորտակելու ընկերութեան ժամանակափոխ շղթաները, կապանքները բոլոր: Փափաքը չէ որ կը պակսի մեզի,

այլ՝ սա պաշտելի կամքը, ծառանալու, ոտքի կանգնելով անցեալը մէկ հարուածով ջնջելու հերոսութիւնը. եւ ահա հիմա, զրկուած այդ ուժէն, կը փախչիմ ամբողջէն, կը փախչիմ սովորական վախկոտի մը պէս՝ երթալ անիծելու համար սենեակիս մենութիւնը, գիրքերու անյաղթահարելի սպտոնալիքը:

Ոստում մը կ'ընեմ լճացած ջուրին վրայէն եւ ճամբուն աջ եզրէն քալելով կը համբեմ շէնքերը, յուսալով որ վերջ չունենայ այս վազքը, անհատուած, անսահման թռիչքը՝ որ տակաւին գրառչութիւն մը ունի կարծես, հակառակ մեղամաղձոտ դիշերին որ քաղաքին վրայ իջած է թանձր վարագոյրի մը նման:

Մտածումներ ծնան բայց հովերը տարին դանոնք: Հատ մը միայն մնաց հոս, սա բաց դրան առջեւ՝ որ հիմա կը գոցուի դուրսի փոթորիկը խաղի բերելով, անցեալը բաժնելով ներկայէն, ապազային վրայ խոշոր գիծ մը քաշելէ ետք: Եւ այդ չէ՞ր արդեօք Գրիգորին նպատակը: Այլապէս ինչպէ՞ս բացատրել անոր անհոգութիւնը, կեանքը այնքան թեթեւօրէն ըմբռնելու համարձակութիւնը, արհամարհելն իսկ անուն մը՝ զոր փոխած էր պատմութիւնը տանելով գերեզմանի մը շուքին: Արդեօք կարելի չէ՞ր պատահական հարուածով մը փշրել ամբողջ անցեալ մը եւ անոր փոխարէն քար առ քար կերտել նոր մը, աւելի դեղեցիկ ու տոկուն: Այո՛, այո՛, պէտք է այրել բոլոր գիրքերը, նախ հիները, արիւնաներկ հատորները, վերսկսելու համար նոր մը որ յառաջարան չունենայ, սկիզբ չունենայ բացարձակապէս: Որոշ է ալ. շատ յստակ. ան որ սկիզբ չունենայ, պիտի չունենայ նաեւ վախճան մը. յուսահատական, ողբերգական վերջաբանը պիտի խնայուի անոր. այո՛, բոլորովին նոր գիրք մը՝ որուն բառացանկը ըլլայ սեղմ ու տոկուն, եւ որուն մէջ լալկան բոլոր ար-

տայայտութիւնները փոխարինուին երգով ու յաղթանակի կանչերով:

Անձրեւը կը մաղուէր տակաւին ու անոր կաթիլներուն թեթեւ գոռուանքը կը զգայի այտերուս վրայ: Ճամբան կ'երկարէր՝ ինքնախարէութեան տանող գեղեցիկ ելեւէջներով, բայց մեծ ոստում մը ընելու ուժը կորսնցուցած էի ալ, որովհետեւ մտածումս կը յառաջանար անհասանելի քայլերով:

Փողոցին այս մասը ամայի է եւ լուսաւոր. պէտք է հանրակառքին սպասեմ, որովհետեւ յոգնած եմ ու յուսահատ:

3

— Իմին անունս Քարլոս է. ես Պոլսէն կու գամ, ի հարկէ դուն չես գիտեր Պոլսոյ ինչ ըլլալը, բայց այդ բոլորը կարեւոր չեն. կարեւորը այն է, որ ես քու ազուր աչքերդ սիրեցի, եւ կ'ուզեմ հետդ խօսիլ փարատելու համար սա առանձնութիւնը՝ որ հոգիս կը մաշեցնէ, ըսաւ Քարլոս, ճիշդ այս բառերով ու անկեղծութեամբ: Ազջիկը՝ անակնկալի եկած, շփոթահար նայեցաւ սա օտար երիտասարդին աչքերուն մէջ. նախ կարծեց որ գինով մըն էր ան, բայց երբ տեսաւ թէ այդ աչքերը գինովի չէին պատկաներ, շուրջը նայեցաւ խուզարկու աչքերով եւ ըսաւ.

— Ժամ մը եւս եթէ սպասես կ'աւարտի աշխատանքս:

Ժամ մը ետք երբ դուրս ելան խմիչքի սալոնէն, ազջիկը հարցուց հետաքրքրութեամբ.

— Ո՞ր պանդոկը պիտի երթանք:

— Ծովեզերքը ազուր սալոն մը կայ, նախ կ'երթանք հոն, ըսաւ Քարլոս:

Ծովեղերեայ այդ սալոնին մէջ Քարլոս քանի մը բա-
ժակ եւս պարպելէ ետք, անմիջապէս հաղաւ Գրիգորին
չապիկը ու խօսեցաւ:

— Գիտեմ որ դուն, օտար աղջիկ, իմին խօսքերէս
բան մը պիտի չհասկնաս, բայց ես խօսիլ կ'ուզեմ եւ
կարեւոր չէ թէ դուն ի՞նչ կը մտածես իմ մասին: Ծիշդ
ախպէս, ձմեռ օր մը, մեռան երկուքն ալ. նախ մայրս,
յետոյ հայրս: Եւ այդ քաղաքը Պոլիս կը կոչուի. հոն
ծով կայ, կապոյտ ու վճիտ, բայց այդ բոլորը բնաւ
տարբերութիւն չեն ընէր. անոնք մեռան, ու ես ալ հոս
եկայ ուսանելու: Յետոյ Գրիգոր մանրամասնօրէն բա-
ցատրեց անոր Պոլիս քաղաքը, յաճախ թրքերէնը օղ-
նութեան կանչեց ու անընդհատ ժպտեցաւ. աղջիկը հե-
տեւեցաւ անոր, ու անոնք մեկնեցան ջուրերու ճամբով:

**

Վաղքեր կան որոնք նպատակ մը կ'ենթադրեն ի
հարկէ. վաղքեր ալ կան որոնք ոչ սկիզբ ունին եւ ոչ
ալ վախճան, ատով հանդերձ, սրահէ սրահ, հեւ ի հեւ
սա մեր վաղքը՝ ի՞նչ ուղղութիւն ունի, ասկաւին չեմ
կրցած ըմբռնել: Օրեր կան, երբ մեր տոանձնութիւնը
մեղմել կը փորձենք պարզապէս ժպտելով, գուարճալի
եւ անխմատ պատմութիւն մը պատմելով բարեկամի
մը, յետոյ ընելով՝ բաղմամբիւ պարզ ու տարօրինակ
բաներ, վերջապէս մոռնալով որ կ'ապրինք կեանք մը,
որուն վիճակուած չենք եւ չենք ալ կրնար մտերմանալ
անոր բաղմամբիւ ծալքերուն հետ. ծալքեր՝ որոնք ճեր-
մակ են, սեւ կամ կապոյտ: Աս անյուսութիւնը՝ որ
օր ըստ օրէ կը խորանայ մեր սիրտերուն մէջ, յանկարծ
կը ծաւալի, հովիտի մը երեւոյթը կը ստանայ: Աննշմա-
րելի, անտեսանելի վիճակ մըն է այս, որ կրնայ բնո-
րօշել հոգեփոխութեան կարգ մը տաղտկալի իրողու-

թիւնները, քայքայումի ենթակայ անհիմն կոտուց-
ւածք մը: Այս անյուսութիւնը տակաւին, օր մը յան-
կարծ իր կլափին մէջ կրնայ ճղմել՝ արդէն խոկ ուժան-
դատ իրանները՝ սա ափ մը օտար ուսանողներուն, ո-
րոնք նետուած են մայթէ մայթ, տնկիւնէ անկիւն, մե-
քենացած զանուածի մը մէջ եւ կը սպասեն զանգալ-
ներու զօղանջին որ կ'ուշանայ՝ անկրելի դարձնելով ա-
նոնց բնոր:

Չմբան սա եղանակը որուն հետ հաշտուել փորձե-
ցիր դուն, ազուր է քու կարծածիդ շափ եւ քիչ մը ա-
ւելի. անոր աղղեցութեան տակ ինչ խաղեր կը օտար-
քուին մայթերուն վրայ, յարկերու տակ, քեզի ալ ու-
բախտութեան պղտիկ, աննշան բաժին մը հանելով. եթէ
դո՛ւ չես դուն քու վիճակէդ, ա՛ռ այս պատեհութիւնը
եւ քալէ դիմացի ճամբայէն որ կոտուցուած է մասնա-
ւորաբար քեզի համար, քեզի նմաններուն, որոնք ար-
ժանի չեն եղած աւելիին, քանի անոնց կը պակսի եր-
ջանիկ ըլլալու յատկութիւնը:

Այդ օրը, բացառաբար գունաւոր էջ մըն էր ձմբան
մէջ: Արեւը փռուած էր խոտերուն վրայ, ուսանողնե-
րուն եւ գիրքերուն. յետոյ քիչ մը հազարձակութիւն
քաշելով դիմացի ծառերէն, նոյն այդ արեւը իր սահ-
մանը կ'ընդարձակէր ողողելով սրունքները աղջիկնե-
րուն՝ որոնք ծուլօրէն երկնցած էին տղոց մօտ, օրուան
միօրինակութիւնը խանդարելու խոստումով: Դասա-
պահէն ետք, խումբով եկանք եւ նետուեցանք այդ ա-
րեւին՝ տակ, մեր իրաւունքին պաշտպան կանգնելու
վճռականութիւնը յանձնելով դասախօսներուն: Գրաւ-
ուած այդ դիրքէն, յատկօրէն կարելի էր դիտել տե-
սարանը, արագ ոստում մը ընելով համբուրուող զոյ-
ղին վրայէն. աղաքը անհանդարտ էին եւ կոպիտ ա-
բարք մը գործելու փափաքը կ'այրէր կուրծքերու տակ:

— Գիտութեան ուսանող ըլլալու տառապանքն ու

հաճոյքը միշտ ալ պիտի վայելես ուրիշներու բերնով : Ոմանք խնդացին. ուրիշներ ըսին թէ՛ ջու լուծիւնդ աւելի հաճելի է. բայց ձէք կարեւորութիւն չտուաւ այդ բոլորին ու շարունակեց .

— Ի՞նչ է որ սէքը . շատեր այս անորոշ բառին դանդան մեկնութիւններ կու տան՝ զործուած արարք մը արդարացնելու համար . ուրիշներ՝ աւելի ճարպիկ ըլլալուն, չեն իսկ մտածեր անոր մասին՝ փորձառութիւնը փոխարինելով տեսութեամբ . ի վերջոյ սէքը մարմնին տկարութիւններուն առջեւ տեղի տալ է ինծի համար . եւ ես այդ տկարութիւններուն հանդէպ մասնաւոր յարգանք մը ունիմ :

Այդ պահուն զիրք մը սուբաց օդին մէջ եւ զարնուեցաւ ձէքի կուրծքին . այդ արագութեամբ ալ ձէքին բարեկամուհին միջամտեց ու ըսաւ .

— Երբ ինծի հետ առանձինն ըլլաս, այդ ձեւով չես խորհիր բնաւ :

— Լրջանալու ժամանակը չէ այս, բացահանչեց ձէք, ու դարձաւ բարեկամուհիին :

Փպիտ շկար դէմքին վրայ եւ քայլերը ծանրութեամբ կը յաջորդէին իրարու : Երբ զիս տեսաւ հեռուէն, մօտեցաւ ու զլուխը կախ ըսաւ .

— Քալէ՛ տեղ մը քաշուինք . կ'ուզեմ քիչ մը խօսիլ հետդ . իրապէս զլուխիս փորձանք մը փաթթեցի, քալէ՛, քալէ՛ երթանք :

Գիրքերս հաւաքեցի եւ հետեւեցայ անոր : Յետոյ երբ նստեցանք ծառի մը տակ, Գրիգոր հաւաքեց ինքզինք, ըսելիքները կարգի դրաւ ու խօսեցաւ .

— Ահա այսպէս, ինկանք ծուղակին մէջ, բայց ի՞նչ ծուղակ . անշուշտ կը յիշես Լինտան, որուն մասին պատմած էի քեզի, Մուլէն Ռուժի դիշերէն ետք . ամիս մը անցաւ այդ օրէն, չյիշես ալ կ'ըլլայ . բայց ես կը

կարծեմ կոր քի սիրահարուեցայ անոր : Յետոյ Գրիգոր պահ մը լուռ մնաց եւ շարունակեց հանդարտ ու յուսահատ ելեւէջներով : Հաւատա՛, ես բնաւ չուզեցի սիրահարութեան մասին մտածել՝ ամէն ինչ կատակի տանելով, թեթեօրէն առնելով . բայց հաշիւս սխալ դուրս եկաւ . քանի մտերմացայ իրեն, այնքան աւելի կատաղեցայ անոր՝ մտերմիկ բան մը գտնելով Լինտայի անկեղծութեան մէջ : Գիտեմ ինչ կը մտածես կոր իր մասին, բայց տախիա եիջ տարբերութիւն չ'ըներ, քանի որ այս առանձնութեանէն փախչողը սխալ չի կրնար զործել . յետոյ ինչ ունիմ կորսնցնելիք . երբ կը գտնուիս հոգեկան նման աստիճանի մը վրայ, աւելի վատը չես կըրնար ակնկալել կեանքէն, որով, եղած փոփոխութիւնը կրնայ նոյնիսկ օգտակար ըլլալ ինծի : Հակառակ խանդավառութեան, Գրիգոր յաւելեալ ճիշդ մը կը թափէր ինքզինք համոզելու համար, թէ եւ խօսքը ուղղուած էր ինծի : Եւ այդ եղանակով ալ շարունակեց խօսակցութեան թափը, երբեմն հազի փոքր ալիք մը նետելով լուութեան մէջ, որ հիմա սկսած էր երկարիլ, տառապաղին, ըզկտող, հոգի հատցնող ներկայութիւնը զգալի դարձնելով : Գրիգոր կը ջանար ինքնարդարացումի նոր կերպ մը գտնել, բացատրութեան նոր դարձուածք մը թերեւս՝ իր երջանկութեան մասնակից ընելու համար զիս, բայց տատամսուճը կու գար ու կը խանդարէր նախապէս ցուցադրուած մտահաւթիւնը : Երբոր ըսելիքները աւարտեց զլուխը վեր առաւ, եւ աչքերուս մէջ նայելով ըսաւ .

— Կ'ուզեմ ամուսնանալ Լինտային հետ . . .

— Աղէկ խալք կ'ընես, ըսի, բարկութիւնս զօպելով : Ըսելիքներս դասաւորել փորձելով : Գիտէի անշուշտ որ, նորութիւն մը չունէի սա տառապող տղուն համար, եւ ըսելիքներս պիտի ըլլային կրկնութիւնը այն բոլոր նախադասութիւններուն որոնք նման առիթ-

ներով արտասանուած են արդէն եւ կորսնցուցած՝ իրենց նշանակութիւնն ու ազդեցութիւնը. հակառակ այս պիտակցութեան սակայն, ըսի մեղմօրէն.

— Քեզի քարոզ մը տալու տրամադրութիւնը չունիմ, Գրիգոր, հաւատա ըսածիս. բայց կարգ մը կէտեր կան որոնց մասին պէտք է մտածել ասանկ պահերուն, պարզապէս խուսափելու համար հետադայ սայթաքումներէ, յուսախաբութիւններէ որոնք կ'ընկերանան նման որոշումներու: Կը զգամ թէ հոգեկան ծանր խրոսովք մը ունիս. բոլորս ալ ունինք առանձնութեան այդ ցաւը, բայց անկէ ձերբազատուելու լաւագոյն կերպը չէ քու կատարած նախընտրութիւնդ. թէ ինչ է լաւագոյնը, այդ չեմ գիտեր, բայց վստահ կրնաս ըլլալ որ այս աղջիկը լուծում մը պիտի չըլլայ քու առանձնութեանդ որովհետեւ հասարակաց ոչ մէկ եզր ունիք իրարու հետ. ըսէ ինձի, ան ի՞նչ պիտի հասկնայ քու պալլոյսնիմերէդ, քու ցաւէդ, երբոր անոր համար քու անցեալը անխաստ էջ մըն է, բոլորովին օտար ու անհաղորդ: Առանձնութենէն վրէժ լուծելու այս կերպը շատ սուղի կրնայ նստիլ վրադ, քիչ մը համբերէ, թեւեւ վարժուիս ալ այս միջավայրին, այս նոր կեանքին: Ի վերջոյ, մենք բոլորս ալ ունեցած ենք և ունինք դառնութեան եւ յուսախաբութեան նոյն պատճառները. բայց մարդ ենք եւ ասակ՝ միջավայրի մը բրտութիւններուն վարժուելու, եթէ նոյնիսկ ասիկա մեծ զոհողութիւններ պահանջէ մեզմէ: Դիտէ՛ չուրջդ և պիտի տեսնես թէ ճիշդ են ըսածներս: Մեր մեծագոյն սխալը այն էր որ, մեծ ակնկալութիւններով եկանք հոս, յուսալով որ մեր հարազատներէն հեռու, կեանքը պիտի ընթանար իր սովորական հունին մէջ, եւ մեր կորսնցուցածը պիտի գտնենք այստեղի հաւաքական կեանքին մէջ. բայց այդպիսի կեանք մը դոյութիւն չունի հոս, որովհետեւ, ինչպէս ըսի, այստեղի հայերն ալ անցած են

նոյն ճամբայէն եւ պատշաճած՝ այս միջավայրին որպէս փրկագին տալով այն ջերմութիւնը զոր մենք կ'ակընկալենք անոնցմէ: Այս բոլորը ճիշդ ըլլալով հանդիման չեն արդարացներ սակայն քու առնելիք սխալ քայլը. լաւ մտածէ, Գրիգոր, երբ ուշ չէ տակաւին:

— Թեւեւ ըրածս ճիշդ չէ, բայց տարբեր լուծում մը չեմ գտներ կոր այս պահուն, յետոյ մանաւանդ՝ լինտան քիչ թէ շատ հասկնալ կը փորձէ կոր. այդքանը դիս գոհացնելու է հիմակ ու հիմա...

Բաժանումը եղաւ այնքան անորոշ, ինչպէս եղած էր մեր խօսակցութիւնը. աւելին չէի կրնար փորձել, քանի այնքան մօտիկ էր անոր զպացումը մեր ունեցածին, այլևս ինձի կը մնար լռել եւ հետեւիլ անոր քայլերուն, որոնք կը կորսուէին ծառերու. ետին, առանց հետք մը ձգելու:



Գրիգորին սիրային կեանքը ինքնատիպ բան մը չունէր, գրեթէ. ան ալ կը նմանէր հինցած ու կրկնուած սովորական եղանակներու. ատով հանդերձ սակայն, հայ տղան ջանաց նոր ու խանդավառող պատճառներ փնտռել սա կամ նա ասլորումին մէջ, եւ կապուեցաւ, շղթայուեցաւ՝ օտար աղջկան հարցական նայուածքին: Այդ առաւօտ երբ արթնցաւ ան, չէի ու ջերմիկ արեւ մը կը խաղար հինցած ու ծերացած պատուհանին փեղկին վրայ. մաշած ու յոգնեցուցիչ եղանակ մը կը ծփար օդին մէջ ու կը միանար մահաճակալի ճոխչին: Գրիգոր որոշումը տուած էր ալ, եւ ետ դարձի տրամադրութիւն չունէր:

Միայն երկու տղար տուին եւ ստացան ամուսնութեան արտօնագիրը. յետոյ ստորագրեցին հաւատար-

մութեան պաշտօնագիրը եւ գնեցին իրենց պսակը: Յաջորդ առաւօտ, մնաք բարովի համբոյրէն ետք, Լինտա գնաց ու շարունակեց աշխատիլ սալոնին մէջ, իսկ Գրիգոր զիբքերը հաւաքեց ու մեկնեցաւ համալսարան: Հոն է որ դարձեալ հանդիպեցանք իրարու, եւ Գրիգոր այդ ուրախ լուրը հաղորդեց ինձի՝ տխուր դարձուած քննարով: Յետոյ երկար ատեն մը չտեսայ զինք:

Անշուշտ այս շրջանին բաղձաթիւ դէպքեր պատահեցան: Նախ ձմեռը փէշերը հաւաքեց ու նետուեցաւ ովկիանոսին յատակը. երկինքը պայծառացաւ. կապոյտով մը ներկեց իր դէմքը եւ թոյլ տուաւ որ արեւին հետ բացուին ծաղիկ ու տերեւ. բաղձաթիւ ուսանողներ իրենց ամուսնութիւնը յայտարարեցին համալսարանի թերթին մէջ, բայց ինձի հոմար կարեւոր բան մը չպատահեցաւ. տարի մը եւս անցած էր ուսանողական մեր կեանքէն, եւ այդքանը բաւարար էր փոքրիկ հըրձուանք մը նետելու, ուրախութեան փշուր մը ցանկելու տամկացած օրերուս մէջ: Նոյն տարուան վերջաւորութեան՝ Գրիգոր ստիպուեցաւ հեռանալ համալսարանէն:

Վերջի կամ զոջումի որեւէ արտայայտութիւն չկրցայ տեսնել դէմքին վրայ: Բարակ ու ծփացող ժպտմամբ կար աչքերուն մէջ. ինքնավստահութեան նոր հովմը, թերեւս:

— Կարծեմ վերջ գտաւ իմ ուսանողական կեանքս. դիտե՛ս, զժուար կ'ըլլայ կոր հաշտեցնել ամուսնական կեանքը՝ ուսանողականին հետ. ոմանք կ'ընեն կոր, բայց ինձի համար շատ զժուար է, շատ զժուար. ի վերջոյ, կ'ին ունենալը՝ նոր պատասխանատուութիւն է, կը հասկնաս անշուշտ...

Տասը վայրկեան քալեցինք կողք կողքի. երբ ես սենեակիս դրան առջեւ հասայ, Գրիգոր շարունակեց իր ճամբան. չգիտեցի զինք իր ետեւէն. տարօրինակ զգա-

ցում մը պատեց զիս եւ ներս մտնելուս անիծեցի սենեակիս մենակութիւնը՝ խօսքս յղելով կեանքի հասցէին:

Ամբան սա երեք ամիսները՝ հետաքրքրական ոչինչ ունէին գրեթէ: Համալսարանական կեանքի վազքը կը փոխարինուէր զործարանի մը անիւներով, եւ շարժարանքը կը շարունակուէր տարբեր նոթի մը վրայ: Միջավայրի այս փոփոխութիւնը քիչ մը զուարթութիւն կը բերէր իր հետ, բայց բանուորներու կոշտ արտայայտութիւններէն մեկնելով կեանքը կը դառնար աւելի լեցուն, քիչ մը իմաստ տալով ապրելու ճիգին, որ մեզմէ խլուած էր կարծես դատավճիռէ մը ետք: Մերը սակայն՝ սպասում էր, խոստումներով, ակնկալութիւններով եւ երազներով յղի սպասում մը, որ երբեմն անհամբերութիւնը կը պատկերազարդէր քանի մը գիծ զողնալով վրձինի մը խաղէն, ստեղծուած պարապը տանելի դարձնելով:

Հեռուէն դիտուած սա քաղաքը գեղեցիկ ու պզրոտ կ'նոջ մը կը նմանի, որ կը հիացնէ քեզ, բայց թոյլ չի տար որ հպիս իրեն, սիրես ու գզուես զինք: Շարաթ երեկոները կը բարձրանայի դիմացի լեռան վրայ, կը դիտէի լոյսերու մէջ լոցացող հրապուրիչ կառուցուածքը Սան Ֆրանսիսկոյի, որուն ոտքերուն առջեւ ովկիանոսի ջուրը հանդարտօրէն կը պարէր: Յետոյ կը դիտէի այդ փոքրիկ կղզին, որ որպէս բանտ կը ծառայէր մահուան դատապարտուած ոճրագործներուն համար: Այդ պահուն, յանկարծ կը մտածէի կեանքի բանտին մասին, որ մարդ իր ձեռքերով, զգացումներով կը կերտէ յաւիտենապէս շրթայնով եր հողին. երեւբանտերու միջեւ կատարուած բաղաատութիւնը եզրակացութեան մը իրաւունքը կը խլէր ինձմէ, քանի որ նժարին երկու աչքերը կը պահէին միեւնոյն բարձրութիւնը:

Այս երեք ամիսներու ընթացքին՝ գրեթէ չտեսայ Գրիգորը: Վերջապէս, կը խորհէի, զբաղումներ ունի ան. կին մը ունի, մտահոգութիւններ, վայելքներ. ո՞վ զիտէ: Շարափ երեկոյ մը սակայն, տուն վերադարձիս զբան առջեւ տեսայ զինք:

— Քալէ երթանք, սանկ խափանիս տաքցնենք քիչ մը, ըսաւ, առանց վեր առնելու դուխը:

— Լինտան ո՞ւր է, առանձին ես այս երեկոյ, ըսի, դէմքը քննելով:

— Հիմա այդ մասին խօսելիք ատեն չէ, քալէ երթանք կ'ըսեմ կոր, շարունակեց:

Փողոցէն վար իջանք եւ ուղղուեցանք հանրակառքի կայանը. երբոր կողք կողքի տեղաւորուեցանք նստարանին վրայ, այն ատեն լուսթիւնը խղեց Գրիգոր եւ դանդաղօրէն ըսաւ.

— Վերջին անգամ ըլլալով Մուշէն Ռուժ երթանք. կը յիշե՞ս Մուշէն Ռուժը: Հիւանդագին բան մը կար այդ ձայնին մէջ: Կորսուած անցեալ մը վերադանելու ճիգ մը դուցէ:

Պրոտուէյ փողոցը սովորական խանդավառութիւնը կը պահէր մայթերուն վրայ. փոխուած բան մը կար, բայց այդ մեր նայուածքներէն կը մեկնէր անպայման:

Առաջին զաւաթը արագօրէն պարպելէ ետք, երկրորդը սպասեց ու ըսաւ.

— Բող է եղեր, հասարակ բող մը, եւ ես չզիտցայ. թերեւս իրենց համար սովորական է այսպիսի ապրելակերպ մը, բայց մենք սասանկները բող կը կոչէինք Պոլսոյ մէջ:

Երկրորդ եւ երրորդ զաւաթները պարպելէ ետք՝ Գրիգոր գտաւ իր նախկին զուարթութիւնը եւ բռունցքը

սեղանին վրայ հնչեցնելով վերադարձաւ ինքնիրեն. անակնկալ այս աղմուկը նայուածքները քաշեց զիմացի բեմէն եւ կեդրոնացուց մեր սեղանին վրայ: Թեթեւութիւն մը կը թափէր Գրիգորի արտայայտութեան մէջէն, սա՛նկ բանտէ արձակուածի դժնդակ թեթեւութիւն մը կը նշմարուէր անոր աչքերուն մէջ: Նախ դանդաղ, ապա բարձրաձայն խնդուք մը ելաւ անոր թոքերէն՝ մտահոգութեան բոլոր հետքերը ջնջելով: Յետոյ լըջացաւ, ձեռքի զաւաթը դրաւ սեղանին վրայ եւ դողացող մատներով սիկարէթ մը տարաւ շքիներուն ու ըսաւ.

— Կ'երթամ կոր, տոմսակս ալ առած եմ. ետ կ'երթամ կոր. Պոլի՛ս, Պոլի՛ս, ես քեզի ետ կու գամ կոր... Ես վարժուած չեմ ասանկ օղերու. հոս շատ ցուրտ կ'ընէ կոր, մանաւանդ ամբան ամենէն տաք օրերուն. Պոլսան ալ խըլլալիս բան մը չէ, բայց դոնէ վարժուած եմ անոր...

— Թերեւս լաւ կ'ընես, ըսի, թերեւս այդ ձեւով աւելի երջանիկ կ'ըլլաս, սուելցուցի, խօսքը յղելով Գրիգորին, բայց իմաստը վերապահելով ես ինձի:

— Մեզի նմաններուն համար երջանկութիւն մը կա՞յ արդեօք, չեմ գիտեր. վերջերս, շատ յաճախ այդ հարցումը կ'ուղղեմ ես ինձի, եւ պատասխանի մը որոնումը կը շփոթեցնէ զիս...

Երջանկութեան մասին մտածելու տրամադրութիւն չունիմ այս պահուն, քանի որ զիծը քաշուած է արդէն, բարակ, երկար ու վերջնական. մարդիկ ընտրած են իրենց կողմը եւ նախապատուութեան կարիք չկայ այլեւս: Մենք ինկած ենք սա ծուռ փողոցին վրայ՝ որ մութ է տարուան բոլոր եղանակներուն, եւ քաղաքապետարանի բոլոր ջանքերը անշօր են զայն վերակենդանացնելու համար. ի՞նչ փոյթ ոսկայն, որ, տարբեր

սկզբնաւորութիւն մը մեր ուժերէն վեր է այլեւս, բայց
պատճառքեան այս էջը կը զրուի լողնած մատներով:

Դուռին առջեւ կանգ առինք պահ մը: Գրիգոր
ձեռքը երկարեց ինձի ու ըսաւ.

— Մի կարծեր որ չփորձեցի. կարողութեանս սահ-
մաններուն մէջ ձեռքէս եկածը ըրի. փոխեցի անունս,
չապիկս, մտածելակերպս, բայց հոգիս տարրեր բան մը
կ'ուզէ, տարբեր. գետինն անցնին Քարլոսն ու անոր
բերելիք առաւելութիւնը. տուր ինձի իմ Գրիգորս, ես
զայն Պոլլիս պիտի տանիմ: Դուն զնա՛ քու զիրքերուդ,
ես ճամբաս դտած եմ ալ...

Սան Ֆրանսիսկօ, 1959

ՕՍԿԱՐՆԵՐՈՒՆ ՏԱԿ

[Faint, illegible text from the reverse side of the page, appearing as bleed-through.]

ՕՐԵՐԸ կ'անցնին երբեմն առանց խօսելու, եւ երեւակայէ թէ ի՛նչ կը նշանակէ աւիկա ինծի համար: Միակ բարեկամս փայփն է, որ սովորական փայփի կտոր մը ըլլալէ աւելի բան մ'ըն է հիմա: Երբեմն նոյնիսկ ինծի կը թուի թէ ան պիտի հասկնայ երբ խօսիմ իրեն, ու կը խօսիմ ալ: Տարբեր է սիկարէթէն, որ նոր մըն է ամէն վայրկեան, անոնցմէ ոչ մէկուն կրնաս կապուիլ: Կիրքերը հանրայնօրէն դժբաղանջու նման բան մ'ըն է սիկարէթ ծխելը: Փայփը սիրելն է կարծես, մէկ հողի միայն, եւ լաւը, որուն ամէն մէկ մասին ծանօթ եւ մօտէն, — կը զրէ բարեկամ Անդլիոյ հեռուօր մէկ անկիւնէն:

Չեմ գիտեր թէ ինչու պարզ ու յստակ այս տողերուն մէջ կը փնտռեմ պատմութիւնը պանդխտութեան անհիւրընկալ ափերուն նետուած դժբախտ ուսանողներու, որոնք օր մը, անձրեւոտ ու դժնդակ օր մը, ճամբայ ելան անցեալէ մը փախչելով, աւելի փայլուն ապագայի մը հեռանկարէն դիւթուած: Եւ հիմա, բառերը կը մեծնան, բառերը կը շատնան ու կը լեցնեն պարապութիւնը սա սենեակին, որուն մէջ դեռ կը յա-

մենան, դեռ կը տատանին փշրուած երազի մը այնքան մանրացած փշուրները: Ահա այսպէս, ես կը փորձեմ խօսիլ բարեկամիս հետ, պատմել անոր ցուրտ ու մռայլ երկինքներու մասին, որոնց տակ ամբողջ ազգի մը պատմութիւնը կը տողանցէ պատերազմէն վերադարձող վատուժ սրունքներով: Պատմել անոր սուքերու մասին, որոնք մաշած են ալ անծանօթ ու օտար երկիրներու հեղնանքին դէմ, եւ հակառակ այդ սպառումին դեռ կ'արհամարհեն մահը, որ տակաւ կը տարածուի անոնց շուրջ անյուսութենէ մը մեկնելով: Մինչ վարէն, փողոցներէն կը բարձրանայ խելագարած ամբոխներու աղմուկը եւ տարտամութեան վրայ նետուող շուքերը կը տարածուին հորիզոնէ հորիզոն, մօտակայ դինետան մէջ համբոյրները կ'արիւնին սիրտերու նման, որոնք տակաւին կը սպասեն անոր, որ պիտի գայ անակնկալօրէն, անաղմուկ, անձայն: Բայց ես դարձեալ կը մտածեմ բարեկամիս եւ իր խօսուն փայփին մասին, ու կ'ըսեմ, թէ յուսալքութենէ ազատելու լաւագոյն կերպը զայն ընդունիլն է, անոր անձնատուր ըլլալն է ամբողջութեամբ, կամովին:

Երէկ գիշեր, երկար մենախօսութիւն մը ունեցայ գրիչիս հետ: Աղաչեցի, խնդրեցի իրմէ որ այլեւս յոռետես դադափարներ չչարէ թուղթին վրայ. բացարեցի նաեւ՝ թէ մարդիկ զինք չեն սիրեր եթէ յամառի իր այս ընթացքին մէջ: Չկրցայ ըմբռնել թէ ինչ պատասխանեց գրիչս: Եւ երբ պաղատանքներս ապարդիւն մնացին, այդ պահուն կոտրեցի զայն. քրքջալով, լիաթոք խնդալով անոր լացը վայելեցի ես, եւ ապա վաղեցի շուկայ ու խանութպանին ըսի, թէ կ'ուզէի գրիչ մը ունենալ, որ զուարճալի տողեր կարենար արտադրել, ընէր բաներ՝ զոհացում տալու համար սա մարդոց, որոնք իրականութիւնը ուրանալ կը փորձէին՝ զայն յաղթելու նպատակաւ: Մարդուկը ժպտե-

ցաւ: Ժպտեցաւ նաեւ դիմացը կախուած գրիչը ու մենք շուտով, հին բարեկամներու պէս մտերմացանք: Այսօր, ես կը փորձեմ իմ նոր գրիչս: Ինքնախարէութիւն մըն ալ այս է ինքնին. առանձնութեան քայքայումէն ձերբազատուելու անհուն փորձ մը, որ ո'չ սկիզբ ունի եւ ոչ վախճան: Որովհետեւ մեր կեանքը ձմեռիկուած է անծանօթ քաղաքի մը մութ ու խոնաւ մէկ փողոցին մէջ, ու մեր աչքերը խաւարին մէջ լոյս փնտռելու ճիգէն սպառած են ալ:

Պատմութիւն մը գիտեմ որ կը սկսի խոշոր ու տաք համբոյրով. ատիկա պատմութիւն չէ, այլ զուարճալիք մը՝ պարզապէս: Պատմութիւն մըն ալ գիտեմ, որ կը բացուի մահաքայլերով. այս ալ պատմութեան չնմանեցաւ, քանի որ շատ մօտ է ան՝ իրականութիւնը յուզելու: Սակայն այս մէկը, որ կը սկսի ոչ տաք համբոյրով եւ ոչ ալ մահաքայլերով, կը նմանի այն բոլոր պատմութիւններուն, որոնք կ'արտասանուին գրեթէ ամէն օր, եւ ամէն քայլափոխի, որովհետեւ հոն կազմակերպուած խոյանքը սովորաբար կը մոռցուի մանրամասնութիւններու մէջ, եւ առջին նախադասութենէն ետք ամէն ինչ կը թաղուի անորոշութեան մը անուրջին մէջ: Թէ ինչո՞ւ այդպիսի վախճան մը կ'ունենան նման արկածներ, ատիկա երկրորդական կարեւորութիւն ունի մեզի համար, քանի որ բուն նպատակը կը շողայ հորիզոնին վրայ ու մենք կ'անտեսենք ստօրեան պղտորող մանրուքները: Ահա թէ ինչու ամառնային արձակուրդի առաջին օրերուն, շուտով կը պատրաստեմ փոքրիկ պայուսակս ու աճապարանքով կ'ուզեմ հեռանալ սա դիւղաքաղաքէն, ուր ամէն ինչ մեռնելու դատապարտուած է կարծես: Անշուշտ փախուստիս նպատակը այս տժգոյն պատկերը չէ բնաւ, որովհետեւ ալ վարժուած ըլլալով Խիւր երկանակներու, բացառիկ զուարթութիւն մը բոլորովին

անախորժ պիտի թուի, նոյնիսկ ամենէն խալտացող պայմաններու տակ: Բայց փոքր քաղաքներու անպատեհութենէն հեռանալու մեր վլխաւոր նպատակն է, նետուիլ աւելի մեծ կայան մը, ուր եռուզեռի մէջ կարելի պիտի ըլլայ մոռնալ ամէն ինչ ու ըծուիլ աշխատանքի մը, որ դոնէ շահաբեր է ու նպատակայարմար: Տեւելու մարմաջն է, որ այսպէս, մեզ անմիջապէս կ'առնէ իր թեւերուն մէջ, ու սուանց վայրկեան մը կորսնցնելու կը նետէ սա մեծ քաղաքի ազմուկին մէջ:

II

Այս քաղաքը նշանաւոր է, նախ անոր համար որ հաստատուած է բլուրներու վրայ եւ կը նմանի մեր կեանքին՝ հազար ու մէկ ելեւէջներով: Յետոյ՝ երեք կողմէ շրջապատուած ըլլալով ովկիանոսի ջուրով, հոն կրնաս սուղուիլ փախուստի ճամբուն վրայ եւ դիւրաւ կը կորսնցնես հեռք ու նպատակ: Գունաւոր, գրաւիչ, խիստ հետաքրքրական քաղաք մը ըլլալուն, հոն կը հանդիպիս նաեւ դունաւոր, գրաւիչ, խիստ հետաքրքրական մարդոց, որոնք փողոցներուն կուտան հարկ եղած խմաստը, երբեմն միայն գանոնք զըրկելով այն իրաւունքէն, որուն մասին չուզեցին խօսիլ: Եւ հակառակ այս անտաքրբութեան, հակառակ քաղաքին նկարագիրը գրաւի զնելու անճարակ փորձին, մարդիկ կը մեկնին հոսկէ, միշտ վերադառնալու խոստումով, որովհետեւ մեկնելէ առաջ իրենց սեփական ինչէն բան մը կը մոռնան այդ լուսաւոր պողոտաներու վրայ, եւ զայն վերադանելու պատրանքէն տարուած կը վերադառնան՝ ճիշդ խոստումին պէս: Բլուրներ կան հոս, ուր ճամբան սեւ դօտիլի մը պէս կը փաթթուի անոնց մէջքերուն ու կը տատանի: Այդ դա-

թաթակէտին, բլուրէն անդին, ովկիանոսն է որ կը տարածուի այնքա՛ն հեշտանքով, այնքա՛ն նազանքով որ խեղճ ձկնորսը հրապուրուած այդ հրաշալիքէն, առկանը կը ձգէ տաք ջուրերու մէջ ու ինք կը նետուի՝ այդ կապոյտ երազին: Բայց այս բոլորը բաւարար պիտի չըլլային բացառիկ համբաւի մը արժանացնելու համար այս քաղաքը, եթէ չըլլար Երբորդ փողոցը: Հոն է որ պատկերը անմիջապէս կ'ազօտի, կը տփուռնի, կարծես կ'անհետի երեկոյեան մշուշին մէջ, քանի որ սեւցած մայթերը լեցուած են ահա, ու զինովներու դանդաղ գնացքը ազուրութիւնը կ'աւրէ: Առաւօտեան, մայթերու վրայէն հոսանքը կ'անցնի ուղիղ, խրոխտ, հպարտ. իրիկնամուտին քայլեր կը խաչածեւուին, կը թեթեւան, եւ զինետուներէ ներս՝ հեթանոսական պարը կը սկսի իր ամենէն ողորմելի միթասուերներով: Այս փողոցին ճիշդ կեդրոնը, եւ սա մարդոց սիրտին վրայ կը բացուի Երբորդ փողոցի նպարավաճառին խանութին դուռը: Ինչպէս բոլոր բաց դռներէն ներս, այս դուռէն ներս ալ մուտքը ազատ է. դուք ալ կրնաք մտնել ներս, մտէ՛ք, կարգով, առանձին, վերջապէս մտէք:

— Թերեւս վճարումը մեծ բան մը չէ, բայց պիտեքքիլի է. ես իմ գործաւորներս զաւակիս պէս կը սիրեմ լայն շատ չեմ կրնար վճարել. (յետոյ հասկցայ որ զաւակները բնաւ չէր սիրած). տախա ըսեմ, եթէ լաւ առեւտուր ընես, հեմտէ կ'աւելցնեմ վարձը. իշտէ ձեռքիդ գործը ըրէ, շատ ծախէ, ինչպէս կ'ուզես ծախէ. հինը վերջացուր, նորերը պահէ մինչեւ որ հիննան. այն առեն դուն ալ կը հիննաս այս արհեստին մէջ, եւ գործին ծակը ծուկը կ'ըմբռնես... ուրեմն, երկուշարթի առտու կանուխ եկուր, նայինք ի՞նչ կը բերէ բախտը, ըսաւ խարբերողի հայր, բացման խօսքը անմիջապէս աւարտելով: Հազիւ ելած էի փողոց եւ

այս յազթանակէն արբշիւ կ'ուզէի սուլել թեթեւցած սիրտով, երբոր ետեւէս լսեցի անոր ձայնը.

— Հեող ճաշ չբերես, խըյառով, լրիկով բան մը կ'ուտենք հոս...

Երկուշարթի առաւօտ, արեւին հետ նետուեցայ ներս: Դիմացը շարուած սնտուկներուն վրայ ծռած էր երիտասարդ մը եւ բաներ մը կը փոփսար ինքն իրեն, երբ իմ ներկայութեանս անդրադարձաւ, գլուխը դարձուց եւ ըսաւ.

— Դուն նոր տղան ըլլալու ես. իմին անունս Սեղրակ է. ես Պէյրութէն եկած եմ, հեմտէ Պէյրութի մանկամալը մէկ մասէն, անշուշտ հիմա ատոր վախտը չէ, նախ ըսեմ թէ ինչ պիտի ընես, յետոյ ժամանակ կ'ունենանք խօսելու, ծանօթանալու:

Ձեռքի խնձորը զետեղեց սնտուկին մէկ անկիւնը ու խնձորի չափ բանալով բերանը ըսաւ, թէ այս խանութը փէկ վտանգաւոր է, մի' խնդար, վտանգաւոր կ'ըսեմ մէ' ես բան մը դիտեմ հարկաւ. հոս ամէն տեսակ կին կու դայ՝ խանութին դիրքին պատճառաւ, աղէկն ալ կու գայ, դէշն ալ կու գայ. դուն ինծի մի նայիր, շարաթ օր ստացայ հարիւրնոց մը, հիմա միգտանս պրպտեմ մէ սիկարէթի փարա մը գոր կ'եղլէ: «Ի՞նչ ըրիր», պիտի ըսես. օղլում, այս խալթախնութուն տղար չի դիմանար, ջըլտըրաճայմ, վալաքի սափըտաճայմ: Ամառ է տէյի ինչ որ ունին մէգէրի կը հանեն կոր, դուն Սեղրակ եղիր, Պէյրութի մէջ այնքան մալեր տես, եւ եկուր ասոնց ցուցադրութեան առջեւ դիմացիր:

Սնտուկներուն վրայ ծռած, գլուխը կախ, երբեմն ճակտի քրտինքը սրբելով, մէջ ընդ մէջ շարունակեց Սեղրակ. նախապէս ըսուածը բաւարար չհամարելով, տակաւին բազմաթիւ բաներ ըսաւ կիներու մասին, աղջիկներու մասին, յետոյ այդ բոլորը Պէյրութի աղի

ջուրով լուաց ու շեշտեց, թէ ասոց բոլորը Պէյրութի մէկ գիշերին հետ չէր փոխեր ինք. հոն կեանքը որքան ալ դժուարին ըլլար՝ կէմէտէ ասկէ լաւ էր. երիտասարդ ես՝ արժէք ունէիր, հոս ամէն ինչ կապուած է դրամին, մարդկութիւնն ալ, երիտասարդութիւնն ալ, ամէն ինչ:

Սառնարանէն բոլոր սնտուկները հատ հատ փոխադրեցինք ներս. նախ բացինք կափարիչները, ապա հասուն ու գեղեցիկ տեսք ունեցողները շարեցինք ամէնէն վրան:

— Չմոռնամ ըսելու որ դէմքին վրայ միշտ խոշոր ու կեղծ ժպիտ մը ունեցիր յաճախորդներուն ներկայութեան. առատա սըրատա գոփէ իրենց մազը, հազուատը, բայց ուշադրութիւն բրէ որ տակը չանցնիս. ինչ որ է, կամաց կամաց կը վարժուիս. դպրոցի եւ դիրքերու հետ գործ չունիս հոս, մոռցիր ուսանող ըլլալը, կեանքի հետ է գործդ, ամմա՛ մէ կեանք:

Առաջին քանի մը շաբաթներու ընթացքին ծանօթացայ յաճախորդներու քմահաճոյքներուն, եւ սկսայ գոփել անոնց հազուատը, մազերը եւ հոն կանգ առի Սեղրակին թելադրութեան վրայ: Սենեակ վերադարձիս, հայելիին դիմացը անցայ եւ փորձեցի զանազան ժպիտներ յարմարցնել դէմքիս վրայ. ես որ կեանքիս մէջ չեմ ժպտած բնաւ, ատոր համար երկար փորձի կարօտեցան մկաններս, մինչեւ որ հատ մը դտայ եւ դիմակի մը պէս անցուցի այտերուս վրայ ու ըսի, թէ հոն մնայ երեք ամիս: Մինչ այդ սակայն, Սեղրակ խօսեցաւ անընդհատ իր զինուորական կեանքէն, սպայութեան օրերէն, սիրային ու սեռային հաճոյքներէն, ու ամէն երկուշարթի առաւօտ ըսաւ, թէ միգտանիմ մէջ սիկարէթի դրամ իսկ չկար:

— Հիմա որ բարեկամ ենք այլեւս, քեզի բան մը ըսեմ բայց չնեղուիս. ինձմէ վերջ եկար, սակայն դիս

կ'անցնին կոր պէ՛. քիչ առաջ ինչ կը խօսէիր այդ կնոջ հետ: Դիտէ՛, սա խակ պտուղը կը տեսնե՞ս կոր, տես, ամուր մը սեղմած եմ զայն մատներու մէջ, որեւէ հետք կը տեսնե՞ս վրան, ո՛չ, հելպէք քէ ոչ. աղէկ, վաղը պիտի սկսի հասուննալ եւ այս մատներու տեղէն սկսի փտիլ...

— Ատոր ինչ կ'ըսես, Սեդրակ ըսի, ցոյց տալով ներս մտնող կինը, ա՞յս ալ մը կը փտի:

— Նայէ ինչ կ'ուզէ. ասանկ երթայ ցէ ես պիւրիւն խելքէս պիտի ելլեմ. նայէ, ի՛նչ կ'ուզէ...

— Հիանալի օդ է, այնպէս չէ՞ տիկին, ըսի:

— Օ, խնդրեմ, ըսէք «օրիորդ», ըսաւ ժպտելով:

— Կը ներէք, չէի գիտեր, ըսի, դիմակս անցնելով:

— Հոգ չէ, բոլորս ալ սխալներ կը գործենք ատենը մէյ մը, թերեւս իմ սխալս ալ այն է որ տակաւին օրիորդ եմ, այդպէս չէ՞ք խորհիր:

— Օ՛, ճիշդ կը խօսիք, շատ ճի՛շդ...

Ինք ծոնցաւ պտուղներուն վրայ իսկ իմ նայուածքս խելակորոյս գլորեցաւ անոր կուրծքէն վար. պահ մը ետք հեւալով, թեթեւ մրմունջներով ետ բարձրացաւ կուրծքէն դուրս ու մեր նայուածքները հանդիպեցան իրարու:

— Թարմ ու հասուն պտուղ է, այնպէս չէ՞...

— Ուտելու պատրաստ, թարմ ու հասուն... ըսի: Երբ մեկնեցաւ, բոյրի ալիքները երկարօրէն յամեցան օդին մէջ, պտուղներուն վրայ:

— Ասանկ երթայ ցէ, ես ալ խելքէս պիտի ելլեմ, ըսի խնդալով:

2

— Սա աղջիկը կը տեսնե՞ս, երէկ գիշեր սենեակս տարի, ուզածիս պէս եփեցի դինք, ինծի Սեդրակ կ'ըսեն: Պէյրութը տարբեր է... բայց: Այստեղիներուն

անկեղծութեան ալ հաւատալը չի գար. վեսալամ, Պէյրութի բողբոջը պիլիմ տարբեր համ ունէին. գոնէ գիտէին իրենց ինչ ըլլալը, իսկ հոս, ամէն խալթ կ'ուտեն սա կիները ու տակաւին կը փորձեն պատուախոնդելը ըլլալ, չէնք-չնորհք կին ըլլալ, խելքս չի հասնիր այս բանին...

Մեր կեանքը կը նմանի խորունկ ու անծայրածիր հովիտի մը, ուր արեւը կ'իջնէ երբեմն տատամսելով, շատ յաճախ զեփիւռի մը թեւերուն կառչած՝ մսկոտ, թեթեւ, երկչոտ: Բայց որ ան կը հասնի այդ մուշ ծերպերուն, մռայլ կողերուն ու կը շուարի գործած սխալին շուտով անդրադառնալով: Տակաւին մեր կեանքը կը նմանի երջանկութեան գինովութեան անհաղորդ ապրումին, ուր կ'անձրեւէ միշտ, պղտորելով, աղարտելով ողորմութեան պէս ընծայուած կարճատեւ պահը ուրախութեան: Անոր՝ որ մեր քովէն կ'անցնի անշուղի, անաղմուկ, գրեթէ անձայն: Դրժբախտութեան գիտակցութիւնը չէ որ կը պակսի մեզի, այլ՝ քաջութիւնը զայն արժեւորելու, զայն ընդունելու, անոր աչքերուն յանդիմութեամբ նայելու եւ իւրացնելու որպէս անբաժան մասը մեր գոյութեան, էութեան: Ատոր համար է որ յաճախ կ'ըսէի Սեդրակին, թէ պէտք չէ այդքան յուստես ըլլալ, գիտնալով՝ հանդերձ որ ես անձնապէս, լաւատեսութեան գոյութիւնը անտեսած եմ միշտ. կ'ըսէի նաեւ, թէ տեւելու համար, դիմադրելու եւ տոկալու սիրոյն, երբեմն պէտք է պղտիկ զոհողութիւններ ընել ու հաշտուիլ կացութեան հետ, անցեալէն քակուիլ, հեռանալ մասամբ ու լեցուիլ ներկայով՝ ապագայի կարելիութիւններուն հաշտոյն: Տակաւին կ'ըսէի թէ վայելքը միայն կիսով չ'ամբողջանար, թէեւ անոր ներկայութիւնը կրնայ շնչելի դարձնել մթնոլորտը, բայց այդ մէկը ունէ ատեն չի կրնար սկիզբ կամ վերջ դնել երջանկու-

Թեան կամ հաճոյք կոչուած այդ մեծ սուտին եւ թէ այդ բոլորը ունայնութեան առաջնորդող խարկանքներ են, որոնցմէ ձերբազատուելու համար մարդ պէտք է փնտռէ գեղեցիկը կեանքին մէջ ու միշտ ունենայ պըրպըտող միտք մը, հոգի մը, վերջապէս: Յետոյ կ'աւելցնէի, թէ դո՛ւն Սեղբակ, դուն որ միտէն անդին նայուածքդ չես նետեր, ձեւով մը կոյր ես, մի՛ նեղուէր, կրնամ սխալած ըլլալ մօտեցումիս մէջ, բայց երեւոյթներէն դատելով այդ եղբակացութեան յանգելու կը ստիպուիմ. նպատակի մը համար տարուած աշխատանքը միշտ ալ զոհողութիւն կ'ենթադրէ՝ դուն նպատակդ, փառասիրութիւնդ ծրարած կը վապես հոսանքին հակառակ ուղղութեամբ ու կը շարշարուիս. ճիշդ է որ հոսանքները երբեմն գլխու պտոյտ կը յառաջացնեն, ատով հանդերձ կարելի է միջոց մը գտնել խուսափելու համար այդ թայուկէն:

Սեղբակ լուռ կը մնար միշտ, ժպիտ մը կը գնէր աչքերուն մէջ եւ կ'ըսէր, թէ այդ խօսքերը փարայ չեն արժեք, կոյր պէտք է ըլլալ՝ սա գեղեցկութիւնները մերժելու համար. «Ես գեղեցկութիւններու, մանաւանդ կնոջական գեղեցկութեան հանդէպ մասնաւոր տկարութիւն ունիմ, դուն շունիս, այդ քու գիտնալիք բանդ է, քիչ մըն ալ համբերէ քու պոյրդ ալ կը տեսնեմ»:

Յետոյ Սեղբակ կը սկսէր երգել, թրքերէն, հայերէն ու պահ մը կանդ կ'առնէր ըսելու համար թէ՛

— Թրքերէն երգերն ալ եանկըլը են պէ՛, նրգած ատենս սիրտս տեղէն կը ցատկէ. ինչ որ է, թրքերէն երգերը այնքան ալ գէշ չեն...

Երեկոն դանդաղօրէն կ'իջնէր քաղաքին վրայ ու անժաման անձրերը կը մաղուէր թեթեւ ու յոգնած կաթիլներով. անցնող ինքնաշարժերու լոյսերը երբեմն կը նետուէին ներս ու ապա հապճեպով կը վազէին

այլադան ուղղութիւններով: Սեղբակ՝ խանութին մէջ անկիւնը նստած կը ծխէր, մինչ ես դրան առջեւ՝ անցորդները կը դիտէի խորհելով որ նոյն ժամուսն, արեւելքի այդ հսկայ քաղաքին մէջ, բարի ու յոգնած աչքերով բանուորները տուն կը վազէին տաք կերակուրի մը երազով, ու կ'ըսէի, թէ մեր քայլերը ուղղութիւն չունին, քանի որ մենք տաք յարկի մը երազը վաղուց թաղած ենք սա անյատակ ուղիւնոսին մութ խորութեան մէջ, ու մեր մարմինը կը քաշկրտենք ցուրտ ու խոնաւ մայթերուն վրայ: Ու տակաւին ես կը փրշտոէի պատճառները, կնճռոտ ու անլուծելի այն պատճառները, որոնք ծնունդ տուին պանդուխտ կեանքի մը, կեանք մը որ ոչ հանգիստը ճանչցաւ, եւ ոչ ալ ուրախութիւնը, երջանկութիւնը...:

— Նայէ, ի՛նչ կ'ուզէ սա աղջիկը... լսեցի Սեղբակին ձայնը: Սիկարէթը նետեցի վաղող ջուրին մէջ ու ետ դարձայ: Աղուոր աղջիկ մըն էր, խոշոր ու փայլուն աչքերով. առաջին անգամն էր որ զինք կը տեսնէի հոս. երբ մօտեցայ իրեն, ըսաւ.

— Սյաքանը բաւական է ինձի համար, առանձինն կ'ապրիմ, որով շատ պտուղ չեմ կրնար սպառել:

— Գեղեցիկ վաղափար է, որով ամէն օր ինձի առիթ պիտի տաք ձեր ներկայութիւնը վայելելու. քիչ գնեցէք ու միշտ եկէք:

— Օ, շնորհակալ եմ ձեր ազնուութեանը համար: Երբ մեկնեցաւ, Սեղբակ ժպտելով մօտեցաւ ինձի.

— Աղուոր պատառ է, հը՞, իմանա՞րդ, աչքդ խածաւ, հիմա մէկ կողմ դիր սա պոչ պողպազ փելլոստիայութիւններդ ու վազէ անոր ետեւէն. ապրէ՛ օղլում, ապրէ՛, կեանք ըսածդ ինչ է որ, այսօր կանք, վաղը՝ ո՛վ գիտէ, ի՛նչ կ'ըլլայ:

Հակառակ անոր որ գործատեղիէս սենեակս մօտ

ժամուան մը հեռաւորութիւն ունէր, այդ երեկոյ ուղեցի քալել, թէեւ տակաւին կ'անձրեւէր փոքր կաթիլներով, սակայն ուղեցի եւ ինծի հետ ըլլալ ու քալեցի:

Չդիտեցի շուրջս, լուսաւոր փեղկերու Հարստութիւնը: Ի՞նչ կ'արժեն այդ բոլորը երբ մեր հողին պարայ է, երբ մեր սիրտը քանդուած, աւերակ դղեակի մը դալկութիւնը ունի. վերջապէս այդ երեկոյ ձեռքերս գրպաններուս խորը ու շրթներուս վրայ յաւիտենական սիկարէթը՝ եւ մտածեցի ապրելու մասին, Սեզ-րակին ըմբռնումով ապրելու: Եւ ըսի, թէ այս աղջիկը կրնայ ըստ սովորականին, պառկած ըլլալ բազմաթիւ մարդոց հետ, կրնայ նոյնիսկ հրաշքով կոյս ալ ըլլալ. գուցէ՝ ըսի, քիչ մը տարբեր է բոլորէն:

Չեմ գիտեր տակաւին ինչե՞ր մտածեցի այդ երեկոյ, բայց վստահ եմ որ յիշեցի կապոյտ աչքերով պզտիկ Լուսիկը, անոր տաք ու թարմ մարմինը, յիշեցի նաեւ կղզիէ այդ վարժարանը, այդ փոքրիկ պուրակը, որուն իւրաքանչիւր ծառը յիշատակ մը, շունչ մը ունէր պզտիկ ու տաք Լուսիկէն: Բայց հիմա, դաժան ու խիստ սա կեանքը, որ ծանր երկինքի մը պէս նստած է ուսերուս վրայ՝ զիս կը տանի, կը հրէ ամբողջներու դայթակղեցնող հոտանքն ի վար: Կեանքը տարբեր էր այդ օրերուն, որովհետեւ մեր աչքերը զօրաւոր էին տակաւին ու բնութեան գեղեցկութիւնը կ'աղուորնար անոնց մէջ, ծառերով, ծաղիկներով կը ժպտէր անոնց մէջ, որովհետեւ ես կը սիրէի բնութիւնը, խօսող ծառերը, որոնց թեւերուն տակ անձայրածիր գիշերներով մեր պապակած շրթները կեանքի կու գային եւ խոշոր աչքերով պզտիկ Լուսիկը կը հծծէր ականջիս տակ:

— Ըսէ՛, ըսէ՛, տակաւին կը սիրե՞ս զիս, որչա՞փ: Ես կ'ըսէի.

— Սա՛ չափ, երկնքի չափ: Այո՛, կեանքը տարբեր

երանդ մը ունէր, երգերը՝ տարբեր իմաստ, երբ ես գինով հողիով պատանի մըն էի: Այժմ, մեծ քաղաքներու ժխորէն խուլցած, այս մեծ բեռին տակ ուժաթափ եղած, կը ցանկամ՝ կեանքիս մնացեալ բոլոր օրերը տալ ունենալու համար պարզ ու խորունկ այդ օրերէն միայն մէկը, ուր Լուսիկը գրկած՝ անձրեւին տակ ես կ'երթայի դեւերու հետ պայքարելու:

Ի՞նչ փոյթ, ի՞նչ փոյթ, թէ մենք ճամբայ ելանք պայծառ ու գեղեցիկ երկինքին տակ, ինչ փոյթ որ մեր նայուածքը անազարտ էր ու մեր փափոքները կենդանի ու լուսեղ. մեր նաւերը շինուած էին պողպատէ ու դեկերը հաստատ էին եւ ուժեղ. հիմա երկինքը խոժոռ է, մեր աչքերը փարոսները կորսնցնելու չափ տկար ու մեր նաւերը քայքայուած՝ ընկղմելու ողբադին պահին կը սպասեն. մեր դեկերը փշրուած են քամիներու չարուածին դէմ, ու մենք կը թիալարենք անձանօթ ու վտանգաւոր ուղղութիւններով: Երանի՛ տալով այն մահուան որ կու գայ առանց հրաւէրի, անաղբուկ, յանկարծ, մինչդեռ հիմա, կեանքը ամէն օր քիչ մը հատնի՛լ է, հատնի՛լ դանդաղօրէն, յամբօրէն:

Այդ երեկոյ տակաւին մտածեցի բազմաթիւ բաներու մասին, մեռած ու կենդանի, ապա ըսի, թէ տակաւին պզտիկ պատճառներ ունէի ապրելու, կենդանի մնալու, յուսալու, կազդուրուելու:

3

Յաջորդ օրերուն անձանօթ աղջիկը եկաւ խանութ օրը անգամ մը գոնէ. երբեմն ես գացի իր աշխատած ճաշարանը ու ժամերով նստեցայ անկիւնի սեղանին շուրջ եւ սպասեցի չեմ գիտեր ի՞նչու: Երբեմն եկաւ քովս, գաւաթին սուրճը տաքցուց, ժպտեցաւ ու բարի

աղջկայ մը բոլոր շնորհներով յիշեցուց ինձի, թէ կ'ուշանամ գործէս: Այն ատեն կեղծ դիմակս կամաց կամաց ինկաւ այտերուս վրայէն ու ես թաղուեցայ մըտալլուամի հսկայ ովկիանին մէջ, մինչեւ որ Սիդրակ նշմարեց այս փոփոխութիւնը ու խօսեցաւ նոյն պարզութեամբ.

— Չխօսիմ՝ ըսի, ամմա, ա՛լ համբերութիւնս հատաւ. չըլլայ լըջօրէն սիրահարուիս այդ աղջկան, ըրածդ պանդուխտի սիրաբանութիւն է պէ. տարե՞ր տունդ, մերկացուցիր... միւս օր ուրիշի մը նայէ: Շապի՛կ է, շապիկ, փոխէ՛ ամէն օր, թէ ոչ գլուխ չէ՛ս կրնար ելլել անոնց հետ:

— Թերեւս ճիշդ ես, թերեւս ճիշդ, բայց տալօրէնակ զգացում մը կայ մէջս, որ սէր չէ, հաւատա՛ Սեդրակ, սէր չէ. կարծես կեանքիս պարապութիւնը լեցնելու հրճուանքը կ'ունենամ, առանձնութեան լլկումէն ազատելու փորձ մը կ'ընեմ: Գիւտե՞ս ինչ կը նշանակէ յաւիտենական առանձնութեան զգացումն ու տառապանքը, ըսէ ինձի, Սեդրակ, երբեք, երբեք ինքզինքդ առանձին զգացած ես ամբոխին մէջ, ընկերութեան մէջ. գաղափարի, միտքի, հոգիի ու սիրտի ընկերակիցի պակասը քեզ երբեք արիւնած է, ըսէ, գէթ մէկ անգամ, խորունկ:

— Ես ատանկ բաներու խափա չունիմ. հեմտէ ըսածներէդ բան մը չեմ հասկնար կոր, միայն սա խելքիս մէջ տեղ կ'ընէ որ կին ըսածդ վայելքի համար է, եւ անոր սիրտ տալ անխելքութիւն է, ես քու ըսածներէդ բան չհասկցայ, հաւատա՛:

— Մոռցիր այդ բոլորը, ինձի սա՛ ըսէ, այս կիրակի դուն տեղս կ'աշխատի՞ս. թէ՛ քանի մը տուար կը շահիս, թէ՛ ծախսէ կ'աղատիս: Միայն մէկ օր:

— Շատ աղէկ, իմամարզ, այս կիրակի դուն ալ քէֆ մը ըրէ. ամմա ես այս սուրադը չեմ հաւնիր կոր.

ժպտէ, շատ մտածես՝ տակը կ'երթաս, հեմտէ՛ տակը կ'երթաս:

Շարաթ մը անհամբեր սպասեցի որ ձանձթ դար ու խօսէի իրեն: Հետս շատ անկեղծ էր, բայց կէնար մերթեւ. աղջկայ մը տրամադրութիւնը սա քաշաքին կլիմային կը նմանի. չսպասած մէկ բուպէիդ, յանկարծ կ'անձրեւէ. պահ մը ետք դարձեալ պայծառ երկինք, աստղեր կամ արեւ: Աղջկայ մը տրամադրութիւնը իրապէս կլիմայի նման բան մըն է: Եւ կլիման երկար ու պոստուած յոնքեր ունեցաւ այդ շարաթ ու ձանձթ չեկաւ սովորական ժամուն: Երբ կը պատրաստուէինք գոցել խանութը՝ յանկարծ նշմարեցի որ դիմացի մայթէն մեր կողմը կու գար:

— Այսօր ստիպուեցայ քանի մը ժամ աւելի աշխատիլ, գործաւորի մը բացակայութեան պատճառաւ, ըսաւ բան մը ըսած ըլլալու համար:

Սեդրակ խանութին ետեւ, սառնարանին մէջ սընտուկները կը շարէր. մերթ ընդ մերթ կեղծ հաղերով ըսել ուզելով որ խօսիմ, առաջարկեմ...: Երբ տագրակը անութիւն տակ առած դուրս կ'ելլէր, մօտեցայ իրեն ու ըսի.

— ձանձթ, կը խորհի՞ս որ վաղը միասին կրնանք անցընել:

— Բայց դուն կիրակի օրերը կ'աշխատիս, ըսաւ գարմացական չեշտ մը դնելով ձայնին մէջ:

— Բարեկամս պիտի աշխատի տեղս, ըսի, ցած ձայնով:

— Աղէկ, ըսաւ, ուր կ'ուզես հանդիպիլնք:

— Կ'ուզե՞ս ես սենեակդ դամ ու միասին որոշենք թէ ինչ կրնանք ընել, ըսի համարձակ:

— Ուրեմն, վաղը ժամը իննին...

...Կիրակի առաւօտ՝ ծովը յոգնած բանուորի մը կը նմանէր, թէ ինչպէս՝ այդ կարեւոր չէ. փոքրիկ ա-

լիքներ ման կու դային աւագներուն վրայ. ու ծանր մրմունջ մը կը բարձրանար ժայռերէն վեր: Մեր ոտքերը թաղած էինք աւագներու մէջ ու մեր մատները փաթթուած էին իրարու:

— Գիտես որ առաջին երիտասարդն էս որուն «այո» ըսի առաջին առաջարկին. երբեմն մենք ալ տարօրինակ քմահաճոյքներ ունինք. լաւ դիտենք որ վերջապէս պիտի ընդունինք եղած առաջարկ մը, բայց միշտ ալ կոպտօրէն կը մերժենք առաջին, երբեմն երկրորդ անգամ. էս ալ չեմ կրնար բացատրել թէ ինչու այսպէս ենք, բայց այդ է իրականութիւնը. թերեւս խենթ ու զսպուած կիրք մըն է, բան մը վերջապէս. բայց քեզի հանդէպ չկրցայ այդպէս ըլլալ: Անշուշտ ստած պիտի ըլլամ եթէ ըսեմ թէ դուն առաջին երիտասարդն էս կեանքիս մէջ. ծիծաղելի պիտի ըլլայ նման խօսք մը քսաներկու տարեկան աղջկայ մը շրթներուն վրայ: ... Ոսէ ինծի քու մասիդ, շա՛տ խօսէ. ուրիշ՝ կու դաս, ձեր երկիրը ինչպէս է. խօսէ ձեր քաղաքի աղջիկներուն մասին. վերջապէս բան մը ըսէ:

Չեմ յիշեր թէ էս ի՞նչ ըսի իմ մասին, բայց խօսեցայ արեւելքի աղջիկներուն մասին. ըսի թէ արեւելքի աղջիկները շատ յաճախ իրենց կեանքի հոսանքին վրայ կ'ունենան մէկ ալիք, եւ անոր կը փաթթուին անքակտելի կապով. բացատրեցի թէ արեւելքի մէջ սէրը արդիւնալ պտուղն է եւ թէ աղջիկները վանդակներու մէջ բանտուած դեղեցիկ կամ տգեղ թռչուններու կը նմանին յաճախ. տակաւին պարզեցի բազմաթիւ երեւոյթները արեւելքի ցանկապատուած կեանքին...

— Գիտե՞ս, օր մը պիտի ուզեմ երթալ եւ պտըտիլ այդ երկիրները, պիտի ուզեմ վանդակի մը մէջ բանտարկուիլ ու կեանքը դիտել երկաթներու ետեւէն, թերեւս այդ ձեւով երեւոյթները աւելի խաբող կ'ըլլան,

աւելի ցանկալի: Ըսէ ինծի, օր մը չե՞ս տանիք դիս... Լեւց ու յանկարծ մատները քաշեց ափիս մէջէն:

— Օ՛, կը ներես, խենթ բաներ կ'ըսեմ, մոռցիր ըսածս, կատակ էին, հաւատա՛, կատակ...

Ես լուռ մնացի. ոտքերս թաղեցի աւագին մէջ ու լուռ մնացի: Յետոյ վագեցինք շուրին մէջ, մանուկներու նման հրճուանքի պահեր ունեցանք, խնդացինք, երկար ու անկեղծ շեշտերով, ժպտեցանք իրարու ու երկնցանք տաք աւագներուն վրայ:

Արեւին ճառագայթներուն տակ անոր մարմինը կը փայլէր գեղեցկութեամբ մը որ սա օտար աղջիկներուն պարզեւուած է կարծես: Ողորկ վզին վրայ շուրի կաթիլներ աղամանդի հատիկներուն նման կը պճլտային, եւ իւրաքանչիւր շնչառութեան հետ հարուստ կուրծքը կ'ելեւէջէր համանուագի մը քաղցրութեամբ: Եւ այդ ելեւէջներով, եւ այդ քաղցրութեամբ մեր գլուխները մօտեցան իրարու, դգուանքով, խանդաղատանքով, մինչեւ որ հովերը երգել սկսան, մինչեւ որ ծովուն վրայ ալիքները պարեցին, վէտվէտուն ծփանքներով գլորուեցան իրարու վրայ եւ հեռուոր հորիզոնէն սկսաւ ճերմակ առագաստի մը սահուն գնացքը, նազանուտ, համաչափ գնացք մը որ տեսարանին միօրինակութիւնը կը զարդարէր անսահման գորովով, սիրով, հոգածութեամբ: Այն ատեն յանկարծ, թեւերը ծալեց ծունկերուն շուրջ, նայուածքը յանձնեց այդ խենթ հովերուն եւ գրեթէ անխելի ձայնով մը ըսաւ ինքն իրեն.

— Գիտե՞ս դեռ կոյս եմ... հաւատա՛ դեռ կոյս եմ...

Թերեւս անմիջապէս պէտք էր զարմանքս յայնչի այդ յայտարարութեան ի լուր, թերեւս ըսէի խօսքեր

որոնք պատշաճէին նման պահի մը, բայց փոխանակ սովորական, ակնկալուած դիրք մը բռնելու, սկսայ խաղալ աւագէ բլուրին հետ ու մատներուս վրայէն սողոսկիլ փորձող միջատին տուի պէտք եղած կարեւորութիւնը: Յետոյ սակայն, երբոր առագաստանաւը բոլորովին կորսուեցաւ հորիզոնին վրայ, եւ աւագէ բերդը ինկաւ իր բարձունքէն, դարձայ իրեն ու ծանր շեշտով ըսի.

— Ֆիզիքական կուսութեան տրուած կարեւորութիւնը վաղանցիկ է ալ, ճիշդ է թէ ատիկա կրնայ ցուցումը ըլլալ հոգեկան ու բարոյական խոր ըմբռնումի մը, բայց ո՛չ աւելի, քանի որ անկէ վեր կը մնայ հոգեկան կուսութիւնը, որովհետեւ անգամ մը որ հոգին կորսնցնէ իր մաքրութիւնը, անգամ մը որ հոգին աղարտի, ճմրթկուի, այն ատեն կորուստը անդամանելի կ'ըլլայ, մանաւանդ... բայց հոգիդ կո՞յս է ձանձթ, հոգի՛դ...

— Ձեմ գիտեր, իրապէս չեմ գիտեր, այդ մասին զրեթէ չեմ փորձած մտածել, բայց վստահ եմ որ օր մը երեւան պիտի դայ այդ իրողութիւնը, այժմ բան մը չեմ կրնար ըսել այդ ուղղութեամբ:

Քիչ ետք արեւը գանդաղօրէն հաւաքեց փէշերը եւ սուղուեցաւ ովկիանոսին յատակը: Այն ատեն մենք ալ հեռացանք ծովուն հմայքէն ու նետուեցանք քաղաքին լուսաւոր պողոտաներու քմայքին: Մայթերը ողողուած էին երփներանդ լոյսերով, եւ հոսանքը կը յառաջանար ամէն անկիւնէ: Այդ ետուղեօին մէջ, հին երազի մը թեւերուն յանձնուած կը քալէինք մենք, զրեթէ մոռցած վաղուան տաղնապը, այդ հի՛ն երազին վախճանը յստակ:

Յաջորդող շարաթներուն, ամէն գիշեր ձանձթին հետ քալեցինք լուսաւոր ու մութ փողոցներու առանձնութեանը մէջ: Տամուկ ու աստղազարդ երկինքին տակ նստեցանք ծովեզերքի ժայռերուն վրայ ու դիտեցինք հեռո՛ւն, ալիքներուն հետ պայքարող ձկնորսներու աղօտ լոյսերը:

— Դիտէ, ըսաւ. այս փոքր ու նիհար լոյսը կեանքի մը գոյութիւնը կ'ապացուցանէ հսկայ ու մեռելատիպ ովկիանոսին վրայ, հակադրութիւնը այնքան աչքառու է, սակայն ենթական պարզ ու վտիտ լոյս մըն է միայն, եւ հակառակ այդ փոքրութեան ան պէտք եղած զօրութիւնը ունի՝ քարացած լուծիւնը համեմելու, կենդանութեան նշաններ ցանկու իր շուրջը:

— Գիտեմ, անշուշտ կը հասկնամ այն խոր իմաստը որ մարդիկ դարեր շարունակ կ'ապած են լոյսի հեղինակութեան, ըսի, բայց մի մոռնար որ, աւելցուցի անմիջապէս, մեզմէ իւրաքանչիւրը իր ներսիդին ունի այդ լոյսէն հատ մը, ոմանցը փայլուն է, զօրեղ, իսկ ուրիշներ՝ հաղիւ կրնան գիտակցիլ անոր գոյութեան, եւ կը խարխափին ներքին մթութեան մը մէջ:

— Ըսէ ինձի, երջանի՞կ ես հիմա, կեանքը աւելի հաճելի կը թուի՞ քեզի զիս ունենալէդ ետք, թէ ոչ բան չէ փոխուած մէջդ, եւ ինչ որ ես կը նշմարեմ, պարզապէս արտաքին խաբկանք մըն է, անիմաստ պատրանք մը:

Պահ մը լուռ մնացի այդ հարցումին դէմ եւ ապա ինքզինքս ազատելով անդարձ մեկնումի մը փորձութենէն, ըսի մեղմօրէն.

— Երջանկութիւնը կը նմանի զդեստի մը որ կը

ծառայէ մերկութիւնները ծածկելու, անոր ետին մարդ մերկ է, եւ որքան որ ջանայ ինքզինք քողարկել այդ շինծու կեղեւով, ատով հանդերձ կու գայ պահ մը, երբ ան կը ստիպուի գիտակցիլ իր խեղճութեան, այսինքն հոգիին առանձնութեան, ու ըլլալ ի բնութեանէ ինչ որ էր. իմ պարագայիս, ինծի կը թուի թէ երջանկութեան ամենէն գեղեցիկ բոպէին իսկ դարձեալ պատճառներ կ'ունենամ յոռետես ըլլալու. այս պարագային, թերեւս քեզ կորսնցնելու իրողութիւնը զիս կը զրկէ ամբողջական երջանկութեան տիրացումէն:

— Մինչև հիմա պէտք է գիտցած ըլլայի՞ր թէ զիս կորսնցնելը կամ ոչ բոլորովին քեզմէ կախում ունի, միայն քեզմէ...

Լուռ ու անշարժ դիտեցինք այդ լոյսերը, որոնք կեանք կը կոչուին, պայքար, յաղթանակ կամ պարտութիւն կը կոչուին. բայց սա հսկայ քաղաքներուն, հսկայ լոյսերը ոչ մէկ իմաստ ունին այլևս, ոչ մէկ իմաստ, սա անգոր բառերուն նման, որոնց գերին է մարդ, վերջնականորէն գերին:

Յետոյ աւելցուցի.

— Կարծեմ ժամանակը հասած է քեզի հետ բացարձակապէս անկեղծ ըլլալու համար: Մտիկ ըրէ եւ մի նեղուի՛ր, որովհետեւ ինչ որ պիտի ընեմ գժուարահասկնալի է լաւագոյն պայմաններու մէջ իսկ, մնաց որ երբ զգացումները շարժուն են այսպէս... որովհետեւ չեմ խորհիր որ խելացութիւն պիտի ըլլայ շուտով որոշում մը տալ, երբոր անբառնալի գժուարութիւններ կը կանգնին մեր առջեւ. իմ պարագայիս, նման կապ մը վերջնական հարուածը պիտի ըլլայ այն երազին զոր կը հետապնդեմ տարիներէ ի վեր, քանի որ պատրաստ չեմ այն խաղաղութեան համար որ նման

կապ մը կը թելադրէ, կայունութիւն մը որուն կը նստիմ գրեթէ անհաշտ աչքերով, խորթ իրի մը պէս. յետոյ տակաւին, մեր անցեալը, մեր նպատակը կեանքին, ի վերջոյ մեր խառնուածքները, դէմ են այս միացումին... պէտք չէ մոռնալ որ այս տաք օրերուն շուտով կրնան յաջորդել այն ցուրտ օրերը՝ ուր սէրէն աւելի հասկացողութիւնն է որ մարդը պիտի զինէ՝ զայն յաղթահարելու համար...

Ուքի ելաւ:

Այդ դէպքէն ետք ալ չտեսայ զինք: Ամիս մը յետոյ իրմէ ստացայ քանի մը բառեր:

«Հոգիս կոյս է տակաւին. ապացոյց քեզմէ հեռանալս, քեզ սիրելուս համար»: Այդքան:

Անձրեւոտ երեկոյ մըն էր դարձեալ. վերջին գիշերս այս հսկայ քաղաքին մէջ: Պէտք է վերադառնալի համալսարան: Ձեռքերս գրպաններուս խորը, յաւիտենական բարեկամս շրթներուս վրան, ես քալեցի դէպի ծովեզերք: Հոն կանգնեցայ խոնաւ ժայռի մը կողքին ու սկսայ դիտել հեռաւոր խաղաղութիւնը բնութեան: Լոյսեր կային ջուրերուն վրայ, կեանքի ու մահուան լոյսեր: Եւ այդ գոյներէն ծնող ուրուագիծը խաղեր ունէր ծալքերուն վրայ, որոշ, յստակ գիծեր՝ որոնք աւելի կը պատշաճէին այդ հին օրերուն, մոռցուած ու մեկնած այդ հին ապրումին, որ հետզհետէ կեանքի կու գար ենթագիտակցութեանս մէջ, նոր խաղկանքներու անձնատուր ընելով մենակեաց հոգիս: Ծանէթին մեկնումով սկսած պարապը կամաց կամաց կ'աղուորնար ու կը լեցուէր անուշ գիծերով, որովհետեւ լոյս մը կար դեռ հոն, մենակեաց, տժգոյն, գեղնորակ լոյս մը որուն վտիտ մատներուն մէջ Լուսինը կը ծնէր իր հին երգերով: Եւ այդ երգերուն ուղղելով խօսքս ըսի, թէ երջանկութիւնը կը նմանի զգեստի մը որ կը ծա-

ուսյէ մերկութիւնները ծածկելու. անոր ետին մարդ
մերկ է անշուշտ. ինծի կը թուի թէ իմ պարազայիս,
երջանկութեան ամենէն գեղեցիկ բոսկիլին իսկ պատ-
ճաններ ունիմ միշտ յոռետես ըլլալու: Սիկարէթը նե-
տեցի ջուրին մէջ ու հեռացայ:

Սաբրամենթօ, 1959

Խ

ԱՆԾԱՆՈԹ ԱՓԵՐՈՒ ՎՐԱՅ

... անհատական կյանքի մասին ...
 ... անհատական կյանքի մասին ...
 ... անհատական կյանքի մասին ...

ՅԱՂԵ ԿՈՂՄԻՄ ԳՈՅՄԵՄ

... անհատական կյանքի մասին ...
 ... անհատական կյանքի մասին ...
 ... անհատական կյանքի մասին ...

I

ԽՈՒՄԲՈՎ մտան ներս ու խանդավառութեամբ, ծիծաղելով, աղմուկով բռնուեցան սեղանին շուրջ, պատուհանին ճիչք դիմացը: Սպասեակին դժգոհ նայուածքը հասաւ անոնց ետեւէն ու սփռուեցաւ սեղանին վրայ ճիչք այնպէս, ինչպէս որ դիմացը նստող աղջկան փէշերը տարածուած էին աթոռին շուրջ, պարապութեան վրայ: Այդ աղջիկէն ու սպասեակէն զատ, տակաւին զոյգեր կային սրահին մէջ, շտկուած, կիրակնօրեայ զոյգեր, որոնք անհանդարտ ու քիչ մը դժգոհ նայուածքով հետեւեցան նոր եկող տղոց ու սպա շարունակեցին կիսատ թողուած խօսակցութիւնը, կամ ինչ որ կ'ընէին, անոնց ժամանումէն առաջ: Կարեւորութիւն չտուին սակայն անոնք ո՛չ զոյգերուն, եւ ոչ ալ նստող աղջկան, մինչեւ որ անոնցմէ մէկը պոռաց, անհամբերութեան նշաններ ցոյց տալով.

— Կարսո՞ն, մի շիշ արաք...
 Սեղանները ոտքի ելան՝ ականջ կտրած:

— Էֆենտիմ, Տորայի զագինոնները չէ հոս, ըսաւ խումբէն մէկը ու լռեց:

Այս բոլորը պատահեցան կիսովին եւրոպականացած սրճարանի մը մէջ, ամբողջութեամբ այլասերած ծովու մը դիմաց, ան ալ՝ Պէյրութի փերեուն վրայ:

Բացառիկ առիթ մը զանոնք բերած էր քով քովի, մանաւանդ իրենց նիւթական կարողութենէն բաւական հետու այս վայրը: Պետրոս պիտի մեկնէր տոլարներու աշխարհը, դուն ըսէ՛ դրախտը, հետեւաբար կ'ուզէին օգտուիլ ընծայուած պատեհութենէն ու գինովնալ բացառիկ ուժգնութեամբ:

Մեծցած էին նոյն փողոցներու մէջ եւ կեանքի դառնութիւնը ըմպած՝ միեւնոյն բաժակէն, հաւասար շափով: Մանկութեան օրերուն իսկ ճանչցած էին իրենց վիճակուած, պարտադրուած պայմանները, բայց հետզհետէ ընտելանալով կացութեան, սկսած էին հայհոյել նեխած փողոցներու պատշաճութեամբ: Ահա, այդպէս է որ վաղահաս տարիքէն յանձնուած էին երկաթէ մուրճի մը քմաքմներուն ու ճիշդ տասը տարիէն դարձած էին վարպետ կօշկակարներ: Պողպատի պէս: Չմբան սառնամանիքներուն եւ ամբան խանձող արեւին տակ քալած էին փողոցներու ու ամայի դաշտերու մէջէն, միշտ երազելով այն լուսեղէն օրուան, որ պիտի բացուէր իրենց նմաններուն համար, այսինքն՝ որբ ու զրկուածներու, որոնց աչքերուն մէջ զսպուած փոթորիկի մը կատաղութիւնը կը խաղար աշուն, ամառ թէ ձմեռ: Ու զուարթ դարուններու բացակայութեան, սահող տարիներու ընթացքին, անոնց սիրտը ճգմուած էր ատելութեան թանձր կուպրին մէջ, եւ պարապութեան մէջ նետուող այդ քայլերը, արձագանգներ բացեր էին յուսահատութեան ծոցին մէջ: Ու անմեկնելի տառապանքի ճամբուն վրայ, երկնցք էր նաեւ անոնց հասակը, թէեւ վախով՝ սակայն ծուռ,

թէեւ յոյսով՝ սակայն ծուռ, թէեւ կամքով՝ սակայն անդոյն, վատուժ, հիասթափ:

Այսպէս էր կեանքը անոնց, որոնք ինկած էին նահաբէն մինչեւ Տորայի վիզը երկարող թաղամասերուն վրայ, Պէյրութի մէջ, յիսունական թուականներուն: Անոնց մէջ ամենէն բախտաւորներէն կը սեպուէր Պետրոս, որ պատեհութիւնն իսկ չէր ունեցած իր հայրը ճանչնալու: Հայ մայրը, տեւելու եւ ապրելու վճռակամութեամբ զինուած, լուացարարութեան մաշտմին յանձնած էր ինքզինք, եւ մաքրուող ճերմակեղեններու դէզին պէս, մեծցուցեր էր զայն, իր մէկ հատիկ Պետրոսը: Բախտաւոր էր Պետրոս, քանի որ հօրեղբայր մը ունէր տոլարներու երկրին մէջ, Ամբրիկա: Փոյթ չէ թէ զրուած բոլոր նամակները անպատասխանի թողած էր ան, եւ պատուոյ հրաժարականը ներկայացուցած էր հօրեղբայրութենէ, սակայն որբ տղուն համար յոյսի միակ փարոսն էր ան տակաւին, զրկուած կեանքի մութ գիշերներուն մէջ:

Շատ յաճախ, Պետրոս, լալկան ու ցուրտ գիշերներով քալած էր զլիսաւոր պողոտաներու լուսաւոր փեղկերուն առջեւէն եւ անյոյս երազներով օրօրելով քսանըհինգ տարիներու իր երեւակայութիւնը, փափաքած էր անպայման անկիւն մը ունենալ այդ լոյսերուն մէջ: Եւ այդ հովերէն տարուելով, վերջին փորձ մը ընողի տենչանքով, դրած էր իր միակ ապաւէնին, հօրեղբոր, խնդրելով անկէ որ օգնութեան հասնի իրեն, դէթ ժամանակաւոր կերպով, մինչեւ որ կարենար ինք իր ուժերը հաւաքել եւ տեղ մը հասնիլ իր արհեստին ու ճարպիկութեանը շնորհիւ: Այս անգամ սակայն, պատասխանը չէր ուշացած, բայց օգնութեան փոխարէն, հրաւէր մը զետեղուած էր պահարանին մէջ, Ամբրիկա հաստատուելու ծրագիրը շօշափող հրաւէր մը, կարճ ու կարուկ, եւ քանի մը խոստումներով:

Կարաւանի զանգակները զօղանջեցին ու բացուեցաւ արքայութեան դուռը... Մտէք, դուք ալ, դուն ալ, Պետրո՛ս, իշտէ այսպէս էֆենտիմ: Պիտի երթար հոն, հօրեղբոր մօտ, Բէ՛ֆ մը, տղաք, տախա ինչի՞ կը սպասէք կոր...

— Կարսո՞ն մի արաք...

Սպասեակը մօտեցաւ անոնց ու յաճախորդներ անմիջապէս մեկնիլ փորձեցին, բայց նստած մնաց սա դիմացի գեղուհին, պատէն կախուած նկարը: Անկիւնը, ջութակի մը լարերը գողգողացին, բաներ մը եղան ու ըսին. «Ելէք երթանք ժամանակը անցա՛ւ»: Հիւանդ էր ջութակահարը, ու լարերէն արձակուող եղանակը անոր ցաւերուն վրայէն կը սահէր, այնքա՛ն տրամուրթեամբ:

— Ծօ, Պետրոս, չխնդա՛ս, ի՞նչ է խոժոռ երեսդ առած կը նստիս...

— Մօրմէն բաժանումը զօրին պիտի գայ, ըսաւ ուրիշ մը:

— Խմենք կենացը բոլոր մայրերուն, որոնք մեզի նման առիւծներ ծնան...

— Կարսո՞ն, կարսո՞ն, մի շիշ տախա...

Բաժակները լեցուեցան ու դիմացի աղջկան աչքերէն ցանկութիւնը յորդեցաւ, տարածուեցաւ ու տաս-տասիակ բան մը ըլլալով, մնաց հո՛ն, ճիշդ հոն, սեղանին շուրջ, աթոռներուն վրայ:

— Կտոր է, ըսաւ մէկը:

— Փարչա, փարչա՛ է, ըսէ սաւոր, որ բան մը հասկնանք:

Պարպուող շիշերուն հետ քակուեցան օձիքները, փողկապները եւ քաղաքավարութիւնը ճմրթկուեցաւ պատերուն վրայ ու ինկաւ վար, ներբաններու տակ, եւ անպէտ իրի մը պէս դոյնը փոխեց, քովի սեղաննե-

րուն շուրջ, մուշտակներու տակ, վերջապէս տեղ մը:

— Ամերիքայէն, տողարներուն հօտը մեզի ալ դրկէ, իմանա՞ր, սանկ շիշ մը վիսքի, Հօլիվուտէն պատառ մը...

— Չմեկնած իսկ կը մոռնաս մեզ, օղանաւ չելած, կը մոռնաս, Պետրոս, կը մոռնա՛ս, ըսաւ ուրիշ մը, թախիժով, ախրութեամբ:

Պետրոս լուռ մնաց ու ակնարկը սեւեռեց դիմացի զոյգին, պարապութեան: Յետոյ, մտածումը քաշեց հոնկէ ու ըսաւ.

— Ուր որ ալ երթանք կեանքը նոյնն է մեզի համար, որքան որ ալ փորձենք մոռնալ մեր անցեալը, թաղել զայն, ատով հանդերձ մեր երջանկութեան ամենէն քաղցր մէկ բոպէին պիտի յիշենք այն վայրերը, ուր հասակ նետեցինք, կեանքի դառնադոյն յուզումները ըմպելով, որովհետեւ սա փողոցները միայն ունին դադանիքը մեր յոյսերուն, երազներուն, յուսախարութիւններուն, մեր էութեան, վերջապէս: Որքան որ ալ նեխած ըլլայ այն օղը, զոր մենք շնչեցինք, որքան որ ալ լեղի ըլլայ այն ջուրը, զոր մենք խմեցինք, որքան որ ալ խանձող ըլլայ այն արեւը, որուն տակ մենք այս կեանքը ճանչցանք, ճշմարտութիւնը այն է սակայն, որ այդ բոլորը մեզի պարզեցին կեանք մը, որ եթէ նոյնիսկ նախանձելի չէ, դէթ բան մըն է, որուն կը ձգտին շատեր ու կը սպառին այդ ճամբուն վրայ:

— Ուրեմն, պարպենք այդ կեանքին համար, այն բանին համար որ մեզի անձանօթ կը մնայ տակաւին:

Քանի շիշերը պարպուեցան, այնքան արագ խորացաւ դիշերը եւ առանց աղմուկի, առանց աղաարարութեան, քաղցր մրմունջներով տարածուեցաւ ծովուն վրայ, ալիքներուն վրայ: Մինչ այդ, ջութակին լարերը միշտ սարսուացին, թրթռացին, ու մեղամաղձոտ

կղանակը սաւառնեցաւ անկիւնէ անկիւն, պարսպու-
թենէ գէպի եզրերը անյուսութեան: Արեւելքի տղաքը
ծուարեցան ու մնացին աթոռներուն վրայ, սպասելով
որ լոյսերը բացուին ու կենդանութիւնը տիրէ սեղան-
ներէ կազմուած այդ մեծ ծիծաղին շուրջ: Պետրոս,
ձեռքը վեր առաւ ըսելու համար թէ... բայց անմիջա-
պէս անդրադարձաւ որ ժամանակը չէր հասած դեռ,
քանի որ զոյգերը կը պարէին տակաւին ու կիսամու-
թէն օգտուելով, կը նետուէին խենթ խաղերու մէջ:

Արեւելքի կիսամոլոր սրճարաններուն մէջէն եր-
բեմն հերոսներ կը ծնին յանկարծ, երբեմն նոյնիսկ կը
պատահի որ բարձրացած բռունցք մը յանկարծ փշրուի
ցանկութեան վրայ ու երազներ փլին, հիմնայատակ
ըլլան, գիշերուան մը մէջ. յետոյ տակաւին, կը պա-
տահի որ մէկը ցցուի... ահա, այսպէս է որ կը փլչի
ինքն իր վրայ ու պղտոր ժպիտը կը պատուի մաշած
լաթին պէս, ու խնդուքի մը ալիքները թոքերը կ'ալե-
կոծեն:

— Ծօ', կեցէք կ'ըսեմ կոր, Պետրոս, քեզի՛ կ'ըսեմ
կոր... պիտի պայթի՛մ, պիտի ճայթի՛մ... երկուքի
կը բաժնուիմ կոր, աման օգնութի՛ւն, օգնութի՛ւն...
Պետրո՛ս...

— Գինով է, ըսին, ու խումբով, աղմուկով, զի-
րար հրմշտկելով նետուեցան փողոց:

Պէյրութի ամբան գիշերները...

Կիսամայի փողոցներուն մէջ, լոյսի լեզուներ կը
խաղան մայթերու վրայ, ու երկինքի կապոյտը կը կքի
կարծես, աստղերու բեռին տակ: Ծովու բացերէն քա-
կուող զեփիւռը, այտերուդ հրդեհը կը լիզէ ու տար-
փոտ սիրուհիի մը նման կը փաթթուի վիզիդ, ծոծրա-
կիդ: Արեւելքի թագուհին է ան, հազարաւոր մեղքե-
րով: Պողոտայի մը հանդրուանին, գիշերաշրջիկ աղ-
ջիկը, յոգնած աչքերով ճամբան կ'որոնէ, մինչ բոպիկ

աստղերով լակոտ մը իր բախտը կ'անիծէ, աստղերուն
նայելով:

Կը քալեն անոնք, ծանր ու կթոտ քայլերով ու
լուսթեան մէջ արձակուող այդ աղմուկը, աղաղակի
վերածուելով կ'արձագանդէ պատէ պատ: Բաց դրան
մը առջեւ կը կենան յուզուած, ու հրատեչտի հոգելը-
կիչ պահուն, բառ չեն գտներ արտասանելու արժանի:
Պետրոս կ'ըսէ թէ՛ կեանքը այս է, իր ամենէն գեղե-
ցիկ ձևին մէջ. բայց ինք ալ չհաւատարկ ըսածին,
յանկարծ կը լռէ, թոյլ տալով որ լուսթեան մէջ զգա-
ցումները խօսին: Գլխահակ ու ծանրախոհ կը գիտեն
նեխած ջուրերու պղտոր առուակը, ու կը թքենն պըժ-
գանքով, չես գիտեր ինչո՞ւ, չես գիտեր ինչո՞ւ...
Մինչեւ այդ վայրկեան ամէն ինչ ներկայացած էր
կատակի զոյներով, ծիծաղելի ողբերգութեան մը պէս,
բայց հիմա, իրողութիւնը կը շեշտուէր արտակարգ
յանդգնութեամբ ու կոկորդներու մէջ պահ մը առաջ
խայտացող ծիծաղը կը սառէր յանկարծ: Որովհետեւ
յուզումը, յուզում էր, ուրիշ ալ բիշէր ան: Այլեւս
հասած ըլլալով վիշտի անդունդին, լքումի եզրին,
փաթթուեցան իրարու: Ո՞ր ու ծանր հծծիւն մը քա-
կուեցաւ պայծառ գիշերով, ու վեր բարձրացաւ, ու-
ղիդ գիծերով:

Աստղեր կային երկինքի վրայ ու լուսինը կը սա-
հէր այնքան նազանքով, թեթեւ խաղերով:

2

Ծով ու երկինք: Ճամաք ու ամպեր: Փախուստ,
տեղքայլ, ներշնչում:

Յոյսեր, երազ, նոր կեանք... Կեա՞նք:

Քսանըչորս ժամ: Դուն ըսէ, քառասունըութ...

զա՛րկ որ դոցուի, հեղեղ, գետեր, յուսալքութիւն: Այս ի՛նչ վազք:

Հեռուն քաղաք մը, ասեղի ծաւալով: Հեռուն երազ մը, մշուշի ծոցին մէջ:

Օղանաւէն իջաւ ու զարմանքով դիտեց շուրջը եւ տիրող իրարանցումէն շփոթած, յանկարծ փորձուեցաւ պայուսակը առնել ու փախչիլ, խռոնուիլ ամբոխին ու կորսնցնել հետք ու նպատակ, սակայն հետք-հետէ զսպեց ինքզինք, յարդարեց բաճկոնը, կարգի դրաւ ջիղերը եւ ակնարկը կեդրոնացուց անորոշ կէտի մը վրայ, նպատակին վրայ: Հագիւ թէ քանի մը քայլ կրցած էր յառաջանալ, երբոր ոտքին վրայ զղաց ծանր կրունկի մը ճնշումը. մարդուկը ետեւ դարձաւ ու աչքերուն տակէն «սարի», ըսաւ գրեթէ անտարբերութեամբ, ու ճամբան շարունակեց արագօրէն: «Հոս խպնիլ չկայ, մատներս փշրեց», ըսաւ ինքն իրեն, ու սկսաւ դիտել դիմացի հսկայ շէնքը, որուն ճակտին բազմերանդ ազգատախտակներ փակցուցած էին, շքանշաններու պէս: Առաջին վայրկեաններու դժգոհութիւնը շուտով տեղի տուաւ ժպիտի մը, ու քիչ մը զարմացումով դիտելէ ետք համբուրուող զոյգը, անմիջապէս հետեւեցան ամբոխին, ճամբորդներու խուճապին, ու անոր հետ մտաւ լուսաւոր, փայլուն սրահէ մը ներս: Բարձրախօսներու վրայ անընդհատ յայտարարութիւններ եղան ու հոսանքը շուտով ուղղութիւն փոխեց, ցրուեցաւ մէկէն:

Թիւ երկու, աջ. թիւ վեց, ե՛լ դնա, մեկնեցան...

Կարմիր, կանգ առ. կանաչ, վազէ: Կանաչ, կարմիր, մէջտեղը միշտ դեղին: «Աս ինչ խալթ կերանք, կորսուած եմ Աստուած իմ... Ծօ՛, Պետրոս, քուկին ինչուդ էր պէտք Ամերիկան, ասիկա ըլլալիք բան չէ, հաւատալիք բան չէ, վազէ՛ վազէ՛, վազէ՛...»:

Շուարումը, հիասթափութիւնը, եւ մանաւանդ անճարակութիւնը յայտնի չընելու համար, դնաց ու բազմեցաւ սպասման սրահը, ան ալ ամենէն կակուղ թիկնաթուին մէջ: Եկան ու մեկնեցան: Ուրիշներ ալ կու դան, լեցուեցաւ սրահը, ու յանկարծ արտագաղթ, դարձեալ պարապութիւն: Աւազա՛ն է, աւազա՛ն:

Գրեթէ անտարբեր դիտեցին գիրար, վայրկեան մը յետոյ սակայն, քիչ մը ջերմութիւն դրին այդ ակնարկին մէջ ու դարձեալ դիտեցին: Աղջիկը բան մը հանեց պայուսակէն ու զայն դնեց ուշադրութեամբ, ապա նայեցաւ Պետրոսին ու ժպիտի նման բան մը որուագծուեցաւ շրթներուն վրայ: Քաջալերուած այս յայտնութենէն, քայլ մը եւս առաւ ան, ու մօտեցաւ երիտասարդին: Այդ համարձակութենէն թեյալբուած, Պետրոս, ուզեց մակդիր մը դնել դիմացի աղջկան, սակայն զգուշացաւ, երբոր անդրադարձաւ սխալին:

— Դուն Պետրո՞սն աս...

Պետրոս նայեցաւ աղջկան աչքերուն, յետոյ շուրջը ու ապա ըսաւ.

— Կարծեմ թէ...

— Ես Նինան եմ, անքըլին աղջիկը...

— Անքըլ... ես անանկ մէկը չեմ ճանչնար օրիորդ, պատասխանեց տղան, յուսահատ ձայնով:

— Գիտե՛ս, հօբեղբ...

— Օ՛, հօբեղբօրս աղջիկը:

— Եկեր եմ քեզ առնելու:

— Զիս առնելու՞, բայց ես...

— Մեր տունը երթանք, ո՞ւր է լակեճը...

— Լապլ՞ն մը... Աստուած իմ, բան մըն ալ չեմ

հասկնար կոր ձեր ըսածներէն, կ'մկմաց Պետրոս, ան-
լսելի ձայնով:

— Խորհիմ թէ կամաց կամաց կը վարժուիս մեր
խօսակցութեան, ըսաւ Նինա, հայերէն լեզուի բոլոր
սուրբերը օգնութեան կանչելով:

Աճապարանքով սկսան քալել: Հակառակ օգակա-
յան մը ըլլալուն, ճամբորդներու դէմքին վրայ բնաւ
կարելի չէր նշմարել անձկութեան սարսուռը, ար-
տորանքը: Մարմիններ նետուած էին աթոռներու
վրայ, իսկ զլուխներ հակած՝ թերթերու հովիտին
վրայ: Մանուկ մը մօրը հետ կը խաղար, իսկ մայրը՝
չնիկին. երկուքն ալ դռն ըլլալով իրենց խաղերէն,
աղուոր մը կը ժպտէին իրարու, այսինքն՝ շնիկին:
Բարձրախօսը տակաւին կ'աղաղակէր, երբ դուրս ե-
լան: Հոն է որ տեսարանը անմիջապէս փոխուեցաւ,
ձեւազերծ դարձաւ ու եղաւ խայտառակ բան մը, այ-
սինքն նոյնը մնաց: Ինքնաշարժներու խօշական արշա-
ւին կը միանար մտածումներու դանդաղ դնացքը ու
այս երկուքին միաձուլումէն կը ծնէր խառնիճադանճ
պատկեր մը, գուցէ ոչինչ կը ծնէր ատկէ, բայց ան-
պայման բան մը ծնելու վրայ էր այդ պահուն:

Պետրոս ըսաւ թէ՛ այս այսպէս է եւ պէտք է
հաշտուիլ կացութեան հետ, պարագաներուն հետ, ձե-
ւափոխութեան հետ: Արեւելքի երիտասարդը ճանճ-
րացաւ շուրջը դիտելէ եւ սկսաւ տրամաբանել, սա-
կայն մէկէն անդրադարձաւ որ անոր տեղն ու ժամա-
նակը չէր, այն ատեն անմիջապէս զգաստութեան
հրաւիրեց մտածումն ու աչքերը, բայց երբոր չկրցաւ
հաւասարակչուել զանոնք, ոտքերը հողին վրայ դնե-
լով:

— Շատ աղուոր ինքնաշարժ մը ունիք, ըսաւ,
բան մը ըսած ըլլալու համար:

— Ի՞նչ ըսիր, եղաւ աղջկան զարմացական ար-
տայայտութիւնը:

— Հէչ պէ, քուափ պա՞ն...

Տարօրինակ բաները առաւել եւս շարուեցան ճամ-
բու երկայնքին, երբ ինքնաշարժը սուրալ սկսաւ:
Դժուարութեանց ու անհասկացողութիւններու տեղի
չտալու համար, Պետրոս, երդուեցաւ այլեւս հարցում
չուղղել Նինային, յետոյ կարիք ալ չկար հետաքրքիր
ըլլալու, քանի որ տեսարանը կը պարզէր երեւոյթներու
զազանիքը, խորհուրդը. չիտակը՝ ամէն ինչ տարօրի-
նակ կը թուէր, այդ անվարժ ակնարկին:

Օճապտոյտ, ոլորուն ճամբաներ, ապա շիտակ,
տափարակ: Մտեր սովորական ու յոգնած, ճիշդ մար-
դոց նման: Հսկայ շէնքեր, պզտիկ ու աննշան խանութ-
ներ, քովէ քով, նոյն շարքին վրայ, «ինչպէ՞ս կ'ըլլայ
այս մէկը», ըսաւ Պետրոս մտովի ու թաղուեցաւ մտա-
ծումին մէջ, մինչեւ որ հասան տունի մը առջեւ, ուր
կանգ առաւ ինքնաշարժը:

Այս բոլորը պատահեցան այնքան արագ, որ Պե-
տրոս ժամանակ չուեցաւ ըսելու որ մէկ, մէկ ալ երկու
կ'ընէր: Գիտէր որ այս քաղաքը կը կոչուէր Ման
Ֆրանսիսկօ, եւ նշանաւոր էր իր բաներով, հովերով,
լեռներով, կովերով, կիներով, մանաւանդ՝ կիներ-
րով...

— Այս մեր տուն ա՛յ, ըսաւ Նինա ու իջաւ ինք-
նաշարժէն: Այդ վայրկեանին շուն մը վազելով եկաւ
ու փաթթուեցաւ աղջկան ոտքերուն:

— Այս մեր շունն ա, ըսաւ Նինա շունը գրկելով,
համբուրելով, գգուելով:

— Թիթի, հելօ ասա Պետրոս քաղքնին, շո՛ւտ,
հելօ...: Յետոյ դարձաւ Պետրոսին ու աւելցուց.

— Տակաւին հայերէն չի խօսար...

Պետրոս քաղնը լուռ մնաց ու մտովի աճուրդի հանեց տունը եւ հակառակ թափած ճիւղերուն, որոշ դին մը չկրցաւ յարմարցնել, բայց ըսաւ ինքն իրեն, «գնող չկայ, ծախողը...»

Դուռը բացուեցաւ ու մտան ներս: Հակառակ տիրող նորաձեւութեան, երիտասարդը չկրցաւ ուշադրութիւնը կեդրոնացնել առարկաներուն վրայ, քանի որ մեծադոյն առարկան, հօրեղբայրը, կանգնած էր իր դէմը:

Երկու հակոտնեայ բարձր, քաղաքակրթութիւններ, սերունդներ: Երկիրները, ժամանակները իրարու բախեցան ու այդ շփումէն յառաջ եկաւ սերունդ մը, որ ո՛չ այս կողմ եւ ոչ ալ այդ կողմ թեքելու հակամտութիւն ցոյց տուաւ, այլ մնաց հոն, ճիշդ կեդրոնը պարազաններուն... Նինան: Ամերիկածին հայը, հայածին ամերիկացին, կամ մին եւ կամ ալ միւսը, եւ կամ ոչ մէկը ասոնցմէ:

— Ուե՛ր, եկա՞ր Պետրոս, դուն Պետրոսն ես, չէ՞... ըսաւ հօրեղբայրը վերջապէս:

— Հա՛, ես Պետրոսն եմ, պատասխանեց երիտասարդը անմիջապէս:

— Ուրախ եմ, շատ ուրախ եմ, որ վերջապէս ազատեցար, փրկեցի՛ր քեզ Պետրոս, եկար ազատութեան, առատութեան երկիրը եւ...:

— Ես բանտէն չեմ դար կոր, ես իմ քաղաքին մէջ ալ ազատ էի, ըսաւ Պետրոս, մարդուն խօսքը ընդմիջելով:

Հօրեղբայրը, թէեւ դժգոհ այդ արտայայտութեանէն, սակայն զանց առնելով անոր ըսածը, շարունակեց.

— Հոս ամէն ոք հաւասար իրաւունք կը վայելէ, կրնաս պաշտպանել ինքզինքդ, կրնաս հարստանալ, նոյնիսկ իրաւունք ունիս նախագահ ըլլալու...:

— Կարծեմ միայն մէկ նախագահ ունի ձեր երկիրը, արձագանգեց տղուն ձայնը:

Հօրեղբայրը անմիջապէս մոռցաւ նախագահն ու հաւասար իրաւունքներ ունենալու առաւելութիւնները, եւ աճուրդի հանեց տղան, վաճառողի աչքերով, բազմապատկուած աչքերով: Այո՛, հասակը դոհացուցիչ էր, տպաւորութիւն ձգելու բոլոր առաւելութիւններով օժտուած, դէմքին յստակ դիժները որոշ յոյսեր կը ներշնչէին անտարակոյս, եւ դանդաղութեան խոստումներով ծփացող մազերը գեղեցիկ կախման կէտեր կը դնէին անոր ճակտին վրայ: Վերջապէս, պատկերը կատարեալ էր ու անպայման ապագայ կը խոստանար շուկայի կեանքին մէջ: Մնացեալը կարելի պիտի ըլլար սրբագրել փողկապով, զոյգ մը փայլուն կօշիկներով եւ օսլայուած շապիկով մը: Այդքանը դուն տուր, մնացեալը ինծի ձգէ, ըսաւ մարդուկը, մտածեց ծերուկը բարձրաձայն ու միայն այն ատեն անդրադարձաւ որ տակաւին ոտքի էին ու նստեցաւ նախինք, ապա հրամայեց որ ան ալ նստի իր քով, բազմոցին վրայ:

— Դուն իմ տղաս կը նկատուիս, վերջին հաշուով հայրդ իմ եղբայրս էր...:

Պետրոս, շեշտակի նայեցաւ մարդուն աչքերուն ու անմիջապէս չկրցաւ որոշել թէ ինչ դերք պիտի բռնէր անոր հանդէպ, որովհետեւ սկզբնաւորութիւնը խրոչեցուց զինք, եւ յառաջացող վայրկեանները սունը անցած ըլլալուն, մազերը ճերմկցած էին, մորս սկսան կաղալ: Դիմացը նստած էր անծանօթ մարդ մը, որուն վրայ ամէն ինչ կեղծ կը թուէր ըլլալ, սկսեալ բերնէն ու քիթէն, ասկէ կամ անկէ: Վաթթը յոգնած ու ծալքեր էր կապած հոս ու հոն, աչքերուն շուրջ, վիզին շուրջ: Զայնր տակաւին առոյգ էր, հետեւաբար կրնար հարուստ ըլլալ, աչքերը քիչ մը

ջրոտած էին, հետեւաբար կրնար խման մը ըլլալ, մազերը սեւ էին, կրնար ներկած ըլլալ, անպայման:

Տղուն մտածումը անընդհատ շրջան ըրաւ սենեակին մէջ եւ հակառակ թափած ջանքերուն կարելի չեղաւ զայն կեղորոնացնել առարկայի մը վրայ, հօրեղբօր վրայ, այդ պատճառաւ ալ թոյլ տուաւ որ ան սաւառնի համարձակօրէն ու բազմի սա դիմացի բազկաթոռին մէջ, ուր հիմա, կատուն նստած, մուկերը կ'երազէր անօթի փորով: Եւ ինչ զուգադիպութիւն, այդ վայրկեանին, Պետրոս, սաստիկ կերպով զլաց որ տակաւին անօթի էր ինք, եւ դէչ գալարումներ կ'ունենար ստամոքսին մէջ: Եւ այդ ստամոքսով ալ նայեցաւ հանդարտօրէն բազմած մարդուն, որ անմիջապէս սթափեցաւ, կորսուած բան մը գտնողի իրարանցումով:

— Մի նայիր որ հիմա քիչ մը շտկած եմ դիրքս, շատ նեղ ու դժուարին օրեր անցուցի մինչեւ հոս հասնիլս. կեանքս իրապէս տառապանք մը եղած էր այդ օրերուն, եւ աշխատանքի բեռին տակ կըսած էին ուսերս... մի' նայիր որ հիմա տեղ մը հասած եմ, ատոր բնաւ մի նայիր, որովհետեւ այս յաջողութեան ետեւ ինչ չարչարանքներ պահուած են, ինչ յիշատակներ... հիմա պղտիկ գործարան մը ունիմ, ունիմ նաեւ յիսուն գործաւորներ եւ բաւականաչափ կօշիկներ, գործս շատ է, բայց տարիքը վրայ հասնելուն, ալ չեմ կրնար կոր առաջուան պէս վազել ու վազվզել, հիմա առիթը ձերն է, երիտասարդներուն է, բայց յաջողութեան յարզը գիտնալու համար պայման է որ սկսիս ամենէն ծայրէն, թշուառութենէն, ապա թէ ոչ կեանքին իմաստին չես կրնար թափանցել այնպէս, ինչպէս ես թափանցած եմ ծանր աշխատանքի միջոցաւ, դուն ինծի մտիկ ըրէ եւ չես սխալիր, որովհետեւ ես դիտեմ թէ ինչ կը խօսիմ, վստահ եմ՝ համաձայն պիտի

գտնուիս ինծի, չգտնուիս ալ ուրիշ ելք մը չունիս, այնպէս չէ... անշուշտ որ այդպէս է...

Թէեւ առաջին վայրկեանէն իսկ հակակրեւի դտած էր հօրեղբայրը, բայց սա անօթի ստամոքսին ներկայութեան մատուցուած այս քարոզը, ա'լ աւելի զայրացուց երիտասարդ տղան, եւ այդ բարկութեամբ ալ կը պատրաստուէր անախորժ բան մը ըսել Պետրոս, երբ խոհանոցին դուռը բացուեցաւ ու ներս մտաւ Նինա:

— Բայց փա, տակաւին կը խօսի՞ք, Պետրոսը անօթի աս, ըսաւ զարմացայայտ:

Հակակրանքը աւելի կարեկցութիւն մը ունէր սա աղջկան հանդէպ, որ մարմնացումն էր տղեղութեան: Բայց այս անակնկալին առջեւ մէկէն մոռցաւ անոր աղեղ սրունքները, ածիլուած պէխը, որ հանդարտօրէն կը տարածուէր պատկառելի քիթի մը շուքին, մոռցաւ նաեւ անոր արտայայտութենէ զուրկ կովու աչքերը եւ ստամոքսին հրամանով ծունկի եկաւ անոր առջեւ, եւ որպէս երախտագիտութիւն, պաշտեց զայն՝ անօթութեանը ամբողջ սաստկութեամբ:

Երբ երեքով ուղղուեցան ճաշասրահ, այդ պահուն է որ երրորդ արարին վրայ բարձրացաւ վարագոյրը ու ներս մտաւ թագուհին, տիկին Ռոզ: Հակապատկերը անունին: Առաջին տպագրութիւնը իր աղջկան: Մագալարդարի շարժուն սալոն մըն էր անոր գլուխը: Վերջէն հարստացողի ցուցամոլութիւնը մասամբ յարմարած էր անոր ձեւերուն, բայց կացութեան մէջ ոչինչ էր փոխուած: Տպագրութիւնը տպագրութիւն էր, եւ անփոփոխելի:

Հոս է որ Պետրոս մէկդի դրաւ բծախնդրութիւնը ու ծիծաղելի երեւոյթներուն կարեւորութիւն չընծայելով, պնակներուն վրայ ինկաւ խանդավառու-

թեամբ, դոհունակութեամբ, ազատ ու անկաշկանդ
սխորժակով:

Եղիցի խաղաղութիւն...

Վարագոյր... մարաքոյր...

Իջէ՛ք, իջէ՛ք...

3

Առաջին վեց ամիսներու ընթացքին շուտով տիրացաւ կարեւոր երկու լեզուներու: Քիչ թէ շատ կրցաւ վարժուիլ անգլերէն լեզուին, սակայն ամերիկահայերէնը յուսահատութեան մատնեց զինք: Ուրքան որ ալ փորձեց նմանիլ անոնց, կապկեւ անոնց արտայայտութիւնները, որձեւէզ դարձուածքները, կիսկատար հնչիւնները, բայց դարձեալ չյաջողեցաւ, մինչեւ որ ամպոտ ու խոնաւ օրերէն յետոյ հորիզոնը աղուոր երկունք մը ապրեցաւ ու ծնաւ խոշոր լուսին մը: Այն ատեն, արեւմտեան երկնակամարին յանձնելով իր նայուածքը, Պետրոս ինքզինք դտաւ ու ըսաւ.

— Վեսայա՛մ...

Ու պանդուխտ տղան հեւիհեւ վազեց, անդադար վազեց մինչեւ որ ծունկերը կիթոտեցան, սիրտը սկսաւ սաստիկ տրոփել ու ինկաւ գետին, մայթերուն վրայ, ծունկերուն վրայ: Երբ ուժերը հաւաքեց ու ոտքի ելաւ, չընկրկեցաւ ալ, չվհատեցաւ ալ, ու այդպէս է որ մխրձուեցաւ յորձանքին մէջ, հոսանքին մէջ ու նոյնացաւ ամբոխին հետ: Նախ կարծեց որ պահ մը խելագարած էր այս հարուածին տակ, սակայն յետոյ երբ տեսաւ որ ամէն մարդ իրեն կը նմանէր, այն ատեն սիրտ առաւ նորէն, քաջալերուեցաւ եւ առանց այլայլելու փեղկերը դիտեց, կնոջական ճերմակեղէններու, զարդեղէններու մէջէն:

Աչքերը բացուեցան այս նոր կեանքին զուարթ խաղերուն դէմ եւ առանց խտրութիւն դնելու իր առջեւ պարզուող վայելքներուն մէջ, հետզհետէ սկսաւ բարձրանալ մութ սանդուխներու խորհուրդներէն վեր: Եւ սիրեց վազքը, այս խենթ խաղերուն: Երբեմն միայն, կանգ առաւ անկիւնի մը վրայ եւ փորձեց վերակոչել իր ետին թողած հին ապրումները, բայց շուտով հրաժարեցաւ ընկրկումի փորձութենէն ու աւելի եւս մխրձուեցաւ դունազարդ սրահներու զուարճութեան մէջ: Ոչ, ալ չէր ուզեր մտածել այդ տարիներուն մասին, չէր ուզեր վերապրիլ զրկուած ու ինկած այդ կեանքը մտայլ, որուն ճանկերուն բղբումը տակաւին կը զգար մորթին վրայ, ենթադիտակցութեան մութ անկիւններուն մէջ: Այո, իր տուրքը վճարած էր թշուառութեան անողոք պահանջներուն, եւ հիմա, այլեւս կ'ուզէր ձերբազատուիլ այդ բոլոր կաշկանդումներէն, սեղմումներէն, անմեկնելի հարուածներէն: Աղուոր էր այս քաղաքը, իրապէս սքանչելի էին անոր լոյսերը, յուզումները, բյրձնաւ փողոցները, յոյզերը, վաճառատունները, փեղկերը, վերջապէս արտասովոր, բացառիկ բան մը կար այս ընթացքին մէջ, որուն անձնատուր եղած էր երիտասարդ տղուն անյազ հոգին: Այո, փախուստ մըն էր իրը պարզապէս, հոգեպարար, անզուսպ փախուստ մը, որ դադար չունէր այս հոսանքին մէջ, որ վախճան չունէր այս փոթորիկին մէջ:

Հոս է որ ճանչցաւ այս քաղաքին զրաւչութիւնը, խոստումները, առաւելութիւնները եւ անբացատրելի խանդավառութեամբ փարեցաւ իրեն ներկայացող բոլոր կարելիութիւններուն, երգերուն, պարերուն, հաղուագիւտ վայելքներուն: Զրկուածութեան վարժ այդ աչքերուն համար, զրկուածութեան մէջ բացուած այդ սիրտին համար, ամէն ինչ կը պարզուէր բոլորովին նոր ու քաղցր ծփանքներով, ելեւէջներով, անհատնում

քրքիջներով: Եւ այսպէս է որ, Պետրոս, վար առաւ նախկին դրօշակները, եւ անոնց փոխարէն ընտրեց այս մէկը միայն: Եւ այնքա՞ն դուրգուրանքով, խանդաղատանքով դիտեց վերջալոյսը ամպոտ օրերուն, լալկան օրերուն: Բայց երբ մաքրուեցաւ այդ հին յուզումէն, անմիջապէս ինկաւ նոր զգացումներու դաւարումին մէջ եւ ընկրկեցաւ: Ընկրկեցաւ շուտով, որովհետեւ հօրեղբօր այլայլած նայուածքը հասաւ ետեւէն ու հարցումներու տեղատարափը մէկէն պղտորեց նոր այդարացը:

Հակառակ կեանքը ամէն անկիւնէ սերտելու իր մեծ փափաքին, մոռցաւ ամէն ինչ ու նետուեցաւ մերկ պահերու վայելքին մէջ: Եւ որպէսզի դաստիարակութիւնը ըլլար կատարեալ, եւ որպէսզի Ամերիկան ճանչնար իր բուն դոյներով, նոր չափանիշներ տուաւ իր դատումներուն, եւ սպառեցաւ կիրքի ծոցին մէջ: Հաճոյքի տուններէն անդին չերկարեցաւ անոր ակնարկը եւ հեւասպառ վազքին մէջ փորձեց ճանչնալ օտար կիներու յուզումը զաղանի:

Բուռն սէր մը արթնցաւ մէջը քաղաքի փողոցներուն, տուններուն, լոյսերուն հանդէպ, պճնազարդուած ու խիստ բարեձեւ կիներուն հանդէպ, ու մէկէն ինկաւ անքուն զիշերներու տառապանքին մէջ: Շուտով ծանօթացաւ կերի պողոտայի հաճոյքի սալոններուն, կիներուն, չինական թաղի խորհուրդներուն, կիներուն, Վեննես փողոցի պարասրահներուն, աղջիկներուն, վերջապէս մտերմացաւ քաղաքի զիշերային կեանքին ու հասաւ հանդրուան մը, ուր այլեւս անկարող եղաւ տասնըվեցէն վեր զանազանել կիներն ու աղջիկը, եւ դըժգոհելով, տրտնջալով բացազանչեց վերջապէս:

— Վեսայամ... կանաչը կարմիրի փոխուեցաւ ու կանդ առաւ կեանքը, խանդավառութիւնը:

Այսպէս է որ առաջին օրերու հետաքրքրութիւնը

հետզհետէ չքացաւ ու վաղահաս յոգնութիւնը տարածուեցաւ ջիղերուն մէջ, միսերուն մէջ, ու պատահեցաւ անխուսափելին: Օր մըն ալ, երեկոյեան տուն վերադարձին, հօրեղբայրը վար առաւ վարագոյրը եւ բեմադրութեան հանեց իր սիրտը, մտածումները, մտահոգութիւնները: Ու անմիջապէս վերջ դրուեցաւ սանձարձակ ազատութեան, որովհետեւ առանց պատարազի, երկար ու բարակ բացատրութեան, խօսակցութիւնը կեղերոնացաւ իր վրայ:

— Կարծեմ բաւական ծանօթացար երկրին մտայնութեան, այո՛, լաւ կը տեսնեմ որ բաւական բացուեցար, նոյնիսկ ակնկալութենէս աւելի յառաջդիմեցիր, եւ առջի օրերու երկչոտութիւնն ու ամօթխածութիւնը զացին վրայէդ ու դարձար՝ կատարեալ տեղացի մը, ուրեմն, վաղը առաւօտ միասին դործարան կ'երթանք որպէսզի քիչ մըն ալ հոն կիրարկես ճարպիկութիւնդ ու գործածութեան դնես կարողութիւններդ:

Պետրոս փորձեց ըսել թէ՛ տակաւին բոլորովին պատրաստ չէր, տակաւին ամէն ինչ կատարեալ չէր, այո՛, տակաւին քանի մը նշանաւոր փողոցներ կային, կեանքին միւս երեսն ալ կար, որուն չէր վարժուած այսքան շուտ, թէ՛ ինք պատրաստ չէր պատասխանատուութիւններ ստանձնելու, եւ այսքան շո՛ւտ, այսքան կանոնիս, ինք դեռ կը մտադրէր նոր ուղղութիւն մը տալ քայլերուն, նոր ուղիներ որոնել մութ փողոցներու մէջ, ի՞նչ հարկ կայ այս բոլորը մանրամասնօրէն բացատրելու, սիրելի անէլը, կեանքը տեսած մարդ ես դուն, եւ թոյլ տուր որ Պետրոս ալ իր դիտցած ձեռով ճանչնայ զայն, կեանքը այսինքն, այն բանը զոր խլել կը փորձես իրմէ, արդարութիւն չէր եղածը, բնաւ արդար չէր այս վերաբերումը երիտասարդ տղուն հանդէպ, այո՛, ճիշդ այդպէս, կարմիրէն առաջ անպայման կանաչը կու գայ, եւ մայթերուն վրայ ամբոխը

կը կատարէի, կը յորդէի, կը վայթակղի եւ դիմացի շէն-
քին վրայ ամէն օր նոր դրօշակներ կը պարզուին ձմրան
օրերուն, հոս ձմեռ չկայ, զուարթ է, գարուն է, եւ
այս բոլորը Սան Ֆրանսիսկօ է:

Առաւօտուն կանուխ արթնցան ու նախաճաշեցին
միասին, այսինքն խմեցին սուրճը երբ շունը կ'երազէր
տակաւին: Յետոյ իրարու ետեւէ դուրս ելան, ու միա-
սին մտան ինքնաշարժէն ներս, որ տան տիկնոջ նման
գոռոզ էր, պոչաւոր էր, սուղնոց ապրանք ըլլալով
հանդերձ անճաշակ էր: Քանի առաջացան փողոցներու
մէջէն, ետ վազող ձողերու տողանցքին մէջէն, Պետ-
րոս հետզհետէ հաշտուեցաւ իրեն վիճակուած կացու-
թեան հետ եւ մտերմութեան նշաններ ցոյց տուաւ տը-
կար մէկ պահուն. այս թուութեանէն քաջալերուած,
մտերմօրէն խօսեցաւ մարդը:

— Գիտես Պետրոս, ես քու վրայ մեծ յոյսեր դրած
եմ, արդէն մէկը շունիմ քեզմէ եւ նինայէն դատ, օր
մը չէ օր մը ունեցածս պիտի ձգեմ ձեզի, անանկ որ
լրջութեամբ հետեւէ դործին, ցուցմունքներուս, թե-
լադրութիւններուս եւ տիրացիր այս արհեստին ծակին
ու ծուկին, նախ ծակին, ապա՝ ծուկին, եթէ կրնաս
երկուքին միաժամանակ տիրացիր, այդ ձեռով աշխա-
տանքդ թեթեւցուցած կ'ըլլաս: Վստահ եմ շատ երախ-
տապարտ պիտի դառնուիս քեզ փրկելուս համար, հոգ
չ, հիմա մի արտայայտեր զգացումներդ, ատիկա
վերջն ալ կրնաս ընել, կարեւորը այն է այս պարազա-
յին որ... (մաքրուեցաւ կոկորդը եւ վառեցաւ սիկա-
րէթը)... որ դուն հասկնաս միտքս, մտադրութիւնս,
ծրագիրներս ձեր մասին, դուն ալ տուն տեղ պիտի ըլ-
լաս... (կարմիր լոյս, կե'ցիր, աւանակ)... այդ մա-
սին ալ խորհած եմ, ըսելու պէտք չկայ այս պահուն,
տակաւին ժամանակ կ'ունենանք զիրար հասկնալու,
վստահ եմ պիտի հասկնաս զիս... (երկու ինքնաշար-

ժեր համբուրուեցան, ճամբան քուկդ է, անցիր)...
եթէ ըսելիք մը ունիս, խօսէ՛ կը լսեմ, բայց նախ թոյլ
տուր որ ես վերջացնեմ իմ խօսքերս, ի վերջոյ քեզմէ
մեծ եմ, քեզմէ փորձառու եմ, եւ դիտեմ ըսածս ալ,
չըսածս ալ... Հայրդ զիս մտիկ չըրաւ ժամանակին ու
մնաց հոն, մինչեւ որ զո՛հ դնաց այդ անպիտան հիւան-
դութեան... իմ քաջած նեղութիւններուս մասին չեմ
խօսած քեզի, տակաւին բան մը չեմ ըսած այդ մա-
սին... (դոց դիտեմ, եղաւ տղուն նայուածքը)...

Եւ այդ նայուածքին վրայ կանգ առաւ ինքնաշար-
ժը:

Վար իջաւ Մարթին իր ետեւէն քաշելով եղբորոր-
դին, բայց փոխանակ կարեւորութիւն ընծայելու անոր
խօսքերուն, նայուածքը յառեց ցուցատախտակին ու
լիաթոք շնչեց կաշիի հոտը: Կապուած շնիկի մը պէս,
Պետրոս հետեւեցաւ հօրեղբոր եւ տատամսելով, ընկը-
կելով մտաւ դուռէն ներս:

Նախ սպասման սրահը, շտկուած, կահաւորուած
բոլոր սպասման սրահներու պէս, յետոյ քովնտի դուռ
մը, եւ կաշեծածկ բազկաթոռներ... Հատ մը հոս, հե-
ռաձայնի գործիքին մօտ, եւ անկիւնը նստած է ճեփ
ճերմակ կատուն ու կը մրափէ: Կատուին եւ հեռաձայ-
նի գործիքին միջեւ ուրիշ դուռ մը, Պետրոսին արժա-
նալայել գրասենեակը տանող: Աթոռով, զրասեղա-
նով, դարձեալ հեռաձայնի գործիքով, եւ պատէն կախ-
ուած կիսամերկ աղջիկ մը, պատկերին մէջ, կօշիկ մը
ձեռքին, եւ ի՛նչ փայլուն կօշիկներ: Այն ատեն հօրեղ-
բայրը ըսաւ թէ՛ այս բոլորը աղէկ, բայց պէտք է եր-
թայ այդ աղջիկը, եւ պատէն վար առնելով ծանուցու-
մի այդ կտորը, անմիջապէս զետեղեց զամբիւղին մէջ,
մինչեւ որ կատուն մտաւ ներս, ու ամբողջացուց տե-
սարանը, նոյնիսկ աղջկան բաց ձգած տեղերը: Պետրոս

չհաւատաց պատահածին, տեղի ունեցած այս յանկարծակի փոփոխութեան եւ ուղեց ժպտիլ:

— Լըջութիւնդ պահէ հիմակուհիմա...

Դուռը փակուելուն, աղբամանէն դուրս հանեց աղջկան պատկերը ու զայն զետեղեց ճիշդ առանջուան դիրքին վրայ, կատուն փախաւ, սարսափահար եղած այդ զոյգ մը դունդերէն:

Ձանգակը հնչեց ու խուժանը կախուեցաւ դրան առջեւ: Ձանգակը ճչաց ու մեքենաներուն աղիողորմ աղաղակը դղրդացուց առաստաղը, ու շէնքը սկսաւ հիմէն երերալ: Սուր, զիւլ, տափակ, պարիթոն, սոփրանո, սորոններ...

— Եկուր երթանք, եկուր երթանք, եկուր երթանք, երթաա՛նք, երթաաա՛նք, թա՛նկ, թա՛նկ, թա՛նկ...

— Ե՛լ պտոյտ մը կատարենք ներսը, որպէսզի ծանօթանաս գործաւորներուն, պաշտօնեաներուն, ըսաւ հօրեղբայրը, հրամայողական շեշտով մը:

Հետեւեցաւ դիւսահակ, համակերպիլ փորձելով այս նոր կեանքին, ճակատագրին, մարդուն:

Գլանածեւ հսկայ զանդուած մը, որ անընդհատ կը դառնար հեւալով, տքալով, գրեթէ լալով.— Հոս, կաշին կը բարակցենք: Աղեղանման, սուր, կոր, ճչացող, աղերսող գործիք մը.— Հոս, չափերու վրայ կը կտրենք կաշին: Ոտքեր, գլուխներ, երկաթ, փայտ, պղինձ, անձայն.— Հոս, ձեւի վրայ կը յարմարցնենք: Կարի մեքենաներ, մրցումի ելած, արշաւ կազմակերպած, վազվզուն, ճռինչ, կռինչ.— Հոս ալ կը կտրենք ապրապրանքի վրայ:

Պետրոս, յափշտակուած դիտեց այդ բոլորը, մօտէն դիտեց, շատ մօտէն, կորաքամակ այդ մարմինները, գլխահակ այդ մարմինները, դողացող սրունքները, ծերերը, երիտասարդները ու ըսաւ.

— Հոս ալ անպայման մարդուն կաշին կը բարակցենք, կը ճղմբտենք...

— Հէ՛յ, ձէ՛ք, Մէ՛ք, հէ՛յ, ձուն, ձեղի կը ներկայացնեմ որբացեալ եղբորս որդին, երիտասարդ, կայտառ Պետրոսը, դուք ըսէք Փիթըրը, Փիթը, այո՛, ձեղի կը ծանօթացնեմ հողի մը որ փրկուած է այլեւս, ազատուած է հին կեանքի մը կապանքներէն, հաւատացէք ազատեցի, փրկեցի զինք, այնպէս չէ՞ Պետրոս...

— Ինքզինքդ զսպէ հիմակուհիմա...

Եւ Պետրոս զսպեց ինքզինք, ապացոյց որ մատնեւուն մէջ գտնուող կաշիի կտորը անդադար կը ճմլուէր, կը ճղմուէր, կը բարակնար:

Օրը անցաւ խիստ տաղտկալի ու գրեթէ անկատար: Բեռնատար ինքնաշարժեր իրարու ետեւէ եկան, կաշին պարպեցին ու ծանր մտահոգութենէ մը ազատուած, մեկնեցան շուտով: Ապսպրանքներու անտուկները բեռացուեցան դունաւոր կառքերու մէջ ու դո՛հացան՝ եղածով: Հատ մը միայն մնաց հոն, խոշոր դժգոհութիւն մը գրասեղանին ետին, գլուխը ափերուն մէջ, իսկ ափերն ալ մտածումին:

— Ըսի քեզի որ պիտի սիրես այս գործը, վստահ էի այդ մասին... դուն խօսելու պէտք չունիս, ես քու աչքերէդ կը կարդամ, փորձառութիւնը մեծ դպրոց է, իսկական դպրոց, եւ ես այդ դպրոցներէն ստացած եմ բոլոր վիճակահաններս: Դուն աչքովդ տեսար ամբոխը, մարդիկը, գործաւորներ, պաշտօնեաներ, քիչ բան չէ ասիկա:

— Այս եղածներէն բան չհասկցայ շիտակը, ըսաւ Պետրոս համարձակութիւնը հաւաքելով, երբ Մարթին ապուրը խմելու համար ստիպուած էր գոնէ վայրկեան մը լռել. այդ խօսքին վրայ, կերակուրը յանկարծ դուրս ժայթքեց մարդուն բերնէն ու քիթէն եւ օրհնեալ այդ շրթները բանալով անմիջապէս ըսաւ ան.

չհաւատաց պատահածին, տեղի ունեցած այս յանկարծակի փոփոխութեան եւ ուղեց փպտիլ:

— Լըջուիթիւնդ պահէ հիմակուհիմա...

Դուռը փակուելուն, աղբամանէն դուրս հանեց աղջկան պատկերը ու դայն զետեղեց ճիշդ առանջուան դէրճին վրայ, կատուն փախաւ, սարսափահար եղած այդ զոյգ մը գունդերէն:

Ձանդակը հնչեց ու խուժանը կախուեցաւ դրան առջեւ: Ձանդակը ճչաց ու մեքենաներուն աղիողորմ աղաղակը դղրդացուց առաստաղը, ու չէնքը սկսաւ հիմէն երերալ: Սուր, զիւ, տափակ, պարիթոն, սոփրանո, սոլոններ...

— Եկուր երթանք, եկուր երթանք, եկուր երթանք, երթաա՛նք, երթաաա՛նք, թա՛նկ, թա՛նկ, թա՛նկ...

— Ե՛լ պտոյտ մը կատարենք ներսը, որպէսզի ծառնօթանաս դործաւորներուն, պաշտօնեաներուն, ըսաւ հօրեղբայրը, հրամայողական շեշտով մը:

Հետեւեցաւ գլխահակ, համակերպիլ փորձելով այս նոր կեանքին, ճակատագրին, մարդուն:

Գլանածեւ հսկայ դանդուած մը, որ անընդհատ կը դառնար հեւալով, տքալով, գրեթէ լալով.— Հոս, կաշին կը բարակցնենք: Աղեղանման, սուր, կոր, ճչացող, աղերսող գործիք մը.— Հոս, չափերու վրայ կը կտրենք կաշին: Ուքեր, գլուխներ, երկաթ, փայտ, պղինձ, անձայն.— Հոս, ձեւի վրայ կը յարմարցնենք: Կարի մեքենաներ, մրցումի ելած, արշաւ կազմակերպած, վազվզուն, ճռինչ, կռինչ.— Հոս ալ կը կարենք ապրսպրանքի վրայ:

Պետրոս, յափշտակուած դիտեց այդ բոլորը, մօտէն դիտեց, շատ մօտէն, կորաքամակ այդ մարմինները, գլխահակ այդ մարմինները, դողացող սրունքները, ծերերը, երիտասարդները ու ըսաւ.

— Հոս ալ անպայման մարդուն կաշին կը բարակցնեն, կը ճզմրտեն...

— Հէ՛յ, ձէ՛ք, Մէ՛ք, հէ՛յ, ձուն, ձեզի կը ներկայացնեմ ողբացեալ եղբորս որդին, երիտասարդ, կայտառ Պետրոսը, դուք ըսէք Փիթըրը, Փիթը, այո՛, ձեզի կը ծանօթացնեմ հողի մը որ փրկուած է այլեւս, ազատուած է հին կեանքի մը կապանքներէն, հաւատացէք ազատեցի, փրկեցի զինք, այնպէս չէ՞ Պետրոս...

— Ինքզինքդ զսպէ հիմակուհիմա...

Եւ Պետրոս զսպեց ինքզինք, ապացոյց որ մատնեալուն մէջ գտնուող կաշիի կտորը անդադար կը ճմլուէր, կը ճզմուէր, կը բարակնար:

Օրը անցաւ խիստ տաղտկալի ու գրեթէ անկատար: Բեռնատար ինքնաշարժեր իրարու ետեւէ եկան, կաշին պարպեցին ու ծանր մտահոգութենէ մը աղատուած, մեկնեցան շուտով: Ապսպրանքներու սնտուկները բեռցուեցան գունաւոր կառքերու մէջ ու գոհացան՝ եղածով: Հատ մը միայն մնաց հոն, խոշոր դժգոհութիւն մը գրասեղանին ետին, գլուխը ակերուն մէջ, իսկ ասփերն ալ մտածումին:

— Ըսի քեզի որ պիտի սիրես այս դործը, վստահ էի այդ մասին... դուն խօսելու պէտք չունիս, ես քու աչքերէդ կը կարդամ, փորձառութիւնը մեծ դպրոց է, իսկական դպրոց, եւ ես այդ դպրոցներէն ստացած եմ բոլոր վկայականներս: Դուն աչքովդ տեսար ամբոխը, մարդիկը, դործաւորներ, պաշտօնեաներ, քիչ բան չէ ասիկա:

— Այս եղածներէն բան չհասկցայ շիտակը, ըսաւ Պետրոս համարձակութիւնը հաւաքելով, երբ Մարթին ապուրը խմելու համար ստիպուած էր գոնէ վայրկեան մը լուել. այդ խօսքին վրայ, կերակուրը յանկարծ դուրս ժայթքեց մարդուն բերնէն ու քիթէն եւ օրհնեալ այդ շրթները բանալով անմիջապէս ըսաւ ան.

— Հարկաւ թէ բան մը պիտի չհասկնայիր, եթէ հասկցայ ըսէիր, ծիծաղելի պիտի ըլլար, բայց թէ մը ժամանակ տուր դուն քեզի, սպասէ եւ պիտի տեսնես:

Վեց ամիս ետք, ամէն ինչ պայծառացաւ: Աւելի երկար սպասելու պէտք չունէր Պետրոս խորապէս ըմբռնելու թէ ինչ կ'անցնէր կը դառնար: Այլեւս կռահելու, ենթադրելու, կամ կասկածելու պէտք չունէր բնաւ: Որովհետեւ...

Անուշ լեզուով, եւ շատ քաղաքավարութեամբ բացատրեց հօրեղբայրը, թէ այս ձեռով ընթանալը, շարունակելը անմտութիւն էր այլեւս: Այո՛, Պետրոս, քու օգտիդ համար են այս անկեղծ թելադրութիւնները, քանի որ ժամանակը հասած է ալ քու անձնական խուցդ ունենալու, առանձնանալու, եւ ուրիշներու օգնութենէն ձերբազատուելու: Ծիչդ է որ հօրեղբայրդ միշտ կը մտածէ քու մասիդ, կարգադրութիւններ կ'ընէ քեզի համար, բայց որոշումը արձակուած է ալ, եւ դուն պէտք է ինքզինքդ կարգադրես ասկէ ետք: Ուրեմն, ա՛ռ սա պայուսակներդ, վարձէ սա փոքրիկ յարկաբաժինը ու մտածէ ապագայիդ մասին: Հիմակուհիմա աւելիին պէտք չունիս, եթէ նոյնիսկ ունիս, կարեւորութիւն մի տար մանրամասնութիւններուն, քանի որ ես այս երկիր հասնելուս, բարձ մը իսկ չունէի գլխուս տակ, հիմա որ դուն բարձ մը ունիս, բախտաւոր համարէ ինքզինքդ ու օրհնէ հօրեղբայրդ: Յետոյ՝ մինչեւ ե՞րբ ասանկ ամուրի պիտի մնաս, մինչեւ ե՞րբ ինքզինքդ քաջքէս առանձնութեան մէջ, արդէն քսանվեց տարեկան եղած ես, նինան ալ քեզմէ շատ մեծ չէ, տակաւին անցեալ Ուրբաթ թեւակոխեց երեսունըութը, չէ՛, մի բնք որ հօրեղբորդ աղջիկն է, գիտեմ որ կը հաւնիս կոր իրեն, այս երկրին մէջ ամէն ինչ կարելի է... եթէ նոյնիսկ չես հաւնիր կոր իրեն, վստահ եմ գոհ պիտի մնաս ձգելիք ժառանգութեէս: Ուրեմն, ա-

սիկա ասանկ կ'աւարտի, վաղը չուշանաս գործիդ, վաղը կը տեսնուինք:

Յաջորդ առաւօտուն տեսուեցան, սակայն ցուրտ էր ու կ'անձրեւէր դէշ կերպով: Այդ պատեհութենէն օգտուելով, Պետրոս փորձեց բռնազբօսիկ ժպիտ մը անցընել դէմքին վրայ, բայց խանդավառութիւնը կորսընցուց, անմիջապէս որ յօնքերուն վրայ հարցական նշաններ կազմուեցան անձրեւի կաթիլներով: Անհանդուրժելի էր լարուածութիւնը: Մտայլ ու դժնդակ էր այն լարուածութիւնը որ կը սկսէր փոթորիկէն շատ առաջ: Պիտի պայթէր, անպայման խենթ բան մը պիտի ընէր այդ պահուն, եթէ կատուն նստած չըլլար իր աթոռին մէջ, սեղանին առջեւ: Եւ որպէսզի անոր հանդիստը չխանդարէ, պատուհանին առջեւ կազնած մնաց Պետրոս, ու սկսաւ կամաց կամաց անդրադառնալ պատահած դէպքերուն, տեղի ունեցած խօսակցութիւններուն, եւ քանի խորացաւ մտածումին մէջ, այնքան կատաղութեամբ հարուածեց ինքզինք, իր միամտութիւնը, անկեղծութիւնը, անփորձութիւնը: Այո՛, անցնող տարուան ընթացքին բոլորովին կորսնցուցած էր ինքզինք, եւ չէր անդրադարձած թէ անկեղծութենէ աւելի ամուր բան մը պէտք էր ունենալ, տոկալու համար այս ողբերգութեան: Եւ այդ դիտակցութեան չզոյութեան պատճառաւ է որ սխալ մեկնաբանած էր ամէն ինչ, նինային իրեն հանդէպ ցոյց տուած արտասովոր մտերմութիւնը, օրինակ: Այո՛, շատ յաճախ միասին եղած էին, հաճոյքի վայրեր այցելած էին, երբեմն նոյնիսկ գինովցած էին պարասրահի մը մէջ, բայց երբե՛ք, երբեք միտքէն անցուցած չէր որ այդ հողածութեան, դուրգութեան քին, անսահման հասկացողութեան ետեւ ասանկ բան մը կրնար ծրարուած ըլլալ: Ո՛չ, ատիկա միտքէն անցուցած չէր բնաւ:

— Դուն հօրս ըսածներուն շատ ականջ մի կախեր,

ան այսօր կայ, վաղը ո՞վ գիտէ, արդէն սիրտը տկար է... Իրմէ ետք մենք է որ պիտի վայելենք, մենք է որ պիտի մնանք ու տիրանանք իր ունեցածին... Գիտեմ որ ասանկ խօսիլը պատշաճ չէ, բայց կը տեսնես որ ես շիտակը կը խօսամ, իրաւը կ'սսամ...

Իրաւ է որ Նինան յստակօրէն բացատրած էր իր մտածումը, ծրագիրը, եւ անընդհատ խօսած էր իր ակընկալութիւններուն մասին, սակայն դուն է որ Պետրոս, միամիտ տղայ, չէիր կրցած թափանցել այդ պարզ արտայայտութիւններու իմաստին, անոնց ետին պահուած զխտումին... վա՛յ, յիմար...: Այո՛, փեսայ բերած էին քեզ, իրենց տունմնայ պառաւին, դործածած էին քեզ անշահ, անօգնական լքուածի մը պէս, իսկ դուն այդ բոլորը զղջումի ու աղգահանական կապերու վերադրելով, երախտագիտական զգացումներով պարուրած էիր դուն քեզ, եւ առանձնութեանդ մէջ չէիր գիտցած ինչ ձևով փոխադարձել այդ մեծ զոհողութիւններ, որ անոնք յանձն առած էին քեզ նոր ապագայի մը պատրաստելու համար... վա՛յ, յիմար... կոտորաւոր արարած...:

Նինային հետ միասին յաճախ դացած էին ծովեզերեայ այդ պողոտան, ընդհանրապէս ճաշարահ մը այցելելէ ետք, եւ ինքնաշարժին մէջ նստելով, ժամեր շարունակ գիտած էին ովկիանոսին փրփուրները, լրսած էին անկէ բարձրացող հառաչը, խորհուրդը, բայց երիտասարդ տղան ընաւ կարեւորութիւն չէր ընծայած աղջկան հառաչներուն, եւ մութին մէջ կատարուող պատրաստութիւններուն անտեղեակ, իրեն մատուցուած այս յարգանքին տուած էր բոլորովին տարբեր նշանակութիւն, եւ այդպէս է որ աղջկան կուրծքէն արձակուող մրմունջները, հծծիւնները վերադրած էր պարզուող տեսարանին զեղեցկութեան, ներգործութեան: Հիմա սակայն, Պետրոս, կամաց կա-

մաց կը վերակոչէր արտասանուած բոլոր բառերը եւ գանոնք ճշմարիտ հակադրութեան մը մէջ զետեղելով, պատկերը կը տեսնէր մանրամասնութեանը մէջ, այնպէս, ինչպէս որ պէտք էր տեսած ըլլար, շատ կանուխէն: «Ինչ որ ունիմ ձեզի պիտի մնայ, Նինային ու քեզի», ըսած էր հօրեղբայրը իր անկեղծութեանը մէջ, բայց ինք այսքան ատենէ ի վեր չէր ըմբռնած կացութեան լրջութիւնը, եւ թոյլ տուած էր որ յոյսեր ծնին, ծրագիրներ պատրաստուին, երազներ հիւսուին, հարսանիքի պատրաստութիւններ տեսնուին, իրեն համար, իր ետեւէն:

Եւ վերջապէս ծնաւ անմեկնելի ու դժուարին այդ ժպիտը, գիծեր կազմուեցան բերնին շուրջ, մկանները զուարթացան նոր խաղի մը տակ ու պայթեցաւ անզրսպելի խնդուքը, կողերը ճանկրտող, թոքերը ցնցող քահալը, մինչեւ որ աչքերը լեցուեցան արցունքով, մինչեւ որ հօրեղբայրը սարսափահար հասաւ իր դրասենեակը:

— Ի՞նչ կ'ըլլայ կոր Պետրոս...

— Անհող եղիւր, բան մըն ալ չ'ըլլար կոր, բացազանչեց տղան, խնդալով հանդերձ...

Յետոյ անմիջապէս ոտքի ելաւ փիթ: Յնցուեցաւ, մոլորեցաւ, կատղեցաւ Պետրոս:

— Ինչ որ ալ ընէք, պիտի չկարենաք դնել գիս, այո՛, եթէ մէջս պզտիկ բան մը մնացած է Տորայի փողոցներէն, արժանապատուութենէս, թոյլ պիտի չտամ որ կոխկրտէք զայն, թոյլ պիտի չտամ որ կիւզելիմ Պետրոսը փիթըր ընէք, ծօ՛, այս ի՞նչ խայտառակութիւն է փիթ, այս ինչ անաստուածութիւն է, աւանակ Պետրոս, դուք ըսէք փիթ, փիթ, փիթիթիթ...

Հետզհետէ ընտելացաւ գործին, գործարանի միջա-
վայրին եւ միշտ խուսափեցաւ հօրեղբոր դննող ու սպա-
սող նայուածքէն: Առանց մտածելու, առանց նոյնիսկ
տրամաբանելու մխրճուեցաւ գործին մէջ ու նոյնացաւ
մեքենաներուն հետ, կօշիկներուն հետ: Զանդուածեղ
զլանները խօսեցան անոր, ու Պետրոս որոշապէս հաս-
կըցաւ անոնց լեզուն, տրտմութիւնը, ցաւը: Յետոյ
սկսաւ յաճախակի այցելութիւններ տալ մասնաբաժին-
ները եւ հրահանգներուն վրայէն ջնջեց անատուզութեան
կասկածը: Վերջապէս, մանկութեան օրերէն սկսեալ
չնչած ըլլալով կաշիին հոտը, բնաւ դժուարութիւն
չունեցաւ այս արհեստին քմահաճոյքներուն վարժուե-
լու ճիգին մէջ: Այդպէս է որ առաջին օրերու դժկամա-
կութիւնը անհետացաւ ժամանակին հետ եւ երիտասարդ
հայր՝ սիրտը դրաւ աշխատանքին մէջ:

Առաւօտուն, անմիջապէս կը բանար թղթածրար-
ները, նամակները, եւ ի մի կը բերէր եղած ապսպրանք-
ներուն քանակն ու որակը, յետոյ՝ սուրճի դաւաթին
շուրջ խորհրդակցութիւն մը կ'ունենար փորձառու
անէքլիմ հետ եւ ապա կը շրջէր մասնաբաժինէ մասնա-
բաժին եւ անձամբ կը ստուգէր տարուող աշխատանքին
կանոնաւորութիւնը: Պաշտօնեաներէն սկսեալ մինչեւ
պարզ աշխատաւորները՝ սկսան մասնաւոր յարգանք
տածել անոր հանդէպ, եւ զայն նախընտրեցին «օլտ
մենէն», որ հետզհետէ աւելի ջղազրգիւ կը դառնար ու
անհանդուրժելի միջամտութիւններով կ'ապականէր
մթնոլորտը:

Այս ընթացքին, Պետրոս, իրապէս փորձեց խու-
սափիլ նինայէն, անոր ակնկալութիւններէն ու մանա-
ւանդ անոր ներկայութենէն: Բայց որպէսզի բաժանումը

տեղի ունենայ բարեկամական զեանի մը վրայ, եւ ան-
տեղի վիճարանութիւններ չպղտորեն վերջապէս մաք-
րուած երկինքը, երիտասարդ տղան տակաւին որոշ
հասկացողութեամբ կը մօտենար անոր քմայքներուն եւ
երբեմն նոյնիսկ կը հանդուրժէր ալ անոր ակնարկու-
թիւններուն: Բայց աղջիկը, նշմարելով անոր մէջ տե-
ղի ունեցող փոփոխութիւնը, կը դանդաւոր անընդ-
հատ, կը դժգոհէր շատ յաճախ եւ իր յուզումը չմտ-
նելու համար պատճառաբանութիւններ կ'որոնէր, իր
մտահոգութեան մասնակից դարձնելու համար տղան.

— Ի՞նչ կ'ըլլայ կոր քեզի, մեր տունէն մեկնելէդ ի
վեր դրեթէ երեսդ տեսած չունիմ: Նեղուեցա՞ր հօրս ը-
րածին համար, եթէ այդ է պատճառը այս կեցուած-
քիդ, կը համոզեմ զինք որպէսզի ետ կանչէ քեզ, ես
այս վիճակէն բնաւ համ չեմ առներ կոր, Փի՛թ...

— Զբաղած եմ, շատ զբաղած եմ, չես հասկնար
կոր պէ, յետոյ գամ ի՞նչ ընեմ ձեզի հետ, այդ քիվի
օլաքալիմ առջեւէն չէք շարժիր քի...

— Բայց դուն ինձի համար պիտի գաս Փիթ, ա-
նոնց համար չէ, միայն ինձի...

— Ինձի Փիթ մի ըսէր, իմ անունս Պետրոս է,
Պետրոս, ան ալ պէյրութցի Պետրոս, իմ անունս բնաւ
Փիթ չէր եղած, կը հասկնա՞ս տարբերութիւնը...

Ատոր վրայ վիճեցան: Շատ տաք վիճեցան: Արե-
ւելքցի երիտասարդը չուզեց ընդունիլ իրեն վիճակուած
պայմանները, պարտադրութիւնները եւ ներկայացուած
բոլոր առաջարկներուն վրայէն սեւ դիժ մը քաշելով
տեղի չտուաւ աղջկան թախանձանքներուն, ամօքիչ
խօսքերուն առջեւ ու առիթը յարմար նկատելով, ան-
միջապէս հեռացաւ անոր մութ կաշկանդումներէն: Եր-
կար չտեսեց այս բաժանումը սակայն, որովհետեւ բե-
մէն ներս ցատքեց հօրեղբայրը եւ կրկին հաշտուեցան
ուխաքի շիշերուն առջեւ: Եւ Պետրոս սկսաւ վազվզել,

գործարանին մէկ գրասենեակէն միւսը հասնելով թե-
լադրութիւններ ընել, որովհետեւ կաշիին գինը կը
բարձրանար, ու կօշիկները պէտք է սղէին, այո՛, կա-
շիին գինը յանկարծ կը տապալէր, ու կօշիկները պէտք
է սղէին, անպայման: Արձանագրուող այս յաջողու-
թիւններուն ի տես, անբըլ Մարթինին շրթները իրա-
րու գալու պատեհութիւնը չէին ունենար: Ուրախ էր
մարդը, չափազանց ուրախ:

Սովորական առաւօտ մը...

Պետրոս կը քալէր մեքենաներու միջեւ բացուող ա-
ռանցքէն, երբոր նշմարեց անկիւնի աղջիկը: Առանց
կանգ առնելու, գլուխը ետ դարձուց ու կրկին նայեցաւ:
Զարմանալի՛: Ինչպէս կ'ըլլար որ մինչեւ այդ օր չէր
նշմարած զայն: Նոր մը ըլլալու է, մտածեց ու աճապա-
րանքով հասաւ Մեքին գրասենեակը: Բայց վերադարձին
դարձեալ մօտեցաւ աղջկան ու այս անգամ խօսեցաւ ա-
նոր.

— Անունդ ի՞նչ է, օրիորդ...

Մեքենաներու աղմուկը զայրոյթով ժայթքեց ու ա-
նոր ձայնը Խնդրուեցաւ անիւններուն տակ: Մինչ աղ-
ջիկը զարմացահար կը նայէր իրեն, Պետրոս կրկին խօ-
սեցաւ անոր.

— Անո՛ւնդ, անո՛ւնդ...

Այն ատեն աղմուկը հալածեց զայն, ու անիւնները
կրկնեցին.— Ըսէ՛ մեզի անունդ, ըսէ՛ մեզի անունդ, ա-
նո՛ւնդ... անո՛ւնդ... ըսէ՛, ըսէ՛...

— Նօ ինկիլիշ, մի արմիւրն, լսուեցաւ աղջկան մեղմ
ձայնը:

— Զրտե՛ս հայ ես, ես ալ հայ եմ մէ՛, հեմտէ՛ գօրլու
հայ, բացադանչեց Պետրոս քիչ մը ժպտելով: Մակայն
այդքանով չգոհանալով, գրասենեակ հասնելուն անմի-
ջապէս տեղեկութիւններ քաղեց անոր մասին, ու երբ
գոհացաւ ստացած մանրամասնութիւններէն, այն ատեն

ոտքերը դրաւ գրասեղանին վրայ ու սիկարէթը վառե-
լով տարաւ շրթներուն:

Օրուան մնացեալ ժամերուն, Պետրոս, նոր առիթ-
ներ ստեղծեց խանդավառութիւնը կրկնապատկելու,
յուսադրուելու, ծրագիրներ յղանալու համար: Ծիչդ է
որ տակաւին հազիւ քանի մը բառեր փոխանակած էր
անծանօթ աղջկան հետ, սակայն այդքանն իսկ բաւա-
րար կը համարէր կեանքին նոր եռանդով մօտենալու հա-
մար: Եւ որպէսզի երեւակայութենէն աւելի բան մը ու-
նենար իր հետ տանելու, իր յարկաբաժինին առանձնու-
թիւնը հանդուրժելի դարձնելու համար, գործը չձգած
քանի մը անգամ եւս անցաւ անոր մօտէն, զաղտազոզի
նայուածքներով դիտեց զայն եւ երբոր տուն վերադար-
ձին ինքզինք ազատ զգաց հին կտպանքներէն, անմիջա-
պէս վար առաւ ծանուցումին աղջիկը, ու անոր փոխա-
րէն երեւակայութիւնը դրաւ հոն, սեւ աչքերով, սեւ
մազերով աղջկայ մը ուրուագիծը, որ այնքան կը յար-
մարէր այդ սպիտակ պատին: Յետոյ լայնօրէն բացաւ
պատուհանները ու դիչերային յորդազեղ լոյսերուն
յանձնեց ինչ որ կը զուարթացնէր զինք, ինչ որ կը
տրամեցնէր զինք՝ անզգալաբար, անգիտակցաբար: Ա-
յո՛, մինչեւ այդ օր, տաք երգիքի մը կարօտը գրեթէ
չէր զգացած կուրծքին տակ, որովհետեւ քաղաքին խու-
ճապահար կեանքին խառնուելով փորձեր էր մոռնալ իր
առանձնութիւնը, իր պահանջները, ներքին ձայները:
Հիմա սակայն, նոր կարելիութիւններ հետզհետէ կը
տաքցնէին զինք, ազուտր յուզումներ արթնցնելով իր
մէջ, լուրջ մտածումներու կ'առաջնորդէին զինք, եւ
ինք դոհ էր այս բոլորէն, առաջին անգամ ըլլալով ի-
րապէս գոհացած կը զգար ինքզինք, գոնէ պատեհու-
թիւններուն ապաւինելով, փափաքներուն, բաղձանք-
ներուն ապաւինելով:

Յաջորդ առաւօտ, սովորականէն կանուխ հասաւ

գործարան ու գրասենեակին պատուհանէն սկսաւ դիտել ներս խուժող գործաւորներու անկանոն շարքը: Տողանցքի վերջաւորութեան, նայուածքը բախեցաւ անոր քայլերուն ու ցնցուեցաւ արտակարգօրէն: Պահ մը ետք, երբոր մեքենաներու աղմուկը դարձեալ սկսաւ արձագանգել պատերու վրայէն, այն ատեն Պետրոս անդարձարձաւ որ պէտք է վազէր ապսպրանքներուն ետեւէն, քանի որ կաշին սղած էր նորէն, չափազանց՝ սղած:

Գրասենեակին մէջ հանդիպեցաւ անքր Մարթինին, եւ այս անգամ հակառակ իր կամքին, նստեցաւ կաշեծածիկ բազկաթոռին մէջ եւ առանց փրփրելու սպասեց որ ան աւարտէր իր խօսքը:

— Պետրոս, Պետրոս, երէկ նորէն չյարգեցիր խոստումդ, այս աղջկան գլխուն փորձանք մը պիտի բերես դուն, խիղճ բսուածը հի՛չ չունիս դուն, ըսէ՛ նայինք, ի՞նչ ըրիր, ինչո՞ւ չեկար երեկոյեան, ժամերով քեզ ըսպասեցինք ճաշի սեղանին վրայ, կերակուրն ալ ստիպուեցանք պաղ ուտել, թեւեֆոն ըրինք, տունը չէիր, ո՞ւր էիր, ո՞ւր...

— Երէկ չյարգեցի խոստումս, որովհետեւ սիրաչունէի յարգելու, նինային մասին չկրցայ մտածել, որովհետեւ աւելի կարեւոր հարցեր կային միտքիս մէջ, վստահ կրնաս ըլլալ որ խիղճ ունիմ, ապացոյց որ չեմ կրնար հանդուրժել անխիղճ արարքներու... բարի լոյս, անքր Մարթին, աւելի լուրջ հարցեր կա՞ն ծեծուելիք:

Մարթին, ջղազրգիւ ձեւերով ուսերը թօթուեց ու քաշուեցաւ իր գրասենեակը:

Այդ միջոցին ջուրերը հաւաքուեցան փողոցներու մէջ եւ լիճերը արագօրէն կազմուեցան մոխրամաններու մէջ: Պետրոս ջրայնութեան նշաններ ցոյց կու տար սենեակին մէջ շրջագայած միջոցին, սակայն յուզումին պատճառը բոլորովին տարբեր աղբիւրէ մը կը բխէր: Եւ այդ դիտակցութեան մէջ կ'ուզէր մտածել, սակայն

կաթիլ մը մտածում չէր կրնար հաւաքել հոն ու կը հայհոյէր, մեծ մեծ բանալով բերանը, այդքանով գոհանալ չկարենալուն, տարբեր միջոցներու կը դիմէր, ու կը տառապէր: Ծիշդ այդ պահուն, Մեքին քոյրը ամուսնացաւ ու տուն դնաց, ձուն հիւանդացաւ, Մունը գլորեցաւ սանդղակներէն վար, եւ այդ իրարանցումէն օգտուելով, սեղանին վրայ ցատքեց կատուն, եւ Պետրոս մէկէն սթափեցաւ:

Ապսպրանքի խոշոր տրցակը ձեռքին դնաց հոն, եւ ապսպրանքի տրցակը ձեռքին՝ եկաւ հոս: Այդ թոհուրոհին մէջ ներս մտաւ դրացիին խափշիկ տղան՝ ու «կը մեռնի կոր, ճամբուն ճիշդ մէջտեղը ինկած, շունը կը մեռնի կոր», ըսաւ զուարթազին, ճերմակ ատամները ցուցադրութեան դնելով: Գործարանի զոյգ դռներէն ամբողջ խուժեց մեքենարար ու շունը հիւանդանոց տարին, մեծ արարողութեամբ:

Օրը ջախջախուեցաւ, գէշ սկզբնաւորութենէ մը ետք:

— Ինչպէ՞ս ես այսօր, շատ արագ աշխատելու պէտք չունիս, ըսաւ Պետրոս, մեքենային վրայ ծռելով, աւելի աղջկան, քան մեքենային:

Աղջիկը ժպտեցաւ, շիկնեցաւ, գլուխը շարժեց ու շարունակեց աշխատանքը:

— Անունդ, գէթ անունդ յայտնէ, բացազանչեց Պետրոս, մեքենաներու աղմուկին հետ մրցելով:

— Արփիկ... անունս Արփիկ է...

Վերջապէս որոշեց: Այդ իրիկուն պիտի երթար հօրեղբոր տունը, աթոռին վրայ ուղիղ նստելով պիտի ըսէր, թէ՛ այս այսպէս է, եւ ես չեմ կրնար կոր հանդուրժել ձեր ըրածը, ձեր չըրածը: Յետոյ պիտի զայրանար, պիտի փրփրէր, աղմկալի արտայայտութիւններով պիտի լեցնէր մթնոլորտը ու դուռը ամուր մը բախելով պիտի հեռանար վերջնականօրէն: Այո՛, այդքանը

զոնէ կրցաւ որոշել Պետրոս, ու զոհոնախուժեամբ, հրճուանքով զիտեց շուրջը:

Երեկոն հասնելուն, Պետրոս վազեց իրեն ծանօթ սալոնները, եւ պարելէ, զուարճանալէ ետք, գիշերը անցուց անոնցմէ մէկուն մէջ: Ու փնտոնեց Արփիկը, անոր սեւ աչքերը, անմեղ ժպիտը ու գինովցաւ. սաստիկ գինովցաւ այդ գիշեր, Պետրոս:

Յաջորդող շարաթները հետզհետէ փոփոխութիւններ մտցուցին Պետրոսին առօրեայ մտահոգութիւններուն մէջ: Նախ որ յաճախադէպ եղան վէճերը Նինային հետ: Աղջիկը միշտ գանդատեցաւ, ինքզինք անտեսուած նկատելով, բողոքեց, զայրացաւ, ու յետոյ ճարահատ, նուազեցաւ լացի գիրկին մէջ: Անոր վերջին յոյսն էր Պետրոսը, զուցէ միակ յոյսը, որ աստիճանաբար երազի մը կերպարանքը կը զգենուր ու կը թաղուէր անթափանցելի մշուշին մէջ: Տղուն ուշադրութիւնը, համակրութիւնը դրաւելու համար կնոջական հնարամտութիւնները, ճարտարութիւնը ի գործ կը դնէր, սակայն ի դուր: Զուարթ ու ջերմ խօսակցութեամբ սկսուած երեկոն միշտ կ'այլափոխուէր, տաղտկալի ու ձանձրացուցիչ գիշերի մը կը վերածուէր ու կը սպառէր վէճերու ու կրօններու մէջ: Վարագոյրին ետեւէն, աղջկան մայրը, միշտ կը խրախուսէր յուսահատ մէկ հատիկը, կապիկութիւններ կը սորվեցնէր անոր, որպէսզի թութակի մը պէս կրկնէր ան.

— Քեզ հոս բերել տուինք, փրկեցինք կորուստէ, մարդ դարձուցինք, ու հիմա ապերախտ կը գանուիս կոր, շատ ապերախտ...

Ատեն մը համբերեց, հանդուրժեց իր երեսին նետուած լուտանքին, սպառնալիքներուն, եւ ի վերջոյ այլեւս չկարենալով զիմանալ եղած անարդանքին, զզուանքով շահեց.

— Եթէ կրնաք, ետ զրկեցէք, այսօր իսկ, որովհե-

տեւ անցնող իւրաքանչիւր օր զիս աւելի հաստատ ու վճռական կը դարձնէ ի վնաս ձեզի, ձեր ակնկալութիւններուն, ձեր ծրագիրներուն: Երբ ամենէն աւելի պէտք ունէինք ձեր օշնութեան, ձեր աջակցութեան, այն ատեն բարեկրթութիւնն իսկ չունեցաք մեր նամակներուն, մեր թախանձանքներուն արձագանգ դառնալու, այո՛, վատօրէն ուրացաք ձեր հարազատները, թոյլ տալով որ... բայց երբոր ամենէն նուազ պէտք ունէինք ձեր օշնութեան, միայն այն ատեն է որ բացիք ձեր թեւերը, ան ալ՝ յետին երազներ սնուցանելով ձեր չորցած ուղեղներուն մէջ... վստահ կրնաք ըլլալ որ ձեր տուներով, զրամով, խոստումներով չէք կրնար գնել զիս, այո՛, ետ զրկեցէք, որպէսզի ազատիմ այս մղձաւանջէն...

Անքը Մարթին միշտ լուռ մնաց այս վէճերու ընթացքին, զդալով հանդերձ որ սիրտը կ'արիւնէր, ըմբռնելով հանդերձ որ մեծ սխալ մը գործած էր անոնց արարքներուն, ծրագիրներուն մեղսակից դառնալով, հիմա այլեւս շատ ուշ էր վերածնելու համար, իր ուժերը հաւաքելով անոնց աղուոր դաս մը տալու համար, կորսնցուցած էր կամքը, տիրապետելու հեղինակութիւնը, անանկ որ հակառակ անզուսպ փափաքին, չէր կրնար մէկ հարուածով վերջ տալ այս ողբերգութեան, ծիծաղելի բեմադրութեան: Ինքն ալ ինկած էր անոնց ճանկերուն մէջ, հիւանդագին մրցակցութիւններուն մէջ, եւ հակառակ այդ բոլորին ակնատես ըլլալուն՝ չէր կրցած Պետրոսը ժամանակին զոռուացնել, որպէսզի առաջըր առնուած ըլլար այս խեղկատակութեան: Առաջին օրէն իսկ զըացած էր որ անուս այս տղան, յամառ երիտասարդը առեւտրական ու կազմակերպչական կարողութիւններ ունէր, ու այդ պատճառաւ ալ լրջօրէն հետեւած էր անոր քայլերուն, յառաջ գիմութիւններուն, նշած յաջողութիւններուն, եւ

գաղտնօրէն հպարտացած էր: Երբեմն միայն փորձած էր անոր հասկցնել իրենց բուն նպատակը, մտադրութիւնը, բայց շուտով հրաժարած էր իրեն վստահուած այդ դերէն, տղուն մէջ կազմուած անհատականութիւնը նկատի առնելով:

Վերջին վէճը ճակատագրականօրէն սաստիկ եղաւ: Պետրոս հեռացաւ հօրեղբոր տունէն, երդում քնելէ ետք որ անգամ մը եւս ոտք պիտի չդնէր այդ սեմին վրայ, բայց այդ որոշումը պատճառ եղաւ որ ան աւելի խստութեամբ փարի իր գործին ու կորսնցուց նախապէս ունեցած զուարթութիւնը, ներքին խաղաղութիւնը: Հօրեղբոր հետ պահելով հանդերձ իր սովորական, բնական յարաբերութիւնները, վերջնականօրէն մերժեց կատուն կերակրել եւ այդ շփացած անասունին առջեւ փակեց իր դրասնենակին դուռն ու պատուհանը:

Փակեց այդ դռները եւ բացաւ միւսը: Հոնկէ է որ ներս մտաւ Արփիկ, մտերմութեամբ, խոստումներով, առանց պահանջի: Առաջին հանդիպումին շատ կարճ տեւեց անոնց խօսակցութիւնը: Երեկոյեան, Պետրոս տուն տարաւ զայն, եւ ճամբու ընթացքին անոնք խօսեցան մութ մնացած կարգ մը կէտերու շուրջ: Եւ երբ ամէն ինչ լուսարանուեցաւ, այն ատեն Պետրոս հասկցաւ թէ՛ միայն տարի մը առաջ Ամերիկա եկած էին անոնք, կարելո՞ր չէ թէ Միջին Արեւելքի ո՛ր երկրէն, բայց ամենէն կարելո՞րը այն էր որ տակաւին չէին իւրացուցած այս երկրին կարգ մը սովորութիւնները, մտայնութիւնները, բաներ՝ որոնց շուտով գերին կը դառնան այս երկիրը ոտք դնող օտարներ, հայերը մանաւանդ: Ունէր հայր մը, մայր մը եւ իրմէ քանի մը տարիով երէց եղբայր մը: Բոլորն ալ ինկած էին գործարանի մը անկիւնը, կամ գործարանը անբաժան տեղ մը գրաւած էր անոնց առօրեային մէջ, կեանքին մէջ:

— Ամենէն դժուարը այն է որ, միայն կիրակի օրե-

րուն է որ ընտանիքի բոլոր անդամները կրնան իրարու մօտ դալ, զիրար վայելել, որովհետեւ մեզմէ իւրաքանչիւրը կը դործէ անպատեհ ժամերուն, գանգատած էր Արփիկ:

Յաջորդող հանդիպումները եղան աւելի երկար, մտերիմ, անկեղծ: Պետրոս, առանց վարանումի իր կեանքը բացաւ անոր առջեւ, սիրտին հետ միասին: Եւ այդպէս է որ տրտում ու դառն օրերու յիշատակը, հետքերը սկսան չքանալ, փարատիլ եւ մոռցուած զուարթութիւնը վերադարձաւ քիչ մը դժկամակութեամբ:

Հանրային պարտէզին մէջ էին այդ օր, եւ արեւը կը խաղար ծառերուն հետ, անոնց մագերուն մէջ, բայց շուտով ամպոտեցաւ երկինքը եւ տեղատարափ անձրեւը շուտով ջրեց ամէն բան: Արփիկ կ՛հկուեցաւ տղուն թեւերուն տակ ու անոնք վազեցին ուղեկորոյս մանուկներու պէս: Ինքնաշարժին մէջ, դողալ սկսաւ աղջիկը: Բայց երբոր սարսուռը շարունակուեցաւ, երբ աղջիկը սկսաւ կակազել, այն ատեն Պետրոս վերարկուն նետեց անոր ուսերուն եւ թոյլ տուաւ որ փափուկ մետաքսը հանդիկուրծքին վրայ: Քանի անձրեւը զարնուեցաւ ապակիներուն, այնքան աւելի մօտեցան անոնք, զրկուեցան, ճղմուեցան իրարու դէմ, մինչեւ որ շրթները միացան իրարու ու համբոյրին ջերմութիւնը ալեկոծեց անոնց հոգին, մարմինը, սիրտը: Ուղիխոսուր փրփրեցաւ այդ հարուածին տակ, քանի որ հովը կը սաստկանար դիմացի լեռներէն իջնելով, քանի որ ծառերը կը զարնուէին իրարու, ճիւղերը կը համբուրուէին իրարու հետ, ու հանրային պարտէզը կը մտնէր խոր սուզի մը մէջ: Այդ աղմուկին մէջ, այդ փոթորիկին մէջ, աղջիկը հծծեց.

— Պետրո՛ս, Պետրո՛ս...

Եկան ու գացին: Մոլեղնած հովերը եկան ու մնացին հոն: Ջուրերը պղտորեցան, ալիքները վայրագօրէն

չաչեցին ապառաժներու վրայ, ու անդնդային մրմունջ մը ծաւալեցաւ հորիզոնէ հորիզոն:

— Պետրո՞ս, Պետրո՞ս...

Կաթիլներ կային թարթիչներու, յօնքերու վրայ, անձրեւի, համրոյրի կաթիլներ: Բայց հօն չէին անոնք, հօն չէին այլեւս, որովհետեւ այդ աչքերէն ցայտող կրակը, այդ թոքերէն բարձրացող հեկեկանքը զանոնք նետած էր անծանօթին թեւերուն մէջ ու հիմա, հետքեր կային այդ ճամբաներու վրայ, անստոյգ, անորոշ, թեթեւ հետքեր...

Երբոր սթափեցան հովերու կանչով, զիրար դիտեցին բոլորովին նոր մտերմութեամբ մը: Զխօսեցան, չարասանեցին սովորական բառերը մեղքին, սիրոյ, որովհետեւ գոհունակութիւնը կը ցատկուտէր ցայտաղբիւրի մը պէս, ու կ'ողողէր, կը պարուրէր այդ սիրտերը:

Լուռ ու անդորր թաղամասերէն անցնելով, հետեւեցան՝ ծառերով ու տուներով եզերուած պողոտաներուն եւ երբ հասան հօն, ուր քաղաքը երկուքի կը բաժնուէր տարտամօրէն, զուարճալի խաղերով, այն ատեն սկսան խանդավառուիլ, նոր եռանդով մը լեցուիլ: Երբեմն կանգ առին տօնական գոյներով զարդարուած շէնքերու առջեւ եւ թոյլ տուին որ ցանկութիւնը արտասովոր արշաւներ կազմակերպէ հասնելու համար հօն, տեղաջլ ընելու համար ճիշդ հոս, քառանկիւնի շրթներուն, ուր ազդարարութեան նշանները կը հնազանդէին լոյսերու քմայքին: Երեկոն հազարաւոր նազանքներով կ'իջնէր պչրոտ քաղաքին վրայ, եւ ծովեզերքի ամայութեան մէջ ինքնաշարժեր կանգ կ'առնէին, սիրող գոյգերը մութի պաշտպանութեան յանձնելով: Ուրախ էին անոնք, իրապէս կը զուարճանային այս բոլորը դիտելով, վայելելով, ապրելով: Պետրոս, ատենը մէյ մը թեւերը կ'ազատէր աղջկան ուսերէն, ու զանոնք լայն տարածե-

լով երկինք կը նայէր իր ազատութիւնը ճանչնալու համար: Եւ կը ճանչնար ալ, այդ աստղերը, լուսացուած կապոյտը, մաքրուած զեփուռը: Այո, բոլորովին նորոգուած կը զգար ան, նոր զգացումներու, զգայնութիւններու գերութեան ինալով, կամովին անոնց հնազանդելով:

— Կ'ուզե՞ս բացառիկ դիչեր մը անցընել այս քաղաքին մէջ, միջալայրի մը մէջ, որուն գեղեցկութիւնը միայն ապրողը դիտէ, լոյսերու լեզուին վարժութիւն ունեցողները միայն դիտեն, ըսաւ Պետրոս, աղջկան հրճուանքը երկարելու մտասեւեռումով:

— Կը վախնամ Պետրոս, այս կեանքը անծանօթ է ինձի, եւ ես անծանօթ երեւոյթներէն շատ կը վախնամ...

Վեննես պողոտայի կողին կը բացուէր Պրոտուէյ փողոցին բերանը, քաղաքին ճիշդ ձախ թեւէն բաժնուելով: Հոս է որ կը միանան, կը միախառնուին, կը նոյնանան խաւերը: Գայթակղութիւնը կը սկսի ծայրէն, այսինքն որեւէ մէկ անկիւնէ ու կ'երկարի, հազար ու մէկ ձեւեր կ'առնէ ու կը նստի՝ լոյսերու ցայտաղբիւրին տակ: Անդին, փողոցը կը փոթորկէր, Տիգաի Լենտի աղաղակը, պոռչտուքը կը բարձրանար օդին մէջ ու ասպակի հարուածներ կու տար անցորդներու ականջին: Չոյգեր փաթթուած են իրարու, եւ բաժակներ կը ճզմուին այդ տաք մատներուն մէջ, որովհետեւ նուազածունքը վարժ են իրենց արհեստին ու չեն ամչնար: Աւելի վար, տեսարանը քիչ մը կը գոհականար, վերաւոր ձեւեր կ'առնէր կիսամութիւն մէջ:

Սահող ժամերուն հետ վազեցին անոնք: Այցելեցին բոլոր սրահները, դիչերային մութ անկիւնները, ու խմեցին, ու զուարճացան, սաստիկ կերպով խայտացին ուրախութեան տաք գիրկին մէջ: Սակայն երբ կէս դիչերը մտաւ խոր քուներու երազանքին մէջ, այն ատեն,

յորդոզ արքային հետ, դուրս նետուեցան նաև սիրող զոյգերը: Մայթին վրայ կեցած, սարսափեցաւ Արփիկ: Մարդիկ զլսիկոր կը քալէին անոր ակնարկին տակ, եւ որպէսզի չզլորի այդ բարձունքէն, եւ որպէսզի ինք ալ չխելազարի անակնկալօրէն, փաթթուեցաւ երիտասարդին, ու աղաչական, պաղատազին հծծեց.

— Սիրէ զիս, Պետրոս, սիրէ՛ . . .

Յ

Շուտով փոխուեցաւ Պետրոս ու նոր եռանդով, կենսունակութեամբ, աշխուժութեամբ փարեցաւ գործին: Այլեւս նոյն տղան չէր կարծես, յուսալքուած, ջղազրզիւ, անհոգ երիտասարդը, որ կեանքին կը նայէր մոռալ օրերու տրամութեան մէջէն: Այդ ակնարկին տակ, անմիջապէս պայծառացաւ նաև կօշիկի գործարանը եւ ինչ որ մնացած էր նախկին տրամադրութեան մութ ստուերներէն, հետզհետէ փարատեցան, քրուեցան յանկարծ եւ խանդավառութեամբ հնչեցին անոր քայլերը: Այդպէս է որ գրասենեակէ գրասենեակ երկարող վազքը ստացաւ բոլորովին տարբեր նշանակութիւն եւ Պետրոս սկսաւ անհրաժեշտ հրահանգները տալ, գործին վարժ ձեւով:

Պետրոսին կրած այս փոփոխութիւնը աննկատ չմընաց սակայն: Վերակացուներէն զատ, անբըլ Մարթին ալ, յափշտակուած կը դիտէր անոր մէջ եռացող այս նոր աշխուժութիւնը եւ նոյնիսկ կը հրճուէր՝ եղբօր տղուն մէջ տեսնելով գործի ու առեւտուրի ճարպիկ մարդը: «Վերջապէս ինձի քաշած է», կ'ըսէր մտովի ու կը գոհանար, սեւ կատուին հետ մտերմանալով:

— Անքըլ, ես կ'երթամ կոր կաշիի վաճառականը տեսնելու . . . ես կ'երթամ կոր կօշիկի վաճառականը քննելու . . . ես կ'երթամ, դուն ուշադիր եղի՛ր, եղի՛ր, եղի՛ր . . . : Ու դարձան, դարձան գլանները, անիւները, տափակցաւ կաշին, դունազարդուեցաւ կաշին, կերպարանափոխուեցաւ կաշին, ծօ՛, աւանակ ուշադրութիւնըրէ, կը մսխես կոր ցէ, վազեց, անընդհատ, առանց կանդ առնելու վազեց Պետրոս, եւ մոռցաւ սովորական հաճոյքները, հանգիստը, սնունդը . . .

— Պետրոս, շատ կը յոգնիս կոր, քիչ մը դանդաղէ, աղաչեց Արփիկ:

Եւ այդ վազքին մէջ աւելի մօտէն ծանօթացաւ Արփիկին, անոր մօր, եղբօր, ու անոնց մէջ գտաւ կորուած տունը, տաք ու գորովոտ սիրտ մը, իր մայրը, իր հայրը, զոր ճանչնալու պատեհութիւնը չէր ունեցած, անոր համար ալ փարեցաւ անոնց, հոգեւին, ամբողջութեամբ: Սիրեց Արփիկը, շատ սիրեց զայն:

Երեկոները տուն վերադարձին բացաւ պատուհանը ու խօսեցաւ մօրը հետ, հօրը հետ, սիրելիներուն հետ ու լուրթեան մէջ թաղուեցաւ ծրագիրներու կոյտին տակ: Շինեց ու քանդեց, ու գրեց մօրը, սիրեց ու լացաւ, ու գրեց մօրը, տառապեցաւ, ցաւեցաւ սիրտը, ու պատմեց մօրը: Գէշ օրերուն Արփիկը օգնութեան կանչեց, բայց անոր փոխարէն տեսաւ մօրը պատկերը, անոր սիրտը: Արփիկը փնտռեց մութ ու լալկան դիշերներով եւ հանդիպեցաւ մօրը նայուածքին ու նետուեցաւ դուրս, գինովցաւ, շատ գէշ կերպով գինովցաւ ու կանչեց Արփիկը: Յետոյ նստեցուց զայն իր ծունկերուն քով, ու անոր պատմեց կեանքի դժնդակ ելեւէջներուն մասին, եւ երբ պատուհանին վրայ անձրեւը փչրուեցաւ մեծ կաթիլներով, երբոր հովը սկսաւ պայքարիլ դոց փեղկերուն հետ, այն ատեն Պետրոս ծունկի եկաւ յուրումին մէջ ու դողդոջ մատներով երկինք նայեցաւ:

Եւ այսպէս է որ Պետրոս կատարելապէս տիրացաւ իր արհեստին, դործին, ու բողոքովին մոռցաւ Նինան: Յիշատակ մըն էր ալ ան հիմա, սպի մը, կնճռոտ ճակատի մը վրայ:

Եւ սահող ամիսներուն հետ, տարին մեծցաւ, հասունցաւ եւ յանկարծ ինկաւ իր ճիւղէն, ու տակնուվրայ ըրաւ քաղաքը: Մարքէթ փողոցը շուտով վերածուեցաւ տօնազգեստուած դեղուհիի մը, եւ վաճառատուներու փեղկերը ճոխացան, յորդեցան մէկէն: Երեկոյեան բազմութեան մէջէն կը քալէին անոնք, կողք կողքի, ապշահար: Կը դնէր Պետրոս, շալթօրէն, առանց տատամտումի, առանց վարանումի: Այս ալ, հատ մըն ալ, վերջապէս, վերջապէս... այսպէս, դնեցին, աւելիով դնեցին ու բեռնաւորուեցան նուէրներու ծրարներուն տակ: Երբ պատրաստուեցան դուրս ելլել ամբոխէն ու հասնիլ ինքնաշարժին, այն ատեն անձրեւը սկսաւ, մեղմ, տխուր անձրեւը այս քաղաքին, որ հրաւէրի բնաւ չի սպասեր: Տեղացիները վարժուած են ալ այս խենթ կլիմային, անոր խաղերուն, ու այդ պատճառաւ ալ միշտ պատրաստ են զայն յուսախար ընելու... Բայց նորեկներուն պատուհասն է ան, այսինքն՝ կլիման: Եւ հիմա, թրջուած են անոնք, երկուքով, ինքնաշարժ չհասած: Բայց երբոր տեղաւորուեցան առջևի աթոռին վրայ, այն ատեն շունչ մը առաւ Պետրոս ու սկսաւ խօսիլ.

— Գիտես Արփիկ, բաղձաթիւ բաներ պիտի պատահին այս նոր տարուան ընթացքին, նախ որ... Թոյլ տուր որ խօսիմ, կատակ ընելու ժամանակը չէ... այո՛, նախ պիտի ամուսնանանք, շիկնելու պէտք չկայ, ամէն մարդ կ'ամուսնանայ... քանի մը ամիսէն այլեւս պէտք է ձգես դործը... կ'ուզեմ որ տուն կենաս ու սպասես անոր... օ՛, ինչեր, ի՞նչեր պիտի ընենք մեր զաւակներուն համար, այո, անոնք պիտի ունենան այն բոլոր

բաները զորս եւ չունեցայ, զորս եւ միայն երազեցի, երազեցի, երազեցի...

Արփիկ կծկուեցաւ տղուն կողքին ու լուռ մտաց, յետոյ աւելի սեղմուեցաւ, աւելի մօտեցաւ Պետրոսին, ըսել ուզելով որ տակաւին կանուխ է նման ծրարներ երկուքս համար, բաւ է որ մենք երջանիկ ենք, երջանիկ ենք այսպէս, ինչ կ'ուզես ասկէ աւելի, տակաւին ինչ կ'ուզես, խենթուկ...

Բլուրն ի վեր կը մագլցէր ինքնաշարժը, մինչ բլուրն ի վար կը հոսէր ջուրը, անձրեւը ու սղպջալով, կարկաչելով կը հաւաքուէր փոսերու մէջ ու կը լճանար: Այդպէս է նաեւ մեր կեանքը, կ'ըսէր Արփիկ, հեւիհեւ մաքառելէ ետք, օր մը պիտի դայ որ հասած պիտի ըլլանք մեր նպատակին, մեր երազին ու կարկաչենք, զուարթանանք ու խայտանք նորէն, այո, թէեւ պիտի մոռնանք տառապալից օրերը, բայց երբեք, երբեք թոյլ պիտի չտանք որ լճանայ մեր կեանքը, այն կեանքը որուն ձգտեցանք մեր ամբողջ ուժովը, մեր ամբողջ սէրով: Խորհրդածութիւններու հոսանքէն քշուած հասան Պետրոսին յարկարաժինը ու ինքնաշարժէն իջնելով սկսան վազել: Երբոր ներս մտան ու ծրարները նետեցին դորդերուն վրայ, այն ատեն շնչահեղձ ինկան տիւանին դիրկը: Պահ մը մնացին այդպէս, մինչեւ որ հովը դրօշակներ պարզեց վարագոյրներով ու լոյսը ծփաց անոր խաղերով: Յետոյ շտկուեցան իրենց դիրքերուն մէջ եւ Պետրոս նամակները վերցուց սեղանին վրայէն ու սկսաւ հետեւիլ այդ հասցէներուն, բայց երբ պահարաններէն մէկուն վրայ հօրեղբօր անունը նշմարեց, անմիջապէս բացաւ զայն ու սկսաւ կարդալ.

«Սիրելի Պետրոս,

«Ձէի կրնար քեզի անձնապէս խօսիլ այս նիւթի մա-

սին, չէի ուզեր նոյնիսկ զրել այս նամակը, այդ պատճառաւ ալ մինչեւ այսօր յետաձգեցի դայն, որպէսզի չստիպուիմ զիս կրծող ցաւին մասնակից ընել քեզ, բացատրել քեզի այն տառապանքը, որուն մէջ ինկած եմ տարիներէ ի վեր:

«Գիտեմ որ շատ յաճախ սէրը կարելի չէ գնել, եւ ատոր համոզուած ըլլալու համար է որ շայպանեցի քեզ, երբ վերջին անգամ շատ խիստ վէճ մը ունեցար նինային հետ, եւ կապերդ խզեցիր մեր ընտանիքէն: Կը զգամ որ չկրցար սիրել զինք, եւ ստիպուած ալ չէիր նման բան մը ընելու, սակայն մայր ու աղջիկ կը յուսային դէթ դրամով կուրցնել, չլացնել քեզ:

«Պէտք է խոստովանիմ որ քեզ հոս բերել ուզողները զլխաւորաբար իրենք էին, եւ միայն այդ նպատակաւ, եւ մինչեւ վերջին վայրկեան չէզոք մնացի, բայց երբոր տեսայ զործին հանդէպ քու բռնած առողջ դիրքդ, պաշտպանեցի ալ քեզ, բայց անօգուտ, դուն տակաւին ոչինչ տեսար անոնց մէջ, եւ ուրախ եմ որ այդպէս ալ եղաւ, որովհետեւ շատ հաճելի չէ ականատես ըլլալ այդ տղեղութիւններուն: Իրենց մէջ կուտակուած կիրքը յազեցնելու համար ամէն միջոցի կը դիմեն անոնք, ամէն դայթակողութիւն յանձն առնելով: Գիտեմ որ մարդ իր ընտանիքին մասին այս ձեւով պէտք չէ արտայայտուի, սակայն եթէ դուն տեղեակ ըլլաս անոնց ձեռքէն քաշածներուս, այն ատեն թերեւս կ'ըմբռնես կացութիւնս... Կ'ուզեն որ այսուհետեւ չզործես զործարանը...: Ներէ ինձի Պետրոս, գիտեմ որ դուն պիտի յաջողիս ինչ զործի որ ալ ձեռնարկես, ատոր վստահ եմ ալ յաջողութիւն քեզի...»

«Անբըլըդ Մարթին»

Նամակը գրուած էր անգլերէն, բայց ստորագրուած

էր հայերէն: Մտածուած, զգացուած էր օտարերէն, բայց շարադրուած էր հայերէն:

Ժպիտը տարօրինակ խաղեր տուաւ այդ ամպոտած աչքերուն, յետոյ փոքր ծալքերով բերնէն բարձրացաւ ու ծաւալեցաւ ամբողջ դէմքին վրայ: Երեք դոյներ փոխեցին այդ տփուռնած այտերը, մինչեւ որ խնդուքը ժայթքեց կոկորդէն ու երիտասարդը արցունքները սըրբելով պոռաց յանկարծ:

— Արփիկ, Արփիկ, սա ուխտքիին շիշը հոս բեր, որ լաւ օրերու կենացը խմենք...

Պոստոն, 1961

Handwritten text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page. The text is dense and covers most of the page area.

Handwritten text in Armenian script, continuing from the previous section. The handwriting is consistent with the first section.

Handwritten text at the bottom of the page, possibly a signature or a concluding statement.



ՀԱՄԱՐՆԱԹ ԶԱՄԲՈՐԴ

Handwritten text in Armenian script, likely bleed-through from the reverse side of the page. The text is dense and covers most of the page area.

ԳԴՂՈՎՍԱՆ ՃԱՂՄՐԱՅ

1

ՓԱՅՏԱՇԷՆ տուն մը ըլլալուն, ժամանակին
գործած աւերը աւելի զգալի է անոր կո-
ղերուն վրայ, ուր բացուած ճեղքերը երբեմն տանիք
կը հասնին՝ կանոնաւոր շրջան մը ընկելով պատուհանին
շուրջ: Այդ ճեղքերէն զատ, գիծեր կան անհամար, կէ-
տէ մը սկսող եւ ճառագայթներու պէս արձակուած ե-
րկղներ՝ որոնք հինցած, չորցած ներկին մէջ աղօսներ
կը փորեն արեւին հրամանով, անոր արտօնութեամբ:

Այս բոլորը բաւարար չըլլալին կարծես տունին
լքուածութիւնը ապացուցանելու համար, եւ ահա,
հովն է որ աղատօրէն կը մտնէ բաց պատուհանէն ներս
եւ առադաստներ կը շինէ ղեղնած, ճմրթկուած վարա-
գոյրներով: Հակառակ հովին սարքած խենթ խաղե-
րուն, նաւարկելու, տեղէն շարժելու ոչ մէկ տրամա-
դրութիւն ցոյց կու տար տունը, մինչեւ որ վրայ հա-
սաւ շոյեկառքը՝ հիմէն ցնցելով զայն: Կարճ բայց
խլացնող այդ սոյլը փողոցին լաճերը սթափեցուց յան-
կարծ, հողակոյտերը զարմանքի մատնելով: Շուները
կատղեցնելով:

Սովորական թաղամաս մըն է այս մէկը, թէեւ քիչ մը մեկուսացած է հիմա, քաղաքին եւ իր միջեւ երկարող երկաթուղադիժին պատճառով: Երկաթուղադիժին գործած այս ամօթը հին պատմութիւն է անշուշտ, բայց մեկուսացումին պատճառները պէտք է փնտուել նորութիւններու մէջ: Այդքան յարգուած, պատկառելի նկատուած այս շրջանը, որ մը յանկարծ կորսնցուց իր կարեւորութիւնը՝ բարեկեցիկ դասակարգին կողմէ բնակութեան անյարմար հռչակուելով: Անշուշտ, այդքան հապճեպով տրուած չէր այդ որոշումը, բայց պատուականներ կան որոնց իմաստը ենթադրութիւններու մէջ կորսուած է ալ:

Տարիներ առաջ, երբ աղքատ էր տակաւին, եւ մարդիկ՝ բծախնդիր ըլլալու անկարող գրեթէ, բնականաբար այս թաղամասը նախամեծար կը սեպուէր իր դիրքին շնորհիւ: Որովհետեւ հոն գտնուող գործարաններու ցանցէն է որ կը սկսէին դէպի ապագայ երկարող բոլոր նայուածքները: Ժամանակի ընթացքին, երբ քաղաքը հարստացաւ մարդոց հետ, արտագաղթը նոր ուղղութիւններ առաւ մեծցող փափաքներէ, եւ կազմուող թաղամասները վերջնական սահմաններ քաշեցին դասակարգերու միջեւ:

Դուն հոն մնացիր սակայն, քանի որ դասակարգի խտրութիւնը նշանակութիւն մը չունէր քեզի համար, երբոր երախտագիտութեան զգացումը քեզ կը կապէր սեւցած, անճաշակ, սա հին շէնքերուն, որոնք զօրանոցի տպաւորութիւն ձգած էին վրագ, առաջին հանդիպումին: Ատիկա այդպէս ըլլալով հանդերձ, դուն տակաւին ունէիր տարբեր բացատրութիւններ՝ արդարացնելու համար քու այդ անփութութիւնդ: «Անփութութեան չես կրնար վերագրել իմ դիրքս, դուն ատիկա չես կրնար ընել իշտէ», ըսաւ նշան խորհրդածութիւններուն մէջէն, եւ ինքնիրեն պատասխաններ որոնց ա-

պացուցանելու համար թէ՛ զգացումներ կան, զգացում ալ կայ. եւ թէ իր ունեցած մտերմութիւնը սա տունին հետ, ուրի՛շ բան է: Անբացատրելի: Մտերմաբար արտասանուած այս խօսքերը անջատուեցան անմիջապէս որ փոթորիկը վտանգի մը ազդանշանը տուաւ՝ ջղազրդիւ մատնելով շրջապատը յուղելով: Յուզուելու տրամադիր չէր նշան, որովհետեւ արդէն խռոված էր հոգին եւ շուարումէն ինչ ընելը չէր դիտեր:

Յետոյ, երբ ծառերու աղմուկը կարճ դադար մը առաւ հովին ուղղութեանն օգտուելով, այն ատեն շարժեցաւ նշան, ու խռոված հոգին առնելով նստեցաւ բազկաթոռին մէջ: Հակառակ կնճիռներուն, դէմքը հանդարտ էր. սովորականէն ալ աւելի: Եթէ մտածումին տեղեակ չըլլայիր դուն, հաւանաբար, սարսափած տեղէն պիտի ցատկէիր բազկերակը քննելու համար: Քանի մտածումներու մէջ թաղուած էր ան, պէտք չունէր միկանները գործածելու: Մտածումներու կողքին, սենեակին ճիշդ կեդրոնը դրուած էր խոշոր պայուսակ մը, կիսովին բաց: Ծամբորդութիւն մը հաւանական կը դառնար այս պարագային: Այդքանը յստակ էր. բացորոշ: Բայց պղտոր բան մը կը նշմարուէր այս բոլորին մէջ, քանի որ նշան ա՛լ չէր կրնար պահել պաղարիւնութիւնը եւ շրթները կը շարժէր ներքին յուզումին ճամբայ բանալով: Քանի նստած կը մնար հոն, այնքան աւելի մտահոգիչ կը դառնար կացութիւնը. սպացոյց որ արեւը անյոյս պայքար մը կը մղէր ամպերուն դէմ, եւ առիթէն օգտուելով խոժոռ նայուածքը կը սեւեռէր գորշ տանիքներու վրայ. եւ ի վերջոյ, վրէժը կը լուծէր ծառերէն: Գունաթափ, այդ ծառերն են որ կը սթափին յանկարծ, որովհետեւ հովը դարձեալ կ'անցնի անոնց մէջէն, ծիծաղաշարժ, մանկունակ խաղեր սարքելով մայթերուն վրայ:

Սալաքարերէն մեկնող անմեղ այդ խաղն է որ քա-

նի մը շրջան կ'ընէ հողակոյտերու շուրջ եւ կը վազէ նպատակին ետեւէն: Նպատակը տախտակէ փեղկ մը ըլլալուն, ահա անկէ կախուած՝ կը ճօճուի, երբեմն շառաչուն ապտակի մը ձայնը հանելով եւ երբեմն ալ Նշանին ծոծրակը քերուրտելով: Հոյն ալ ունէր զըւարճանալու իր կերպը: Բայց յանցաւորը պատուհանն էր անպայման:

Ահա, այդ պատուհանին տակէն է որ ինքնաշարժեր կը սուրան հիմա, եւ փոխանակուող համբոյրներու հետ զործաւորներ կը նետուին բաց դռներու քմայքին: Առաւօտը ճամբայ ելած է արդէն, եւ մօտակայ դործարաններէն բարձրացող գղրգոցը կենդանութիւն կու տայ փողոցներուն, ոստում մը ընելով Նշանին վրայէն:

Չափազանց դրազած ըլլալուն, Նշան կարեւորութիւն չէր ընծայեր իր շուրջ պայթող աղմուկին, եւ կացութեան հետ հաշտուած մարդու իր դիրքէն մագ մը իսկ պիտի չփոխէր, եթէ չըլլար սա փեղկը, որուն միօրինակ ճօնչը ալ ջիղերուն կը դպէր: «Ջիղերս թունդ կ'ելլեն կոր», ըսաւ ցած ձայնով, եւ մտածումներէն ձերբազատուած մարդու հանդարտութեամբ ոտքի ելաւ որոշումը տալէ ետք: Երբոր կանգնեցաւ հայելիին առջեւ, ճիչ մը պիտի արձակէր եթէ վերադառած չըլլար քաջութիւնը: Եւ այդ ինքնալստահութեամբ ալ, դանկին վրայ ըմբոստացած մազի թելերը փակցուց մորթին եւ թոյլ տուաւ որ շրթունքները ճերմակ դիժ մը քաշեն քիթին տակ: Ափերովը շտկրտեց դէմքի կնճիռները եւ անստուգութեան խոռվքը սրբեց ապակիին մէջ, ձեռքի լաթով. եւ ժպտեցաւ: Գոհունակութիւն մը կար այդ ժպտին մէջ:

Թէեւ քիչ մը ուշ, սակայն վերջապէս հասած էր տօնազդեստուած օրը: Առանձնութեան պատեանը պիտի պատուէր առանց վարանումի, առանց ընկրկումի,

նոյնիսկ առանց մտածելու հետեւանքներուն մասին: Այո՛, անշուշտ որ իրաւունք ունէին իր բարեկամները. անոնք ունէին նաեւ կին, զաւակներ, տաղտուկներ. սակայն առանց այդ բոլորին կարելի չէր ապրուածը կեանք կոչել: Ինչ որ իրը եղած էր՝ նման էր անպարփակ պարզութեան, խաբկանքի, հեղնանքի, կեղծ էր իր ժպտը, առամներուն նման. դատարկ էին օրերը, սենեակներուն նման. հետեւաբար, պէտք էր լեցնել պարապութիւնները: Յետոյ քանի մը քայլ առաւ այդ պարապին մէջ, եւ շարունակեց: Անշուշտ տակաւին ուշ չէր. ուշ չէ՛ր կրնար ըլլալ ինք: Եւ անապարանքով, հեւ ի հեւ սկսաւ պատրաստուիլ. նախ մտածումը եւ ապա՝ հազուստները տեղաւորեց ճիշդ հոն, սեղանին կից ու դմայլեցաւ երկուքին ալ յարմարութեան վրայ: Շատ երկար շտեւեց այս խանդավառութիւնը սակայն: Որովհետեւ հովը եկաւ ու տապալեց նարնջենին: Մեռնող ծառին հետ, Նշան յանկարծ կորսնցուց վերադառած համարձակութիւնը եւ դարձաւ պատուհանին:

Դարձա՛ւ, դարձա՛ւ սենեակին մէջ ու անճրկած դիտեց սեղանը, անոր վրայ զետեղուած ժամացոյցը եւ ուղեց պոռալ, ըսել թէ՛ կեղծ էին ըրածները, արուեստական էր իր զուարթութիւնը, ժպտը, պատրաստութիւնը, թէ ինք տեղ չունէր երթալիք՝ հասած ըլլալով ճամբու մը վախճանին, չորս պատերու խորհուրդին, ու ալ ազատում չունէր, պիտի խեղդուէր. յիսուն տարիներու բեռին տակ մէջքը յանկարծ տեղի պիտի տար ու կքէր: Կքած էր արդէն ինք, տարիներ առաջ, պատերազմի դաշտին վրայ փամփուշտի մը զինով ծախելով իր առնականութիւնը, իր կենսունակութիւնը, ապրելու իրաւունքը: Եւ հիմա, տարիներ ետք չէր կրնար կեղծել, դիմակ անցընել աչքերուն, յուսահատութեան առջեւ. իր կեանքը սահմանափակուած

էր սա քաղաքին Ծուլթըն փողոցով. այդ էր իր ամբողջ հարստութիւնը, իրաւ որ արդար երջանկութիւնը. ուրիշ թոխիչ չէր ճանչնար իր մտածումը. գործարան ու դրամատուն, այս երկու շէնքերուն մէջ է որ քամած էր իր երիտասարդութիւնը...

Անորը եղած էր կեանք մը առանց ելեւէջի: Միօրինակ, միապաղաղ կեանք մը՝ բոլորին նման, բայց հիմնովին տարբեր անոնցմէ: Քսանական թուականներուն, գաղթականներու հսկայ խումբով մը ետին ձգած էր օտար ափ մը, եւ հաստատուած հոս, կարմիր Ֆէսը փոխարինելով եւրոպական գլխարկով մը, որ բնաւ պատշաճած չէր իրեն: «Օտարութիւնը, օտարութիւն է, եւ օտարութեան աղէկը չ'ըլլար», խորհրդածած էր մտերմութեան մէջ, ինքն իրեն, եւ նետուած՝ գործարանէ մը ներս: Յետոյ, հետզհետէ սորված էր տեղական լեզուն, իրեն պէտք եղածին չափ, եւ փորձած էր բաժնուիլ անցեալէն, այրող գիւղին յիշատակը ջնջելով մտածումէն: Յիշատակներէն ձերբազատուիլը դժուար չէր եղած թէեւ, բայց հին օրերու հետքերը դրոշմուած էին անոր վրայ, ճիշդ այնպէս, ինչպէս ամերիկեան կնիքը արտօնագրին վրայ: Օտար էր, եւ օտար պիտի մնար: Սաղաղ այս կեանքն ալ երկար չէր տեւած սակայն: Վրայ հասած էր մեծ պատերազմը եւ զինք նետած Եւրոպա, կրակներու բերանը: Յետոյ, պատահած էր ճակատագրին վրայ արձանագրուածը՝ զինք յանձնելով հիւանդանոցի մը գուլթին: Մահուան հետ հաշտուած գաղթական հայը՝ յամառ պայքար մը մղած էր անոր դէմ, եւ ի վերջոյ յաղթած ալ էր անոր, խոշոր փրկագին մը տալէ ետք: «Կը ցաւիմ, ըսած էր բժիշկը, բայց փամփուշտը կէս մարդու վերածեց քեզ՝ առնականութիւնը խլելով, կը ցաւիմ, շա՛տ կը ցաւիմ Նշան», աւելցուցած էր ազնուասիրտ այդ մարդը, ձեռ-

քը դնելով ուսին վրայ, եւ անունը արտասանելով հայու մը առողանութեամբ:

Արժանապատուութեան տէր անձ մը ըլլալուն, այս գաղանիքը ամուր մը ծրարած էր Նշան եւ թաղած հողիին անհասելի մէկ անկիւնը: Հոնկէ դուրս հանելու նպատակ չունէր զայն բնաւ, եթէ չմիջամտէին սա բարեկամները՝ ամուսնութեան խնդիր մը մէջտեղ նետելով: Տարիներու ընթացքին ինք հաշտուած էր դադարին հետ, եւ ալ հեռուէն կը դիտէր բազմացող ընտանիքները իր շուրջ, երբեմն միայն բարկութիւնը հանելով թաւուի քարէն, որ ուզածին պէս չէր շարժեր՝ ջղազրդիւ մատները պատրուակ բռնելով: Չէ՛, նախանձի նշաններ չէր տեսած բարեկամներուն մէջ. «Նախանձելի ի՛նչ ունիմ դրամէս գատ», ըսելով: Մի նայիր որ վերջիշումի այս փորձը զգայազիրկ կ'ընէ Նշանը հիմա, բայց ընդհանրապէս անցեալի մասին մտածող մը չէ եղած ան: «Գետին անցնելիք անցեալ, ի՛նչ խաղեր խաղացիր գլխուս», հառաչեց մենակեաց մարդը եւ ոտքի ելաւ՝ բաց պատուհանը կեռին վրայ ամբացնելու համար: Պատուհանը փակեց, բայց դուռը զարնուեցաւ յանկարծ ու ներս մտան անոնք երեքով: Չուարթութիւնը անմիջապէս փոխուեցաւ զարմանքի եւ հարցական նայուածքներ վերէն վար չափեցին Նշանը: Չէ՛, դիմանալիք չէր պատահածը. ի՛րապէս խենթանալիք էր այս մարդուն ըրածը:

— Ծօ՛ Նշան, իրապէս խենթանալիք է այս ըրածդ. տակաւին պատրաստուած չե՛ս, պիտի հերիք... այս ըրածդ վայելե՞ց քեզի:

Վայելէ կամ ոչ, տեղէն շարժելու նպատակ չունէր Նշան: Եւ սպացուցանելու համար որ իր որոշումը վերջնական էր, թէ աւելորդ խօսքերով կարելի պիտի չըլլար համոզել զինք, սենեակին ճիշդ կեդրոնը եկաւ ան, եւ դոց պայուսակին վրայ դամելով վրիժառու

նայուածքը, մարտահրաւէր կարգաց բարեկամներուն.

— Խենթ մի ըլլար Նշան, սերք գլուխ մի ըլլար Նշան, ըրածդ չոնուխուրիւն է, դուն չոնուխ չես. խօսք տուինք, ըսինք որ կու գաս կոր, այս կարգադրութիւնը լաւ է քեզի համար, առանձնութիւնը կը փճացնէ կոր քեզի: Ըսին, խօսեցան ու խրատեցին բարեկամները:

— Ո՛չ, ես կին չեմ ուզեր, յիսունէն ետք ես կին չեմ ուզեր. դուք ի՞նչ գիտէք իմ մասիս, իմ ցաւերուս, տառապանքներուս մասին...

— Յիւանի պէս աղջիկ է, Նշան. գրեցինք մօրը, գրեցինք հօրը, խօսք տուինք, խօսք առինք, մեզ ամօթով պիտի չձգես Նշան. Պէյրուսթ ըսածդ Յրէզնոյէն քսանչորս ժամ հեռու է. երթալդ գալդ չես իմանար, բայց այս առանձնութիւնը պիտի փճացնէ քեզ... Ըսին բարեկամները ու ոտքի ելան դայրացած:

— Իմ ցաւերո՛ւս, իմ տառապանքներո՛ւս մասին դուք բան չէք գիտեր...

— Գետինն անցնի քու ցաւդ ալ տառապանքդ ալ, պիրէ հերիք, կին մը առ նետէ սա պարապ տունին մէջ, այն ատեն ժամանակ չես ունենար նէ՛ ցաւդ, նէ ալ տառապանքդ որոճալու. համբերութիւն ըսինք, ան ալ հատաւ, ի՞նչ կ'ուզես ընել այս սենեակին մէջ, օր մըն ալ քափ տէյի իյնալ ու մեռնի՞լ, չոնուխ չես Նշան, բայց ըրածդ չոնուխուրիւն է, պոթիկաց Առաքել:

— Դուք ի՞նչ գիտէք...

— Մենք բան չենք գիտեր, բայց սաքանը գիտենք որ ունիս աղուոր տուն մը, կոկիկ դումար մը դրամատան մէջ, եւ յիսուն տարիներ ուտերուդ վրայ. վաղը կը մեռնիս, կառավարութիւնը կ'առնէ ունեցածդ, գոնէ հայ աղջիկ մը առ ու զայն երջանկացուր, ի՞նչ տէրտ կրնայ ունենալ քեզի պէս մարդ մը. ամէն բանդ տեղն է, պակսողը կին մըն է, կի՞ն...

Անոնք իրապէս չկրցան հասկնալ թէ պակսողը իրապէս ինչ էր Նշանին համար, իսկ տառապանքին տէր մարդը չուզեց քայլ մը առնել հոգիին մութ ու տամուկ անկիւնը, եւ յամառեցաւ, յիմարացաւ, տարօրինակ դիմակներ անցուց դէմքին վրայ ու խափխայտառակ երեւոյթ մը ստացաւ յետմիջօրէի արեւին դիմաց:

Հովը ուղղութիւնը փոխեց փորձութեան մատնելով բարեկամները: Խաչատուր նայեցաւ Փանոսին, ու Փանոս օգնութեան կանչեց Առաքելը որ անընդհատ կը քալէր սենեակին մէջ: Յետոյ սակայն, զայրոյթն է որ ճամբայ ելաւ եւ իր ափերուն մէջ առաւ երեքը. ահագին աղմուկով սեղանը տապալեցաւ բռունցքներու տակ. այդ սեղանին վրայ էին տակաւին օսլայուած շապիկը, փայլուն կօշիկներն ու մտածումը Նշանին: Քանի անոնք դարձան չորս մատերու երկայնքին, այնքան աւելի սաստկացաւ փոթորիկը եւ զգետնեց ընկուզենին. աղմկալից, շոնդալից այդ անկումը զգաստացուց Նշանը, որ այդ պահուն նայուածք կտրած կը դիտէր շապիկն ու կօշիկը, եւ մանաւանդ անոնց միջեւ բացուած փոսը, որ զինք հեռուները կը տանէր:

Կատարուած այս փոփոխութենէն անմիջապէս խրախուսուած, քաջալերուած, Առաքել բերանը բացաւ ըսելու համար թէ՛ ժամանակը հասած էր գործելու, սակայն կեղծ տոմսները դաւաճանեցին ու անմնաց անճրկած. կոկորդէն վար սահեցուց նախադասութիւնը, եւ կիսկատար այդ տողը վերջապէս ամբողջացաւ Խաչատուրին նայուածքին մէջ. Փանոս օսլայուած շապիկին հետ մտերմացաւ ձեռքի զգուանքներով, թախանձանքով մը, որ Նշանը ոտքերուն վրայ դրաւ յուսահատական ճիչէ մը ետք:

— Օղակայանը շատ հեռու չէ, ըսաւ Առաքել, առտամնաչարը հաստատելով լինտերուն վրայ:

— Պէջրութի ըսածդ քարընկէց մը հեռու է այս օրերուն, շէշտեց Սաչատուր, նայուածքէն վար առնելով մտածումը:

— Բայց Ֆուլթըն փողոցը, Ֆուլթըն փողոցը Ֆրէզնոյին, որուն ծայրամասին կը բացուի պահածոներու դործարանը, իսկ վերջամասին՝ դրամատունը... կմկմաց Նշան ու հազաւ փայլած կօշիկները, որոնց մէջ սարդ մը ճանճի որսորդութիւն կ'ընէր անտեղեակ՝ մատուցուող պատարագին:

Ոստումներ կան որոնք կեանք մը կը կերտեն թուանշական կարգապահութեամբ. ոստումներ կան, որոնք փայլող աստղ մը մարելու կը ծառայեն խարդախութեամբ, իսկ տակաւին կան բացարձակ, ճշմարիտ, անհեթեթ ոստումներ՝ որոնք ո՛չ այս կ'ընեն, եւ ոչ ալ այդ, այլ կը մնան օդին մէջ, դետին չհասած:

Եւ օդին մէջ է Նշան այս պահուն:

2

Տիրող լուծենէն այլայլած, իր տիրոջ եւ միջավայրին մտերմանալ փորձող շնիկի մը հետաքրքրութեամբ դիտեց շուրջ: Ծամբորդութեան յովնութենէն սպառած, բաժանումի եւ ամուսնութեան յուզումներէն ցնցուած՝ Վարդուհի ինքզինք յանձնեց կազդուրիչ այս լուծեան քմայքներուն եւ թոյլ տուաւ որ պատրանախար իր հոգին օրօրուի՝ անստուգութեան թեւերով:

Ննջարանին դուռը կը բացուէր հիւրանոցի քովնտի պատին վրայ, որուն կից կը կանգնէր խոհանոցը ճաշարանի բաժանմունքով. անկանոն ու ազտոտ էին անոնք, սակայն կար սա պատուհանը որ կը նայէր նեղ

փողոցին, փողոցն ալ երկայրկանի շէնքի մը՝ որուն հասակին շարուած էին պատուհաններ երանգաւոր վարագոյրներով, իւրաքանչիւրը՝ խօսուն պատմութիւնը վարձակալի մը:

Այնքան արագ ու անակնկալօրէն պատահած էին զէպքերը որ Վարդուհի ժամանակ չէր ունեցած դաստորելու, քննելու, ուսումնասիրելու, յետոյ մտերմանալու անոնց հետ, Նշանին հետ:

Գեղեցիկ եղած ըլլալու էր սա պարտէզը որ այդ պահուն, սակայն, թափթփած կնիկի մը կը նմանէր. նարնջներին ամբողջ հասակով տապալած էր հողին վերայ, իսկ ընկուզներին չորցած էր արդէն. ցանկապատի երկայնքին վայրի խոտեր համարձակութեամբ իրենց իշխանութիւնը կը յայտարարէին, մինչ զօսոտ ծաղկեթուփեր պարտուած՝ գլուխներն թաղած էին փոշիի մէջ: Ջուրի խողովակին վրայ անտէր մեղու մը իր պսպակը կը յագեցնէր, մինչ զոյգ մը անգոյն թիթեռնիկներ զիրար կը հալածէին, յետին նպատակով: Վարդուհի չուզեց տեսնել այս բոլորը, սակայն չկրցաւ անոնց քովէն անտարբերութեամբ անցնիլ, մանաւանդ որ հիմա թիթեռնիկները միացած էին իրարու եւ կ'ուրանային երրորդի մը անհաճելի ներկայութիւնը:

Կանդ առաւ ճիշդ հոն, այսինքն՝ պարտէզին կեդրոնը, ուր քայքայուած նարնջներին վերջին համբոյրը կու տար չորնալու դատապարտուած ծիլերուն, մինչ թիթեռնիկներէն մին՝ անկենդան ինկած էր սմբած նարինջի մը քով:

Ֆուլթըն փողոցի վրայէն ինքնաշարժերու անընդհատ վազըը շրջապատին միօրինակութիւնը կը խզէր, մինչ ամբողջ քաղաքը ամառնային հոգեվարքը կ'ապրէր այդիներու խնդութեան տակ:

Նոյն խանդավառութեամբ ալ, երեկոյեան եկան

հիւրերը. շիշերը բացուեցան բերաններու հետ եւ բա-
ժակները զարնուեցան իրարու:

— Վե՛րջապէս կեանքիդ մէջ գեղեցիկ գործ մը
տեսար, բացականչեց Փանոս:

— Կ'ըսէինք բայց չէիր հաւատար, յամառութեա-
նըդ ուժ կու տայիր, հիմա ամէն ինչ վերջացաւ, ծօ'
վերջացա՞ւ կ'ըսես... ու խնդուքը քակուեցաւ:

Նախ նուէրները դրին սեղանին վրայ եւ աւելի ուշ,
հատ հատ բացին զանոնք ու ցուցադրութեան դրին
հարսին քով, Նշան խմեց ու կարմրեցաւ, Նշան խօսե-
ցաւ ու գլուխը տաքցուց, իսկ Վարդուհի անընդհատ
վազեց խոհանոց, անկէ հիւրանոց ու դռները իրարու
զարկաւ անփութօրէն:

— Եկուր վազ անցնինք սա Վարդուհիէն ու ըսենք՝
Ռոզ, քիչ մը նուրբ է, եւ թէ ալ կը յարմարի հարսին,
ըսաւ Սաչատուր:

— Ուրեմն, Ռոզին կենացը, ձեր բոլորին, Նշա-
նին, իշտէ այսպէս:

Ուրախութեան այդ զառիթափին վրայ առանց
շուարումի կանգ առին կիները. Սարբերզն ու Մարաշը
մրցակցութեան ելան, մինչ այդ, Այնթապ՝ համար-
ձակօրէն դինը կ'որոշէր նուէրներուն, եւ բարձրացան
բարձրացան խորտակելով բոլոր արգելքները. կա-
պանքները թուլցան ու մտածումները թռիչք առին ան-
հեթեթօրէն, ազմուկի այդ քառսին մէջ յանկարծ, կայ-
ծակի արագութեամբ Սարբերդցի կինը Առաքելին, ը-
սաւ թէ՛ այս կինը շատ երիտասարդ է Նշանին համար.
չէնք շնորհք տան աղջիկ մը կ'երեւի կոր. բայց երի-
տասարդ կու դայ կոր Նշանին համար. այս մտածու-
մը խոժոռեցուց անոր դէմքը, եւ կնճիռները կախուե-
ցան յամառօրէն. ծալլեց ձեռքերը ու երկարօրէն մը-
տածեց այդ մասին...

Բարի մաղթանքները իրարու հտեւէ մեկնեցան
պարպելէ ետք վերջին բաժակը, սրբելէ ետք վերջին
պնակը. առաստաղէն կախուած լոյսին տակ կանգնած
մնացին անոնք, Նշան յիսուն տարիներու ծանրու-
թեամբ, Ռոզ իր ակնկալութիւններուն առջեւ: Չուզե-
ցին խօսիլ, ըսել այն ինչ որ կուտակուած էր սիրտե-
րու վրայ. առաջին քայլը Նշան առաւ ու մարեց լոյսը,
յետոյ բացին ննջարանին դուռը դանդաղօրէն, առանց
ազմուկի, առանց շարժումի:

Նշան ուժասպառ, քայքայուած ինկաւ մահճակա-
լին վրայ, բարձր քաշեց գլուխին տակ ու ավերը դրաւ
բարձին վրայ:

Կանգնած մնաց հոն, անկողինի ոտքերուն կից,
լոյսին ու մթութեան առանցքին վրայ եւ ձեռքի հան-
դարտ շարժումով թուլցուց գօտին, եւ ուսերէն վար
սահեցուց հագուստը.

— Լոյսը մարե՞մ, հարցուց, սակայն տեղէն չու-
զեց շարժիլ. Նշան պատասխան չունէր տալիք, յոգ-
նած էր:

Հակառակ այդ միտին, Նշան նայուածք էր միայն:
Թափանցիկ, թեթեւ նայուածք մը որուն մէջ հետա-
քրքրութիւնը բաժին չունէր այլեւս: Թերեւս օր մը,
անցեալին մէջ, այդ բոլորէն հաճոյք կ'առնէիր դուն:
Սանկ, տարօրինակ, դաղջ զգայնութիւն մը կը սահէր
ողնայարէդ վար, ողնայարէդ վեր ու կը միանար սիր-
տիդ բարախումին ու խենթուկ բառեր կ'արտասանէր
սկանջիդ տակ: Չէ՛, դուն այդ բոլորին տեղեակ չես
հիմա, միայն յիշողութիւնդ է որ կ'անհանդատացնէ
քեզ՝ ծուռ ու յիմար դիժեր քաշելով երեւակայութեա-
նըդ վրայէն: Բայց ահա, ասոնք ուրիշ գիծեր են որոնք
կը սկսին վարէն, կրունկներէն ու կը բարձրանան քիչ
մը ազուրնալով լոյսին տակ ու կը կորսուին մութ ան-

կիւններու վրայ: Եւ հիմա՛, սուրացողը շոգեկառքն է, այդ հսկայ դազանը որ քեզ նետեց հոն, Եւրոպայի անճանաչելի լեռներուն վրայ ուր թնդանօթին բերնէն կրակը կը ժայթքէր լաւայի մը պոռթկումով: Ատկէ ետք, քանի՛ քանի՛ անգամներ անիծեցիր հայու սեւ ճակատագիրը, այն որ քեզի տրուած էր օրօրոցին մէջ որպէս նուէր, որպէս շղթայ: Քովդ տեսար դիակները հարիւրաւոր երիտասարդներու եւ նախանձեցար անոնց, նախանձեցար՝ այդ մահերուն մէջ նպատակ մը տեսնելով. բայց դուն նպատակ մը չունէիր կեանքին մէջ, քանի բղիկ բղիկ եղած էր քու պատմութիւնդ եւ հիմա, հաստատ հող մը չունիս ոտքիդ տակ: Ինչ որ մնացած էր անկէ, ահա ան ալ կը նետուէր կրակներու դուրբին: «Տօ՛, այս ի՛նչ սեւ երազ է տեսածս», ըսաւ Նշան ու արագօրէն սրբեց ճակտին վրայ կուտակուած քրտինքը: Բայց ինք լաւ գիտէր թէ երազ չէր տեսածը. երազ չէր կրնար ըլլալ, բնա՛ւ. որովհետեւ Վարդուհի կանդնած էր անկողինին մօտ եւ շուարումէն վերադարձող ձեռքերով՝ անընդհատ մերկ կուրծքերը կը ծածկէր:

Աղջիկը չէր կրնար ըմբռնել պատահածը, եւ անոր համար, մտածումին առագաստը ջուրը ձգելէ ետք կը հետեւէր ալիքներուն եւ անոնց հետ կ'օրօրուէր, կը բարձրանար՝ յանկարծ փչրուելու համար փոճկումի մը մէջ: Սաստիկ յուզուած ըլլալուն, հիմա կու լար՝ ամպոտած աչքերով դիտելով աւերակը որ հանդարտօրէն ու բոլորովին անզգայ տարածուած էր հոն, յուսահատական ճիչեր արձակելով: Որովհետեւ թանձր խաւարը պատած էր տունը եւ լոյսին սահմանը կը քաշուէր չորս պատերէն ներս՝ ընկճուած երեւոյթ մը անցընելով դէմքերու վրայ. հատ մը ասոր, եւ հատ մըն ալ անոր վրայ:

Աչքերը բացաւ եւ ձեռքի արագ շարժումով մը փորձեց վանել ազդեցութիւնը երազին: Մղձաւանջէն ազատած էր պահուան մը համար, յոռի մտածումները մեկնած էին դրեթէ՛՝ ա՛լ չվերադառնալու խոստումով, բայց տակաւին օդին մէջ բաներ մը կը խաղային, արուած պատկերներու նման, իր երազէն դուրս մնացած տարօրինա՛կ պատկերներ: Յետոյ անկողինին մէջ երկու անգամ դարձաւ ջիզերը հանդարտեցնելու, արեան չրջանը կանոնաւորելու համար, որովհետեւ սիրտը սաստիկ կը բարախէր հեռաւոր յիշատակներու բեռին տակ: Երբոր այս ջանքերը նպատակի չձառայեցին, ծայրայեղօրէն ինքն իրմէ՛՝ դուրս ելաւ Վարդուհի եւ կռնակին վրայ պտուկած՝ առաստաղին յանձնեց փոթորկած նայուածքը: Ինք որ ընդհանրապէս կրցած էր հնազանդիլ ճակատագրին եւ դրեթէ՛ չէր բողբոջած անոր դէմ, հիմա այլեւս անտանելի կը գտնէր իրեն վիճակուած այս բախտը եւ սովորական նկատուած բոլոր կապերը խզելու փափաք մը կ'արթնար մէջը: Արտակարգ այս հոգեվիճակը հետզհետէ վտանդաւոր կը դառնար՝ իր ափերուն մէջ ճղմելով երիտասարդ կնոջ դեռ չբացուած խանդավառութիւնը: Չէ՛, կ'ըսէր ան, ասիկա կեանք չէ, ապրելու արժանի կեանք մը չէ իմս, կը դողդողային անոր շրթները: Սայթաքումի որոշ նշաններ նախատեսելով մտածելու այս կերպին մէջ, անմիջապէս կտրեց թելը եւ խարուսիկ զուարթութիւն մը պարզեց այտերուն: Միաննեքէն աւելի զգայաբանքներն էին խաղէն օդտուողը, որովհետեւ յուսահատութեան պատճառները կը մխրճուէին մոռացութեան բերրի հողին մէջ եւ բարձրացող ծիլերուն հետ՝ նոր կենդանութիւն մը կը տարածուէր սենեակէն ներս: Առաջին օրերուն, այնքա՛ն խանդաղատանքով ու

անսահման դորովով ընդունած էր տիրող այս խաղաղութիւնը եւ իր անզսպելի դոհունակութիւնը դորոյմած Նշանին ճակտին՝ թաց կնիքով: Նոյն այդ հանդարտութենէն է որ կը ծնի զայրոյթի սա հոսանքը հիմա, եւ իր տարօրինակ ելեւէջներով կը սարսափեցնէ, կը կատղեցնէ անտեսուած կիներ: Վարդուհի յանկարծ պիտի կորսնցնէր վերագտած պաղարինուութիւնը, եթէ չըլլար պատուհանին ծայրամասը ինկող սա ձեղքը ուրկէ արեւը կը սողոսկար ներս ու կը ցատկբաշտէր բարձին վրայ: Բարձէն աւելի, անոր վրայ կազմուած փոսիկն է որ ահաւասիկ դայթակղեցուց ջրագրգռուելու ենթակայ կիներ. որովհետեւ Նշանին գլխուն կաղապարը քանդակուած էր հոն, եւ արեւը անարդել իր հետաքրքրութիւնը կը յագեցնէր ընկղմելով անոր մէջ:

Վարդուհի նայուածքը քաշեց բարձին վրայէն եւ կուրծքին ձախ կողմը դնելով ձեռքը, յափշտակութեամբ նետուեցաւ անցեալին մէջ: Ակնկալութիւններէ եւ անհասանելի երազներէ տարբեր բան չկար հոն, սովորական անցեալ մը ըլլալուն: Բայց իրեն համար իրողութիւնը շատոնց թաղուած էր դիմացի լեռներու ետին, քանի որ փափաքներէն մեկնող տեսիլքը զեղեցկացուցած էր այն որ իրը պիտի ըլլար, այսինքն՝ ապագան որ խոստում մըն էր մտածումին մէջ՝ դեռ չբացուած վարդի մը պէս: Հակառակ իր ճիգերուն եւ հարուստ երեւակայութեան, ինք չէր կրցած երկաթագործ հօր մը կոշտ խստութենէն ձերբազատել թուրքը հոգիին եւ ամուլ ու դատարկ տարիները լեցնել այնքան բնական հաճօքներով:

Մարմնական հասունութիւնը իր կատարելութեան հասնելուն, ինչպէս ամէն կին, ինք եւս երկար ու մութ գիշերներով երազած էր երիտասարդի մը մօտիկութիւնը իր միտքուն մօտ, տաք ու զողացող շրթները բերնին վրայ, յետոյ զօրաւոր ու պիւրկ բազուկներ

մէջքին շուրջ. հոն կանդ առած էր բաղձանքը, այլքանը բաւարար համարելով այդ տարիքին համար. եւ ժպտած էր, ժպտա՛ծ առանց ըմբռնելու որ այդ ժպիտը տարիներ շարունակ իր ընկերը պիտի ըլլար անկողինի լլկող առանձնութեան մէջ: Յետոյ, երբոր տարիները բռնակալ բարբարոսութեամբ կուտակուած էին իրարու վրայ, յուսահատութեան անհատնում ու բռնարարող օրեր ապրած էր ան, դառնութեամբ արտասուելով լուութեան մէջ, համբօրէն:

Եւ տարիներու անհամբեր սպասումին յաջորդած էր Նշանին պատկերը. կոյր չէր ինք, կ'ըմբռնէր որ ճաղատ սա մարդը յարմար չէր իրեն, սակայն տուն մնալու սարսափով համակուած՝ որոշած էր հետեւիլ անոր, փախչիլ իր առանձնութենէն, գլխու պտոյտ առթող մտալլկումէն եւ ըլլալ կին մը, փոյթ չէ թէ Նշանին, սակայն կին մը ամէն գնով. եւ արցունքներուն մէջէն կրկնած էր հառաչելով. «Ի՞նչու եղաւ այսպէս... բայց վերջապէս ի՞նչու...»: Հիմա սակայն, սա առանձնութիւնը, Նշանին ներկայութենէն բխող առանձնութիւնը հետզհետէ, աստիճանաբար կը դառնար աւելի դառնաղէտ, աւելի սոսկումնալից ու անդարմանելի: Չորս ամիսէ ի վեր, Նշան ընկերացած էր իրեն մանուկի մը անտարբերութեամբ, պարպուած, անբան ծերունիի մը համակերպումով:

Թուշուններ եկան, երգեցին, ծառերու վրայ բաներ մը ըրին ու մեկնեցան ժամադրութեան ուշ մնացած յաճախորդի մը փութկոտութեամբ. կատուն՝ դրան չեմին վրայ երկարօրէն լուաց դէմքը, պէխերը սրեց ու արկած մը որոճալով կորսուեցաւ թուփերուն մէջ: Այդ պահուն է որ ժամացոյցը զարկա՛ւ, զարկաւ անընդհատ, անըպար: Վարդուհին այլափոխուեցաւ, եղաւ Ռոզ, եղաւ ծաղիկ, ու յամեցաւ անկողինին մէջ. յետոյ ծունկի եկաւ ու վեր առաւ վարսագոյրը՝ մտա-

ծումները դասաւորել փորձելով. եւ երբ արեւը լեցուց սենեակին պարսպութիւնը, այն ատեն ոտքի ելաւ Վարդուհի եւ մետաքսէ առտուանոցը սահեցուց կոնակէն վար ու ուղղուեցաւ խոհանոց: Հոն է որ կանգ առաւ պատուհանին առջեւ եւ ջղային շարժումով մը վեր առաւ փեղկը: Ճիշդ այդ պահուն, դիմացի շէնքէն պատուհան մըն ալ բացուեցաւ ու մօրուսաւոր գլուխ մը դուրս կախուելով մնաց այլայլած: Պահ մը մնացին այդպէս, մինչեւ որ երիտասարդը համարձակութիւնը վերադատաւ ու ըսաւ սապէս բան մը.

— Երիտասարդ դրացուհի ունենալուս տեղեակ չէի. Աստուած իմ, ո՞ւր կը պահէիր դուն քեզ. յետոյ անմիջապէս ժպիտը լայնցաւ շրթներուն շուրջ եւ կորսուեցաւ մօրուքին մէջ:

— Իմ անունս Փոլ է, քու անունդ ի՞նչ է օրիորդ...

Օրիորդը նախ լուռ մնաց, դասաւորեց մտածումները, ըմբոստացող զգացումները կապանքի տակ դրաւ եւ ուղեց ըսել թէ ինք... չէ բան մը ըսել չուղեց, բայց շրթները բացուեցան աղուոր կլոր մը գծելով բերնին շուրջ.

— Օրիորդ, չէ, տիկի՛ն, իմ անունս... չէ՛, չէ Ռոզ կրնաս կանչել դիս, աւելի դիւրին է, աւելի հաճելի գուցէ...

— Այդ ծերուկին աղջի՞կն էս միթէ, շարունակեց այժի մօրուքը յափշտակուած:

— Ո՛չ, ո՛չ, նորէն սխալեցար, կի՛նն եմ, էս անոր կի՛նը կ'ըլլամ, կրկնեց Վարդուհի շիկնելով:

— Օ՛, այն ատեն նորէն ներողութիւն, հազար անգամ ներողութիւն, ապիւ տիկին...

Պատուհանէ պատուհան տարածուող պարսպութեան մէջ նայուածքները ազեղ մը գծեցին անփութօրէն եւ թոքերու մէջ խլրտումը սկսաւ թեթեւ, մեղմ

շեշտերով եւ սպա ժայթքեցաւ, ժայթքեցաւ ու աւլեց տարաւ ծիծաղելի շեշտը խօսակցութեան:

— Կը յուսամ խօսելու տարբեր առիթներ կ'ունենանք. էս ուսանող եմ զիտես, պէտք է անսպարեմ հիմա, ուրիշ առիթով, ուրիշ առիթով դարձեալ կը տեսնուինք ու կը շարունակենք մեր խօսակցութիւնը. եւ Փոլ մօրուքը առաւ ու մեկնեցաւ: Հոն մնաց սակայն պատուհանը եւ անոր նուիրուած զոյգ մը աչքեր:

Վարդուհի չշարժեցաւ. Ռոզ կանգնած մնաց սպահար:

Այս բոլորը պատահեցան այնքան արագ որ Ծուլթըն փողոցը դանդատելու առիթ չունեցաւ: Այն ատեն սթափեցաւ Վարդուհի եւ հայելին դիմեց խորհրդակցելու համար: Բացառիկ գեղեցկութիւն մը չունէր թէեւ, սակայն սեւ ու խոշոր աչքերը կենսակէտ պայծառութիւն մը ունէին իրենց մէջ: Քիթը նուրբ էր՝ պազուտ շրթներուն վրայ, խի մաղերուն ալիքը երգ մը կը սուլէր ծոծրակէն վար:

**

Քաղաքներ կան ուր տարուան չորս եղանակները իրարու կը յաջորդեն այնքան կարգապահութեամբ, որ ո՛չ ենթադրութիւններու և ո՛չ ալ թելադրութիւններու կարիքը կը զգացուի: Անոնք կը յառաջանան նախապէս քաջուած զոյգ մը գիծերու մէջէն, համաչափ քայլերով, ներդաշնակութեամբ մը որ անակնկալը պատահական կը դարձնէ՝ առանց կարեւորութիւն տալու նախատեսումին: Վերջապէս, «նկարագիր ունի», կ'ըսեն, ասանկ քաղաքներու համար, խօսքը յղելով եղանակի հասցէին: Բայց կայ նաեւ միւս տեսակը քաղաքներուն:

Հոս ամէն ինչ պատահական է. այսինքն չսպասած

մէկ պահուղ յանկարծ երկինքը կը կորսնցնէ իր պայծառութիւնը, հեռաւոր լեռներէն քշուող ամպեր անապարանքով կու գան ու կապարագոյն պաստառ մը կը քաշեն արեւին դէմ. երբեմն ալ, այդ ամպերը բնաւ չեն անապարեր՝ մասնաւոր դործ մը չունենալուն եւ իրենց պարտականութիւնը կը կատարեն համբերութեամբ, քիչ մըն ալ ջիղերուդ դպելով: Այն ատեն, անցորդներ կանդ կ'առնեն մայթերու վրայ եւ նախաձեռնին երկինք յառած կ'ըսեն միտերբան. «Պիտի գայ նէ թո՛ղ դայ, ալ ինչո՛ւ կը սպասէ»: Եւ կարծես, դէպի երկինք արձակուած այս խօսքերը կը հասնին իրենց նպատակին ու ամպերը կը խլրտին, որոտումը կը սկսի՝ միշտ լեռներէն մեկնելով: Լեռներու բացառկայութեան, ուրիշ տեղէ մը կը սկսին անոնք, սպասող անցորդները յուսախաբ չընելու համար:

Փոթորիկ կայ, փոթորիկ ալ կայ անշուշտ: Բայց սա սենեակին մէջ սկսած անհանդարտ շարժումները կասկածի տակ են, որովհետեւ Նշան ձեռքերը ծալած ստամոքսին վրայ եւ բացարձակ անտարբերութեամբ կը հետեւի պատկերասփիւռի վրայ կատարուող գողութեան՝ առանց կողմ բռնելու, քանի որ իրաւունքը հաւասարապէս բաժնած է գողերուն եւ դրամատան միջեւ: Այս բոլորէն տեղեակ չէ Վարդուհի եւ կը փրփրի: Աթոռներու շուրջ կը դառնայ. սեղանին վրայ զետեղուած ծաղկամանը կը զարգարէ ու կը դառնայ: Չէ՛, ստիկա ըլլալիք բան չէր ալ, հիմա պիտի խեղդուէր, շնչահեղձ պիտի ըլլար ու իյնար Նշանին ոտքերուն տակ: Մտածումէն արձակուած այս խօսքը սիրտին չհասած, Վարդուհի հասաւ պատուհանին ու լայնօրէն բացաւ դայն: Օ՛ղ կ'ուզէր, օ՛ղ: Թէեւ երկինքը պայծառ էր եւ լուսինը գիշերային վայելքներու կ'երթար, սակայն թուխ ամպեր կը կուտակուէին սենեակին մէջ, մօտալուտ փոթորիկի մը ազդարարու-

թիւնը փակցնելով պատերուն վրայ: Ան ալ՝ Վարդուհիին ձեռքերով:

Յայտագիրը փոխուեցաւ: Գողերը տարած էին վերջին յաղթանակը:

Ամպեր, ամպեր, կապարագոյն մո՛ւթ ամպեր: Ո՛ւր մնաց անձրեւը, ո՞ւր: Եթէ պիտի պայթէր, ժայթքէր փոթորիկը, թող պայթէր. որքան արագ, այնքան լաւ: Վարդուհի ալ չէր կրնար սպասել ասոր, ալ համբերութիւն չունէր սպասելու:

— Ա՛լ չեմ կրնար համբերել այս ըրածներուդ, այս օղը անշնչելի կը դառնայ կոր, բայց դուն տակաւին անբանի պէս նստած ես այդ յիմար գործիքին առջեւ. հասկցա՛ր, ալ չեմ կրնար դիմանալ այս ըրածներուդ...

Արտայայտութենէ, կենդանութենէ զուրկ զոյգ մը աչքեր:

— Ի՞նչ ըսել կ'ուզես Վարդուհի, ըսածէդ բան չեմ կրնար կոր հասկնալ:

Ջուրի անարկու ալիքները խարակներէն մեկնելով, գլխու պտոյտ ունենալով անաւոր աղմուկի մը մէջ կը զարնուէին թումբին. պատը կը տատանէր, կը սարսուար, կ'այլափոխուէր, բայց ալիքները կը բարձրանային, կը փրփրէին, լուսնոտի նման ճերմակ լորձուքներ կը տեղային թումբին շուրջ, բայց պատը կ'երեւար. եւ զարկա՛ւ, եւ զարկա՛ւ, զարկա՛ւ: Փոթորիկը պայթեցաւ ուղղահայեաց եւ թումբը խորտակուեցա՛ւ:

— Քեզի ըսի թէ մարդ չես, էրի՛կ մարդ չես. այլ լապէս պարկեշտութիւնը պիտի ունենայիր առաջին օրէն իսկ խոստովանելու տկարութիւնդ, անկարողութիւնդ. դուն ծառայի մը պէտք ունէ՛իր եւ ոչ թէ

կնիկի. տակաւին վատարար ականջիս կը փսփսայի որ զիս երջանիկ պիտի ընես, այո՛, խենթիս երջանկութիւնը. դուն ի՞նչ գիտես երջանկութեան մասին, ի՞նչ...

Կարծես Նշան կը սպասէր հովէն, թերեւս փոթորիկէն բայց ոչ հովէն, եւ այդ պաղարիւնութեամբ, հատիկ հատիկ, առանց իմանալու ըսածը, չըսածը, չըթնէրը շարժեց այլայլած, տփուռնած, պատին դոյնը փոխ առած.

— Ինչո՞ւ կը դանդատիս, ես իմ կարելիս ըրի քեզ երջանկացնելու համար, ես իմ կարելիս ըրի քեզի տուն մը հայթայթելու համար...

— Կարելի՞՞դ, կարելի՞՞դ մը ըսիր. բայց քու կարելիդ մամայիս ալ չէր բաւեր, դուրսի ծառաներուն ալ չէր բաւեր. դուն ի՞նչ ունիս որ, ինչո՞վ պիտի երջանկացնես կին մը, քու կինդ որ ծախու առնուած ապրանքի մը տեղ կը դնես կոր, ինչիդ վստահեցար, զիս ի՞նչ կարծեցիր որ այդքան ճամբայ կտրելով եկար թակարդ մը լարելու կեանքիս դնով, ապագայիս գնով. քեզի համար պառուած, պարպուած ծառան իսկ շատ էր, շա՛տ. նայէ՛, մէյ մը աչքերդ բաց ու տե՛ս. տակաւին քանի՞ տարեկան կամ որ ասանկ դժոխքի մը արժանի դատեցիր զիս. չէի՞ր կրնար գէթ անկեղծ ըլլալ ու խոստովանիլ, պարկեշտ ըլլալ, մարդ ըլլալ, ընդունելու համար մարդ չըլլալդ. հա՛, ըսէ՛ նայինք, ի՞նչ է ծուարած քու անկիւնդ, սիրտս տեղէն կը հանես կոր անբանի ձեւեր առնելով...

Լերկ դանկին վրայ գտնուող մազերը անմիջապէս տնկուեցան, երրորդութիւն մը կազմեցին. թաւ ու անկարդ յօնքերը տեղ փոխեցին դողահար, ու վերի շրթունքը կարճացաւ, պրկուեցաւ ու ոտքի հանեց մարդը, կամ ինչ որ մնացած էր անկէ: Նշան կանգնեցաւ կնոջ

դիմաց, բայց օդին մէջ մնաց ջղուտ այդ դործիքը, որ քովհասեւ խեղդուկ ճիչ մը կը թափէր չորցած կողորդէն:

— Դժգոհ ես հը՛, ի՞նչ ունէիր որ կորսնցուցիր, ի՞նչ ունէիր որ ձեռքէդ խլեցի. հօրդ տունը ծերանալու դատապարտուած էիր՝ ու քեզ ազատեցի. քեզի տուի տուն, տաքուկ յարկ մը, եւ բոլոր այն բաները, որոնք կնիկի մը երեւակայութեան մէջ կը ծնին միայն. եւ հիմա ելած կը պոռչտաս այս առատութեան, ազատութեան մէջ. ի՞նչ ունէիր որ ձեռքէդ խլեցի, ապերա՛խտ...

— Այդ բոլորը ես իմ հօրս տունն ալ ունէի. ինչ որ ամենէն աւելի բաղձալի էր դուն այդ զլացար ինծի, կ'ուզես աւելի յստա՞կ խօսիմ, աւելի պա՞րզ. դուն զիս կին չըրիր, կնոջ պահանջը չկրցար գոհացնել, դուն էրիկ մարդ չես, էրիկ մա՞րդ...

Նշանին բարկութիւնը քակուեցաւ. բզիկ բզիկ եղաւ, աստիճաններէն գլորող պարաս պտակառի ձայնը հանեց ու ահագին բարձրութենէն վար իյնալով փչըրուեցաւ սա պրկուածութիւնը, յոխորտանքը, հպարտութիւնը: Վարդուհի շառաղունեցաւ ու դարձաւ Ռոզ. շիկակարմիր Ռոզ: Յետոյ ճանկերը սրեց ու վերաւոր վազրի մը պէս քաշուեցաւ անկիւնը ու հեռաւորութեան վրայէն նետեց թունաւոր նետեր, կայծակի արագութեամբ, անկաղմակերպ, անփոյթ, մինչեւ որ Նշան դարձեալ վերադտաւ ինքզինք, վերաւորուած արժանապատուութիւնը հաւաքեց դետնէն, ու սկսաւ զողակ կեղծ ատամներուն վրայ, յօնքերուն՝ որոնք հոն չէին ալ. ինչ որ մնացած էր իր էրիկ մարդու հպարտութենէն, կատաղութենէն՝ հաւաքեց խնամքով. բոլորին ալ պէտք ունէր ու հաւաքեց առանց խտրութեան: Եւ այնքան արագ իջեցուց ապտակը, այնքան

զօրաւոր որ, պատերն իսկ խուլցան պահուայ մը համար ու ծուկի եկան՝ սեղանին տակ գլորած կնոջ վիճակը հարցնելու:



Աննեակը նոյնն էր, տունը, պարտէզը, այդ պարտէզին սիրահար թիթեռնիկները: Յուլիքն փողոցը երեք գոյն փոխած էր միայն, իսկ գրադարանին առջեւ լինքըն մատը վար առած էր օդէն ու խոնարհութիւն կ'ընէր քաղաքակրթութեան առջեւ: Փոխուածը վարդուհին էր: Հիմա այլեւս ընդունած էր Ռոզը եւ անոր հետ մտերմանալու առաջին փորձերը բաւական յաջող արդիւնք տուած էին անկասկած: Ապտակին օրէն ի վեր ներքին մղումներու գերին դարձած էր ան ու ինկած՝ անոնց ճիրաններուն մէջ, ապշեցուցիչ զուարթութիւն մը տալով կենսաւորուող այտերուն, աչքերուն՝ որոնք միշտ գաղտնի պայծառութիւն մը ունէին իրենց մէջ: Հիմա կանգնած էր պատուհանին քով ու նայուածքը սեւեռած գիծի մը վրայ որ ուղիղ բացուածքով կը բարձրանար դէպի երրորդ յարկի կիսաբաց պատուհանը, ուր գլուխ մը կար մօրուսաւոր:

— Միշտ ալ քանի մը վայրկեան կ'ունենանք իրարու հետ խօսելու, միայն կարճ ու խնթուկ վայրկեաններ, ըսաւ Փոլ, զուարճալի ձեւ մը տալով բերնին, որ այդ պահուն կորսուած էր պիտերուն տակ:

— Այդքանն ալ բաւարար է այս առանձնութեան մէջ:

Հետզհետէ մտերմացող այս խօսակցութիւնը վրտանդաւոր արագութեամբ զանոնք իրարու մօտեցուց. բացարձակ յանդիմութիւն մը երկնցաւ պատուհանէ

պատուհան տարածուող պարապութեան վրայ ու սրբեց տարաւ առաջին օրերու պաշտօնականութիւնը:

Յետոյ ինկաւ անձրեւը եւ օրհնութեան պէս խաղաղութիւն շնորհեց պապակներու, բայց յաղեցումի պահը ուշացաւ, երկնցաւ, մինչեւ որ երկու անուններէն ջուրը քալեց երթալ կորսուելու համար թուփերուն մէջ, որոնք անձանաչելի դարձան ձմրան այդ օրերուն:

Վարդուհի չէր տրտնջար այլեւս եւ Նշան անոր մէջ կատարուող այս փոփոխութիւնը զոհունակութեան վերագրելով ալ աւելի կը սեղմէր անտարբերութեան գօտին: Երեկոները կ'անցնէին միօրինակ: Անոնք կը նստէին սեղանին շուրջ, յետոյ Նշան կ'իյնար բազկաթոռին մէջ, պատկերասփիւռին առջեւ ու կ'անբանանար:

Քաղաքակրթուած կեանք:

Չափուած ու ձեւուած օրեր: Ապսպրանքի վրայ. ան ալ լաւագոյն հանրածանօթ դերձակի մը կողմէ, փայլուն պողոտայի մը վրայ:

Պատուհանէ պատուհան տարածուող պարապութիւն չէր այլեւս. որովհետեւ նայուածքները դարձած էին իմաստ, իսկ մարմինները ցանկութեան պէս բան մը. սովորական օրերուն տեղի կ'ունենար սասպէս խօսակցութիւն մը:

— Ըսէ տեսնեմ, ե՞րբ պիտի ածիլես սա այժի մօրուքդ:

— Այն օրը որ բարձրանաս աստիճաններէն:

— Ո՞ր աստիճաններէն, խեղուկ:

— Այն աստիճաններէն որոնք իմ սենեակս պիտի առաջնորդեն քեզ:

— Հիմա կու դամ, այդ պարագային. բայց վարդուհի կը մնար պատուհանին ետին ու երիտասարդ տղան համբերութեամբ կը սպասէր, վստահ ըլլալով

որ անպայման օր մը պիտի դար ան յուսալքուած, յոգնած, պարտուած :

Եւ օրերը եկան ու դացին. կաղ, տձեւ, անխօս օրեր : Երբեմն չպարուած, տօնազդեստուած, ազուր մը ներկուած օրեր, բայց Վարդուհի զսպեց ինքզինք, ընդդիմացաւ փորձութեան ու յուսախարութիւնը առաւ եւ անոր վրայ նստեցաւ, չուզեց պահուան մը մէջ ծախու հանել երեսուն տարիներու դաստիարակութիւնը եւ դիչերը լուսուց, պատուհանին առջեւ, անհունին, անորոշութեան մէջ : Նշան հետզհետէ ընկճուած երեւոյթ մը ստացաւ, ուսերը կախուեցան, միսերուն մէջ թաղուած կնճիռները յանկարծ դուրս ցայտեցին, դանկին վրայ դտնուող քանի մը թել մազերը հովին ընկերացան, իսկ կեղծ ատամներուն տակ պատուր յամուեցաւ ու կոկորդէն վար չընաց. բայց ամենէն անտանելին Նշան անխօս, անտարբեր դարձաւ վերջնականապէս : Եւ Վարդուհի կատղեցաւ, զայրացաւ, անիծեց բախտը, ճակատագիրը, եւ ինքզինք մոռացութեան յանձնելու փորձեր ըրաւ, բայց ամենէն աւելի ուզեց իմաստ մը տալ դիմացի պատուհանէն եկող առաջարկներուն, քանի դեռ ուշ չէր, քանի դեռ կեանք մը կար ապրելու, գուցէ վայելելու :

Եւ մութը իջաւ, այնպէս ինչպէս կ'իջնէ բոլոր քաղաքներու վրայ. փողոցներու մէջ կեանքը, եռուղեքը դանդաղեցաւ ծիծաղելի ըլլալու չափ, եւ փոքր քաղաքներու յատուկ խաղաղութիւնը տարածուեցաւ անձրեւէն առաջ : Հատ հատ ելաւ աստիճաններէն վեր. կանգ առաւ միայն առաջինին վրայ ու ալ ետին չդարձաւ, անհետացող հետքին հետ թաղելով անցեալ մը տխուր : Արեւելքը պատուանդանէն վար կ'իջնէր հատ հատ, աստիճաններու ճամբով :

Ձարկաւ թէ շոյեց դուրը՝ ինք ալ չհասկեցաւ, բայց երբ Փոլին մօրուքը նշմարեց սթափեցաւ, այլայլեցաւ,

փախչելու, աներեւութանայու բաղձանքը բզկտեց կուրծքին վանդակը, սակայն դանդաղօրէն գոցուեցաւ դուռը : Հիմա առանձին էին ալ, բոլորովին առանձին :

Սեղան մը՝ բեռցուած գիրքերով, գլխահակ լամբ մը որուն տակ էջեր դարձած են երթալ միանալու հատորներուն, որոնք տարտղնուած են այդ պահուն. եւ աթոռ մը ցաւատանջ, մերկ. յետոյ անկիւնը նստուած մահճակալը, որուն վրայէն վերմակը սահած էր դըժգոհութեամբ. կանգնած էր Ռոզ, գիրքերուն եւ Փոլին միջեւ. սա ուսանող տղան, որ հաղիւ քսանըհնդ ցոյց կու տայ սեւ մօրուքի մը օգնութեամբ, կանդնած է նոյնպէս կիսամութին, առանց բառ մը արտասանելու :

Եւ մօտեցան իրարու, դանդաղութեամբ մը որ կը ճեղքէր համարձակութեան վերջին արդելքը. ափերը դողացին իրարու մէջ. կէս կատակով սկսած փափաքը երբ իրողութեան դուռը ծեծեց, այն ատեն Փոլ բոլորովին անձանօթ ձայնով մը ըսաւ.

— Վստա՞հ ես Ռոզ, այս է ուղածդ...

Երբ աղջիկը լուռ մնաց, երբ Վարդուհի չըմբռնեց թէ ինչ կը պատահի իրեն, յանձնուեցաւ տղուն...

— Փո՛լ, տակաւին կոյս եմ, զդոյշ եղիր...

Այդ գիշեր հողը ազուր մը ծծեց անձրեւին վերջին կաթիլները :

Չուարթացաւ, երջանկութիւնը բացառիկ առատութեամբ հիւրութեան եկաւ ու մնաց հոն. Աստուած իմ, այս որքան բարիք անձի մը համար, պիտի խեղդուէր, պիտի լար յուզումէն, պիտի երթար հրապարակ ու բոլոր լոյսերը կանաչի փոխէր որպէսզի ինք նաչարժեք առանց կանգ առնելու շարունակէին իրենց ճամբան, երթային, մեկնէին ալ չվերադառալու խոս-

տումով: Ուրիշ^օ իջաւ ծիծաղաշարժ սա նուազը որ ամե-
նէն ողբերգակ դերասանուհին ալ կը ցնցէ, օդ կը
հանէ, բայց ան եկաւ դորովով, դուրգուրանքով ու
պատեց Վարդուհին. անոր սիրտը կակուղցաւ Նշանին
հանդէպ, Ծուլթըն փողոցին հանդէպ, Ծրէզնօ քաղա-
քին՝ որ այդ տարի տառապած էր անձրեւի կծծիութե-
նէն. նոյնիսկ համբոյր մը դրոշմեց Նշանին ճաղատ
դանկին վրայ ու անոր աչքերուն մէջ ցանեց պատրան-
քի փոշին:

Քանի բարձրացաւ բողոքող այդ աստիճաններուն
վրայէն, քանի Փոլ գիրքը փակ պահեց սեղանին վրայ,
այնքան աւելի անուշցաւ կեանքը, գիշերները, Նշանը.
հապա բարի ու անմեղ այդ մարդուկը որքան, որքա՞ն
համբոյրներ ընդունեց ճաղատին վրայ եւ ան ալ սիրա-
յօժար, առանց արտունջի, առանց հարցաքննութեան:
Վերջին քանի մը ամիսներուն ընթացքին երկիրը բո-
լորովին նոր դուռաւորում մը ստացաւ մանաւանդ, ու
Նշան համարձակութիւնը վերագտած բացականչեց
մանուկի մը զուարթութեամբ.

— Զրսի՛, չըսի՛ թէ քեզ երջանիկ պիտի ընեմ,
համբերութիւն չունեցար, ամէն բան առաջին օրէն ու-
զեցիր ունենալ, հիմա տեսա՞ր թէ ես ճիշդ կը խօսէի
եւ երջանիկ ես:

Այո, Փոլ երջանկացուց Վարդուհին:

Եւ երջանկութեան զագաթնակէտին հասած, Վար-
դուհի գիշերով դարձեալ բարձրացաւ Փոլին քով. խո-
շոր, լիառատ ժպիտ մը թաց շրթներուն վրայ, ու դո-
հունակութիւնը դէմքին ամենէն նուրբ ծալքերուն մէջ,
թեւերը բաց նետուեցաւ տղուն գիրկը:

— Մեծ ու անհաւատալի լուր մը ունիմ քեզի տա-
լիք Փոլ, գիտեմ որ պիտի հրճուիս, պիտի խենթանաս,
Աստուած վկայ պիտի խենթանաս:

— Լա՛ւ, լա՛ւ չխենթացած տուր տեսնե՞ք սա լու-
րը, ըսաւ տղան չհաւատալով տեսածին:

— Տե՛ս, ահա այսպէս, մայր պիտի լլլամ, այո՛,
այո՛, մի գարմանար. խե՛նթ, անշուշտ որ քու զաւակդ
է... հապա ինչ կարծեցիր այդ խոֆածի՞ն. եկուր
չխօսինք այդ մասին... Փոլ անմիջապէս ձեռքերը լըր-
ջութեան կանչեց խաղերէն ու յօնքերը հարցում եղած
նայեցաւ յուզուած կնոջ, որ պահ մը առաջ ինչ երազ-
ներ արթնցուցած էր իր մէջ: Սակայն հիմա, դարձած
էր փորձանք մը, իրապէս, մե՛ծ փորձանք մը:

— Նայէ Փոլ, դուն բնաւ դպրոցդ կէս ձգելու
ստիպուած չես, ես կ'աշխատիմ, յետոյ բաւական դու-
մար մըն ալ փրցուցած եմ Նշանէն, մինչեւ որ կար-
դադրութիւններ ընենք, Նշանին բացատրեմ թէ զինք
կ'ուզեմ ձգել ու միանալ քեզի, կարծեմ բաւական ժա-
մանակ կ'առնէ. յետոյ կ'երթանք ուրիշ քաղաք մը,
արդէն առաջին օրէն զղուանք զղացի Ծրէզնոյի հան-
դէպ. նոր կեանք մը կը սկսինք երկուքով՝ շուտով ե-
րեք լլլալու յոյսով, անանկ չէ՞ Փոլ, ճիշդ ըսէ, լաւ
չէ՞ այս կարգադրութիւնը, բայց բան չես ըսեր Փոլ,
ի՞նչ եղաւ. զիս կը սիրես տակաւին չէ՞, դո՛ւն ըսիր,
դուն ըսիր որ ես շատ լաւ կ'ին կ'լլլամ, կը յիշես չէ՞,
տակաւին քանի մը չաբաթ առաջ էր:

Երիտասարդը անմիջապէս սթափեցաւ եւ ըսաւ.
«Այո՛, բա՛յց...»:

— Այո՛, այո՛, պիտէի Փոլ, ես քու վրադ վստա-
հութիւն ունէի, առաջին օրէն տպաւորեցիր զիս, չցաւ-
ցուցիր զիս, երջանկութիւն տուիր ինձի, կեանք
տուիր, իսկ հիմա ալ կու տաս պզտիկ մը, մանուկ մը
որ հաւանարար քեզի պիտի քաշէ... անշուշտ որ քեզի
պիտի քաշէ, հապա անո՞ր պիտի քաշէր, կեղծ պապա-
լին, կեղծ մարդուն...

Երեսուն տարիները ծալեց ու բարձին տակ դրաւ

ամուր, եւ մանկացաւ, անակնկալ այս ուրախութիւնը աւելի թարմացուց զինք եւ դարձաւ արբուներէ կամուրջէն նոր անցած աղջիկ մը, յոյսով, երազով, կեանքով լեցուն:

Երիտասարդը սթափած էր ալ ու կրկնեց. «Այո՛, բա՛յց...»:

Ու խօսեցաւ անընդհատ, խանդավառութեամբ, անկեղծութեամբ, վախով: Լոյսերը վառեցան ու մարեցան պողոտաներու վրայ. ոտտիկաններ իրենց դիրքը փոխեցին ու հեռացան զինարաններու առջեւէն. ինքնաշարժներու գնացքը մէկ ուղղութիւն ճանչցաւ միայն եւ կեանքը դարձաւ կլոր, անիւր մը նման, առանց սկիզբի, առանց վերջաւորութեան. այն ատեն ոտքի ելաւ Վարդուհի, հիացումով ու դուրգութեամբով յորդահոս նայուածք մը նետեց Փոլին վրայ ու մօրուքը չտեսաւ:

Փոլ մտածած, ծրագրած էր ամէն ինչ, եւ հիմա կը ժպտէր եւ շրթները անմիջապէս շարժեցան. ու ան ըսաւ. «Այո՛, բա՛յց...»:

Փոլին հետ ունեցած մտերմիկ այս խօսակցութիւնը նոր կարելիութիւններ բերին Վարդուհիի մտածումին եւ գետեղեցին հոն, այսինքն՝ երազին մէջ միայն: Յղի կիներ Նշանին քով երկնցած՝ ծրագիրներ պատրաստեց ու գուարճացաւ, կատակներ ըրաւ ապագայի հաշուոյն, եւ խանդավառութենէն քաջալերուած՝ բազմաթիւ նախադասութիւններ կազմեց յաջորդ օրն իսկ Փոլին ըսելու համար: Անստոյգ ելեւէջներով սկսած սա կեանքը՝ ի վերջոյ պիտի ունենար գեղեցիկ ուղղութիւն մը, խոստումներու տանող ընթացք մը, վե՛րջապէս:

Կոպերը կը ծանրանային, բայց Վարդուհին չէր ուղեր դանոնք փակել աչքերուն վրայ. չէ, այդ բանը չէր ուղեր ընել՝ երկարելու համար այս թմրութիւնը

որուն գիրկը նետուած էր հիմա ու կը թիավարէր՝ նոր հորիզոններ կտրելու յոյսով: Ու ահա, կ'օրօրուէր, կ'օրօրուէր այլեքներու վրայ, ջուրերու վրայ, մտիկ ընելով թոշուններու երգին, ծաղիկներու փսփսուքին, հովին՝ որ այնքան գգուանքով կը շոյէր ծոծրակը:

Առաւօտուն երբ արթնցաւ, Նշան արդէն մեկնած էր դործի ու կ'անձրեւէր տակաւին. ջուրի կաթիլները անխնայ կը հարուածէին ծառերն ու ծաղիկները պարտէղին, ու երիզներ կազմելով՝ կը սահէին պատուհանի ապակիէն վար: Վարդուհի կեցած էր հոն, ու կը դիտէր զիմացի չէնքը. աւելի երրորդ յարկը, քան չէնքը, ու յուզումի կայլակներ կը կազմուէին կուրծքին տակ՝ տեղ մը:

Ինչո՞ւ զոց է պատուհանը. արդեօք տակաւին կ'երազէ՞ մեր երջանկութեան գիտովութեան տակ. ուր որ է հիմա երեսան կ'ելլէ, կը կախէ դուխը, կը ցանէ ժպիտը եւ կ'անուշնայ օրս. օ՛, Փո՛լ, Փո՛լ, որքան քաղցր է այս կապը, այս շղթան որ զիս քեզի կը քաշէ, կը կապէ, կ'ընէ բան մը անծանօթ, տարօրինակ: Վարդուհի տակաւին երկար, երկա՛ր խօսեցաւ, մտածեց բայց միշտ մնաց պատուհանին զիմաց որ Փոլին կը պատկանէր: Դուքսը կ'անձրեւէր տակաւին, բայց խոշոր արեւ մը ինկած էր յղի կնոջ մարմնին մէջ, երակներուն մէջ, աչքերուն մէջ:

Եւ սպասե՛ց, սպասե՛ց, բայց երկար ժամերով սպասեց, ապարդիւն, յուսախառն, հաւատքով. անձրեւը միշտ ծծեց ծառերը, ինքնաշարժերը միշտ դարձան հրապարակին վրայ եւ ոտտիկանը ճանձրացաւ: Սպասումը քանի երկարեցաւ, այնքան աւելի յուզուեցաւ Վարդուհի, զայրացաւ, յուսահատի ճիչեր արձակեց ու շիկնեցաւ, ուրկէ՞ զտաւ այդքան կարմրութիւն, բայց շիկնեցաւ, մինչեւ որ երեկոն տուն վերադարձաւ ու եղաւ անիմաստ բան մը:

ամուր, եւ մանկացաւ, անակնկալ այս ուրախութիւնը աւելի թարմացուց զինք եւ դարձաւ արբուհի կամուրջէն նոր անցած աղջիկ մը, յոյսով, երազով, կեանքով լեցուն:

Երիտասարդը սթափած էր ալ ու կրկնեց. «Այո՛, բա՛յց...»:

Ու խօսեցաւ անընդհատ, խանդավառութեամբ, անկեղծութեամբ, վախով: Լոյսերը վառեցան ու մարեցան պողոտաներու վրայ. ոստիկաններ իրենց դիրքը փոխեցին ու հեռացան զինարաններու առջեւէն. ինքնաշարժներու գնացքը մէկ ուղղութիւն ճանչցաւ միայն եւ կեանքը դարձաւ կլոր, անիւի մը նման, առանց սկիզբի, առանց վերջաւորութեան. այն ատեն ոտքի ելաւ Վարդուհի, հիացումով ու զուրպուրանքով յորդահոս նայուածք մը նետեց Փոլին վրայ ու մօրուքը չտեսաւ:

Փոլ մտածած, ծրագրած էր ամէն ինչ, եւ հիմա կը ժպտէր եւ շրթները անմիջապէս շարժեցան. ու ան ըսաւ. «Այո՛, բա՛յց...»:

Փոլին հետ ունեցած մտերմիկ այս խօսակցութիւնը նոր կարելիութիւններ բերին Վարդուհիի մտածումին եւ զետեղեցին հոն, այսինքն՝ երազին մէջ միայն: Յղի կինը Նշանին քով երկնցած՝ ծրագիրներ պատրաստեց ու զուարճացաւ, կատակներ ըրաւ ապագայի հաշուոյն, եւ խանդավառութենէն քաջալերուած՝ բազմաթիւ նախադասութիւններ կազմեց յաջորդ օրն իսկ Փոլին ըսելու համար: Անստոյգ ելեւէջներով սկսած սա կեանքը՝ ի վերջոյ պիտի ունենար գեղեցիկ ուղղութիւն մը, խոստումներու տանող ընթացք մը, վե՛րջապէս:

Կոպերը կը ծանրանային, բայց Վարդուհին չէր ուղեր գանոնք փակել աչքերուն վրայ. չէ, այդ բանը չէր ուղեր ընել՝ երկարելու համար այս թմրութիւնը

որուն զիրկը նետուած էր հիմա ու կը թիավարէր՝ նոր հորիզոններ կտրելու յոյսով: Ու ահա, կ'օրօրուէր, կ'օրօրուէր ալիքներու վրայ, ջուրերու վրայ, մտիկ ընելով թռչուններու երգին, ծաղիկներու փափուքին, հովին՝ որ այնքան զգուանքով կը շոյէր ծոծրակը:

Առաւօտուն երբ արթնցաւ, Նշան արդէն մեկնած էր գործի ու կ'անձրեւէր տակաւին. ջուրի կաթիլները անխնայ կը հարուածէին ծառերն ու ծաղիկները պարտէզին, ու երկունք կազմելով՝ կը սահէին պատուհանի ապակիէն վար: Վարդուհի կեցած էր հոն, ու կը դիտէր դիմացի շէնքը. աւելի երրորդ յարկը, քան շէնքը, ու յուզումի կայլակներ կը կազմուէին կուրծքին տակ՝ տեղ մը:

Ինչո՞ւ գոց է պատուհանը. արդեօք տակաւին կ'երազէ՞ մեր երջանկութեան գինովութեան տակ. ուր որ է հիմա երեւան կ'ելլէ, կը կախէ գլուխը, կը ցանկ ժպիտը եւ կ'անուշնայ օրս. օ՛, Փո՛լ, Փո՛լ, որքան քաղցր է այս կապը, այս շղթան որ զիս քեզի կը քաշէ, կը կապէ, կ'ընէ բան մը անծանօթ, տարօրինակ: Վարդուհի տակաւին երկար, երկա՛ր խօսեցաւ, մտածեց բայց միշտ մնաց պատուհանին դիմաց որ Փոլին կը պատկանէր: Դուրսը կ'անձրեւէր տակաւին, բայց խոշոր արեւ մը ինկած էր յղի կնոջ մարմնին մէջ, երակներուն մէջ, աչքերուն մէջ:

Եւ սպասե՛ց, սպասե՛ց, բայց երկար ժամերով սպասեց, ապարդիւն, յուսախառն, հաւատքով. անձրեւը միշտ ծեծեց ծառերը, ինքնաշարժերը միշտ դարձան հրապարակին վրայ եւ ոստիկանը ձանձրացաւ: Սպասումը քանի երկարեցաւ, այնքան աւելի յուզուեցաւ Վարդուհի, զայրացաւ, յուսահատի ճիչեր արձակեց ու շիկնեցաւ, ուրկէ՞ զտաւ այդքան կարմրութիւն, բայց շիկնեցաւ, մինչեւ որ երեկոն տուն վերադարձաւ ու եղաւ անիմաստ բան մը:

Նշան զրկուեցաւ իր սովորական համբոյրէն ու
ընթրիքը անցաւ պաղ, սառած կերակուրի պէս: Յետոյ
բառերու որսորդութիւն եղաւ, նախադասութիւններ
զրկուեցան իրենց նշանակութենէն ու մնացին կոկորդ-
ներու մէջ, կիսկատար, անկտայ. քանի Նշան աթոռ
փոխեց, քանի Նշան խօսիլ փորձեց, այնքան աւելի
ջղադրգուեցաւ Վարդուհի. զղուանքը եկաւ ու նստե-
ցաւ շրթներու վրայ եւ վզին շուրջ երակները մեծցան,
լայնցան եւ զգալի դարձուցին իրենց ներկայութիւնը.
փոխեցին աթոռները, փոխուեցան դիրքերը. Նշան
ոտքի, Վարդուհի նստած. Վարդուհի ծունկի, Նշան
կանգնած, եւ դարձան սենեակին մէջ, սեղանին շուրջ,
մինչեւ որ կայծակը փայլատակեց՝ իր ետեւէն քաշե-
լով փոթորիկի մը խոստումը. եւ մարմնացաւ, հա-
սուեցաւ վիճակը, եւ այսպէս անակնկալ վրիժառու-
թեամբ ինկաւ ու փշուրեցաւ:

— Փո՛ւ, մարդ չէիր ու չեղար, կեղծ էր ամէն ինչ
վրադ, ու կեղծ մնաց, քու մարդկութիւնդ, կորովդ,
կարողութիւնդ, եւ հիմա տես, տե՛ս ինչպէ՛ս կը տա-
ռապիմ...

— Ի՞նչ եղաւ նորէն, ինչ պատահեցաւ Վարդուհի,
երէկ տակաւին այնքա՛ն ուրախ էիր, զուարթ...

— Եւ տակաւին կը հարցնես թէ՛ ինչ եղաւ, ահա,
ճիշդ այդ բանն է զիս զայրացնողը, չես հասկնար թէ
ինչ կը պատահի ամուսնացած կնոջ մը, ինչ կ'ըլլայ ա-
նոր... դուն չես յանցաւորը, անշուշտ որ դուն չես,
բայց պատահեցաւ, եթէ դուն էրիկ մարդ ըլլայիր, պի-
տի չպատահէր, անշուշտ որ դուն ես յանցաւորը... յղի
եմ, չես տեսներ, չես զգար վիճակս, յղի եմ հասկը-
ցա՛ր...

— Օ՛հ, օ՛հ, լսուեցաւ խեղդուկ ձայն մը:

— Եւ չես հարցնէր թէ ինչպէ՞ս, որմէ՞, ե՞րբ...

— Օ՛հ, օ՛հ, լսուեցաւ խեղդուկ ձայն մը:

— Ինչ որ դուն ինծի չկրցար տալ, ստիպեցիր որ
զայն գողի պէս խլեմ ուրիշէ...

— Օ՛հ, օ՛հ, լսուեցաւ խեղդուկ ճիչը:

— Ձես հարցներ թէ ո՞վ է հայրը, անշուշտ դիտես
որ դուն հայր չէիր կրնար ըլլալ, այդ իրաւունքդ ծա-
խած էիր պատերազմին, թշնամիին...

— Օ՛հ, օ՛հ...

— Դուն ծառայի մը պէտք ունէիր, ծառայի, ան
ալ պառաւած, զողոթն ձեռքերով պառաւի մը որ ոչինչ
պահանջը քեզմէ. ըսէ՛ տեսնեմ, հիմա ինչ կ'ըսես ա-
սոր, հայր պիտի ըլլաս ուրիշի մը օգնութեամբ, օտարի
մը առատաձեռնութեան շնորհիւ...

Նշանին աչքերէն կայծակը անցաւ մտրակի մը ա-
րագութեամբ, տրամաբանութիւնը խեղդուեցաւ զայ-
րոյթի ճանկերով ու ոտքի ելաւ, արդէն ոտքի ըլլալուն՝
քաշել սկսաւ դէպի կիներ. Վարդուհի արհամարհանքով,
անտարբերութեամբ կը դիտէր իրեն մօտեցող զոյգ մը
ափերը. քայլ մը ետ դնաց, բայց չկրցաւ խուսափիլ ա-
րին կտրած նայուածքէն. ալ տեղ չկար նահանջելու,
հասած էր երկու պատերու ճանկերուն եւ սոսկում
կտրած՝ կը դիտէր ափերը որոնք այդ պահուն անընդ-
հատ կը լայննային, կը մեծնային, շղթայի մը վերա-
ծուելով դառնալու վզին շուրջ.

— Ձէ՛, Նշան, խենթ մի ըլլար, ես կատակ կ'ընէի,
սուտ էին ըսածներս, չէ, Նշան...

Նշան չէր լսեր այլեւս, չէր կրնար լսել, քանի որ
անձրեւը կը ծեծէր պատուհանին փեղկերը, եւ միջոցը
կը նեղնար, կը փոքրանար ափերուն դիմաց:

— Նշա՛ն, վերջ տուր կատակիդ, դուն այսպէս
չէիր, դուն այսպէս չես կրնար շարունակել...

Սեղմեց, աչքերուն կրակին խառնեց ձեռքի արիւնը
եւ սեղմեց.

— Նշա՞ն, Նշաաա՞ն, կ'ուզես կը ձգեմ ու կ'երթամ, թոյլ տո՛ւր...

— Պատի՛ւս, արժանապատուութիւնս ծախեցիր, պոռնիկ, դուն ի՞նչ կարծեցիր զիս...

Կնոջ խոշորցող, լայնցող աչքերը սթափեցուցին Նշանը. ձեռքերը ետ քաշեց ու գետին ինկած մարմինն վրայ թքնելով քայլ մը առաւ դէպի սենեակին կեղորոնը. յետոյ թեւերը դողացին, ուսերը վար ինկան ու աչքերուն կրակը մարեցաւ զուարճալի երեւոյթ մը տալով ճաղատ դանկին. շրթները շարժեցան, դէմքի մկանները տեղ փոխեցին անընդհատ ու արտասովոր ձայն մը ինկաւ ոտքերուն տակ. այդ ձայնը փոխուեցաւ, մեծցաւ, լայնցաւ ու խոշոր բացուածքէ ինկող քահքահ մը վերածուելով ցնցեց պատերը, ցնցեց տունը, լոյսերը, դետին ինկած կինը որ հաղիւ կրնար շարժիլ, եւ փախաւ ան, դուռը ետեւէն քաշեց ու փախաւ մութին մէջ:

Դողդոջ մատները տարաւ վզին շուրջ ու անշարժ մնաց. ափերը մօտեցուց աչքերուն ու անշարժ մնաց. թմրութիւնը տարածուեցաւ միսերուն տակ ու հաճելի զգայնութեամբ մը պարուրեց մարմինը. կիսարաց դուռէն անձրեւը կը թափէր ներս՝ առանց հրաւէրի, հովը կը խաղար վարադոյրներուն հետ՝ առանց հրաւէրի, լոյսը կ'իջնէր առաստաղէն ինքնավատահութեամբ եւ կ'ողողէր աթոռն ու սեղանը, փայլուն եւ սեւ կօշիկները, որոնք Նշանինն էին անկասկած:

Իռնեց քովի աթոռէն ու ոտքի ելաւ. այտերուն ջերմութիւնը խոռնեց սառած ջուրին ու պատուհանը բացաւ զզուշուրեամբ, յոյսով, ակնկալութեամբ. լոյսին վերջին հետքն իսկ սրբուած, աւլուած էր հոնկէ, պատուհանին վրայէն՝ ուր Փոլին մօրուքը կը խաղար տակաին երէկ դիշեր: Նախազգացումը մտրակեց մտածումը, եւ ճիշ մը լսուեցաւ. ոչ դիմացի եւ ոչ ալ քովի

պատուհանէն լոյս կ'երեւար. չուզեց հաւատալ, բայց փորձութիւնը մեծ աղաղակով ինկաւ սիրտին մէջ: Դուռը բացաւ ու նետուեցաւ դիմացի փողոցը. կանգ առաւ մութ միջանցքին մէջ, եւ շնչառութիւնը կանոնաւորեց. զարկաւ, յուսահատ, լալկան, դողդոջ. պատասխան չեկաւ, ոչ իսկ շշուէ մը, կենդանութեան նշան մը. հրեց ու կեցաւ բացուած դուռին մէջ. պարսպութիւն մը կ'իշխէր հոն, անտանելի, անպատմելի պարսպութիւն մը որ մութին մէջ իսկ զգալի կ'ըլլար. լոյսը բացաւ ու նուաղելու փափաք մը ունեցաւ. այո՛, հոն էին սեղանն ու աթոռը, մերկ անկողինը որուն վրայ քանի դիշերներ այսպէս, մերկացած էր ինք, յանձնուած՝ ցանկութեան թեւերուն ու նոր կեանք մը դիմանուող ճամբորդի մը նման արբեցած՝ երջանկութեան պատրանքով, սեղանը մերկ էր, առանց գիրքերու, առանց Փոլին, որ քանի դիշերներ այսպէս անտեսած էր այդ հաստափոր հատորները. եւ հիմա ինք ունէր անոնցմէ հատ մը, ճիշդ հոն, ձեռքին տակ, մարմնին մէջ:

Փլեցաւ ինքն իր վրայ, մտածումներուն վրայ, հեռանկարներուն վրայ. չուզեց մտածել ալ, ի՞նչ օգուտ, նոյնիսկ չուզեց ատել Փոլը, ի՞նչ օգուտ. եւ իջաւ, հատ հատ, առանց ետին նայելու, առանց խորհելու վարադոյրին մասին, որ հետզհետէ կ'իջնէր արարի մը վրայ, որ այնքան խոստումներով, այնքան զուարթութեամբ սկսած էր տակալին երեք ամիս առաջ: Միայն երեք ամիս, եւ այդքան:

Պատուհանէն լոյսը կը մաղուէր պարտէզին մէջ, անձրեւին հետ որ այնքան աղուորութեամբ դադունիք պահել զիտէ. ինչ ընէր այլեւս, մարած էր իր լոյսը, իր հողիին, սիրտին լոյսը:

Տունին մէջ բոլորովին առանձին էր հիմա, միս միտակ, առանձին. Նշանին բաց ձգած դուռէն անձրեւա-

խառն հովը ներս կու դար առանց հրաւերի ու կը միա-
ձուլուէր լոյսին, կեանքին, որ գոյութիւն չունէր այ-
լեւս: Կանգ առաւ հոն, նայուածքը մութին, որ երբեմն
կը ճեղքուէր ինքնաշարժի մը լոյսով. շարժումներ կա-
յին հոն, անորոշ, անստոյգ շարժումներ, իր կեանքին
պէս, իր երազին պէս. եւ ինկա՛ն, ինկան այտերը ճեղ-
քելով, կրակը մարելով, զոյգ մը արցունքներ, խոշոր,
փայլուն, նշա՛ն, Փո՛ղ, եւ հողեր, եւ ծառեր, փոթո-
րիկ, վերջապէս:

Պոստով, 1963

Մ
ԲԱԺՆՈՒԱԾՍ ԵՒ ՏՈՒՆԸ

կանդնած էր հոն, գաղթական հայր, ու անշարժ իր դիրքէն կը հետեւէր՝ շուրջ բոլորը եռացող ինքնաշարժերու խելացնոր խուճապին, դունաւոր լոյսերուն, որոնք արագօրէն կը դառնային գործիքներու վրայ, յորդեռանդ խուժանին, որ կ'եռեւեփէր հսկայ վաճառատուններու փեղկերուն առջեւ, մինչ աւելի վար, երկնասլաց չէնքերու ճակատները կը բռնկէին ցուցափեղկերու գուլարթախինդ խոստումով:

Ո՛չ, երազ մը չէր տեսածը: Ահա հոս էր քաղաքը, դունազարդ, պճնազեղ, խելագար, խոկ անդին, փառաշուք դանդուածը սպիտակ նաւուն, ճիշդ այնպէս, ինչպէս երեւակայութիւնը ապրեցուցած էր զանոնք որոշ մանրամասնութիւններով: Բայց այլեւս ժամանակ չունէր ո՛չ երեւակայելու եւ ոչ ալ երազելու դալիքը անորոշ, քանի որ պահերը կը թաւալէին իրարու ետեւէ, ու ինք, դեռ վստահ խոկ չէր կայարանին ուղղութեան: Ու պէտք է շտապէր հիմա, քանի ուշ չէր տակաւին: Ու անապարհց:

Առաջին պողոտայէն անջ դառնալով քայլերը արագացուց դէպի կեդրոնական մասերը քաղաքին. յետոյ ձախ դարձաւ՝ ոտտիկանին ցուցամատին հնազանդելով, բայց երբոր հինգերորդ պողոտան եկաւ հանդէսը հրապարակի մը ծառազարդ շրջագիծին մէջ, այն ատեն է որ երիտասարդ հայր շփոթեցաւ յանկարծ: Ի՛նչ պիտի ընէր, ո՛ւր պիտի երթար, որոշապէս վստահ չէր: Կարծես մէկէն կորսնցնելով նախկին խանդավառութիւնը, տրամարանելու եւ դատելու պայծառութիւնը, անճրքիցաւ ջղագրգռութեանը մէջ, եւ դրեթէ ինքն իրմէ ելած, անմիջապէս սկսաւ անիծել նախ ճակատագիրը ու ապա՝ դարձեալ ճակատագիրը: Օ՛, ուժասպառ էր այլեւս: Ու նստեցաւ նստարանի մը վրայ, գլխահակ, յուզատանջ, այտերը ափերուն յանձնած: Եւ սկսաւ մտածել, վերլիչել, դէպի ետ ետ երթալով:

Լման տասը տարիներ, համբուրութեամբ, յոյսով եւ ի՛նչ երազներով սպասած էր հասնելու համար այս հանգրուանը: Այո, շատերու նման, իբրեւ հեռատես ու գործնական մարդ, իր հայրն ալ, զարկած էր Ամերիկեան հիւպատոսարանին դուռը, որպէսզի օր մը չէ օր մը, գոնէ իր դաւակները պատեհութիւնը ունենային նոր կեանք մը սկսելու՝ աւելի բարգաւաճ ու ապահով երկիրքի մը տակ: «Հոն հաստատուողը մարդ կը դառնայ կոր. դերձակի կտոր մըն էլը երէկ, ահա քսան տարեկան եղար, ու տակաւին դերձակի մը կտոր ես» ըսած էր իրեն՝ լրջախոհ, սրտաբեկ, գրեթէ յուզուած: Եւ անկէ ետք, տարիներով հոլոված էին նոյն յանկերգը, երբեմն շեշտերը փոխելով, շատ յաճախ նոր բառ մը պատշաճեցնելով հին բառի մը տեղ: Բայց օր մըն ալ, անակնկալ կաթուածը եկեր ու մէկ գիշերուան մէջ սոեր տարեր էր հեռատես հայր: Հօրը մեկնումէն ետք, մայրն է որ ստանձներ էր անոր հիմնական դերը, ու մինչեւ վերջին վայրկեան շարունակած էր խրախուսել, սրտապնդել՝ իր մէկ հատիկ մանջ զաւակը որպէսզի չյուսահատի ան, որպէսզի տկարութեան մէկ պահուն չմոռնայ հօրը հեռատեսութիւնը ու վերջնականօրէն հաշտուի՝ Պէյրութի անյուսութեան հետ:

Բայց վերջին պահուն տակնուվրայ եղած էին իր ծրագիրները, որովհետեւ հակառակ իր պնդումներուն, անդրդուելի էր մնացած մայրը ու չէր ուզած բաժնուել իրեն մտերիմ այդ շրջապատին. «Ինչպէս ընեմ տղաս, սիրտս երկուքի կը բաժնուի. դուն քու ապագայիդ ետեւէն գնա, ես կը մնամ հօրդ գերեզմանին մօտ»: Որքան փորձած էր համոզել մայրը, որքան փորձած էր բացատրել անոր որ իրենց համար բաժանումը բոլորովին պիտի քանդէր իրենց փոքրիկ ընտանիքը, եւ թէ... բայց մայրը բնաւ չէր լսած զինք միշտ առարկելով որ իրեն համար բացարձակապէս անկարելի էր հայրը ա-

ուանձին թողուլ. «Դուև տակաւին երիտասարդ ես ու կը վարժուիս, հասարձ ես... գոնէ ատենը մէյ մը հօրդ այցելութեան կ'երթամ, քիչ մը կը խօսիմ ու կը խորհրդակցիմ հետը որպէսզի առանձին չզգայ», կրկնած էր, անդամադրելի լրջութեամբ:

Պահ մը եւս տարուբերուելէ յետոյ անցեալի ու ներկայի խառնաշփոթ վիճակներուն միջեւ, ոտքի ելլաւ երիտասարդ հայը, ու խորհրդածելով, գանգատելով ասան մը դեղերեցաւ Նիւ Եորքի տօթակէզ թոհուրոհին մէջ, մինչեւ որ նշմարեց կայարանին լայնանիստ շէնքը ու վայրկենարար ոգեւորուելով, ժպտիլ սկսաւ թեթեւ ծալքերով: Ու կայարանէն ներս մտնելուն, ըրաւ՝ ինչ որ թելադրած էին իրեն, եւ երբ շոգեկառք բարձրացաւ Պոստոն երթալու համար, ազդատախտակները դադրեցուցին իրենց սպառնալիքները եւ՝ անմիջապէս: Ապահով էր հիմա: Ինքնագոհ ու զուարթ: Ծիշէ է որ դառն վեր մագլցումը եղած էր անհաճելի ու սպառնիչ, բայց գազաթէն դիտուած համայնապատկերը տարբեր նշանակութիւն մը կը ստանար յաղթական աչքերու մէջ: Եւ այդ գոհունակութեամբ ալ կձկուեցաւ աթոռին վրայ, պատուհանին կից, մինչեւ որ փապուղին արձագանգեց բարձր նոթերու վրայ ու երկաթները զիրար կրծեցին ժամեր շարունակ...

...Նիւ Եորքի ժխորալի իրարանցումին հետ բաղդատմամբ, Պոստոնի սա համեստ կայարանը կարծես անշարժացած էր երեկոյեան այդ պահուն: Շոգեկառքէն նոր իջնող սակաւաթիւ ճամբորդներուն յարուցած թեթեւ եռուզեռէն զատ, գրեթէ ոչինչ կար շրջապատին անդորրութիւնը խանգարող: Յայտնի էր որ քաղաքին նուազ գործունեայ մէկ թաղամասին մէջ կառուցուած ըլլալուն, աճապարանքի անձկութիւնը իր աւերը չէր գործած հոն տակաւին, ապացոյց՝ պաշտօնեաները, որոնք խցիկի մը առջեւ նստած սուրճ կը խմէին գրեթէ

անվրդով: Մինչ անդին, սեւամորթ քանի մը բեռնակիրներ, իրենց դանդաղ ու երբերուն վնասքով՝ առաւել եւս կը շեշտէին տամուկ պատերուն ահռելի տղեղութիւնը: Թերեւս հոն տիրող կիսամութին պատճառաւ է որ երկու երիտասարդներ ստիպուեցան կրկին անգամ զիրար դիտել ստուգելու համար մէկզմէկու ինքնուզիրար դիտել ստուգելու համար մէկզմէկու ինքնուզիրար մինչեւ որ յուզումը կամաց կամաց մագլցեցաւ թիւնը, մինչեւ որ յուզումը կամաց կամաց մագլցեցաւ կուրծքերու տակ, շղթայակապ ընելով լեղուններն ու շրթները: Հոգեկան այդ վիճակը արգելք չեղաւ սակայն բնագրական շարժումին, ու անոնք գրկուեցան մէկէն, ամուր, գորովալիբ, կարօտակէզ:

— Վերջապէ՛ս դուև ալ ոտքդ դրիր այս հողին վրայ, Յակոբ, ըսաւ անոնցմէ մէկը, կոնակը ծեծելով նոր ժամանող երիտասարդին:

Նախկին ընկերներ էին անոնք, նոյն փողոցը մեծցած, նոյն պայքարը մղած՝ իրենց դասակարգին յատուկ ծանօթ թշուառութեան դէմ: Հինգ տարիներու բաժանումէն ետք, ահա դարձեալ կը կանգնէին կողք կողքի, մին՝ այսպէս, միւսը՝ այդպէս, Աստուած գիտէ թէ ինչպէս: Առաջինը ամերիկացած էր արդէն հազուատով ու կապուատով, եւ արտաքին քանի մը այլ յատկանիշներով, որոնք չեն բացատրուիր, սակայն կը զգացունին ակնթարթի մը մէջ: Նորեկը անշուշտ լեցուած էր յոյսով, մեծ ակնկալութիւններով, ինչպէս կ'ըլլան նորեկները այս ամերիկայի վրայ:

— Ծամբորդութիւնդ ի՞նչպէս անցաւ, ըսէ՛ նախինք... վստահ եմ քիչ մը ասլեցար ամէն ինչ վիթխարի գտնելով շուրջդ... կը վարժուիս ատոր ալ, ինչպէս շատ մը բաներու... է՛հ, այստեղ այսպէս է... Ծօ՛, ան չէ ամա, բնաւ չես փոխուած, Յակոբ. նոյն անխնամ մաղերը, փրշոտ պեխերը... պիտ ըսածդ այդքան կարեւորութիւն չունի այս երկրին մէջ. հոն տարբեր էր. առնական բան մը ունէր մէջը... հոս առնական

նութիւն չկայ. կիներու աշխարհ է: Հնչէ, եթէ յիշողութիւնս զօրաւոր չըլլար, պիտի ըսէի որ քիչ մը եւս հասակ ես նետեր. ո՞ւր կ'ուղես հասնիլ:

— Ես հասնելիք տեղս հասայ, ու մնացեալը երկրորդական է, ակնարկեց Յակոբ, թեթեւ մը ժպտելով:

— Հեռուէն լսածներուդ բնաւ մի հաւատար. հեռուէն ամէն ինչ այնպէս լաւ կը հնչէ, որ գլուխդ կը դառնայ մէկէն... կրնամ ըսել որ այս անցնող տարիներուն ես որոշապէս տեսայ իսկական Ամերիկան. ասիկա քու երեւակայած Ամերիկադ չէ, ան միւսը՝ մնաց հոն, շարժապատկերներու եւ մեր դիւրալսո՞ւ երեւակայութեան մէջ... Մայրդ ի՞նչու հետզ չբերիր, քո՞յրդ... հօրդ անակնկալ մեկնումը ցաւցուց զիս. անոնք երազ մը ունէին, երազով մը կ'ապրէին, մենք ի՞նչ ունինք, եւ ինչ ո՞վ ապրինք, շիտակը չեմ գիտեր: Ահա երեսուներ թեւակոխեցինք երկուքս ալ, ու դարձեալ սկիզբէն է որ կը սկսինք... Ե՞րբ պիտի շարունակենք արդէն իսկ սկսուած գործ մը, կեանք մը, որ արմատներ ունենար՝ խորունկ ու զօրեղ... հակառակ հին օրերու մեր անհատում դժգոհութիւններուն, սրտանց կարօտցած եմ Պէյրուսը, թերեւս Պէյրութէն աւելի տղաքը, խլրտումը, ծովափի դազինոն... հոս դազինո չկայ, Յակոբ, ամէն տեղ դազինո է...

Կայարանին աղօտ լոյսերը արդէն անհետացած էին առաջին անկիւնադարձին, ու հիմա, երիտասարդ հայերը կ'առաջանային լուսաւոր փողոցի մը մէջէն: Մինչ երկու ճամբաներու խաչաձևութիւն ինքնաշարժեր կանգ կ'առնէին կարմիր լոյսին դէմ, եւ մարդոց ալիքը կը տեղափոխուէր՝ մէկ մայթէն միւսը: Գէորդ պայուսակը տարաւ աջ ձևքէն ձախը, եւ քիչ մը թեթեւցած զգալով շարունակեց՝ մեյամաղձոտ նոյն շնչաով.

— Այս լոյսերէն մենք ալ խարուեցանք առաջին օրերուն, որովհետեւ հոգեպէս պատրաստ էինք հինը

մոռնալով նորը իւրացնելու, որովհետեւ մեր չունեցածին բազդատմամբ, երեւութական այս ճօխութիւնը ամէն բան կ'արժէր: Խորը չթափանցեցինք, լրջօրէն չմըտածեցինք՝ մեր առած քայլերուն մասին, եւ այդ պատճառաւ ալ սուղ վճարեցինք մեր փորձառութեան համար... Սահմանափակ ու կաշկանդուած մտայնութիւնէ մը նետուելով այս սանձարձակ դահալէժին մէջ, առաջին բոպէին իսկ գիտովցանք սա ողորկ ու փայլուն սրբունքներուն ի տես, եւ գլուխնիս հանդէպեցցինք մեղի հրամցուած առաջին պատեհութեան վրայ... Ամերիկացի կնոջ գորովալիւր համարձակութիւնը այն աստիճան շլացուց մեզ որ ստիպուեցանք մեղանչել մեր ականջութիւններուն դէմ... Թերեւս անդարձօրէն պիտի տուժենք այս անխոհեմութեան համար, եւ թերեւս ալ մեր մտատանջութիւնն ու զղջումը երեւակայածին զգացումներ են միայն... եւ տակաւին թերեւս, ո՞վ գիտէ:

Չափազանց յոգնած էր Յակոբ, բայց հակառակ իր պարտասած վիճակին, ամէն ճիգ կը թափէր քայլ պահելու համար բարեկամին հետ, ու կը բարձրանար անոր մտածումին սանդղատներէն, երբեմն հատ հատ, երբեմն ոստումով: Բայց որ կը հետեւէր անոր, Պոստանի կիսամութ փողոցներուն մէջ, առանց երբեք անդրադառնալու որ ամպեր կը տեղափոխուէին գլխուն վերեւ, եւ արդէն թրջուած էին բարեկամին աչքերը:

— Տեսածիդ չափ ալ անուշ չէ կեանքը: Ծիշդ է որ չըջապատը ողորուած է գունաւոր լոյսերով, բայց թափանցիկ են անոնք ու ջերմութիւն չունին... եւ թերեւս այդ պատճառաւ է որ, շատ յաճախ, երեւակայութեամբ կը ճեմեմ Տորայի թանձրախաւար փողոցներուն մէջ եւ տարօրինակ զգայնութիւն մը կը յորդի մէջս, ամէն անգամ որ սրունքներս քուրին կուտակուած ցեխին... անստոյգ ու անյոյս այդ մայթերուն վրայ աւելի ողեւոր ու իմաստալից էր կեանքը, որովհետեւ չա-

փաղանց ցած ըլլալուն մեր կանգնած հողը, օտիպուած էինք գլուխնիս միշտ վեր բռնել ու աստղերուն նայիլ... Իսկ հոս, իսկ հոս... Ես սխալ մը դործեցի ետացող արիւնս պատրուակ բռնելով... մանչ մը ունիմ, բայց օրէնքը խլեց զայն ինձմէ... Հաբաթը հազիւ անգամ մը կրնամ զինք տեսնել, ան ալ միայն քանի մը ժամուան համար... Ամերիկացի աղջիկը կին չի կրնար ըլլալ մեզի... Ես սայթաքեցայ՝ յուսահատութեան մէկ պահուս, դուն զգուշացիր... Բայց դուն հիմա բնաւ տերտ ընելու պէտք չունիս. վաղը սենեակ մը կը վարձենք քեզի, ու յաջորդ օր, Աստուած մեծ է...

— Նայի՛նք, ըսաւ Յակոբ, նայինք թէ ինչ կը բերէ ապագան հոս: Պէյրութ ի՞նչ ունէր մեզի համար զբաւելի: Օտար ենք մենք՝ ուր որ ալ երթանք, դոնէ հոս թերեւս դոնենք՝ ինչ որ հոն չկրցանք ունենալ բնաւ: Իմ միակ նպատակս է վերադառնել մարդկային իրաւունքս, ու ապրիլ՝ ճիշդ երիտասարդի մը պէս, քիչ մը անհող, քիչ մը խենթուկ, բայց միշտ հպարտ... այդ է որ միայն կը փնտոեմ ես, անկէ անդին, նայինք, նայինք թէ ի՞նչ կը բերէ ապագան:

Եւ յաջորդ օրը ըրին՝ ինչ որ ծրագրած էին: Պոստոնի հին ու թողլըուած փողոցներէն մէկուն վրայ, նոյնքան հնամաշ շէնքէ մը ներս սենեակ մը վարձեցին Յակոբին համար, եւ օրը Կիրակի ըլլալուն մնացեալ ժամերը անցուցին անցեալը վերակոչելով, հին ու մոռցուած դէպքերու անդրադառնալով: Յետոյ լռեցին պահ մը՝ խորհրդածութիւններու մէջ թաղուած: Ճանճ մը մտաւ կիսաբաց պատուհանէն, յետոյ՝ ուրիշներ, եւ համերգը սկսաւ:

— Գիտեմ որ վարպետ դերձակ ես Յակոբ, սակայն մինչեւ որ շուրջդ դիտելու պատեհութիւն ունենաս, իմ աշխատած գործատեղիէս բան մը կը ճարենք քեզի: Երկու տարի է ի վեր, սոսկալի անդործութիւն

մը կը տիրէ ամէն կողմ, բայց նախատեսութիւնը այն է թէ 1960-ը պիտի ըլլայ շատ բարգաւաճ տարի մը...

Այսպէս է որ վարպետ դերձակը թեւերը սոթտեց ու գլխիկոր նետուեցաւ գահավէժին մէջ: Նախ բան չըմբռնեց պատահածէն, շուրջը եռացող իրարանցումէն, մինչեւ որ, մինչեւ որ... Ահա փարախը ուրկէ ներս կը խուժես ամէն առաւօտ, հլու, հնազանդ, առանց մտածելու, առանց գանգատելու. ծօ, չմոռնաս սա անպիտան թուղթը ժամացոյցին տակը հրելու... չէ՛, չէ՛, այդպէս չէ, շիտակ բռնէ, կը ճմրթկես կոր պատուական քարթը... ասիկա քու թիւդ է, չէ բանտարկեալ չես, պարզ գործաւոր մըն ես հիմա... դուն թիւ մըն ես, մի ջղայնատիր, մի տաղնապիր, շուտով կը վարժուիս... վազէ՛, հիմա հանրակառքը պիտի փախցնես... ծօ՛, փապուղին քու ինչուդ է պէտք... ելի՛ր, ելի՛ր, ծունկերդ կը վիրաւորես կոր...

Կեանքը այնքան արագ դարձաւ շուրջը, մուրճերը այնքան ամուր հնչեցին մետաղին վրայ, որ Յակոբ ժամանակ չունեցաւ գործիքին տակէն թիթեղէ տուփերը ատենին հաւաքելու, հատ հատ, շարք առ շարք դիզելու իրարու վրայ, բրդաձեւ, դնդաձեւ, շատ տձեւ, եւ այդ պատճառաւ ալ, քանի՞ քանի անգամներ փողոցներուն անունները մոռցաւ եւ ստիպուեցաւ թափառիլ վերէն վար, վարէն վեր, աննպատակ, ուժակորոյս, շփոթած:

Եւ այս շրջանին՝ հետզհետէ վարժուեցաւ տեղական լեզուին, սովորութիւններուն, ամերիկեան ճաշակներուն, եւ դժուարութիւն չունեցաւ քաղաքին ճանչցուած վաճառատուներէն մէկէն ներս՝ իր փորձառութեան համապատասխան գործ մը ստանձնելու: Հոն է որ աւելի մօտէն շփման մէջ մտաւ Պոստոնի այն միւս կեանքին հետ, եւ զուարթութիւնը վերադառնելով, սկսաւ ձերբազատուիլ սկզբնական օրերու ահ-

ուելի յոռետեսութենէն: Այլևս չզանգատեցաւ, չանիծեց ո՛չ ճակատագիրը եւ ոչ ալ դաղթական կեանքը, եւ կարծես շուտով համակերպելով տեղւոյն մտայնութիւններուն, անմիջապէս վրայէն թօթուեց ինչ որ զինք կը տարանջատէր տեղական գոյնէն ու սկսաւ համարձակօրէն դուարձանալ իր հետ աշխատող կիմերուն, աղջիկներուն հետ: Միայն Գէորգն է որ դժգոհ էր անոր այս նորագոյն ապրելակերպէն, որուն մասին ակնարկութիւն ընելէ բնաւ չէր քաշուեր՝ ամէն անգամ որ զիրար տեսնէին քիչ մը խորհրդակցելու համար: Եւ այս հանդիպումներէն մէկուն ընթացքին է որ ան կը գանգատէր՝ սա տեսակ շեշտեր դնելով արտայայտած կարծիքներուն վրայ.

— Ամերիկան քու վրադ ալ դրաւ սեփական դրոշմը, այլևս դուն ալ անճանաչելի կը դառնաս՝ միւս բոլորին պէս... Ի՛նչ, ի՛նչ փոփոխութիւններ կրեցիր մէկ տարուան ընթացքին... Էֆերիմ փաշաս, այս կերպ կեանք մը շատ լաւ կը վայելէ կոր քեզի... Ռ՞ըր մնացին նախկին մտահոգութիւններդ, գանդատներդ...

— Ա՛ն, ան սա խմէ որ դուն ալ մոռնաս ամէնօրեայ դժուարութիւններդ. Պէյրութի օդին համը չունի, սակայն աւելի պատշաճ է մեր ներկայ դիրքին:

— Վաղը դուն ալ կը յոգնիս կիներ հալածելու այդ խենթ պահանջէն, կը ձանձրանաս շուտով, ատոր վստահ եմ... Նայէ որ դիւրուդ փորձանք մը չըրես, իմ վիճակս մի մոռնար բնաւ, չըլլայ որ մոռնաս...

— Ինչպէս կրնամ մոռնալ, երբ ամէն տեսակցութիւն կ'աւարտես զրեթէ միեւնոյն յանկերզով... Գէորդ, սիրելիս, դուն կեանքը կը դիտես քու սեփական դառնութիւններու մէջէն, եւ բնական է որ ամէն ինչ մութ տեսնես... դուն ո՛չ առաջինն ես եւ ոչ ալ վերջինը՝ ամուսնական դժբախտութիւններու մէջ. Ա-

մերիկան կը վխտայ ամուսնալուծուած, խարուած ամուսիններով, ինչո՞ւ այդքան ծանր կ'առնես այս բնական պատահարը:

Գէորդ չպատասխանեց: Գլուխը ճզմեց ասիերուն մէջ ու լուռ մնաց: Մինչ Յակոբ, բաժակը ձեռքին՝ արագօրէն կը շրջադայէր սենեակին մէջ: Յետոյ կանգ առաւ ըսպէ մը, դիտեց ցաւատանջ այդ գլուխը ու մօտեցաւ քովնտի պատուհանին ու մէկդի ընելով ծանր վարձոյրը, սկսաւ դիտել՝ հեռուն տարածուող զետը մոխրագոյն: Օրուան այդ պահուն, համալսարանի տղաքը արշաւի էին ելած մրցանաւերով, իսկ աւելի անդին, առադաստներ կ'ուռէին հովին դիմաց:

— Ի՞նչ լուր կ'առնես մօրմէդ, քոյրէդ, անոնց վիճակը, կացութիւնը ի՞նչպէս է, հարցուց Գէորդ, լուսթիւնը խզելով:

— Բաժնուած տուն մը ասկէ աւելի լաւ չ'ըլլար. ամէն ամիս պէտք եղած գումարը կը զրկեմ իրենց, ատկէ աւելի ի՛նչ կ'ուզես:

— Մենք ազգովին կը ներկայացնենք ջախջախուած պատկերը բաժնուած տունին... Թերեւս օր մը պատկերը փոխուի, բայց ոչ՝ տունը... պէտք է որ տունը փոխուի...

Այդ բառերը արտասանելէ յետոյ ոտքի ելաւ Գէորդ: Սիկարէթ վառեց ու քանի մը անգամ խորունկ ներշնչելէ ետք ծուխը, ուղղուեցաւ դուռը, բայց դուրս չելած, ակնարկը զետին ու դողդոջ ձայնով ըսաւ.

— Չաւակ չես ունեցած, որ ըմբռնես զայն կորսնցնելու անբուժելի տառապանքը, ու մեկնեցաւ:

Յակոբ դաժուած մնաց պատուհանին կից, ակնարկը դուռին, եւ վերջնականապէս վճռեց ա՛լ չտեսնել իր հին բարեկամը, որովհետեւ կը զգար ներքնապէս, որ անոր ներկայութիւնը դէ՛յ նախատեսութիւն-

ներու կ'առաջնորդէին զինք, միշտ կապ մը պահելով
ապագայ վտանգներու հետ: Կամ ատոր պէս բան մը,
որ չէր կրնար բացատրել, չէր կրնար բժշկել կատա-
րելիակէս, քանի կը զգար զայն, ամբողջ էութեամբ:
«Թշուառութենէն ես ունեցած արքայական բաժին
մը», մտածեց ան, իբրեւ արդարացում, որպէս չքմե-
ղանք, «Հիմա ատենն է քիչ մը ժպտելու, հոգ չէ թէ
այդ ժպտը չըլլայ կատարեալ, տեւական, շողշողուն,
բայց բաւ է որ ժպտիլ կարենամ», շարունակեց խոր-
հրդածել, եւ առանց անդրադառնալու մանրամաս-
նութիւններուն, արագօրէն հեռացաւ իրեն մտերիմ
չըջանակներէն, մտալիկութենէն, ու նետուեցաւ մերկ
գիշերներու կատաղութեան մէջ:

Ու հոն է որ հանդիպեցաւ Լինտային, վաւաշոտ,
ինքնամատուց գրագրուհիին, յետոյ ճանչցաւ ցան-
կալի նենսին, կրակ ու բոց Մարիան, ու երբ կարդը
եկաւ չինացի պարուհիին, այն ատեն բծախնդրու-
թեամբ սկսաւ կատարել իր ընտրութիւնները, եւ
կեանքը ապրած երիտասարդի հովեր առնելով՝ ան-
դադար փոխեց հասցէ ու շապիկ: Այո, կ'ուզէր մոռ-
նալ անցեալ ու յիշատակ, ու ապագային կը նայէր
կողմնակի բացուածքէ, միշտ խուսափոխական: Ու-
րեմն այս է իրական կեանքը, մտածեց Հրճուանքով,
ու ալ աւելի մխրճուեցաւ երիտասարդ արիւնին խենթ
պահանջներուն մէջ: Եւ երբ հասաւ վախճաններու ամ-
պոտ բարձունքը, անակնկալ փոթորիկ մը պայթեցաւ
խաղաղ ջուրերուն վրայ ու խորտակեց անոր նաւը դիւ-
րարեկ:

Եւ որպէսզի խեղդամահ չըլլայ իր ցաւերուն մէջ,
Սիլվիային պատկերը սիրտին մէջ առած, սոսկումնա-
հար ու ահարեկ, խենթի մը պէս յանձնուեցաւ մութ
գիշերներու վայրի քմայքին, ու գինովցաւ յուսահա-

տութեան բաժակներուն շուրջ, մինչեւ որ կորսնցուց
ուղղութիւն ու նպատակ, եւ մինչեւ որ...

**

Ապշեցաւ Գէորգ: Ընկրկեցաւ մէկէն հիասթափու-
թեանը մէջ, լեզուն բռնուած: Աչքերուն չէր կրնար
հաւատալ: Այդ պատճառաւ ալ բռները իրարու խառ-
նուեցան, երբոր փորձեց հասկնալ թէ՝

— Ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ...

Ամիսներէ ի վեր չէին տեսած զիրար, եւ Հիմա,
Յակոբ հոն էր, դրան սեմին, խորտակուած, փշրուած,
անճանաչելի:

— Ո՞ր մէկն էր այս անգամ...

Վերջին տեսակցութեան այնքան զուարթ էր Յա-
կոբ, այնքան հպարտ ու ինքնավստահ, որ Գէորգ չէր
կրնար հաւատալ թէ կրնար քանդուիլ անխորտակելի
այդ գոռոզութիւնը:

— Ինչո՞ւ աւելի կանուխ չեկար հոս...

Մազերը խառնիխուռն, կուրծքը բաց, արիւնոտ
աչքերով, կքած մէջքին վրայ, Յակոբ կը դողար դրան
ճիշդ սեմին:

— Ի՞նչ պատահեցաւ, բացազանչեց Գէորգ, այ-
լեւս չկարենալով ինքզինք զսպել այդ տեսարանին
առջեւ:

— Ոչինչ, կակազեց Յակոբ, ոչինչ, շատ յոգնած
կը զգամ հիմա, թոյլ տուր որ նստիմ... ու ինքզինք
նետեց Հին աթոռի մը վրայ ու սկսաւ հեկեկալ ճիշդ
մանուկի մը պէս, ցաւատանջ, բղկտուած, քայքա-
յուած ձայնով: Յետոյ դադրեցաւ մէկէն, ու միշտ
գլխահակ, ակնարկը սրած թրջած կօշիկներուն, բա-
ցակայ շեշտով ըսաւ ինքն իրեն.

— Մենք ի՞նչ դործ ունինք հոս... մենք դեռ մասնակիներ ենք՝ մայրերու կարօտ...

— Ատոր պատասխանը դուն ինձմէ աւելի լաւ պէտք է դիտցած ըլլաս, բայց հիմա մեր վիճակին վրայ ողբալու ատենը չէ. ելի՛ր, ելի՛ր լուսցուէ որ քիչ մը հանդարտիս, յետոյ վրայէդ հանէ սա հագուստներդ, թրջուած ես կատարելապէս. ելի՛ր կ'ըսեմ կոր, հիմա հիւանդ պիտի ըլլաս:

Ոտքի ելաւ Յակոբ ու սենեակին մէկ անկիւնը զետեղուած լուսցարանին մէջ լուսլէ յետոյ դէմքն ու ձեռքերը, վրայէն նետեց թրջուած լաթերը եւ Գէորդին դիչերանոցը հագած, եկաւ ու գրասեց իր նախկին ակնոցը: Քիչ մը կազդուրուած ըլլալով, փորձեց վերադառնել մտածելու հին եղանակը, բայց երբ տեսաւ որ տակաւին կը դողար քիչ մը եւ գլուխը կը ճզմուէր սաստիկ ցաւի մը մէջ, ակնարկը պտըտցուց սենեակին համեստ գոյքերուն վրայ ու ջանաց խօսիլ.

— Վստահ կրնաս ըլլալ, որ սասնկ բան մը կրկին չի պատահիր:

— Հող չէ, ըսաւ Գէորդ, հող չէ, թերեւս այս փորձառութիւնը իր լաւ հետեւանքերը կ'ունենայ. ամէն փորձառութիւն հետեւանք մը կ'ունենայ, դէչ կամ աղէկ:

Գէորդ զուարթացաւ զազտնօրէն, որովհետեւ վերջապէս կը վերադանէր իր նախկին բարեկամը. բայց որպէսզի ուրախութիւնը զսպուած պահէ, սուրճին ամանը զետեղեց կրակին վրայ ու աթոռ մը քաշելով նստեցաւ անոր դէմ: Լուռ էին երկուքն ալ: Կարծես ներսէն կը բարձրանային չարտասանուած բառերը, եւ սահող վայրկեաններէն օգտուելով՝ խօսակցութիւնը կը դառնար երկիմաստ ու խոր, ներքին խօսակցութիւն մը, անհամար ելեւէջներով: Յետոյ սակայն, երբ սուրճը փրփրեցաւ գաւաթներուն մէջ, եւ Յակոբ,

կամաց կամաց վերադառաւ մտքի պայծառութիւնը, յանցաւոր եղանակով մը ըսաւ բարեկամին.

— Քու բարեկամութիւնդ դէչ կերպով գործածեցի, ներելի չէ ատիկա բնաւ...

— Անոնք երկրորդական բաներ են, կու գան ու կ'երթան, բայց դուն ինձի տակաւին չպատմեցիր թէ՛ ի՞նչ պատահեցաւ քեզի:

Սուրճի երկրորդ դաւաթը պարպելէ յետոյ, սկիւրէթ մը վառեց Յակոբ եւ ակնարկը հեռացնելով բարեկամին աչքերէն, սկսաւ մէկէն.

— Ինչպէս կրնան պատմուիլ այսպիսի դէպքեր... ամէն ինչ զղացումի հետ կապուած է, ներքին ապրումներու, որոնց մասին միայն դիրքերու մէջ կը կարդաս: Ես բնաւ չէի կրնար երեւակայել, որ այսքան կին ու աղջիկը վայելելէ յետոյ, ինքզինքս մէկէն պիտի դառնէի նման վիճակի մը մէջ: Բայց արդար ըլլալու համար ըսեմ որ Սիլվիան բոլորովին տարբեր էր միւսներէն: Հակառակ նրբակազմ կին մը ըլլալուն, քիչ թէ շատ երեւելի տեսք մը ունենալուն, ունէր նաեւ լրջութիւն եւ բացառիկ սիրտ մը: Այդ առաւելութիւններն էին թերեւս որ ուշադրութիւնս գրաւեցին առաջին մէկ բոպէին ու շարաթ մը չանցած՝ խենթի մը պէս կապուեցայ իրեն: Եւ ամէնէն դէչը, ինք ալ կապուեցաւ ինձի, եւ ամիսներ շարունակ ամէն պատահութիւն օգտագործեցինք իրարու հետ անցընելու համար: Երջանիկ էի, անբացատրելիօրէն, կատարելապէս: Վերջապէս, կը մտածէի, ահա հասայ հանգրբուան մը կեանքիս մէջ, երբ այլեւս լրջօրէն ու առանց երկմտանքի կրնամ ծրագրիւնք մշակել ապագային համար ու...

Կանդ առաւ Յակոբ այդ կէտին վրայ, չենթարկուելու համար ժայթքող յուզումին, որովհետեւ դէպքերը շատ թարմ էին տակաւին, եւ վերապրելու հա-

մար այդ հին պահերը, յիշողութեան բնաւ պէտք չունէր: Բայց հակառակ դողացող ձայնին, կ'ուզէր պատմեւ, կ'ուզէր պարպուիլ միանգամ ընդմիշտ ու մոռնալ ամէն բան, որքան որ կարելի էր:

— Մեր յարաբերութեան առաջին շրջանին, երկուքս ալ կը խուսափէինք որեւէ ակնարկութիւն ընելէ մնայուն կապի մը մասին, եւ այդ պատճառաւ ալ մեր ամբողջ ուշադրութիւնը կը կեդրոնանար հաճոյքներու եւ վայելքի մէջ: Եւ թերեւս պէտք էր որ այդպէս մնար, որպէսզի . . . որպէսզի տեղի չունենար՝ ինչ որ անխուսափելի էր: Կարծեմ երկու շարաթ առաջ էր, երբ իրեն առաջարկեցի որ անպայման որոշում մը տայինք, վճռական քայլ մը առնէինք, որովհետեւ, ըսի, այլեւս ինծի համար անտանելի կը դառնային իրմէ հեռու անցուցած բոլոր ժամերը, եւ թէ պարբերաբար հանդիպումները ալ չէին դոհացներ զիս: Հակառակեցաւ, ընդդիմադրեց, անտեղիտալի մնաց թախանձանքներուս առջեւ. «Այժմ գոհանանք մեր ունեցածովը եւ բնաւ չմտածենք ասպագայի մասին. ի՞նչ պէտք կայ պղտորելու այսպիսի գեղեցիկ յարաբերութիւն մը, մնայուն կերպով, խոստումներով, երբ ո՛չ դուն եւ ո՛չ ալ ես ի վիճակի ենք զանոնք յարգելու» ըսաւ վճռականօրէն: Այն ատեն ջղայնացայ եւ արիւնը գլուխս խուժեց ու այդ նոպային մէջ ըսածներս չկրօցայ հակալուել ու կարծեմ շատ տղեղ խօսքեր արտասանեցի առանց մտածելու: «Ես քեզմէ բնաւ դաղտնի չպահեցի ամուսնացած ըլլալս, յետոյ մի մոռնար որ Սթիվին հանդէպ ունեցած սէրս, համակրանքս՝ շուտով չքացան ամուսնանալէ ետք, եւ կը վախնամ որ նոյնը պատահի մեր պարագային ալ» ըսաւ նոյն շեշտով, բայց կը զգայի որ այլեւս կը յուզուէր, ու արցունքի հետքեր կը ցոլային աչքերուն մէջ: Սակայն ես դարձեալ պնդեցի յուսահատութեանս ամբողջ կատա-

ղութեամբը, առարկեցի բոլոր բաժններուն եւ չուզեցի տեղի տալ, բնաւ, երբեք, մինչեւ որ Սթիվիս փղձկեցաւ ըսելով որ պաշտօնական ձեւակերպութիւն մը որեւէ ձեւով պիտի չփոխէր մեր ունեցածը իրաւուն հանդէպ, թէ ես՝ պարզապէս եսասէր էի, տաքարուն, եւ թէ բնաւ չէի խորհեր արդելքներու, հետեւանքներու մասին:

Այս անգամ իրապէս կը զողար Յակոբ, այնքան մը որ Գէորգ ստիպուեցաւ ընդմիջել զայն, խնդրելով որ ուրիշ առիթով մը շարունակէր մնացեալը պատմութեան. բայց Յակոբ չէր կրնար լսել զայն, քանի վերստին կ'ապրէր՝ այդ միւս պահերը:

— Չեմ գիտեր որքան տեւեց մեր վիճարանութիւնը այդ գիշեր, բայց կը յիշեմ որ ճաշարանին յաճախորդները ալ դադրած էին ուտելէ ու մեզ կը դիտէին հետաքրքիր ու ապշած: Այն ատեն ոտքի ելայ, ու ըսի թէ հակառակ իր մասին ունեցած բացառիկ դադարներուս, սխալած էի, քանի որ ինք բնաւ ալ տարբեր չէր միւս ճանչցած կիներէս, ու փայտայ իրմէ, փախայ՝ առանց մտածելու եւ ժամերով թափառեցայ փողոցէ փողոց, եւ երբ ալ սպառած յարկաբաժինս հասայ, Սթիվիան գտայ հոն: Ուզեցի վճռուել զինք, ուզեցի թեւէն բռնել ու դուրս նետել անմիջապէս, բայց երբ փաթթուեցաւ ինծի, այն ատեն տկարացայ. ո՛, ինչպէս տկարացայ. . . եւ հակառակ իր սովորութեան, այդ գիշեր չուզեց ամուսնինին վերադառնալ, ու ամբողջ գիշերը անցուց ինծի հետ, եւ յաջորդ առաւօտ . . . գուռին վրայ ինկող զօրաւոր հարուած մը ցնցեց մեզ մէկէն: Սթիվիային ամուսնին էր: Յաջրակազմ, կաղնիի նմանող իրլանտացի մը: Չիս մէկ կողմ հրելով, անկողինէն դուրս քաշեց սարսափած կիներ ու ստիպեց որ շուտով հետեւի իրեն: Յետոյ ինծի դառնալով ըսաւ հրամայողական ու կտրուկ. «Երկրորդ

անդամ պիտի չզգուշացնեմ քեզ, օտար շուն»։ Մեր երկուքին մէջտեղ կանգնած էր այդ պաշտելի էակը, բոլորովին մերկ, իր ամբողջ գեղեցիկութեամբը... բառ մը չարտասանեց ան, յուզումի ոչ մէկ նշան կրընայի տեսնել կենսունակ ու անուշ այդ աչքերուն մէջ. միայն դուրս ելլելէ առաջ, վայրկեան մը կեցաւ դուռին մէջ ու ինծի սրելով այդ կապոյտ ակնարկը ըսաւ՝ չափազանց հանդարտ. «Ասանկ կ'աւարտի»։

Սուրճը նորոգեց Գէորդ, գրեթէ անաղմուկ, անձայն շարժումներով։ Ա՛լ չէր ուզեր մտիկ ընել, ալ չէր ուզեր հետեւիլ մնացեալ դէպքերուն։ Բայց Յակոբ շարունակեց, կարծես ինքն իրեն ուղղելով խօսքերը.

— Երկու շաբաթ է ի վեր բոլորովին կորսնցուցած եմ ինքզինքս։ Ինչ որ փորձեցի՝ մոռնալու համար այդ սիրելի դէմքը, այնքան աւելի ան պայծառացաւ մտածումիս մէջ։ Վազեցի ամէն կողմ, ամէն զիշեր դիտուցայ անհետօրէն, ցաւազինօրէն, մինչեւ որ ալ կորսնցուցի մտածելու հաւասարակշռութիւնս, եւ դորժ ու դրաղում երեսի վրայ ձգած, վնասուեցայ՝ մէկ ըմպելատունէն միւսը, մինչեւ որ... մինչեւ որ...

Երկար պահ մը լուռ մնալէ յետոյ, Գէորդ ոտքի ելաւ, ու քանի մը քայլ առնելէ ետք սենեակին մէջ, պատուհանէն դուրս նայելով ըսաւ մեղմօրէն.

— Ամէն փորձառութիւն դաս մըն է մեզի հոմար... ելիր, պառկինք, շատ ուշ է արդէն...

...Առաւօտուն երբ արթնցան, ձմրան արեւը եկած ու նստուած էր նորէն՝ սենեակին միակ պատուհանին վրայ, կարծես թէ ոչինչ էր պատահած իր բացակայութեան։ Հանդարտ արեւ մը, անջերմ ու օտար։

Սիկարէթը վառելով պատուհանին մօտեցաւ Յակոբ։ Յունուարի ձիւնը գեղափայլ վայելչութեամբ նստած էր ամէն կողմ, երբեմն ծառերու վրայ, մինչեւ ասիերը ծաւալող գետին, ուր նաւարկու-

թեան էր ելեր ուրիշ արեւ մը, ոսկի թեւերով։ Ու մեծափառ այդ լուսութեան մէջ, ահա զանգակ մը, մեղամաղձոտ, թրթռուն, զանգակներ՝ այսպէս, մեղմաձայն, քառաձայն, դաշնաւոր։ Յետոյ՝ կամաց կամաց մանուկներ թափուեցան սպիտակ մայթերուն վրայ, խմբակներ սկսան առաջանալ փողոցներու երկայնքին, շուները ետեւէն, ու կիրակնօրեայ արեւը պճլտաց մէկէն։ Օ՛, որքան պիտի փափաքէր, որքան պիտի ուզէր կրկին վերադառնալ անմեղ օրերուն, ու կեանքը դիտէր տարբեր անկիւնէ։ Արդեօք կատակերգութիւն մը չէ՞ր սարքուածը, խիստ ցաւալի զաւեշտ մը, որուն գլխաւոր գերակատարը՝ ինք էր հանդիսացած, միտ միտակ, այսպէս։ Ու սկսաւ վերջիչել ամբողջ տոսմը, եւ երբ կրկին հասաւ վերջին արարին, այն ատեն անդրադարձաւ միայն, որ այլեւս չէր կրնար վերադառնալ իր նախկին կեանքին, անդիտանալով ու անտեսելով ամէն ինչ։ Հիմա որ ամէն բան վերջացած էր ալ, պարպուած կը զգար՝ հակառակ վիշտին, որ կը զալարուէր՝ կուրծքին տակ տեղ մը։ Եւ որքան մտածէր իր անխորհուրդ քայլերուն մասին, անհանդուրժելի նեխածութիւն մը կը զգար՝ իր վարմունքին մէջ։

Յետոյ, երբ միասին նստեցան նախաճաշի սեղանին շուրջ, Գէորդ խօսեցաւ, կարծես բարձրաձայն աւարտելով ներքին մենախօսութիւն մը, որ կը կատարէր շարունակաբար.

— Կը յիշե՞ս ժամանումիդ առաջին զիշերը... հարկաւ որ յիշելու ես... ահա, գրեթէ երկու տարիներ անցան այդ օրէն ի վեր, ու կեանքը ի՞նչ անակնկալներ բերաւ՝ ասկէ ու անկէ։

— Ինչպէս կրնամ մոռնալ, ըսաւ Յակոբ, ո՛չ առաջին օրը եւ ոչ ալ անակնկալները, որոնց կը սպասէի կարծես քիչ մը անհամբերութեամբ, բայց ընաւ միտքէս չէր անցներ որ այսպիսի դէպքեր պիտի պատահէին

բողոքովին տակնուվրայ ընելով զիս... իրողութիւնը
այն է թէ մեզմէ ոչ ոք այնքան զօրաւոր է՝ այս հոսան-
քին զիմադրելու աստիճան. անկէ չտարուելու աստի-
ճան... պէտք է ընդունիլ սակայն, որ մեր դասակար-
զին պատկանող տղաք՝ ո՛չ դիւրութիւնը եւ ոչ քաջու-
թիւնը ունէին Պէյրութի պէս տեղ մը ասանկ կեանք մը
վարելու... փորձութիւնն է որ երեւան կը հանէ մար-
դուս խակական նկարագիրը, տկարութիւնները, եթէ
կ'ուզես:

— Իրաւունք ունիս, իրաւունք ունիս, սակայն որոշ
չափով մը միայն... որոշ չափով կ'ըսեմ, որովհետեւ
դուն ալ, շատերու նման՝ թերացար քու պարտականու-
թիւններուդ մէջ, եւ հաճոյքներու մէջ փնտոցելի հո-
գեկան պահանջ մը, որ չէիր կրնար հասկնալ: Այսքան
ատենէ հոս ես, տակաւին օր մը չհետաքրքրուեցար
հայկական շրջանակներով, եկեղեցիով, ազգ. կեան-
քով: Մարդ միայն դժբա՞խտ ըլլալու է, փնտոցելու հա-
մար իր ազգակիցները... քեզմէ աւելին կ'ահնկալէի,
դուն որ այնքան եռանդով կապուած էիր մեր նպատակ-
ներուն, մեր երազներուն... եթէ քեզի պէսներ նման
զիրքեր բռնել որոշեն, ալ ի՛նչ կ'ուզես սպասել նուազ
գիտակիցներէ...

Ինչպէս շատ յաճախ կ'ընէին սկզբնական շրջաննե-
րուն, այս անգամ ալ՝ ամբողջ օրը միասին անցուցին եւ
Գէորգ, այս բացառիկ պատեհութիւնը լիովին օգտա-
գործելով, անդադար խօսեցաւ՝ նիւթէ նիւթ ոստոստե-
լով, երբեմն հանդարտ, երբեմն յուզախառն, բայց
միշտ համակերպող, փափկանկատ: Յակոբ մտիկ ըրաւ
անոր, առանց լսելու, որովհետեւ մտածումը կը սա-
ւառնէր տարբեր ուղղութիւններով, ուր համայնա-
պատկերը չունէր կարծուած նրբութիւնը, գեղեցկու-
թիւնը, երբեք:

Այո, վճռական քայլ մը չառած, ինքզինք կը զինէր

մերձաւոր առանձնութեան դէմ, որ իբր պիտի ըլլար՝
մութը իջնելուն պէս: Եւ հակառակ ինքնավստահու-
թիւնը դատած ըլլալու յաւակնոտութեան, կը զգար խո-
րապէս՝ որ Միլիթան անվերադարձ կորսնցուցած ըլլա-
լը, դեռ ատեն մը եւս պիտի տառապեցնէր զինք, պիտի
բզկտէր ներքին հանդարտութիւնը: Եւ զիմադրելու հա-
մար դալիք օրերու սոսկալի ցուրտին, պէտք է կատա-
րէր անհրաժեշտ փոփոխութիւնը՝ նախկին սպրեւակեր-
պին մէջ: Եւ որպէսզի ջրամոյն չըլլայ պղտոր զգացում-
ներուն մութ լճակին մէջ, ոստում մը ըրաւ, ու տեսաւ
լոյսը՝ թեթեւ ու տժղոյն: Եւ անմիջապէս վճռեց նե-
տուիլ՝ իր ազգակիցներուն անվերջանալի մտահոգու-
թիւններուն մէջ, ատենուան մը համար մոռնալով իբր:
Մինչ Գէորգ կ'ըսէր ոգևորուած, սրտայոյզ, վերա-
ցած.

— Թշուա՞ն պէտք է ըլլայ մարդ փնտոցելու համար
իր ժողովուրդը...

Եւ Յակոբ նետուեցաւ առանց մտածելու, առանց
վերասպահութեան, նորոգուած խանդավառութեամբ մը,
որ նոյնիսկ զարմացահար ըրաւ իր հին բարեկամը:

2

Պոստոնի յայտնի արուարձաններէն ամենէն համ-
բաւաւորն է Գէյմպրիճ, տարածուած՝ պատմական
գետի մը եզերքին, ուր դրեթէ ոչինչ է մնացել պատ-
մական անցեալ մը ցոլացնելու համար: Գլխաւոր հրա-
պարակէն ու հին շէնքերէն աւելի, քաղաքը նշանաւոր
է իր հռչակաւոր համալտարանները զարգարող տիտղո-
սաւոր տաղանդներով, ինչպէս փողոցներով՝ ուրկէ ան-
ցած են լաւազոյն միտքերը երկրին, վէպերու ու բա-
նաստեղծութեան մէջէն:

Գարնան առաջին շրջանին, երբ ձիւնին վերջին

հետքն ալ կ'անհետի մայթերու վրայէն, պողոտաները
կը սկսին հազնիլ գոյնդոյն շապիկներ, թափանցիկ ու
լուսաղարդ: Լայնածաւալ ճամբաներու վերեւ, սիզա-
ճեմ բարտիններ կը գրկուին թեթեւ, ամէն անգամ որ
զեփիւտը դուռէ դեղուղէչ կուրծքերը անոնց: Պատմա-
կան այդ անցեալին վրայ, եւ բնութեան ներակերտ մէկ
պատաստին մէջ, հիմա կանգնած է եկեղեցին հայկա-
կան իրրեւ օտարական մը շփոթ: Ահա հոն է որ եկած էր
Յակոբ միախառնուելու համար իր ժողովուրդին նորա-
գոյն սովորութիւններուն: Բայց նախ քան առաջանալը
դէպի լուսաւոր սրահը, կանգ առաւ վայրկեան մը դի-
մացի մայթին վրայ, եւ դմայլած ու ապշահար, աղ-
նարկը սրելով բարձրագոյն տաճարին, ըսաւ՝ մէկ
շունչով.

— Այս ի՞նչ հարստութիւն...

— Մենք մեր Աստուածը սոյոգէս կը յարդենք, ա-
ճաղարեց պատասխանել Գէորգ, պաղարիւն ու անտար-
բեր:

— Համեստ եկեղեցիներուն մէջ ի՞նչ կ'ընենք
հապա, արձագանգեց Յակոբ, քի՛ծիծաղով մը:

— Նպատակը կարեւոր է այս պարագային, երբ ի-
րագործումը կը շողայ աչք կուրցնելու աստիճան:

Հակառակ օրը Կիրակի ըլլալուն, Յակոբ մասնաւո-
րաբար եկած էր հոն, նախ ներկայ ըլլալու համար ճաշ-
կերոյթին, յետոյ՝ պարին, որ անմիջապէս պիտի յա-
ջորդէր զոյգ բանախօսութիւններուն: Բայց իրենք ար-
դէն ուշացած ըլլալուն, երբ ներս մտան եկեղեցւոյ կից
տարածուող պատկառազու սրահը, ճաշկերոյթը ա-
ւարտելու վրայ էր գրեթէ, եւ երկրորդ բանախօսը կը
փրփրէր դինիի բաժակներուն շուրջ: Բայց զեռ փրփուրը
չցամքած սեղաններու վրայէն, անմիջապէս սկսաւ
հայկական պարահանդէսը եւ ամերիկեան երաժշտու-
թիւնը ոտքի նետեց երիտասարդ գոյգերը:

— Կը տեսնե՞ս, ըսաւ եկեղեցւոյ քահանան սեղա-
նակիցին դառնալով, բանախօսութեան ատեն մէկ հատ
երիտասարդ չէիր դտներ շուրջդ, հիմա որ պարը սկսաւ,
տեղ չմնաց շարժելիք... այս է մեր իրական պատկերը:

Յակոբ անմիջապէս օգտուեցաւ ստեղծուած ալե-
ծուի խանդավառութենէն եւ պարեց ու զինովցաւ:
Սմեց ու դուարթացաւ, եւ երբ դինին կատարելապէս
տիրապետեց անոր ջիղերուն վրայ, այն ատեն աւելի եւս
աշխուժացաւ հայ երիտասարդը ու ալ չկարենալով դա-
նազանել Սիլվիան ու Սիրարփին, սկսաւ բարձրաձայն
յայտարարութիւններ ընել աջին ու ձախին.

— Ես քու սեւ աչքերդ սիրեմ Սիրարփի, ես քու
փափուկ միսերդ սիրեմ Սիրանոյշ... Սիլվիա՛, Սիլ-
վիա՛... ո՞ւր ես դուն...

Ու դարձաւ անդադար, անընդհատ, յորձանքէ բըռ-
նուածի մը պէս, բաժակը ձեռքին, ժպիտը չթնկերուն,
մինչեւ որ կթոտեցան ծունկերը ու սեղանի մը կռօնելով
բացադանչեց.

— Պաշտեցի քեզ, հա՛յ ազջիկ...

Մինչ այդ Գէորգ նշմարեց բարեկամին սայթա-
քումը ու թեւէն բռնելով անմիջապէս դուրս առաջնոր-
դեց զայն:

— Ծօ՛, այս ըրածդ վայելե՞ց քեզի... ի վերջոյ ա-
սիկա քու սովորական շրջանակներուդ էի նմանիր, քե՛չ
մը զսպէ ինքզինքդ:

— Ես այս շրջանակը սիրե՛մ, սիրեմ այս կլոր շք-
ջանակը ե՛ս... նայէ՛, կը պահնուին կոր, ան ալ լոյսին
տակ, ամենուն առջեւ... ես կը սիրե՛մ, սիրեցի՛...
քեզ հայ ազջիկ...

Եւ այդ դիչերը բացառիկ անկիւնադարձ մը հանդի-
սացաւ Յակոբին համար: Որով, անկէ ետք, բաղձաթիւ
առիթներով ան վերադարձաւ նոյնանման շրջանակնե-

բու, հաւաքոյթներու եւ ամէն այցելութենէ յետոյ, քիչ մը աւելի մօտիկութիւն զգաց իր ազգակիցներուն: Եւ պարբերական այս շփումները պատճառ եղան որ ան հետեւող հետէ ձերբազատուի հողեկան դառն լքուածութենէն, եւ առանձնակեաց կեանքէն հեռանալով՝ ծանօթութիւններ հաստատէ հայ բնտանիքներու հետ: Ու այդ միջավայրին մէջ է որ դէմ յանդիման եկաւ նոր կազմուող սերունդի մը հետ, որ տակաւին վերջնականօրէն ճշգրտւած չլլալով իր ինքնութիւնը, կը տարուբերէր մտայնութիւններու միջեւ. «կիսափոխ դիմազիծներ են ասոնք», ըսաւ Յակոբ ինքն իրեն, ու առաջին անգամ լլալով ըմբռնեց խորութիւնը՝ գործուող աւերին:

Ընտելացումի այս կարճատեւ շրջանին է որ նոյնպէս, յիշատակ դարձան նախկին սիրարկածները, եւ ան սկսաւ համակրանքով դիտել հայ աղջիկները, ու անոնց մէջ մանաւանդ՝ Սիրվարդը, որ հակառակ դրաւիչ դեղեցիկութիւն մը չունենալուն, իր սակաւախօսութեամբն ու լուրջ դադափարներով տպաւորեց դինք՝ առաջին հանդիպումին իսկ:

— Ես շատ չեմ ախորժիր աղմկարար երաժշտութենէ եւ ոչ իսկ պարէն, ըսաւ Սիրվարդ. ինծի համար ժամանակի վատնում են այսօրինակ ձեռնարկներ. վրտտահ եմ որ դուք վարժ էք ասանկ բաներու, քանի շատ նախնական բաներ են ասոնք...

— Եթէ կը փափաքիս, քեզ ուրիշ տեղեր կը տանիմ, միջամտեց Յակոբ, քիչ մը քաջալերուած՝ աղջկան մտերմիկ շեշտէն:

— Չէ՛, իմ նախընտրութիւնս ընաւ չի համապատասխաներ ասանկ բաներու... ես կը սիրեմ թատրոնը, լուրջ գործեր, որոնք հողիին կը խօսին, մտածել կուտան... վերջապէս ճաշակի ու դաստիարակութեան հարց է ասիկա:

Յակոբ իրապէս չհասկցաւ թէ ի՞նչ ըսել կ'ուզէր

լրջադէմ աղջիկը, սակայն երբ անոր ընկերակցելով հասաւ ծառերով շրջապատուած երկյարկանի բնակարանի մը առջեւ, Սիրվարդ դժկամակեցաւ մէկէն.

— Տակաւին կանուխ է ծնողքիս ծանօթանալու համար. հայ ըլլալը, երիտասարդ ըլլալը աղէկ բաներ են, բայց դուն վերջապէս մեզի համար անծանօթ մըն ես տակաւին, օտա՛ր մը:

Գարուն էր ամէն կողմ, ծաղկազարդ ու բուրումնաւէտ: Տարբեր պայմաններու տակ, Յակոբ անպայման պիտի փրփրէր, պիտի ջղայնանար ինքն իրմէ ելլելով, բայց շուրջ սփռուող կանաչ խաղաղութիւնը վայելելու համար, ձեռքերը դրաւ զրպաններուն մէջ ու սուլելով հեռացաւ հոնկէ:

Կեանքը այնքան արագօրէն կը փոխուէր աչքերուն տոջեւ, շուրջըրտն ու ներսդին, որ երբեմն պէտքը կը զգար ասանկ քալելու, վերացած, անուրջներու մէջ, դասաւորելու համար մտածումները, դրացումները, ինքզինքը կարծես: Իրեն այնպէս կը թուէր, թէ այլեւս անցած էր ամենաբուռն ու կատաղի փոթորիկներէն, ու հիմա, երեկոյեան հանդարտութեան մէջ, անծայրածիր համայնապատկերի մը առջեւ, կեանքը կը ստանար իշխակական գոյները, խռովայոյզ ու ներդաշնակ: Եւ այդ անդորրութենէն, ձայներ կը հասնէին իրեն, հեռաւոր ու մեղմ, թեթեւ ու քնքուշ: Ու ինք կը վախնար մտածելու իսկ, որպէսզի չխզէ խոր լուսութիւնը, որպէսզի լուսաթոյր պահը՝ որ կը ծփծփար, հողիին մէջ տեղ մը:

Պատկերը շրջեցաւ յանկարծ ու պղտորեցաւ ամէն ինչ, երբ հասաւ Գէորգին մօտ ու սկսան խօսիլ սովորական հարցերու մասին:

— Գիտես Յակոբ, երբ ինծի հետ կ'ապրէին, ամէն երեկոյ ծունկերուս վրայ կը նստեցնէի մանչուկս ու կը

Չանայի քանի մը հայերէն բռտեր սորվեցնել անոր զարմանալի ընդունակութիւն ունին փոքրիկները, սքանչելի յիշողութիւն մը... վեց տարեկան է հիմա, եւ ոչ միայն մոռցեր է իրեն սորվեցուցածս, այլ ինծի կը հարցնէ թէ ինչու ես «օտար» կը կոչուիմ... մօրը վատութիւնն է սարգապէս... նորէն կոուեցանք, նորէն վիճարանեցանք, որովհետեւ կ'ուզէի պզտիկը առնել ու հեռանալ այս նահանգէն... ստիկա դիմանալիք վիճակ չէ այլեւս... սպառած կը զգամ:

Հողեցունց այդ բռտերը փշրեցին տրամադրութիւնը: Ինչ որ բարակ թելերով իրարու միացուցած էր յետմիջօրէին, ցրուեցաւ մէկէն, ու աւելի չմխրճուելու համար յոռի մտածումներու անթափանցելի ցանցին մէջ, Յակոբ փախաւ բարեկամին քովէն, նախընտրելով առանձնանալ ու մտածել՝ միայն Սիրվարդին մասին:

Եւ երբ շարաթ մը ետք Սիրվարդին հետ կրկին տեսնուելու պատահութիւնը ունեցաւ, անոր պատմեց Գէորգին մասին, դժբախտ բարեկամին, որուն յուսահատ կերպարանքը միտքէն չէր ելլեր բնաւ:

— Այս երկրին մէջ սովորական բաներ են անոնք, ըսաւ Սիրվարդ, գրեթէ անտարբեր, մարդիկ կը վարժուին թեթեւօրէն վերաբերել այդ իրողութեան հետ, որովհետեւ, վերջապէս արդի կեանքին զլխաւոր երեւոյթներէն մէկն է բաժանումը... վարժութիւնը միակ լուծումն է անոր, եւ ուրիշ ոչինչ:

Բայց թատրոնին մէջ, Սիրվարդ յափշտակուած բեմադրուած ողբերգութենէն, յուզուեցաւ շուտով: Խռովեցաւ ծայրայեղօրէն ու թաշկինակը տարաւ տամուկ աչքերուն:

Եթէ ամօթ չզգար, անմիջապէս պիտի լքէր թատրոնն ու Սիրվարդը եւ մայրին վրայ թքնելով հեռանար այդ շրջապատէն, որովհետեւ մինչեւ այդ բոպէ բան չէր կրցած հասկնալ ոչ բեմադրուածէն եւ ոչ ալ ար-

տատանուած տարօրինակ նախադասութիւններէն, բայց պատշաճութիւնը յարգելու համար, հարկադրաբար զսպել փորձելով ինքզինք, հետեւիլ սկսաւ աղջկան եռեւեփուն յուզումներուն, թոյլ տալով որ մտածումը երթայ ու փնտռէ Գէորգին սիրասուն մանչուկը, ու անոր մոռցած հայերէն բռտերը՝ գեղահնչիւն: Ու ան քալեց մտածումին ետեւէն, իրբեւ հալածական մը ուղեկորոյս, սրտաբեկ, ներամփոփ, մինչ վարադոյրներ բարձրացան իրարու յաջորդելով եւ ծափահարութիւնը իրմէ խլեց ներքին թափառումը հազուադիւրս:

Եւ երբ դուրս ելան թատրոնի շրջապատէն, առնաւ մը քայլեցին Պոստոնի կեդրոնական պողոտաներու երկայնքին, անխօս ու վերացած, մինչ Համլեթով, միւսը՝ Գէորգով, եւ տակաւին... լոյսեր ամէն կողմ: Բայց այդ լուսափառ ճակատները ոչինչ թելադրեցին տառապող սիրտին, որովհետեւ ան կը տրոփէր ճնշումի մը տակ, աղմուկով, զսպուած: Ու յետոյ մտան ինքնաշարժէն ներս, ուր Սիրվարդ կձկուեցաւ երիտասարդին քով, թոյլ տալով որ հոսանքը առնէ ու տանի ամէն ինչ...

Ու հոսանքները շաշեցին, հովերը եկան ու փոթորիկը սկսաւ շատ վարէն տեղ մը, մինչեւ որ երիտասարդը հայր կասկածիլ սկսաւ իր յուզումին մէջ, առանց երբեք բացատրութիւն մը գտնելու Սիրվարդին տարօրինակ հոգեվիճակը արդարապէս: Եւ իրենց առաջին հանդիպումէն ամիսներ ետք է որ միայն, Սիրվարդ խնդրեց որ Յակոբ բարձրանայ մինչեւ երկրորդ յարկը, ու պաշտօնապէս ծանօթութիւն հաստատէ իր ծնողքին հետ: Երիտասարդ տղան այս հրաւերին ետեւ խորհրդաւոր բան մը նշմարելով, խանդավառուեցաւ մէկէն ու ինքզինք պատշաճօրէն ներկայացնելէ ետք, առանց տրտունջի պատասխանեց իրեն յղուած բոլոր հարցումներուն: Բայց երբ Սիրվարդ նկատեց որ մայրը քիչ մը

ծայրայեղութեան կ'երթար՝ յետին մանրամասնութիւններ քաղել փորձելով աղուն անցեալէն, այն ատեն միջամտեց, մայրը սաստելով .

— Ի՞նչ կ'ըլլանք կոր նայինք, ասիկա զատավարութեան ձեւ կը ստանայ կոր կարծեմ . . .

— Մայր ըլլալը դիւրին չէ, աղջիկս, բողոքեց տիկին Սիրարփի . մենք այսքան յոգնութիւն ու ծախք յանձն առինք, քեզ համալսարաններ ղրկեցինք, հարկաւ որ սիտի ուղենք դիտնալ քեզմով հետաքրքրուող երիտասարդի մը ինքնութիւնը, ինչ ըլլալը . մայր ըլլալը այնքան ալ դիւրին չէ, այս օրերուն :

Նհիւարակազմ ու ջղուտ մարդ մըն էր Սիրվարդին հայրը, որ մինչեւ այդ պահ բառ մը իսկ չէր արտասանած երիտասարդին ձեռքը թօթուելէն ի վեր, բայց երբ տեսաւ որ մայր ու աղջիկ ինկած էին այդ հին վէճին մէջ, պատահութենէն օգտուելով ծոցեաց երիտասարդին կողմը ու անխելի ձայնով մը շնչաց .

— Թաւու խաղալ դիտե՞ս, երիտասարդ . Դամակոսէն բերել տուած եմ հատ մը, եւ տեսնելիք բան է . յաջորդ վալուդ կը փորձենք մէյ մը :

Յակոբ անմիջապէս սիրեց պարզ ու սրտաց այս տարեց հայր եւ խոստացաւ անպայման դոհացնել անոր հետաքրքրութիւնը : Եւ երբ, աւելի ուշ, Սիրվարդին հետ կը քալէր Հարվըտ հրապարակի կիսամութիւն մէջ, չքաշուեցաւ ըսելու թէ պարոն Սեդրակ իր տեսակի մարդերէն էր :

— Հայրս շատ աղէտ է, առարկեց Սիրվարդ, զպրոց կամ ուսում չէ տեսած կեանքին մէջ, եւ հակառակ քառասուն տարիէ հոս հաստատուած ըլլալուն, տակաւին կ'ապրի ու կը մտածէ՝ ինչպէս որ հայրը ապրած ու մտածած էր Այնթապի մէջ . . . Մայրս քիչ թէ շատ զարգացում մը ունենալուն, բնաւ չի հանդուր-

ժեր անոր կոպիտ ձեւերուն եւ ատիկա պատճառ կ'ըլլայ որ միշտ վիճարանին :

— Հապա սէ՞րը . . . հապա սէրը, ատիկա ուր կը մնայ, մրմնջեց Յակոբ :

— Ատիկա երկրորդական է, ըսաւ Սիրվարդ . երբոր մարդիկ հասարակաց դետին մը չունին իմաստալից յարաբերութիւն մը մշակելու, սէրը բաւարար չէ այս պակասը զոցելու :

— Ի՞նչ կ'ըսես, Սիրվարդ . . .

— Թէեւ պէտք է ընդունիլ որ համալսարան երթալը պայման չէ զարգանալու համար, բայց զարգացումը անհրաժեշտութիւն մըն է կեանքը լաւապէս ըմբռնելու եւ վայելելու համար :

— Իրա՞ւ կ'ըսես, Սիրվարդ . . .

**

Պէտք է չափէր, հաւասարակշռէր իր զբացումները, որպէսզի անխոհեմ աճապարանքի մը զոհ չըլլանար : Սիրվարդին հանդէպ իր ունեցած անկեղծ դաւցումներուն մասին բնաւ տարակոյս չունէր անշուշտ, սակայն անոր տեսակէտները երբեմն կը խրտչեցնէին զինքնորանոր մտահոգութիւններու առաջնորդելով արդէն իսկ տառապող իր միտքն ու հոգին : Հակառակ տրամաբանութեան հնչեղ թելադրութիւններուն, չէր ուղեր ընդունիլ որ ուսումի եւ զարգացումի անջրպետը զիրենք կրնար դնել այն դիրքերուն վրայ, ուր կը զբտնուէին անոր հայրն ու մայրը : Եւ այդ պատճառաւ ալ, վերջին տեսակցութենէն ետք, Յակոբ ստիպուեցաւ պահ մը հեռանալ իր սիրած աղջիկէն, աւելի մօտէն քննելու համար իր հոգեվիճակը : Եւ որքան մտածեց անտեսանելի դժուարութիւններու մասին, այնքան աւելի համոզուեցաւ որ սէրը պիտի կարենար խափանել

ամէն սայթաքում, փոյթ չէ թէ Սիրվարդ բոլորովին տարբեր մտայնութեան մը ծառայած ըլլար:

Ճիշդ է որ իր ունեցածը միայն նախակրթարան մըն էր համեստ, սակայն կեանքի զպրոցին ան կը վերագրէր վիթխարի նուաճումներ, հաւասարակշռելու համար իրականն ու երեւակայածինը: Սիրվարդին ծանօթանալէ առաջ, բնաւ միտքէն չէր անցած մտահոգուիլ իր ունեցած թերութիւններով, սակայն հիմա, այլեւս կը զգար, թէ արտաքին շարքը իր տեղը ունէր, եթէ նոյնիսկ ինք դեռ համոզուած չէր անոր առաւելութիւններուն:

Ու այսպէս, ըման շարաթ մը խորհրդածելէ ու մտատանջուելէ ետք, Յակոբ վերջապէս եկաւ ու յանգեցաւ այն եղբակացութեան, թէ իր ունեցած արժանիքները դիւրաւ պիտի կարենային ծածկել այն միւս բոլորը, որոնց վրայ ինք չէր կրնար ունենալ ոչ մէկ իշխանութիւն: Ինչ որ պատահած էր անցեալին, ինչ որ արգելք եղած էր իր բնականոն զարգացումին, ատոր համար յանցաւոր զգալու պատճառ մը չէր դռներ, որովհետեւ կեանքի պայմաններն ու միջավայրը բարդացուցած էին ամէն ինչ, եւ ինք զոճ մը եղած էր ժամանակի խտութեան:

Ու ժամանակ եւ անցեալ միախառնուեցան տղուն մտածումին մէջ, երբ այլեւս զղաց թէ իր խորհրդածութիւնները տեղ պիտի չառաջնորդէին իր կասկածոտ քայլերը, եթէ անմիջապէս չձեռքարդատուէր ներքին պայքարէն: «Եթէ մէջս որոշ յատկութիւններ չգտաւ Սիրվարդ, այն ատեն ինչու յոժարեցաւ այսքան ամիսներ ընկերակցել ինձի, երբեմն յանձնուելով իննթ դպրանքներու», մտածեց, եւ վերջնականօրէն որոշելէ ետք, թէ անպայման պիտի փորձէր անոր տրամադրութիւնը հասկնալ, ելաւ դուրս, ինքնավստահ ու զուարթ:

Երեկոն արդէն իջած էր Պոստոնը շրջապատող գլուղաքաղաքներուն վրայ, երբ Յակոբ հասաւ ծանօթ հասցէին: Տիկին Սիրարփիին բացակայութենէն օգտուելով, նախ քանի մը նախադասութիւններ փոխանակեց պարոն Սեդրակին հետ, հասկնալու համար թէ ուր հասած էին եկեղեցւոյ պարտքերը, եւ թէ նոր ակումբ մը չինելու ծրագիրը ինչ ջուրի վրայ էր հիմա:

— Լիչ մի ըսեր թէ մեր ժողովուրդը գիտէ ըրածը, դանդատեցաւ տարեց հայր. շարաթը մէյ մը աղօթելու համար այսքան ծախսի տակ մտանք, բայց շարթուան միւս օրերը թաւլու խաղալու տնկիւն մը չունինք. ինձի հարցնես նէ, ակումբը անհրաժեշտ է գոնէ այդ նպատակով:

— Իրաւունք ունիս, թաւլուն ալ կարելոր է, մանաւանդ այս տարիքէն յետոյ, երբ ալ հարչուած ենք թէ՛ մեր լիզճին հետ, եւ թէ՛ Ասածոյ, յետոյ մանաւանդ որ...:

— Ճիշդ ատ է որ կ'ըսեմ, մենք ինչ յանցանք դուրս ծած ենք որ այսքան կուրծք ձեծենք մեր մեղքերուն համար, երբ սա վերջին օրերնիս ուղածնուս պէս չենք կրնար ապրիլ. օր մը քեզի պէտք է պատմեմ թէ մենք ինչ դժուարութիւններ քաշեցինք այս հողին վրայ, այն ատեն կը տեսնես որ մենք քաւած ենք մեր բոլոր մեղքերը զործարաններու ծանր անիւներուն տակ... ինչ որ է, դուք տակաւին ճահիլ էք, գացէք ու վայելեցէք, երբ դեռ ուշ չէ:

Երբ ինքնաշարժին մէջ տեղաւորուեցան, Սիրվարդ ըսաւ թէ հայրը շատ լաւ տպաւորուած էր իր տեսակէտներէն, եւ թէ յաճախ ակնարկութիւններ կ'ընէր իր բացակայութեան, ըսելով որ երկրէն եկած երիտասարդներուն հոգին տարբեր է:

— Այդ ի՞նչ հողի է, չեմ հասկնար, ըսաւ Սիրվարդ ժպտելով...:

— Շատ մաքուր էր մինչեւ հիմա, պատասխանեց Յակոբ, բայց եթէ այդպէս շարունակես, չեմ գիտեր թէ վերջը ինչ պիտի ըլլայ:

Յետոյ լռեցին, մինչեւ որ հասան Հարվըրտ հրապարակը, եւ երբ Յակոբ կը փորձէր հեռանալ հոնկէ, այն ատեն Սիրվարդ խղեց լուսթիւնը, առաջարկելով որ, մասնաւոր տեղ մը չեթթան, այլ թափառին այդ թաղամասին մէջ: Իրականին մէջ, Յակոբ մասնաւոր բան մը չէր տեսներ կիսամայի այդ շրջաններուն մէջ, բացի ուսանողներու յարուցած անհասկնալի աղմուկէն, որ երբեմն լսելի կ'ըլլար գարեջրատունէ մը անոններով: Հոն է որ կը յաճախէին իրենք ալ երբեմն, պարզապէս գոհացնելու համար Սիրվարդին անբացատրելի պահանջներէն մին, որոնց վարժուիլ կը փորձէր՝ շփոթած տղան:

Այս անգամ ալ, ինչպէս տարբեր առիթներով, դարեջրատան մէջ գրաւեցին պատուհանին կից սեղան մը, ու սկսան խօսիլ՝ գրեթէ անլսելի ձայնով: Սիրվարդ վերացած էր դարձեալ, ու կ'անդրադառնար իր ճանչցած հեղինակներուն, այլազան վէպերու, ինչպէս՝ հերոսներու, որոնք կը հասնէին երկինքի կապոյտին, հոն ստուելով երիտասարդ տղուն պաղած ակնարկին մէջ, մինչդեռ դարեջրուրին պարապ բաժակը ոչինչ կը հասկընար ջրագրգիւռ հպումէն, երբ բացակայ է Սիրվարդ, եւ երբ դիմացը նստող տղան կը տառապի՝, կը տառապի՝, կը տառապի՝ ահռելիօրէն...

— Ելի՛ր, երթանք, այս աղմուկը ջիղերս կը խանդարէ կոր:

Սթափեցաւ Սիրվարդ: Մտոլորումներէն վերադարձի ճամբուն վրայ դիտեց առաստաղը, հոնկէ կախուած միակնի լսպտերները գունաւոր, յետոյ՝ պատերը զարդարող արդի արուեստը, երիտասարդները, եռուզեռը, փրփուրը ըմպելիին, ու դիմացը նստող հայ

երիտասարդը, որուն աչքերը ամէն ինչ կը բացատրէին, գրեթէ ոչինչ թողելով իր երեւակայութեան:

— Ո՛ւր կ'ուզես երթալ...

— Այս աղմուկէն դուրս, հանդարտ տեղ մը:

Ու այդ ժխորէն հեռանալու համար ստիպուեցան հրապարակէն դուրս ելլել, ու քալեցին, մինչեւ որ հասան վայելուչ ճաշարան մը: Հոն է որ Յակոբ բաժակները պարպեց իրարու ետեւէ, եւ երբոր զգաց թէ այլեւս տիրապետած էր ամօթխածութեան, համարձակութիւնը ժողովեց ու սկսաւ խօսիլ առանց տատամսելու.

— Ձեմ գիտեր թէ ինչո՛ւ կը խուսափես լուրջ խօսակցութիւն մը ունենալէ հետս. վստահ եմ որ մինչեւ հիմա հասկցած ես թէ ինչ կը զգամ քեզի հանդէպ. ատիկա չըմբռնելու համար բոլորովին միամիտ մը պէտք է եղած ըլլաս, եւ դուն միամիտ մը չես, Սիրվարդ, յետոյ մանաւանդ որ ես ընաւ չեմ կրնար ծածկել իմ զգացումներս...

Ձեռքի բաժակը պարպեց Յակոբ, ու նոյն յանդերձնութեամբ եւ քիչ մը խռոված, շարունակեց՝ առանց այլայլելու.

— Գիտեմ որ դուն իմ վրայ կարգ մը առաւելութիւններ ունիս, ունիս նաեւ պատէն կախուած վկայական մը, աշխարհ մը՝ դիրքերով խճողուած, բայց մի մոռնար որ այդ դիրքերը արդէն խլած են քեզմէ կենսական թարմութիւնդ, եւ քանի մը տարիէն պիտի դիմաւորես երեսունի մենաւոր տիրութիւնը: Գիրքերէն դուրս, իսկական կեանքին մասին ոչ մէկ զաղափար ունիս դուն, եւ թերեւս ալ, իրականութենէն փախչելու համար է որ ինքզինքդ կը թաղես երեւակայածին այդ աշխարհին մէջ... բայց ես կ'ուզեմ գիտնալ թէ ի՛նչ կը մտածես եւ ինչ կը զգաս ինձի հանդէպ, որովհետեւ այս ձեռով շարունակելը ինձի համար գրեթէ անհնար կը դառնայ ալ...

Սիրվարդ չխօսեցաւ. չպատասխանեց. միայն հանդարտ ու խոհական նայուածք մը նետեց դիմացը չարչարուող խռոված դէմքին վրայ եւ մատներու արագ շարժումով մը մագերը հեռացուց աչքերուն առջևէն: Ճիշդ էր ազան: Ինք որոշապէս զրկուած էր ուշադրաւ այն զեղեցիութենէն, որ ամենէն ունայնամիտ կնոջ իսկ կու տայ տեսակ մը վստահութիւն, հպարտութիւն մը անբացատրելի: Եւ թերեւս այդ խոր դիտակցութիւնն է որ զինք նետած էր իմացական թափառումներու, վերացական միջնորդի մը մէջ, ուր ոչ ոք կրնար ցայնել զինք, ոչ ոք կրնար հասնիլ իր մտածումներուն: Եւ թերեւս, ո՛վ գիտէ...

— Դուն գինով ես Յակոբ, եւ չես գիտեր թէ ինչ կ'ըսես:

Ատեն մը լուս մնացին ներամփոփ: Եւ երբ դուրս ելան, փողոցները ամայացած էին գրեթէ: Այլ չխօսեցաւ Յակոբ: Ըսած էր, ինչ որ շարաթներէ ի վեր կուտակուած էր ներսզին, եւ հիմա, գրեթէ հանդարտած, կ'ուզէր պահ մը առաջ տուն հասնիլ, հաւասարակշռելու եւ վերլուծելու համար իր զգացումները: Այլեւս քայլելու տրամադրութիւն չունէր, բառ մը իսկ արտասանելու սիրտ չունէր հիմա, եւ այդ պատճառաւ ալ, ուզեց երկատրաշարժը առնել մինչեւ Հարվըրտ հրապարակը, ուր ձգած էր իր ինքնաշարժը: Ու իջան վար:

Գիշերուան այդ պահուն, գրեթէ պարպուած էր գետնափոր կայարանը, եւ հոս ու հոն կանդնած քանի մը զոյգեր, սիւններուն կռթնած, իրենց պէս անխօս, երկատրաշարժին կը սպասէին, անձկութեան ոչ մէկ նշան ցոյց տալով:

— Դարձեալ պիտի տեսնե՞մ քեզ... Յակոբ:

— Թերեւս այո, թերեւս ոչ. կախում ունի, կախում ունի...

Նախադասութիւնը դեռ չէր աւարտած Յակոբ, երբ աղջիկը ամբողջ ուժովը փաթթուեցաւ անոր, թոյլ տալով որ տղուն այրող շրթները դուռէն զինք այտերուն վրայ, աչքերուն վրայ, շրթներուն վրայ:

Ելեկտրաշարժը եկաւ ու գնաց: Բայց անոնք չլսեցին՝ երկաթներու ողբաբիւն լացը...

«Եթէ կ'ուզես իրականութիւնը գիտնալ, իմ կարծիքով, մենք բոլորս ալ եղծարարներ ենք բառին իսկական ու ճշմարիտ առումով: Եւ այդ պատճառաւ ալ, այնքան լաւ գիտենք խարել մեր շուրջիները, որովհետեւ առաջին առիթով իսկ խարած ենք մենք զմեզ, կեղծելով ու խաթարելով մեր զգացումները, մեր գիմազիժը, մեր ինքնութիւնը: Մինչեւ այն աստի որ մեր ձախուսեր արարքներուն համար մեզմէ հաշիւ պահանջող չկայ, տաքուկ սենեակներու ապահովութեան մէջ կը դառնանք երազատես հերոսներ ու ազգային անուկը դառնանք երազատես հերոսներ ու ազգային անուկը գիտնալով հանդերձ որ պարտականութենէ խուսափողները միայն մենք ենք պարզապէս... կ'ըսեմ, վարպետ կեղծողներ ենք միշտ, շարլաթաններ թուլամորթ...»

Ատեն մը առաջ, Յակոբին անտարբերութիւնը մատնանշելու մտադրութեամբ, այսպէս արտայայտուած էր Գիշորդ, յուսալով որ իր անկեղծ քննադատութիւնները նպատակի մը կը ծառայեն, բարեկամին մէջ արթնցնելով նախկին հետաքրքրութիւնը ազգային կեանքին հանդէպ: Բայց ան՝ աւելի խօսած էր իր ներսզին կրծող ցաւերու մասին, մոռնալով իր նշանակէտն ու որդեգրած ուղին: Բայց հիմա, ահա ինք է որ անհետացած էր մէկէն, եւ Յակոբ, լրջօրէն մտահոգուած անոր յանկարծական աներեւութացումէն, սան-

դուռներէն վեր կը բարձրանար, զարնելու համար փակուած այդ դուռը: Ու զարկաւ կրկին: Քովի սենեակէն ախտաւոր հազ մը զլորեցաւ միջանցքի կիսամութին մէջ, ու Յակոբ կորսնցուց պահ մը առաջուան գոլարթութիւնը: Բայց երբ դրան սեմին նշմարեց մօրուսաւոր դէմքը իր հին բարեկամին, այն ատեն հանդարտեցաւ քիչ մը, եւ յանդիմանական շեշտով ըսաւ վրդոված.

— Սենեակիդ առանձնութեանը մէջ հերո՞ս կը դառնաս... ո՞ւր ես տղայ, այսքան ատենէ ի վեր երեսդ ալ տեսած չունինք...

— Հիչ մը ըսեր, Յակոբ, այս խալթախին կերածը պատմուելիք բան չէ:

Պատուհանին քով կանգնած, զարմանքով դիտեց այդ նեղ սենեակին մէջ տարածուող անսահման տառապանքը՝ խաբուած հայ մարդուն, պատերէն, ձեղունէն, ամէն կողմէ ժայթքող տառապանքը, որ կ'ողողէր նոյնիսկ մթին խորշերը լքուած իրերուն, յորդելու աստիճան:

— Մինչեւ հիմա ըրածը չէր բաւեր կարծես, ու հիմա ալ, մանչս առաւ ու կորսուեցաւ մէջտեղէն: Շարաթներէ ի վեր կը փնտռեմ զիրենք, բայց անօգուտ: Ահա քաղաքակիրթ աշխարհը քեզի... ինչիս քաղաքակրթութիւնը, դետինն անցնին բոլորը, բոլորը...

Հակառակ իր նախկին մտադրութեան, իր ուրախութիւնը բարեկամին հետ բաժնելու տրամադրութեան, այլեւս անյարմար նկատեց այդ մասին ակնարկութիւն իսկ ընել, ու շփոթած հայրը մխիթարելու համար՝ սա տեսակ բան մը ըսաւ.

— Ուր որ ալ են, օր մը չէ օր մը մէջտեղ կ'ելլեն, ինքզինքդ չարչարելով, մտահոգուելով հարցը չես կրնար լուծել:

Լուսթիւն: Մեռելային, անդնդային լուսթիւն: Ընչիչ վայրկեանները սլաքները կեցուցին, եւ կարծես, ժամանակը դադար առաւ միեւնոյն կէտին վրայ. սեւ կէտ մը միայն: Այդ ճնշումին տակ, կարծես պիտի պայթէր Յակոբ, որովհետեւ պատերը դանդաղօրէն կը մօտենային իրարու, սպառնական, անարգել, յամբընթաց:

— Մարդուս ցաւը փոխանցիկ է ու փոփոխական. ատեն մը առաջ ես քեզի կը նայէի ցաւատանջ ակնարկով. մեր դիւքերը փոխուած են հիմա... դուն հիանալի կերպով ինքզինքդ հանեցիր այդ տիղմին մէջջէն, չեմ խորհիր որ ես քեզի պէս բախտաւոր պիտի ըլլամ... բայց մոռնանք իմս, դուն ի՞նչ ջուրի վրայ ես հայ աղջկան հետ...

— Հաստատ ու խաղաղ... քանի մը շաբաթ առաջ ամուսնացանք:

— Ի՞նչ կ'ըսես, պատմէ նայինք:

— Շիտակը ըսելով, ինծի համար անսկնկալ մը եղաւ: Չեմ գիտեր ինչ պատահեցաւ մէկէն: Բայց պատահեցաւ: Կին ըսածդ առեղծուածի կը նմանի: Մինչեւ վերջին վայրկեան չարչարելէ ետք դիս, յանկարծ ընդունեց առաջարկս ու քաղաքական ամուսնութիւն մը կնքեցինք քանի մը օրուան մէջ:

— Հապա եկեղեցին...

— Իր տեղն է տակաին, պատասխանեց Յակոբ, բժժիծադով մը:

— Ծօ՛, չըսես, ստիկա տօնել կ'արժէ այս պահուն...

Կարծես կարճ պահի մը համար մոռցած իր ցաւը, որմաղարանէն վար առնելով խմիչքին շիշը, մէյ մէկ հատ լեցուց բաժակներուն մէջ.

— Քու երջանկութեանդ համար, սիրելի Յակոբ...

Եւ քանի պարպեցին բաժակները իրարու ետեւէ, այնքան զուարթացաւ, խանդավառուեցաւ Գէորդ ու այլևս ինքզինք կորսնցուցած բարեկամին երջանկութեանը մէջ, սկսաւ խօսիլ՝ արագօրէն, առանց մտածելու, եռանդով:

— Արիւնի ձայնը տարբեր նշանակութիւն մը ունի մեզի համար... մենք մեր խառնուածքով, նկարագրով, ամբողջ էութեամբ տարբեր ենք ասոնցմէ, եւ որքան որ ալ փորձենք հազուստ ու ճաշակ փոխել, դարձեալ պիտի դայ պահը, երբ այլևս պիտի չկարենանք հանդուրժել պարտադրուած այս ձեւափոխութեան, ու պիտի դռանք մեր յուսախարութեան մէջէն... արիւնի ձայնը, տարբեր իմաստ մը ունի մեզի պէսներուն համար...

Եւ երբ կատարելապէս ղինովցաւ Գէորդ, այն ատեն սկսաւ երգել կերկերուն ձայնով, ղողացող, յուզախառն ձայնով, բառերը իրարու խառնելով. երբեմն անդլերէն, երբեմն արաբերէն, երբեմն հայերէն, բայց միշտ նոյն երգը, գրեթէ անբառ: Եւ բաժանումի պահուն, այս անդամ խոստացան շուտով տեսնուել, նորէն գլխովնալ:

Իրապէս ուրախ էր, երջանիկ էր Յակոբ: Եւ իր ներքին լալիքներուն յանձնուած, անզուլաբար կը նաւարկէր լուսազարդ փողոցներու եռուղեովն մէջէն, սուրբով այսպէս՝ հին մեղեդի մը, աստղազարդ երկինքներու անդորրութեան մէջ ցայտած, արարական մեղեդին, որ սիրտէն կը բխի՝ հին գլխի մը պէս: Եւ այդ արամազրութեամբ ալ, սուրբով ու երգելով բարձրացաւ սանդղակներէն վեր, ուր Սիրվարդ իրեն կը սպասէր քիչ մը սրանեղած:

— Գիտես, սիրելիս, այլևս չես կրնար շարունակել քու նախկին կեանքդ, ի վերջոյ պէտք է անդադառնաս կատարուած փոփոխութեան:

— Իրաւունք ունիս, պէտք է վարժուիմ ամուսնա-

կան կեանքի կանոններուն, ու մոռնամ հին ազատութիւնս. իրաւունք ունիս:

Եւ այսպէս է որ Յակոբ սկսաւ հիմնական փոփոխութիւններու ենթարկել իր նախկին սովորութիւնները, եւ Սիրվարդին հաճելի ըլլալու համար ըրաւ՝ ինչ որ կինը պահանջեց իրմէ: Անոր հետեւելով վազեց թատրոնէ թատրոն, երգահանդէսէ երգահանդէս, եւ միշտ շնորհակալութիւն յայտնեց Սիրվարդին, որ իր առջեւ բացած էր այսօրինակ հազուադիւտ կեանք մը, դոյներով, ձայներով, նուագներով ներդաշնակ. կեանք մը, որուն ղոյնութեան գիտակից իսկ չէր գեռ՝ քանի մը ամիսներ առաջ:

Ու Սիրվարդ խօսեցաւ, ամէն անգամ որ պատահութիւնը անոր դադափարը անհրաժեշտ դարձուց.

— Ուսում չունենալը, զարգացում չունենալը պատճառ պէտք չէ ըլլայ որ այսպիսի վայելքներէ ղրկուի մարդ... վարժութեան ու ժամանակի հարց են, այս բոլորը:

Իայց Յակոբ ամենէն աւելի ղուարճացաւ, երբ կիրակի յետմիջօրէին պատշգամ նստած՝ թաւուրի քարերը հնչեցուց ղեղազարդ տախտակին վրայ, ու Սիրվարդին հօրը արտակարգ ղոհունակութիւն պատճառեց համեստելով տունը պատրաստուած անստղիւտ օղին:

Սիրվարդ ղփղոհեցաւ սակայն.

— Հին երկրի սովորութիւն է օղի խմելը, եթէ նպատակը անպայման խմել է, ինչու չես ղոհահանար տեղական ուխտիով... օղին շատ հասարակ բան է:

— Ի՞նչ է տարբերութիւնը Սիրվարդ, ի վերջոյ բոլորն ալ միեւնոյն նպատակին կը ծառայեն, ղատասխանեց Յակոբ, միշտ քմծիծաղով:

— Նպատակի մը հասնելու տարբեր ձեւեր կան,

տարբեր միջոցներ, եւ երբեմն ընտրուած միջոցը նպատակն իսկ կ'արժէ... որովհետեւ նախընտրուած ուղին է որ շատ յաճախ կը բացայայտէ անհատի մը դաստիարակութիւնը, ճաշակը, եւ ուրիշ շատ մը բաներ, անոնց կողքին:

— Զարմանալի, զարմանալի... բաժակ մը օղիէն ինչեր դուրս ելաւ... եթէ իրականութիւնը կ'ուզես գիտնալ, ես քու ըսածներուդ չեմ կրնար հետեւիլ:

— Հարկաւ թէ չես կրնար, ընդմիջեց կինը. պարպի չէ որ մարդ ուտում կ'առնէ:

Եւ որպէսզի վիճաբանութիւնը աւելի չերկարի, տուի մը սիկարէթ գնելու պատրուակով դուրս ելաւ Յակոբ: Եւ երբ փողոց իջաւ, անմիջապէս անդրադարձաւ որ առածը սխալ քայլ մըն էր, ու զզջալ սկսաւ: Թերեւս Սիրվարդ իրաւունք ունի, մտածեց, թերեւս իմ մտածելակերպս, վարուելակերպս շատ սովորական ըլլալուն, չեմ կրնար թափանցել անոր կեանքէն ներս: Բայց հակառակ կինը արդարացելու իր ջանքերուն, խորքին մէջ կը զգար ան, թէ ատենէ մը ի վեր բոլորովին ջնջուած, անհետացած էին ամուսնական կեանքի առաջին շրջանի եռանդն ու հետաքրքրութիւնները, եւ ինչ որ տակաւին կը յամենար իրենց պահանջներուն մէջ, ան ալ կը կորսնցնէր իր նախկին ուժղնութիւնը: Յակոբ կ'ըմբռնէր այլեւս, որ Սիրվարդ բոլորովին տարբեր էր իր նախապէս ճանչցած կիներէն, աղջիկնեւրէն, եւ թէ անոր նախասիրութիւնները, մտածելակերպը, դատողութիւնը, այնքան ալ հաշտ չէին իրենիւններուն հետ:

Եւ ատոնք պատճառ եղած էին որ ինք հետզհետէ աւելի մխրճուի դաղութահայ կեանքի դանաղան շարժումներուն մէջ եւ ամէն ջանք թափէ՝ խուսափելու համար թատրոններու անհաղորդ շրջապատէն: Որքան

ալ որ ուզած էր ճանչնալ ու գնահատել իրեն ներկայացուած այս նոր պատեհութիւնը, ատով հանդերձ, չէր կրցած վրայէն թօթուել իր իսկական հետաքրքրութիւններն ու ձգտումը, եւ ժամեր յատկացուցած էր սիրական թաւուին: Ու հիմա, այլեւս չէր ուզեր կեղծել, այլեւ չէր ուզեր վազել՝ լոյսերու մէջէն, եւ իրեն պարտադրուած ձեւափոխութիւններուն դէմ ատելութեամբ լեցուած, զզուանքով կը յիշէր սկզբնական շրջանները: «Նոյնիսկ այդ օրերուն պէտք չէ տեղի տայի, պէտք չէ զիջանէի ամէն անկիւնադարձին, կը մտածէր իր առանձնութեան մէջ. այո, պէտք չէ համակերպէի ամէն պահանջի, պէտք չէ ժպտէի այդ կեղծ դիմակով... օ՛, այս ինչ փորձանք է»:

Հանդարտ երեկոյ մըն էր խաղաղ լուսինով: Զեփիւռը կը սողոսկէր ծառերու մէջէն ու մրմունջներ կը սփռուէին համբոյրներու պէս, թարմ ու քաղցրանուշ:

Տակաւին քանի մը օր առաջ, հակառակ իր կամքին, հակառակ խուսափողական իր միջոցառումներուն, չէր կրցած արդիւնել բուն վիճաբանութիւնը, եւ արինը գլուխը խուժելով առաջին անգամ ըլլալով պատասխանած էր անոր, ճիշդ իր ուզածին պէս: Ժողովէ մը վերադարձին, շատ դէշ տրամադրութեան մէջ դտած էր կինը, եւ նախատեսելով պայթելիք փոթորիկը, ուզած էր անմիջապէս կրկին դուրս երթալ, որպէսզի ստիպուած չըլլար պատասխանել անոր: Բայց Սիրվարդ հանդիստ չէր թողած զինք, ու սովորական քննադատութիւններուն դիմելով, պղտորած էր երեկոն:

— Ո՛չ այդ ժողովները, եւ ո՛չ ալ թաւուն մտքի մը չափ օգտակարութիւն ունին քեզի, ըսած էր խիստ արհամարհանքով... այսքան տարիներ, հօրս սերունդը աննպատակ վազեց այդ բաներուն ետեւէն, բայց ոչինչ կրցաւ փոխել նոր սերունդի կեանքին մէջ... որովհե-

տեւ բոլորն ալ երազողներ են, պատշաճիւ, յարմարիւ չգիտցող պարզամիտ մարդիկ, որոնք իրենց կարողութենէն վեր բաներու դէմ կը մաքառին, միշտ ձախողելով... Հիմա ճիշդ նոյն ձգտումն ու վարմունքը կը տեսնեմ քու մէջդ ալ, որովհետեւ դուն ալ կը տառապիս՝ նոյն պակասութիւններէ...

— Այդ տգէտ սերունդն է որ քեզ այս դիրքերու հասցուց, պատասխանած էր ինք. անոնց զոհողութեան արդիւնք է քու այսօրուան ունեցածդ, աւելցուցած էր խստօրէն, ու վիճարանիլը աւելորդ նկատելով դարձեալ նետուած էր փողոցներու ամօքիչ դիրկը:

Սորհրդածելով, վերակոչելով երէկն ու աւելի հին անցեալը, Յակոբ առաջացաւ քիչ մը աւելի, լուսաւոր փեղկերը իր ետին թողելով: Արագօրէն բարձրացաւ կողմնակի փողոցէ մը վեր, եւ երբ հասաւ գետափին կիսամութ մասը, ինքզինք նետեց նստարանի մը վրայ ու անշարժացաւ՝ ակնարկը հեռուն: Հակառակ զեփիւռին, տամուկ ու հեղձուցիչ էր ամառնային երեկոն, ու անկէ փախչելու համար կարծես, զոյգեր դուրս նետուած էին փոքրիկներու հետ, որոնք կանդ կ'առնէին ամէն քայլափոխի, երբեմն քրքջալով, երբեմն համուած՝ առադաստներու անձայն տողանցէն:

Ինչ պիտի ընէր հիմա: Ինչպէս պիտի վերադառնար նոյն պղտոր կեանքին ու դէմ յանդիման դար իր մղձաւանջին հետ: Մինչեւ այսօր, կատարելապէս անտեսած էր Սիրվարդին անբարեկիրթ ակնարկութիւնները, անբացատրելի դողողութիւնը, ու անոր հեղնախառն արտայայտութիւններուն հանդուրժած էր յուսալով, որ ժամանակն ու կեանքի պայմանները փոխեն հիւանդագին տրամաբանութիւնը անոր: Բայց չէր յաջողած իր ակնկալութեանը մէջ: Հիմա կու դար յանդելու այն եզրակացութեան, թէ Սիրվարդ միշտ նոյնը

պիտի մնար, մինչեւ այն ատեն որ ինքզինք վերակայ կը դասէր իր շուրջիններուն վրայ:

«Օ՛, որքան սխալեցայ անոր տալով պատուանդան մը, որուն արժանի չէր բնաւ... թուհ, ուսում, զարգացում, ինչ բան կ'արժէ, երբ անհատը զանոնք օգտագործել չի գիտեր», մտածեց Յակոբ, ու կանդ առաւ հոն, վախնալով որ հոգեկան այդ վիճակէն տարուած սայթաքի մէկէն, զբացական ընդհանրացումներու մէջ, ուր տրամաբանութիւնը չունի ոչ մէկ հանդրուան: Ասիկա սովորական երեւոյթ մը չի կրնար ըլլալ բնաւ, շարունակեց ան, ու ոտքի ելաւ, կամաց կամաց վերագտնելով իր պաղարինութիւնը: Ու այդ վայրկեանին է որ յանկարծ յիշեց իր նախկին սէրը, աղնուասիրտ ու գորովալիւր պաշտելի Սիրվիան: Իրականին մէջ յանկարծական ոչինչ կար դէպի ետ նետուած այդ ակնարկին մէջ, որովհետեւ Սիրվիային հանդէպ ունեցած սէրը բնաւ չէր անհետացած, միայն թէ պայմաններու հարկադրանքին տակ, երիտասարդ հայը փորձած էր ըլլալ քիչ մը գործնական ու այդ տրամաբանութեամբ ալ անթեղած էր զայն, կրկնակի հիասթափութիւններէ խուսափելու համար: Հիմա սակայն, ելք մը չէր տեսներ այս անել կացութեան, ու կը մտաւտանջուէր՝ ասուելիօրէն:

Սոշոր լուսինը հանդարտօրէն կը ծփար աստղազարդ երկինքին վրայ, զետին մէջ դիտելով իր ցոլացումները: Առազաստանաւերը մեկնած էին արդէն, ու շրջապատը կ'ամայնար սահող ժամերուն հետ: Հոս ու հոն սակայն, տակաւին կը յամենային քանի մը զոյգեր, երբեմն արձակելով թեթեւ քրքիջներ: Կոտրած շիշ մը կար տղուն ստամոքսին մէջ, կուրծքին տակ տեղ մը, ու դալարուող ցաւը կ'արիւնէր այսպէս: Հակառակ այդ ցաւին, ուստու՛մի մը պահանջը կը շարձարէր զինք, բայց

այս անդամ դոնէ, կ'ուղէր ապահով ըլլալ՝ վճիռը չարձակած, եւ այդ պատճառաւ ալ ականջալուր չէր ըլլար սրտակեղեք աղաղակներուն: Մութը պատած էր ներսդին, ամէն կողմ: Ու ալ չէր տեսներ հեռաւոր կանթեղը՝ փրկութեան կանչին:

Ձախողած մըն էր արդեօք, որոչպէս չէր գիտեր: Բայց կը զգար հիմա, կը զգար բնագոյնը, թէ այլեւս կը հասնէր ճամբու մը վախճանը որ անկիւնադարձ չունէր, ուր աղղանջանները մերկացած էին իրենց տառերէն:

Անորոչ ու պղտոր այս մտածումներուն մէջ թաղուած, տուն վերադարձաւ Յակոբ, եւ բոլորովին անտեսելով լոյսին տակ նստած ընթերցող կիներ, առանձնացաւ իր սենեակին մէջ:

Պատը քաշուած էր երկուքին միջեւ:

3

Ըմպելատան մութ մէկ անկիւնը քաշուած, իրարու ետեւէ եւ արագօրէն քանի մը բաժակ պարպելէ յետոյ, ոտքի ելաւ Յակոբ: Օրը Շարաթ ըլլալուն, նուազախումբը կարծես կատղած էր, արտակարգօրէն, եւ դործիքներէն պայթող աղմուկը՝ սեղաններն իսկ կը ցնցէր: Ատեն մը առաջ, այդ բոլորը դոյն ու զուարթութիւն կը ցանէին իր ծարաւի աչքերուն մէջ, սակայն հիմա, ո՛չ այդ աղմկարար երաժշտութիւնը եւ ոչ ալ զոյգերէն մեկնող խանդավառութիւնը տարտամ, իրեն կու տային անբացատրելի այն թրթռացումը, որուն այնքան վարժ էր դարձած՝ նմանօրինակ վայրերու հաճոյալի խառնակութեան մէջ:

— Գետինն անցնի ձեր երաժշտութիւնն ալ, ձեր որախութիւնն ալ, ըսաւ բարձրածայն, ու դրան առջեւ թքնելով ինքզինք նետեց կիսամութ մայթերու առանձնութեան մէջ:

Քաղաքին այդ մասը մասնաւորաբար կը նեղացնէր զինք, ոչ այնքան շրջապատէն ցոլացող յուսահատութեան համար, որքան իր անձնական փորձառութեան, որուն լծակ հանդիսացած էին թշուառազոյն այդ փողոցները: Հոն է որ դէմ յանդիման եկած էր Ամերիկայի հետ, եւ մխրճուած՝ հրապարակութեան թանձր տիղմին մէջ: Ահա տարիներ անցած էին յեղակարծ այդ ցնցումէն ի վեր, սակայն ոչինչ էր փոխուած իր ակնարկին մէջ: Հոն էին տակաւին կիսամերկ կիներով ճմրթկուած ցուցատախտակները, շարժապատկերի այդ աղտոտ սրահը, ուր կը հաւաքուէին ինկած գինեմօլներ, աժան գիշեր մը անցընելու համար: Ինք կը ցած էր շուտով հեռանալ անհանդուրժելի այդ նեխածութենէն, սակայն կեանքի բարբարոս շղթան Գէորդը կապած էր այդ միջավայրին, վերջնականօրէն: Ու ինք կը վերադառնար հոն, ամէն անգամ որ ինքզինք կը գտնէր յոռի մտածումներու խորխորատին մէջ, որովհետեւ Գէորդին ներկայութիւնն էր միայն որ քիչ մը կը սփոփէր զինքը, կը թեթեւցնէր սապէս, մինչեւ յաջորդ հարուածը անակնկալ փոթորիկին:

Ու դուռը դարկաւ ջղազրդիւ մատներով եւ առանց բառ մը արտասանելու նետուեցաւ իրեն մտերիմ նոյն աթոռին մէջ:

— Երեւոյթէդ դատելով կրնամ ըսել որ ինկած վիճակ մը ունիս նորէն, բացականչեց Գէորդը, առանց նայելու իր բարեկամին:

Յետոյ խօսեցան: Փոխանակեցին կարծիքներ, տեսակէտներ, մտահոգութիւններ, մինչեւ որ արտամու-

թիւնը եկաւ ու ծանրորէն նստեցաւ նախ Գէորգին ալ-
նարկին մէջ, ապա՝ Յակոբին, որ փոյթ չէր ընէր իր
խռովքը ծածկելու:

— Սխալեցայ ուրեմն, եւ կրկնակիօրէն, անդար-
մանն լիօրէն... կարծեցի որ հայ աղջիկ մը պիտի կարե-
նար քեզի պարզեւել ինչ որ պակսեցաւ ինծի, ինչ որ
խլուեցաւ ինձմէ... Թո՛ւհ, թերեւս ծուռութիւնը մեր
մէջն է, որ չենք կրնար լաւագոյն ընտրութիւնը կատա-
րել, շատ շատերու պէս...

— Դաստիարակութեան եւ նկարագրի հարց է,
Գէորգ, եւ ուրիշ ոչինչ: Ամէն բանէ առաջ կրնը կին է,
եւ չեմ խորհիր որ նոյն ազգին պատկանած ըլլալը պիտի
հարթէր ներքին այս դժուարութիւնը: Բնական պայ-
մաններու տակ, հաւանաբար լեզու, պատմութիւն,
բարքեր, նշանակութիւն մը ունենային, բայց մի մոռ-
նար որ իմ պարագայիս անոնց ապաւինիլը յիմարու-
թիւն պիտի ըլլայ պարզապէս, որովհետեւ Սիրվարդ ոչ
միայն անտեղեակ է իր ժողովուրդին լեզուին ու պատ-
մութեան, այլ նոյնիսկ կ'արհամարհէ զանոնք, անոնց
պահպանումը ծիծաղելի հոչակելով: Մտայնութեան
հարց է, կ'ըսեմ, եւ ոչ թէ արիւնի: Թերեւս միջավայրն
ու տեղական բարքերը անոնցմէ խլած են այդ գիտակ-
ցութիւնը, բայց ոչ բոլորովին, քանի որ տակաւին գո-
յութիւն ունին ուրիշներ, նոյն սերունդէն, որոնք հը-
պարտութեամբ ու ակնածանքով կը մօտենան իրենց
ժառանգութիւններուն, անոնց մէջ փնտռելով իրենց
ղիմազիծն ու ինքնութիւնը: Կարելի չէ ընդհանրացնել-
պէտք չէ ապաւինիլ միայն արեան ձայնին. յուսա-
դրուիլը տարրեր բան է, իրողութիւնը՝ բոլորովին տար-
բեր:

— Բայց քու ըսածներդ ճիշդ են բոլոր փոքրամաս-

նութիւններու համար, մերը ինքնուրոյն ու յատկանշա-
կան ոչինչ ունի:

— Ահաւաստիկ այդ է որ կ'ուզէի բացատրել: Ան-
հատներու սեփական վիճակէն մեկնելով պէտք չէ սար-
սափիլ սխալ մեկնաբանութիւններու յանգելով: Սիր-
վարդներ կան ամէն ազգի մէջ: Դժուարութիւնը այն է
որ, երբ դժբախտութիւնը մեզ կը հարուածէ մեր մոր-
թին վրայ, այն ատեն մեր հակադրեցութիւնը կը պըղ-
տորէ ամէն ինչ, ու չենք կրնար սառագիօրէն երեւոյթ-
ները հակադրել: Անշուշտ հասկացողութիւնը, դիտակ-
ցութիւնը ոչ մէկ ձեւով կը մեղմեն սաստիկութիւնը մեր
ցաւին. ի վերջոյ մարդ ենք:

Մինչեւ ուշ դիշեր ծունկ ծունկի նստած խօսեցան
դարձեալ: Խօսեցան այդպէս, երբեմն կորսուած՝ խոր-
հրդածութիւններու մութ բաւիղին մէջ, երբեմն վե-
րացած, բայց միշտ սրտաբեկ: Եւ որ կողմ որ դար-
ձան, ինչ բացատրութիւն որ տուին իրենց վիճակը ար-
դարացնելու համար, կրկին մատնուեցան նոյն անել
կացութեան եւ իրբեւ վերջին լուծում՝ սկսան անիծել
այդ հի՛ւն ճակատագիրը. սեւ ճակատագիրը:

— Եթէ կ'ուզես ճշմարտութիւնը դիտնալ, մենք
աքսորեալներ ենք, ըսաւ Գէորգ, ուժասպառ ձայնով.
վտարուածներ հողէն, երկինքէն եւ նոյնիսկ կեանքէն:
Խորթ բան մը կը տեսնեմ մեր դոյութեան մէջ, ժամա-
նակաւոր, վաղանցիկ բան մը: Կը թափառինք երկիրէ եր-
կիր, բայց չենք կրնար արմատ մը նետել, հաստատուն,
խորունկ, տեւական արմատ մը: Թաղարներու մէջ մեծ-
ցած թուիներու կը նմանինք կարծես, սահմանափակ կա-
րելիութիւններով, սահմանափակ երազներով, սահմա-
նափակ դոյութեամբ, եւ այդ պատճառաւ ալ շարժա-
կան ենք միշտ, պատշաճելու, յարմարելու վախէն զար-
նուած՝ թափառականներ: Ապօրինի բան մը կը տեսնեմ

այս ասլրելակերպին մէջ, դոյուլթիւն քաշքշելու ձգտում մը միայն... Եւ տեղ մը պատկանիլ չկարենալու այս վախն է որ մեզ կը ցրուէ գրեթէ ամէն կողմ... աւելի տոկուն, աւելի մնայուն ենթահող մը գտնելու անմիտ այս վաղքը, չեմ գիտեր ո՛ւր պիտի յանգի: Թաղարի բոյս մըն էինք Պէյրուսի մէջ ալ, եւ հիմա մեր այս անկումին մէջ երբ քիչ մը կարօտով ու կսկիծով կը փնտռենք այդ հին օրերը, ատոր պատճառը պարզապէս մեր յիշատակներն են, եւ ուրիշ ոչինչ: Թերեւս միայն ժամանակը պիտի կարենայ հարթել այս հարցը, մեր կամքէն անկախ, անգիտակցարար. սերունդներ պիտի աճին տարբեր հողերու վրայ և պիտի ընդունուին միայն այդ հողէն. այդպէս է որ...

— Բայց կը մոռնաս խկական լուծումը, միջամտեց Յակոբ, մեր հայրենիքը...

— Ձէ, շարունակեց Գէորգ, վայրկեան մը խկ միտքէս չեմ հանած հայրենի հողը, սակայն կը վախնամ որ մեր խորթ նկարագրով, այլասերած բարքերով, խառնածին բնաւորութեամբ, նոյնիսկ հոն ալ պիտի նկատուինք տեսակ մը օտար... Հողեկան կապը տարբեր է անշուշտ, անկեղծ ու տոկուն, բայց ատիկա կը մնայ միշտ հողեկան գետնի վրայ:

Երբ նախադասութիւնը աւարտեց Գէորգ, Յակոբ ոտքի ելաւ ու իջաւ փողոց: Ինքնաշարժին մէջ կամաց կամաց մոռցաւ պահ մը առաջուան սրտարաց խօսակցութիւնը, ու սկսաւ մտածել իր կեանքին մասին, առնելիք քայլերուն մասին, եւ քանի միւրճուեցաւ խորհրդածութիւններու մէջ, այնքան աւելի սաստկացաւ ներքին փոթորիկը ու ալ չլսեց ոչ իր բառերը եւ ոչ ալ ամպրոպային խօսքերը՝ անձանօթ մարդուն, միտքին մէջ տեղ մը: Ու տարբալուծուած, սուղուեցաւ մէկէն: Բայց որքան տեւեց հաճոյալի ու հողեպարար այդ ըն-

դարմացումը, որոշապէս չգիտցաւ Յակոբ, որովհետեւ առաւօտուն կանուխ, Սիրվարդ բացուեցաւ, շոնդալից ու բեկ բեկ:

— Ինձի անանկ կը թուի որ նորէն հին կեանքիդ կը վերադառնաս կոր... ուշ գիշերներ, գինեատուներ եւ ինկած կիներ... Շիտակ չե՞մ, ըսէ:

— Կը սխալիս Սիրվարդ, գէշ կերպով կը սխալիս:

— Ձիս Սիրվարդ մի կոչեր. իմ անունս Սու է, կը հասկնա՞ս, Սո՛ւ... Կը խորհիս որ վրաս հայկական անուն մը փակցնելով զիս ալ պիտի իջեցնես ձեր մակարդակին. ո՛չ, շնորհակալ եմ. ես առանց ատոր ալ կ'ըլլամ:

— Ձեմ հասկնար թէ ի՞նչ կը պատահի կոր քեզի. դուն ասանկ չէիր առաջ:

— Ասանկ չէի, իրաւունք ունիս, որովհետեւ ինքզինքս զսպել կը փորձէի, բայց այլեւս չեմ կարծեր որ ստիպուած եմ ես զիս ճնշումներու տակ դնելու: Կ'ըսէին, բայց չէի հաւատար, սակայն հիմա գիտեմ որ այդ կողմերէն եկողներդ տարօրինակ արարածներ էք. չտես, անկիրթ, կնամոլ... մայրս զգուշացուց զիս. հօրդ նայէ, ըսաւ. իմ կեանքս քեզի օրինակ թող ըլլայ, ըսաւ. տղիտութիւնը տանելի բան չէ, ըսաւ խեղճ մայրս, բայց մտիկ չըրի իրեն, անկախութիւն հռչակեցի ու մտիկ չըրի իրեն:

Չանպակ մը զօղանջեց հեռաւոր տեղէ մը, մեկամաղձոտ ու տխուր: Յետոյ ուրիշ մը, ուրիշներ: Յակոբ առտուանոցը անցուց վրան ու մօտեցաւ պատուհանին. սիկարէթ մը վառեց, շնչասպառ ըլլալու աստիճան ներշնչելով ծուխը: Տակաւին լուռ էին փողոցները, գրեթէ ամայի: Թերթ ցրուող պատանին անցաւ վարի մայթերէն, առանց ուշադրութիւն դարձնելու շունին, որ կը հաչէր դրան մը մէջ կեցած. չփացած, կուշտ շուն մը:

Յակոբ յիշեց Պէյբուլթի քաղցած ու անտուն շուները ու մտովի ըսաւ թէ շուներն իսկ կորսնցուցած են իրենց շնութիւնը հոս. ո՛ւր մնաց մարդերը... Յետոյ դարձաւ Սիրվարդին ու առանց կորսնցնելու պաղարիւնութիւնը, ինքնապատահ ու վճռական, ըսաւ շատ կտրուկ շեշտով.

— Հիմա որ հասկցած ես մեր ինչ ըլլալը, հիմա որ ալ ճանչցած ես իմ ինչ ըլլալս, այն ատեն ընտրութիւնդ պէտք է ըլլայ շատ դիւրին, հաւաքէ ունեցածներդ, գնա՛ ու մօրդ հետ ամուսնացիր...

Սիրվարդ յատկօրէն չհասկցաւ սողուն բոլոր ըսածները, որովհետեւ իրենց խօսակցութիւնը միշտ եղած էր երկլեզուանի եւ արագօրէն արտասանուած հայերէն բառերը շատ յաճախ կը դանդաղեցնէին ըմբռնողութիւնը անոր. սակայն կասկած չունէր ձեռքի շարժումին վրայ, դրան ուղղուած ցուցամատին, որ ուրիշ բան չէր կրնար նշանակել բացի «կորսուէ՞ն»։ Եւ հրամայողական այդ կեցուածքը սողուն, գերակշիռ ու սպառնողական արտայայտութիւնը անոր, աւելի եւս դայրացուցին դայն, այնքան մը որ ոտքի ցատկեց Սիրվարդ ու գոռոզութենէն մատնաչափ մը իսկ տեղի չտալով ըսաւ՝ բարկացայտ.

— Դուն դրսեցի մըն ես, օտար մըն ես դուն, եւ իրաւունք չունիս դիս վտարելու... Եթէ մէկը կայ որ պէտք է դուքս ելլէ, ան ալ դուն ես...

Նախադասութիւնը աւարտելու ժամանակ շունեցաւ բորբոքած կիներ, որովհետեւ շառաչուն ապտակ մը դետին տապալեց դայն ու փշրուող ամբարտաւանութեան հետ՝ տապալեցան նաեւ աթոռ ու սեղան եւ քանի մը շիշեր։ Ու մէկէն, վերէն արձակուած բաժակն է որ կարծես քարին դարնուեցաւ ու ճչաց իսկոյն. կորսուած, անտեսուած ճիշ մը, որ յանկարծ պայթեցաւ բարձրադադակ լացի մը մէջ, ու հեկեկալ սկսաւ՝ գետին փռուած կիներ։

Ո՛չ այդ տեսարանը եւ ոչ ալ կնոջ լացը շարժեցին սղան։ Յակոբ մնաց նոյն դիրքին վրայ։ Կարծես չէր ուզեր զգալ ո՛չ իր կսկիծը եւ ո՛չ ալ անորը, որ դեռ կը յամենար սեղանին տակը, երեսը գետին։ Առկախալ այդ վիճակին մէջ, հեղուկ ու շարժուն, բան չէր տեսներ ալ։ Զղայնութեան նոպան եկած ու հանդուցած էր ամէն ինչ, նոյնիսկ բոպէները, որոնք կարծես դադրած էին թաւալելէ, առաջանալէ, ու ժամանակը կեցած նոյն կէտին վրայ։ Եւ լռութեան ստեղծած պարագութիւնը տակաւ կը լայնար, կը խորանար այսպէս, անդնդանման խաւարում մը յառաջացնելով շուրջբոլորը մէկէն, ուր պաղ հովեր կը սուլէին ծերպերէն անդին, ժայռերու տակէն։ Մինչդեռ հեռուն, բարձրաբերձ դանգակատուն մը դղրդաց նորէն, ու զօղանչներ քակուեցան մելամաղձոտ ու տխուր, նաեւ միայնակ, եթերային, յետոյ զօրեղ ու քառածայն։

Թրթռացող ալիքներուն հետեւելով դանդաղօրէն վար իջաւ Յակոբ, ու սկսաւ լսել թեթեւ զարկերը մտածումին, զգացումին, ու ակնարկը յառած պատի ժամացոյցին, կամաց-կամաց անդրադառնալ սկսաւ պահ մը առաջուն նողկալի դէպքին ու շարժիլ սկսաւ։

Եթէ երբեք ասկէ առաջ հակընդդէմ զգացումներու միջեւ օրօրուած էր պատահաբար, ու չէր կրցած վըճռական որոշում մը տալ՝ արմատէն խեղդելով թունածոր զոյակցութիւնը, հիմա այլեւս տատամսելու, ընկըրկելու պատճառ մը չունէր։ Աւերը գործուած էր վերջնականօրէն, անդարմանելիօրէն, եւ իրեն կը մնար հեռանալ իսկոյն։ Օ՛, Սիրվարդ իրաւունք ունէր. ինք էր օտարականը, իրաւադանցը։

Որոշումը վճռական էր ալ հիմա։ Սենեակին առանձնութեան մէջ աճապարանքով հագուեցաւ, վալիզը չտկեց, ինչ որ կրցաւ նետել, պատուեց ու նետեց, իսկ

անանձնական իրերը ետին թողելով, ուղղունցաւ դուրսի դուռը: Հոն կանդ առաւ սակայն, վայրկեան մը, ու դիտեց շուրջը: Եւ երբ զգաց թէ յուզումը կը կուտակուէր կուրծքին տակ շուտով, անմիջապէս ակնարկը քաշեց մտերիմ առարկաներէն ու Սիրվարդին ուղղելով խոսքը ըսաւ՝ ծանրօրէն.

— Վստահ կրնաս ըլլալ որ այլեւս չեմ նեղացներ քեզ, բնա՛ւ... երբոր կ'ուզես պատրաստել տուր ամուսնայուծութի սովորական թուղթերը... գրեթէ բան մը չունինք միճարանութեան արժանի... ինչ որ պէտք կար ըսելու, ըսունցաւ արդէն...

Մինչեւ որ փողոց իջաւ վալիդը ձեռքին, դեռ չէր ըմբռնած աղէտին ծանրութիւնը, եւ այդ պատճառաւ ուղած էր սրտի մը առաջ զուրս ելլել տունէն, խորհելով որ Սիրվարդէն հեռու, անմիջապէս պիտի վերադառնէր իր նախկին եռանդը եւ առանց չփոթելու, առանց ժամանակ կորսնցնելու վերադառնար իր հին կենցաղին: Բայց երբ ցնցումին ահաբեկիչ ազդեցութիւնը սկսաւ չքանալ, միայն այն տեսն խորապէս անդրադարձաւ, որ կեանքին մէջ բացուած անյատակ ճեղքերը անտեսել կարելի պիտի չըլլար ընաւ: Եւ հիմա, կարծես առաջին անգամ ըլլալով է որ այլայլած աչքերով կը նայէր փոսին, անյոյս խորութեան, ու կը սթապիէր լրիւ: Ծիչդ է որ վայրկենարար չէին պատահած բոլոր դէպքերը, եւ ինք, արդէն հոգեպէս պատրաստուած էր վերջին հարուածին համար, սակայն ընաւ միտքէն չէր անցուցած որ անոր ազդեցութիւնը ուշակորոյս պիտի ընէր զինք, ներսդին ստեղծելով անսահման պարապուծիւն մը:

Ու այդ պարապուծիւնը կը գննէր հիմա:

Բնազդարար քանի մը քայլ առաջացաւ մայթին վրայէն ու ինքնաշարժին մէջ նստելով անշարժացաւ.

մէկէն: Ուր պիտի երթար, ինչպէս պիտի վերադառնար այն պղտոր կեանքին, որմէ հեռանալու համար անյուսօրէն փաթթուած էր իր դէմը հլլող առաջին հայ աղջկան: Թերեւս մեղադրելի էր, այսպանելի էր լրջօրէն մտածած ըլլալուն համար, բայց յանցաւորը իրմէ աւելի խոցոտած սիրտն էր, սիրատուր սիրտը, որուն վրայ չէր կըցած ունենալ ո'չ մէկ իշխանութիւն: Այո՛, անխոհեմ եղած էր իր անապարտանքին մէջ, ու չէր հասարակչուած անելիք քայլերը, պատճառ ըլլալով որ յանկարծ շրջուի ընթացքը դէպքերուն: Սիրվարդին անակնկալ մեկնումը մէկէն քանդած էր ամէն տրամաբանութիւն ու զինք նետած էր հակընդդէմ հոգեվիճակներու զուպարին մէջ յարածուփ: Ու խոտովալի այդ ձախողութենէն յուսարեկ, ուղած էր հիմնական փոփոխութիւն մը յառաջացնել անբնական ապրելակերպին մէջ եւ խաղաղեցնելու համար ներքին ժխորը, հարկադրարար նետուած էր այդ ընտրութեան մէջ: Ու հիմա, դարձեալ վերադառնալ այդ կեանքին. ո'չ, անկարելի էր: Պէտք էր ընտրէր աւելի խոհեմ ճանապարհ մը, իր ներկայ մտածելակերպին համապատասխան ուղղութիւն մը, այլապէս, այլապէս... Օ՛, ընաւ չէր ուղեր մտածել դարիքի մասին:

Յաջորդող քանի մը օրերուն, պանդոկի մը սենեակին մէջ առանձնացած՝ ահուելիօրէն տառապեցաւ դադթական երիտասարդը ոչ այնքան վերջին ձախողութեան համար, որքան այն մտերիմ սրտաբաց զրոյցներուն, որ կ'ունենար ինքն իրեն հետ, երբեմն բարձրաձայն, երբեմն անխօս ու անկապակից: Ու ամէն մտածում, ամէն նախադասութիւն կ'աւարտէր գրեթէ նոյն հարցումներով. «Մենք ի՞նչ դործ ունինք հոս»: Եւ այլեւս

բնաւ փորձ չէր ընել ասպակներու նախկին բացատրութիւններուն, արդարացնելու կամ փարատելու համար իր ներկայ հոգեւորիճակը: Ատեն մը առաջ, ամէն ինչ յստակ էր ու պայծառ՝ իր ակնարկին տակ, իր մտածումին մէջ: Ընդամ ըլլալով հետեւելիք ուղղութիւնը, ծրագրած ըլլալով իր ասպարան, գրեթէ գոհունակութեամբ ու հաստատ քայլերով կ'առաջանար առօրեայ տաղտուկներուն մէջէն եւ բնաւ չէր տկարանար պատահական արգելքներու առջեւ, անոնց մէջ տեսնելով կեանքը ճոխացնող բնական բան մը: Բայց հիմա, պրոտորութիւն մը կը տեսնէր չորսդին, շփոթութիւն մը ինքնիր մէջ, ու խանդավառուելու, ինքզինք խրախուսելու ճիշդ իսկ չէր թափեր: Կարծես կորսուած մըն էր, այս խառնարանին մէջ:

Երբորդ օրն էր, երբ այլեւս չգիտմանալով սենեակին ճնշիչ առանձնութեան, փողոց իջաւ: Նախ այցելեց իրեն ծանօթ ըմպելատուներէն մի քանին, ապա թափառեցաւ փողոցէ փողոց: Այլեւս նոյն երանդը չէր տեսներ՝ ո՛չ լոյսերուն մէջ եւ ո՛չ ալ եռուղեւին, որոնց այնքան հետաքրքրութեամբ ու եռանդով նայած էր դեռ կարճ շրջան մը առաջ: Իրեն այնպէս կը թուէր, թէ դիշերուան մը մէջ ամէն բան տեղահան էր եղած, յեղաշրջումի էր ենթարկուած, եւ ինչ որ մնացած էր նախկին օրերէն, անոնք եւս սկսած էին թառամիլ իրարու ետեւէ: Այո՛, փոխուած էր ինք, փոխուած էր ակնարկը, փոխուած էր մտապատկերը զուարթ, եւ հիմա կը նաւարկէր ճիշդ հոսանքին հակառակ: Եւ այսպէս, մտածելով, խորհրդածելով, մենախօսելով հասաւ մինչեւ այն փողոցը, ուր կը բնակէր Գէորգ:

Պէտք ունէր անոր, պէտք ունէր մտերիմի մը, որուն առջեւ կարենար սիրտը բանալ առանց կեղծիքի, առանց ձեւակերպութեան, առանց նուաստանալու:

Բայց աւելի չկրցաւ առաջանալ այդ դիժին վրայ, վրստահ ըլլալով որ սիրելի այդ հոգին իրմէ աւելի պիտի ցաւէր իր վիճակին վրայ, սեփական դժուարութիւնները մէկզի դնելով: Ձէ՛, ողբերգական զեղումներով տարուիլ չէր իր նպատակը այդ պահուն, եւ լաւ ճանչնալով Գէորգին զգացական անհաւասարակչութիւնը, ուղեց խուսափիլ անոր հանդիպելէ: Արդէն վերջին տեսակցութիւններուն, անյոյս բան մը նշմարած էր Գէորգին տեւական ողբին մէջ, անդամանելի ցաւ մը, որ հիմէն կը քանդէ: «Այո՛, կ'ըսէր ան, թաղարի բոյսեր ենք մենք, առանց արմատի, առանց տունի, ու այսպէս, օղէն կախուած, կը ճօճուինք ընդմիշտ, ամէն անգամ որ հովը փչէ արեւելեան աշխարհէն եւ կամ ով գիտէ...»

Ու հակառակ կամքին, սանդուղներէն վեր բարձրացաւ գրեթէ ուժասպառ: Եւ երբ հասաւ վերի յարկի նրբանցքը, կանդ առաւ մէկէն: Մութ էր ամէն կողմ, ու ճնշիչ լուսթիւնը կարծես կախուած էր պատերէն՝ մաշած, պայթած աչքերու պէս: Պաղ սարսուռ մը անցաւ ողնայարին մէջէն, երբ զարկաւ դուռը: Պատասխան չկար եւ ոչ իսկ՝ շշուկ մը: Իրիկուան այդ պահուն, սովորաբար տուն կ'ըլլար Գէորգ: Ձարկաւ կրկին, ու սպասեց անձկութեամբ: Յետոյ ձեռքը տարաւ դրան խնձորին ու դարձուց կամաց: Թեթեւ աղմուկ մը, ու ներսն էր արդէն: Լոյսը վառեց ու ետ ետ քաշուեցաւ... յանկարծական հարուածը անշարժացուց զայն մէկէն: Դրան առջեւ, կունակը մութին, ապշահար, շմբորած, շանթահար: Վայրկեանները սահեցան իրարու ետեւէ, բայց ոչինչ կրնար զգալ շփոթած տղան: Պաղած ակնարկով դամուած էր օղէն, զգայարաններէ զուրկ: Ձէր կրնար շարժիլ... Ինչո՞ւ Գէորգ, ինչո՞ւ... Կախուած էր օղէն, լեզուն դուրս ինկած, անյոյս աչքերը՝ կողմնակի յարած... Ինչո՞ւ Գէորգ, ինչո՞ւ...

Երբ որ վերագտաւ դատելու, տրամաբանելու իր կարողութիւնը, ակնարկը պարտացուց մահաբոյր սենեակին լքուածութեան վրայ, ու փախաւ մէկէն: Ներքին ձայն մը կը խուլցնէր զինք: Ահաւոր ձայն մը, անորոշ, պղտոր, որ կը բարձրանար՝ ամէն քայլափոխին, երբեմն սաստկանալով, երբեմն անլսելի, բայց որ կը բարձրանար՝ առանց արգելքի: Օ՛ր, տակաւին չէր հաւատար տեսածին, չէր ուղեր ընդունիլ առեւելի իրողութիւնը, ու կը վազէր խելագարի մը պէս, հալածուածի մը պէս, միշտ կրկնելով, միշտ մըմնջելով՝ ինչո՞ւ Գէորգ, ինչո՞ւ, ինչո՞ւ... Ու թափառեցաւ փողոցներու մէջ, առանց անդրադառնալու զինք մղող ուժին, առանց անդրադառնալու զինք հալածող մտածումին, ներազին փշրուող սուր ապակիին, որ կ'արիւնէր զինք, որ կ'այրէր սիրտը, աղիքներն ամբողջ: Եւ ատելութեամբ, վրէժխնդրութեամբ, դարչանքով դիտելով՝ ճամբու երկայնքին շարուած լոյսերը, անդադար կ'անիծէր՝ արուեստական ժպիտը հիւանդ քաղաքին, նենդաւոր մարդոց, անիմաստ կեանքին: Ու վերջապէս հասած ըլլալ կը կարծէր փոթորկայոյց հոգեվիճակին մութ լճակին մօտ, մղլոտած, դարչահոտ ափը անշարժ ջուրերուն, ուր աղուաներ կային սեւ սովէն կատղած: Կատղած էր նաեւ ինք արիւնոտ աչքերով, երբ կանգ առաւ իրեն ծանօթ մայթերուն վրայ, ու դիտեց շուրջը:

Այո՛, տակաւին հոն էր ամէն ինչ: Զրվէժող լոյսերը չէնքերու ճակտին, խուռներամ բաղմութիւնը ցուցափեղկերու առջեւ, խօլական վաղքը հրէշ մեքենաներու, բայց բացակայ էր՝ իր հոգին վիրաւոր: Եւ այդ ժխորին մէջ, ձայներ բարձրացան հնչեղ ու յստակ. «Ի՛նչ դործ ունինք հոս, ի՛նչ դործ ունինք հոս, ի՛նչ դործ...»: Ներս մտաւ Յակոբ՝ ճամբու վրայ բացուող առաջին զինետունէն ու քանի մը բաժակ պարպելէ յետոյ, քիչ մը հանդարտած, դուրս ելաւ նորէն: Զէ՛, այլեւս յստակ

չէր կրնար տեսնել. «Ի՛նչ դործ ունինք հոս...» այլեւս ուրիշ ձայն չէր կրնար լսել բացի՝ «Ի՛նչ դործ ունինք հոս, ի՛նչ դործ...»:

«Ո՛ւ չինչ» ժայթքեց ներսէն աղմուկ մը. «ո՛ւ չինչ»:

Որոշումը յստակ էր ալ, վճռական, անդառնալի: «Այս երկիրը բնաւ պիտի չընդունի դիս, խորհրդածեց վայրկենաբար. ես պիտի չկարենամ նոյնանալ այս երկրին հետ», շարունակեց մտածել, ու քալեց գլուխը կախ, յուսաբեկ: «Օ, պարզապէս թաղարի բոյս ենք մենք, մերժուած, վտարուած, անտեսուած անարմատ բոյսը թաղարի», վերսկսաւ կրկնել Գէորգին խօսքերը, ու առաջացաւ:

Յետոյ սակայն, ինքզինք արդարացնելու համար, իր որոշումին տրամաբանական ըլլալը ապացուցանելու համար ըսաւ, թէ նոյնիսկ թաղարի բոյսերը նպաստաւոր կլլմայի պէտք ունին տեսելու համար, ապրելու համար, դոյութիւնը քաշքշելու համար, փոյթ չէ թէ սահմանուած ժամանակի մը համար միայն, փոյթ չէ թէ կարճ շրջանի մը համար միայն: Այո, պիտի վերադառնար այդ կլլմային, անոր որ ճանչցած էր տարիներ շարունակ, ուր եղանակները տացքնել զիտէին, ուր հոգին պիտի տեսէր ասնն մը եւս:

Ու մութ արահետի մը մէջ կորսուեցաւ դաղթական հայը, միշտ խորհրդածելով, յոյսի մը կառնելով, հոգ չէ թէ հեռաւոր...

1964, Պոստոն

ՉՄՍՐԱՆ ԶՈՒՆԻՆ

1

Թիեի դէպքերուն, վէճերուն եւ անոնց
ծնունդ տուող նախանձին ու մրցակցու-
թեան ծանօթ է նիկողոս, բայց պատմութիւնը իր
մանրամասնութեամբ կառուցանելու համար յաճախ
կը ստիպուի յիշողութեան դիմելու, եւ այդպէս է որ
տեղի ունեցած արտակարգ փոփոխութիւններուն կը
նայի դրեթէ պժղանքով: Ի վերջոյ, փողոցները, տու-
ները եւ այդ շրջաններու մէջ բնակութիւն հաստատած
Հայութիւնը վաղտնիք մը չունին, որոնց տեղեակ չըլ-
լայ ան, որովհետեւ կեանքին բաւազոյն յիսուն տա-
րիները քամած է այդ մայթերու երկայնքին եւ հիմա,
լերկ ծառի մը պէս կքած՝ շուրջը կը դիտէ քիչ մը այ-
լայլած: Առաւօտեան այդ պահուն, ինքնաշարժներու
տաղտկալի եռուղեւը գլխաւոր պողոտային կու տան
բացառիկ նշանակութիւն: Որովհետեւ առանց անոր,
այսինքն՝ մեծ պողոտային, սա համեստ դիւղաքաղաքը
բոլորովին պիտի կորսնցնէր իր յատկութիւնը, Պոստո-

նէն անմիջապէս անջատուելով: Իրողութիւն մը զոր յտակօրէն ըմբռնած է Նիկողոս եւ այդ պատճառաւ ալ անիմաստ կը դառնէ շարունակուող վէճերը եւ կ'այպպանէ յոյն ալ, իտալացին ալ, եւ մանաւանդ՝ Հայերը:

Մասնաւորաբար Հայերը կը քննադատէ ան՝ ի մտի ունենալով այս արուարձանին անցեալ պատմութիւնը: Անցեալով աւելի կը հետաքրքրուի Նիկողոս, որովհետեւ անոր մէջ կը դառնէ իր յոգնատանջ հոգիին անզորութիւնը:

Այդ օրերուն, դասակարգ գոյութիւն չունէր այս փոփոխներուն մէջ, քանի որ ամէն դաղթական իրարու կը նմանէր եւ բոլոր օտարներու նման, Հայերն ալ լծուած էին ապրուստ մը հոգալու ծանր աշխատանքին եւ խտրութիւնները ոտնակոխ ընելով՝ կ'ապրէին յարաբերաբար խաղաղ կեանք մը: Տարիներու ընթացքին, երբ տնտեսական դժուարութիւնները հարթուել սկսան եւ դաղթական Հայը տիրացաւ իր բուն նկարագրին, այն ատեն է որ կացութիւնը շրջուեցաւ արագօրէն եւ բազմապատկեան հարուածը իջաւ փոփոխներու վրայ: Սեւ ամպերը բոլորուեցան տանիքներու շուրջ եւ արուարձանը անմիջապէս վար առաւ դաղթականի խիստ խղճալի դիմակը: Վերջապէս պատահեցաւ անխուսափելին, ճիշդ այնպէս, ինչպէս որ դուշակած էին աւելի խելահաս, փորձառու ղեկավարները համայնքին:

Հիմա սակայն...

Սահմանները ճշդուած են խոշոր տառերով եւ դրօշակները պարզուած՝ ամպերէն վեր: Ու պարզուող այս տեսարանին վրայ հանդիսաւորութեամբ կ'իշխէ Սուրբ Կարապետ, ան ալ եկեղեցիին բարձր դմբէթէն: Համեստ ցուցամտօք ծանրակշիռ հեղինակութեամբ կը ցցէ այն կէտին, ուր արուարձանը երկուքի կը բաժ-

նուի մեծ պողոտային օգնութեամբ՝ անըմբռնելի զբրպարուութիւններու տեղի տալով եւ վարի թաղեցիները վերիններուն դէմ հանելով: Պատահածը խկապէս դժբախտութիւն մըն է, քանի որ թաղին ինկած մասը փետրաթափ հռչակուած էր շարամիտներու կողմէ: Նմանութիւնը չէ որ կը կատեցնէր վարի թաղեցիները, որովհետեւ ներկերը իրապէս փետուրներու նման կը թափէին տուներու պատերէն՝ խղճալի, ողբալի տեսարաններ պարզելով մայթերու երկայնքին: Բայց կար աւելին, սա դոռողութիւնը՝ որ նայուածքները կը քաշէր, կը տանէր մրցակցութեան բուն նպատակին, որ թաղուած էր տուներու դիմերուն մէջ, տնտեսական անհաւասարակչութեան մը, որ բոլորին ծանօթ է:

Այս պայքարը վերջ չունէր սակայն հակառակ ձիւնին, հակառակ բուքին, թէեւ եղանակներու կը յարմարցուէր աստիկա երբեմն աւելիով, ու շատ յաճախ ներկի վրձինի մը օգնութեամբ: Եւ հիմա, վէճերը մնայուն հանգամանք ստացած են ալ, քանի որ կիները մայթերը թափած են եւ պատուհանէ պատուհան տարածուող պարապութիւնը կը լեցուի դէպի ներս արձակուող խիստ նայուածքներով:

Այդքանով բաւականանալ, գոհանալ չեն կրնար անոնք սակայն, եւ այդ պատճառաւ ալ վէճը կը շարունակեն եկեղեցիէն ներս: Վերի թաղեցիները կը զբաւեն քահանային աջ կողմը, փակ վարիները՝ ձախը: «Տէր Ողորմեա»ի պահուն է որ ատելութիւնը կը ժայթքէ արցունքի փոխարէն եւ անսահման կատաղութիւնը կը նետուի հողիներէ ներս: «Օրհնեցի դձեզ»ին մուշտակները վաճառքի հանուած են արդէն եւ... Այս բոլորը այնքան սովորական դարձած են ալ, որ ժամկոչը կը շարունակէ իր դործը քիչ մը ածուխ նետելով այրող կրակին:

Նիկողոս անընդհատ դանդաղացած էր այս մասին:

Եկեղեցւոյ նուիրականութեան դէմ դործուած այս սարարքը սրբապղծութիւն համարելով՝ ընդվզած է Հայոս անկեղծութեամբ, բայց ի վերջոյ թուլցած էին անոր ալ ջիղերը եւ յարմար դատած էր լուելը զոնէ: Թէեւ յարմար առիթներով բարձրացուցած էր իր ձայնը եւ «Ձեր աղտոտ լաթերը ձեր փողոցներուն մէջ լուսացէք» ըսած էր, առանց քաշուելու: Հողաբարձու ըլլալիք ատաղձ էր անորը, ատոր համար ալ շատ կարեւորութիւն էր ուզեր տալ անցած-դարձածին, որովհետեւ զինք անձնապէս տաղնապեցնող հարցերուն լուծում մը գտնելու համար՝ ստիպուած էր ազգային մտահոգութիւնները թաղել ձիւնին տակ՝ «մինչեւ ամառ Աստուած մե՛ծ է» ըսելով:

Հիմա սակայն ձիւնը հետզհետէ կը սաստկանար խաղաղութիւնը աւելի բաղձալի դարձնելով. բայց Նիկողոս կը նախընտրէր քաշելը, ո՛չ այնքան կակուղ զգայնութեան համար, որքան՝ պատեհութեան, որուն կրնար տիրանալ դարչապարներու իրաւունքով: Եւ անոնք իրն էին, ինչպէս գաւակները՝ կիներուն: Եւ ահա, չորս երիտասարդները անուրդի հանելէ ետք, ինք մնացած է բոլորովին առանձին: Գանդատելու պատճառ մը չունէր անչուշտ, որովհետեւ իրենները տարբեր էին: Լաւ դաստիարակած էր զանոնք: Ինք էր կերած բայց խնամած էր զանոնք: Համալսարաններ դրկած՝ օրը քսան ժամ աշխատելով: Անոնց տալով ինչ որ ինք չէր ունեցած: Ինչ որ վաղթական Հայր էր կրցած ունենալ: Եւ տուած էր ունեցածէն աւելին՝ սիրտին հետ հոգին ալ մաշեցնելով անոնց ճամբուն վրայ: Բայց հիմա, վարձատրութիւնը Քրիստոսի թագին պէս կ'այրէր ճակտին վրայ, քանի որ ճակատ մը ունէր այրելու պատրաստ: Որովհետեւ նոյն քաղաքին մէջ բնակելով հանդերձ ամիսը հազիւ անգամ մը գտնոնք տեսնելու պատեհութիւնը կ'ունենար: Հարկաւ,

բացէ ի բաց «մի դար» չէին ըսեր հարսերը, բայց չափազանց դրաղած ըլլալուն տուն չէին դանուեր իր այցելած ժամերուն:

Կողի փուշ է, կողի փո՛ւշ:

Կենալու ազդարարութիւնը ըրաւ կարմիր լոյսը. բայց կանաչին հետ՝ մտածումը քաշեց ետեւէն եւ անցաւ փողոցին միւս կողմը:

Առաւօտը կը բացուէր, քիչ մը դժկամակութեամբ: Ինքնաշարժներու վազքը միօրինակութեան վրայ հըսկայ ճեղք մը կը բանար՝ մայթերուն վրայ նետելով հալած ձիւնը: Թէեւ ոստիկանի բաճկոնը քիչ մը նեղ էր վզին շուրջ, բայց աւելի նեղ օրեր տեսած ըլլալուն Նիկողոս արհամարհեց այս անպատեհութիւնը, մանաւանդ որ սիրտին վրայ կը ճնշէր կուրծքին վանդակը եւ յուզումը վհատագին կը չորնար կոկորդին մէջ՝ «Օ՛Փ, օ՛Փ, օ՛Փ» չըսած:

Լճացած ջուրին վրայէն ոստում մը ընկելով մտածումին թելերը իրարու միացուց, որովհետեւ կեանքի դժուարութիւնները, ելեւէջները, յուսախաբուութիւնները չէին կրցած վհատեցնել զինք, քանի որ երակներուն մէջ ունէր մաքուր արիւն մը: Գիւղերու երգով, արեւով զօրացած արիւնը: Բայց այս լքուածութիւնը, անտեսումը, «քու օրերդ համբուած են» ի նայուածքները կը քայքայէին զինք՝ հիմնալատակ ընկելով ապրելու իր եռանդը, խանդը:

«Բարեւ ձեզ, շատ լաւ ենք, դուք ինչպէս էք» . այո՛, լաւ օրեր, ուրախ տարիներ անցուցած էր Եսթերին հետ. խոչընդոտները հարթած էին միասին. օտարութեան դէմ կուրծք տուած եւ ապրած՝ երջանիկ տարիներով, քառասուն անմոռանալի դարուններով: Բայց անոր մեկնումէն ետք, (չողիլ լուսաւորութիւն քա՛ աղջիկ), սա օտարութիւնը դարձաւ անհամ կատակ մը.

կողերդ սարսափեցնող սպաննալիք մը սլարդապէս : Կողերու յիշատակութիւնը պատճառ եղաւ որ մէջքին վրայ քիչ մը կը Նիկողոս, եւ վաթսունեօթը տարիներու բերը զգայ ուսերուն վրայ :

«Աջիդ վրայ երկրորդ փողոցն է» . եթէ իրողութիւնը կ'ուզէք զիտնալ՝ գործելու պէտք չունի Նիկողոս . նիւթականի պահանջը չէ որ զինք փողոցները նետած է այս ցուրտին, այլ՝ մինակութենէն ձերբազատուելու, փախչելու բաղձանքը : Ահա այսպէս, ամէն առաւօտ եւ կէսօրին, քանի մը ժամ կը հսկէ անկիւնի երթեւեկին, որպէսզի փոքրիկներ անվտանգ դպրոց հասնին՝ զերծ մնալով ինքնաշարժներու խօյական վազքէն : Ոստիկանական ոյժէն քաշուեցաւ քանի մը տարի առաջ, բայց եսթերին մահը պատճառ եղաւ որ վերադառնայ այս գործին : Մանաւանդ որ առողջութեան մասին զանգատելու առիթ ալ չէր ունեցած տակաւին, եւ առաջին ակնարկով հազիւ յիսուն մը կու տաս իրեն՝ քիչ մը աչք դոցելով կքելու ենթակայ կազմին :

Անմիջապէս որ Սքուլ փողոցին վարի մասը հասաւ, դեղին դօտիին վրայէն սրբեց ձիւնի խաւը եւ կանգնեցաւ մայթին աջ կողմը : Աջ կողմը կը նախընտրէր, որովհետեւ ետեւի պատուհանը կը պատկանէր Մերիին : Ազնիւ այրի մըն էր ան, օտար ըլլալով հանդերձ, ապացոյց որ այսքան տարիներ կրցաւ ապրիլ հայկական համարուող սա փողոցին վրայ, հակառակ պարբերական կռիւներուն, որոնք տեղի կ'ունենային վարիներն եւ վերիներն միջեւ, բարեկեցիկին եւ հարուստին, մուշտակին եւ կերպասին, քահանային աջ եւ ձախ բազուկներուն միջեւ, ան ալ Կիրակի օրով, պատարազի պահուն, դպիրներու մասնակցութեամբ : Նիկողոս հեռու է այդ բոլորէն, որովհետեւ կանգնած է հոն, կոնակը պատուհանին, իսկ մտածումը անկէ ներս՝ Մերիին մօտ : Եւ անոր մէջ է որ հետզհետէ կը

զտնէր կորսուած մտերմութիւն մը, սանկ աղուոր տաբութիւն մը, որ մրցակցութեան կը մղէր ոստիկանին մտածումն ու զբացումը, դատողութիւնն ու պահանջը : Բայց անտեսելիք կիւն չէր Մերին, մանաւանդ ասանկ օրերուն, երբ մարդ պատրաստ է յանձնուելու, ենթակայ՝ իյնալու, ան ալ զոյգ ծունկերու վրայ, աղաչական, պաղատազին զիրքով, որ կոյս Մարիամին սիրտն իսկ տեղէն կրնայ շարժել, ցնցել : Առաջին տեսակցութեան հազիւ յիսուն տուաւ անոր՝ հապճեպով կատարուած հաշիւէ մը ետք, բայց քանի մտերմութիւնը սահմանը ջնջեց, Նիկողոս այնքան աւելի համոզուեցաւ որ այս կիւնը քառասունհինգէն վեր ըլլալու չէր :

— Նի՛ք, Նի՛ք... ուշադրութիւն ըրէ, պաղ պիտի առնես :

Նիկողոս ետ դարձաւ անմիջապէս որ պատուհանը բացուեցաւ . եւ որովհետեւ պատուհանը բացուած էր ալ, Մերիին գլուխը կ'երեւէր հոն : Եւ ճիշդ այդ ուղղութեամբ շարժելով շրթները, Նիկողոս ըսաւ .

— Սարսափելի փոթորիկ մը պիտի ունենանք, հոտը կ'առնեմ կոր . ինչո՞ւ չեն փակեր դպրոցները, խելքս չի հասնիր . ինչո՞ւ կը շարձարեն սա մանուկները՝ չեմ հասկնար :

Հասկնալու պէտք չունէր, քանի որ Մերին բացատրութիւնը կու տար՝ քիչ մըն ալ գորով դնելով ձայնին մէջ :

— Բայց մանկապարտէզները փակ են այսօր, լուրերուն չե՞ս հետեւիր . վե՛ր եկուր, վե՛ր եկուր, տաք սուրճ մը տամ քեզի, հիմա պիտի սառիս, է՛յ մարդ...

Իրապէս լուրերուն կարեւորութիւն չէր տար Նիկողոս, որովհետեւ զինք կլանող մտածումները բարար էին միտքը յոգնեցնելու համար, մանաւանդ որ

այլեւս չէր ուզեր լսել մահուան մասին, պատերազմի զաշտին մէջ արիւնաքամ եղող երիտասարդներու մասին, թէեւ իր կեանքի ողբերգութիւնը հասարակաց եզրեր ունէր հոն բեմադրուող կատակերգութեան հետ:

Բայց հո՛ւս, խոհանոցին տաքուկ այս անկիւնը՝ մոռցնել կու տար դուրսի փոթորիկն ու հեռաւոր հորիզոնները արիւնով ներկող կռիւնները, հակառակ անվերջանալի պայքարին որ կը սարքուէր՝ անոր ներաշխարհին պատերը ցնցելով:

— Դուն հիւրանոցը հանգստացիր, Նիք, ես հիմա կը բերեմ սուրճը:

Բայց Նիկողոս խաղաղութիւնը կը սիրէր իր յողանած սիրտով. պատերէն, առաստաղէն, սրճեփէն իջնող խաղաղութիւնը թուլութիւն մը կը նետէր ջիղերուն, երակներուն մէջ, եւ թոյլ կու տար որ դաղթական Հայը, այլասերելու անատակ Հայը՝ մտածէ նսթերին մասին, կակուղ միսերով, լայն կոնքերով նսթերին, որ իրեն պարզեւած էր չորս զաւակներ՝ ասանկ ցուրտ պահերէն օգտուելով, քաջալերուելով:

Սովորական հիւրանոց մըն էր եղածը. աթոռներով, լոյսերով, սեղանով եւ սեղմիրանով մը, որ նետուած էր հեռաձայնի դործիքին վրայ, մինչդեռ անդին՝ սեւ շփակը անհանդարտ կատուի մը նման կը հանդչէր լապտերին վրայ. եւ անշուշտ, աւելի մտերիմ ճերմակեղէններ, որոնց ներկայութիւնը զիտաւորութեան կասկածը կ'արթնցնէ ոստիկանին մէջ, հաճոյքէն ոչինչ պակսեցնելով:

Եւ ահա՛, Մերին. իր մտերմութեանը մէջ. առաւօտեան մետաքսը ուտերուն վրայ, եւ, մինչեւ կուրծքին ճեղքը իջնող շապիկով մը, որ ցուրտ օրերու փորձութիւնն է անկասկած: Բայց Նիկողոսին մատները

սուրճի դաւաթով զրաղած են հիմա, մինչդեռ նախածքը պտոյտի է ելած կնոջ ողորկ սրունքներուն մօտ, որոնք հանդիման են սա ձեւով, իրարու վրայ, համարձակութեամբ մը, որ այրի կիներու առանձնաշնորհումը դարձած է կարծէք, զժբախտութեան մը իրաւունքով:

— Անտանելի է այս կեանքը, Նիք, իրապէս, խորապէս, պարզապէս անտանելի: Մայքին ողջ եղած օրերը ցուրտին ինչ ըլլալը չէի գիտեր, բայց հիմա, բայց հիմա՛, կը դողամ կոր, անկողինին մէջ իսկ կը սարսուսամ կոր:

Եւ իրապէս կը շարժէին անոր կուրծքերը՝ թափանցիկ մետաքսին տակ, սեւ պտուկները թրթռացնելով: Եւ խորապէս գիտակից իր ունեցածին՝ Մերին ծայրայեղ պարկեշտութեամբ թոյլ կու տար որ Նիկողոսին մատներուն մէջ սուրճի դաւաթը երկրաշարժէ բռնուածի պէս երերայ՝ կաթիլ մըն ալ սեւ հեղուկէն թափելով դորդին վրայ:

— Հապա ես ի՞նչ ըսեմ, Մերի. այս տարիքէս ետք առանձին մնալու տէրտը ինչպէ՞ս քաշեմ:

— Ձէ՛, այդ մէկը չեմ ընդունիր, — ըսաւ կինը, — ես այդ յայտարարութեան բացարձակապէս դէմ եմ, որովհետեւ դուն երբեք տարիքդ չես ցուցնիր. այսօրուան երիտասարդներէն տոկուն կ'երեւաս. է՛յ մարդ, բուն ապրելիք տարիքն է հիմա: Հոգ չունիս, մտահոգութիւն չունիս. հարկաւ քիչ մըն ալ դրամ ունիս դրամատան մէջ. ալ ինչո՞ւ խորհիս. հապա՞, մտածելու ինչ կարիք կայ, երբ դրամ ունիս:

Հաւաստումի այս խօսքերը քաջալերական թուեցան Նիկողոսին, որ կռնակը փակցուց բազկաթոռին, եւ նայուածքին տուաւ այնպիսի համարձակութիւն մը, որ երիտասարդի մը վայել պիտի չսեպուէր: Բայց

նկատի առնելով իր ցաւը՝ Նիկողոս մտաւ կնոջ աչքերուն մէջ, եւ կապոյտ ջուրերը խաղի բերաւ, «իշտէս սասնկ կ'ըլլայ» ըսելով:

— Գաւաթ մը եւս բերե՞մ, — ըսաւ կինը, — Հայուն շուարումէն օգտուելով:

— Ձէ՛, ալ չեմ ուզեր. պէտք է տուն հասնիմ՝ ձիւնը չսաստկացած. պիտի զօրանայ այս փոթորիկը. հովին ուղղութիւնը չեմ հաւնիր:

— Տունիդ պէս զգա՛, Նիք. երբոր կ'ուզես՝ եկուր. դուռս միշտ բաց է քու առջեւդ. շատ առանձին կը զգամ, երբեմն խենթանալու աստիճան. դոնէ դուն զաւակներ ունիս, Նիք, այդքան դժուար չէ քեզի համար...

Այդ ակնարկութիւնը թունաւոր դաշոյնի մը պէս մխրճուեցաւ անոր սիրտին մէջ. բայց Նիկողոս փոյթ չըրաւ. «մետաղի մը կտորը ինչ է որ» ըսաւ. որովհետեւ մտածումը ձգած էր տաք բազկաթոռին մէջ, իսկ կորաքամակ իրանը շալկած՝ ինք կը քալէր մայթին վրայ: Եւ անբանի մը պէս շարունակեց այդ ընթացքը, մինչեւ որ հովը խռովեց ճակատը եւ յիշատակները պղտորեցան, շուրջպար բռնեցին սիրտէն բխող ցաւին շուրջ. եւ այդ սիրտը կը ցաւէր, որովհետեւ մերժուած էր ան, անարդուած էր, պարապ տիկի մը պէս նստուած՝ ուրիշներու արգահատանքին: Եւ այս բոլորին պատճառը մեծ հարսն էր, քանի որ ան էր յանցաւորը, անպատկառը, շոշորթը, ծուռ բերանը: Իր ի՞նչ մեղքն էր. իր ամբողջ ուզածը թոռնիկին կնունքին ներկայ ըլլալ էր. բայց այդ աճապարանքին մէջ մոռցած էր արդուկիչին քովէն տարատը բերելու, եւ այդպէս դացած էր՝ «աս իմ տունս է» խորհելով. եւ ահա, հոն է որ դորժուած էր սխալը, որովհետեւ այդքան օտարներուն մէջ, եւ անոնց ներկայութեան սկզբէ

այդ ցիցը դէմը ցցուելով՝ «Աւելի մաքուր բան մը չունէի՞ր հագուելիք» ըսած էր. բայց տղան ալ ունէր յանցանքի բաժին մը, քանի որ «դետին անցնելիքին» կողքին կեցած, «Փափա՛, Ալիսը իրաւունք ունի» ըսած էր առանց խալնելու, առանց շիկնելու: Ի՞նչ օրերու հասար Նիկողոս. օ՛Փ, օ՛Փ, օ՛Փ...:

2

Հովը կը քալէր փողոցներէն՝ սառնախառն ճանկերը սրելով. իսկ Նիկողոս, արեան շրջանը դիւրացնելու համար, սրունքները խաղի կու տար՝ մտածումը սիրտին զարկերուն հետ հաշտեցնելով: Սիրտովը կը զբաղէր, որովհետեւ շատ ցուրտ էր, եւ ինք ճիշդ հոն, մայթին վրայ, հոսանքին դուրսին ձգուած, մանուկներու՝ որոնք կը ցատկոտէին անտէր դառնուկներու միամտութեամբ

Նոյն պատարագն էր կրկնուողը՝ ետեւէն սկսելով այս անգամ: Բայց Նիկողոս պէտք ունէր անոր, արքայութեան հետ հաշտուիլ փորձողի մը չափ. պատարազը չէ որ կը զբաղցնէր զինք, թէեւ պատճառի մը որոնումը չփոթութեան տեղի կու տար, եւ որքան որ ան կը ջանար վանել մտածումին առջեւ թառած աղտոտ միջատը, այնքան աւելի կը մխրճուէր անյութութեան մէջ՝ ճամբան կորսնցուցած հաւատացեալի մը պէս:

— Ծո՛ւտ ըրէք. չո՛ւտ անցէք. իրարու ձեռքէն բռնեցէք, բայց զիւրար մի քաշէք. ծօ՛ լակոտ, լեզուդ կը սառի՛ հիմա, ինչո՞ւ դուրս կը հանես միսի այդ աղտոտ կտորը:

Իրլանտացիի զաւակ էր, որովհետեւ այդ տարի-

քին իսկ խմբիչքի հոտը կը բարձրանար հագուստներէն...

Այո՛, իրապէս դաժան էր կեանքը. տաժանակիր: Այլապէս Նիկողոս նստած պիտի ըլլար սենեակի մը ամենէն տաք անկիւնը, եւ Եսթերին հետ քակէր հին օրերու դեղնած կծիկը. բայց իրենցը քուրջէ պիտի ըլլար, հետեւաբար գերծ՝ դեղնելու վտանգէն: Բայց առանց Եսթերին տունը պարապ էր. սենեակները դատարկ, ինքն ալ սնանկացած հոգեկան բաւարարութենէ, կուշտ ու կուռ խնդալու հաճոյքէն. եւ ինչ որ մնացած էր այդ օրերէն՝ ան ալ սրբուած, ջնջուած էր փոքր հարսին անէծքով. «Պղտիկները մի պաղներ, միքրոպ կ'առնեն»: կարծես հիւանդութիւն ըլլար հոգիին ծալքերէն քակուող այդ համբոյրը, գորովը, խանդադատանքը ամբողջ: Այո՛, կարճ նախադասութիւններով երկար բաներ կը պատմէին անոնք. կ'ուզէին հասկցնել որ իր ներկայութիւնը հաճելի չէր, բողբոջ չէր: Եւ ինք, այո՛, զաղթական Հայը, այնքա՛ն սիրտ դրած էր իր խօսքերուն մէջ, համոզիկը դարձնելու համար բառերուն իմաստը, այնքա՛ն դուրանք տածած էր իր դաւակներուն հանդէպ, որպէսզի անոնք հայ աղջիկներ առնեն. «օտարէն խէյր չկայ» ըսած էր. «անոնք տուն կը քանդեն, հեռու կեցէք» ըսած էր, արեան ձայնին ոյժ տալով: Եւ անոնք, իրաւամբ ալ ամուսնացած էին Հայերու հետ. բայց արարողութենէն ետք, ալ չէին ուզած լսել իր ձայնը, որովհետեւ կ'ինքնը աւելի բարձր կը խօսէին, ականջիդ թմբուկը պայթեցնելու սստիճան:

Մանուկներուն վերջին խումբը անհետացաւ քովնախի փողոցին մէջ. կէսօրուան մսկոտ արեւը հողին չհասած կը սառէր օդին մէջ, ջերմութեան խարկանքը տալէ ետք դիմացինին: Նիկողոս նոր տաբատ մը անցուցած էր վրան, պաշտօնական հանգամանք մը տա-

լով օրուան, թէեւ ներդաշնակութիւնը աւրողը փողկապին վրայի իւղի կաթիլն էր, շիւ աչքի մը երեւոյթով չըջանակ մը, որ անպիւթութենէ աւելի հոգածութեան պակասը կը յայտարարէր: Եւ պատճառ ունէր այնքան կոկիկ երեւնալու, որովհետեւ Մերին ճաշի հրաւիրած էր ոստիկանը:

— Վերջին խումբը արձակուեցաւ, ա՛յ մի սպասեր:

Մերին էր, պատուհանին աղանին:

— Հա՛, ես ալ կու դայի արդէն...

Եւ երաւ վեր՝ մտածումները մանուկներուն հետ տուն զրկելով: Եւ հետը տարաւ ինչ որ մնացած էր. այսինքն՝ մտածումը: Բայց Մերին աւելի աղուորցած կ'երեւէր. վարսայարդարէն նոր վերադարձողի պըշրանքով մը: Կուրծքին վրայի յաւիտենական ճեղքը բարի նիշի մը պէս ուշադրութիւն կը հրաւիրէր, իսկ թեւերուն շարժումը խաղի կը բերէր լաւ խնամուած միսերը, որովհետեւ խոհանոցին մէջ էր, եւ ստիպուած՝ ճարտարութիւնը ցուցաբերելու:

— Ճաչէն առաջ հատ մը կը կոնծե՞ս. դիտեմ որ ստած ես:

— Գէչ չ'ըլլար կարծեմ. ցուրտը թափանցած է սկիորներուս մէջ:

Սկիորները առաւ եւ բազմեցաւ հիւրանոցի ամենէն կակուղ բազկաթոռին մէջ: Յետոյ եկաւ Մերին՝ խոհանոցը հետը բերելով: Որովհետեւ միսը կը խորովէր փուռին մէջ:

Առաջին բաժակը քիչ մը դժուարութիւն քաշեց. կոկորդը սառած էր: Նախ խմեցին իրարու կենաց, զա՛տ-զա՛տ, հատ մը Մերինն եւ հատ մըն ալ Նիկողոսին: Երրորդ բաժակը մանկական դուարթութիւն մը պարզեց ոստիկանին, տօնական օրերու խոստումը յարգելով:

— Այս ալ մեր կենացը, Մերի, աղուորս :

Եւ այդ բոսիւնն պատահեցաւ անակնկալը . փուռը կրակ առաւ՝ միսին իւղէն օդտուելով : Եւ այդ չփութեան մէջ, տարօրինակ յուզումներ ապրեցաւ Նիկողոս, անմիջապէս որ կնոջ թեւերը զգաց վիզին շուրջ, կակուղ կուրծքերը կուրծքին վրայ, բայց ծանրութեան տակ ծունկերը կքեցան եւ գիրկընդխառնուած ինկան դորդին վրայ...

— Խենթ մի ըլլար, Նիկողոս, զաւակներու, թոռներու տէր ես, լսողը ի՞նչ պիտի ըսէ . այս տարիքէն ետք ասանկ բան կ'ըլլա՞յ...

— Եսթերս դնաց, տունս քանդուեցաւ . առանձին չեմ կրնար ազրելի . պարապ կը զգամ . պարապ . տունը պարապ, հոգիս սրբապ . ես կին մը կ'ուզեմ...

Պօսակցութիւնները երկարեցան՝ վտանգաւոր դարձուածքներ ստանալով : Նախադասութիւնները կըրկնուեցան իրարու ետեւէ, որովհետեւ միեւնոյն սաստկութեամբ կը խօսէին բոլորը միաբերան : Որքան փորձեց իր ձայնը լսելի դարձնել, այնքան աւելի խնդրուեցաւ կոկորդը . բայց Նիկողոս տեղի տալու տրամադիր չէր . այդ համոզումով ալ, առնականութիւնը հաւաքեց արժոններուն վրայէն՝ թոքերը օդնութեան կանչելով :

— Գիտեմ որ կերածս խալք է, ան ալ մեծ տեսակէն, բայց մէյ մը նայեցէք դուք ձեզի, այո՛, աղուո՛ր մը նայեցէք սա մարդուն զոր մեղադրելու կ'ելլէք՝ մոռնալով որ քանի մը տարի ետք անոր երեսն ալ պիտի չտեսնէք, որովհետեւ, որովհետեւ...

Հոս, խեղդուկ ճիւղ մը փրթաւ Նիկողոսին փրփրած

կոկորդէն, որովհետեւ երակները կապուեցած էին վիզին երկայնքին, եւ ընդվզումը կը մագլցէր զիմացի պատէն : Եւ այդ պատին վրայ էր Մարիամ Աստուածածինին պատկերը՝ ամենէն աղաչական դիրքով . Մանուկը խլուած էր անոր գիրկէն :

— Ըսի՛, քանի մը տարի ետք պիտի չտեսնենք զիրար, որովհետեւ աղուոր պատճառ մը ունիմ այդպէս կարծելու . նոյնքան զօրաւոր կասկած մը, որ ձեռքէ չինկած ձերանոցի մը չորցած մէկ անկիւնը պիտի տարուիմ, քանի որ զաւակներ ունիմ, բայց, առանձին եմ, այո՛, առանձին... հապա, դո՛ւն, Միսաք, դուն որ թեթեւօրէն կը ջարդես, վաղը քու պայք ալ կը տեսնեմ, քու զաւակներդ իմինէն լաւ չեն . Խաթունը չթաղած՝ դուն ալ չունչդ պիտի առնես հոն, այո՛, բոլորիս ալ տեղը հոն պիտի ըլլայ . Սեդրակ, Սահակ, Վահան, Ղուկաս :

Բայց Ղուկաս անակնկալի եկաւ . իր անունը չէր ուզեր տեսնել զժբախտներու ցանկին մէջ, ատոր համար բողբոջեց, ընդվզեցաւ՝ վերադրումը անտեղի համարելով :

— Զէ՛, Նիկողոս, այս ըրածդ չհաւնեցայ . իմ զաւակներուս մասին ատանկ պոչ պոչ չես կրնար խօսիլ . չես տեսնե՞ր թէ ի՞նչպէս կը յարգեն զիս . հապա հարսերս, հապա՞...

— Այո՛, կը յարգեն քեզ, որովհետեւ զիտեն աղտոտ բնաւորութիւն ունենալը . զիտեն նաեւ որ մեծ դումար մը ունիս դրամատան մէջ, եւ կրնաս զիրենք զրկել ժառանգութենէ, այլապէս՝ քեզ ալ կը դնեն քուրջի կտորի տեղ :

Ասեղը հասաւ ճիւղ կողէն, եւ ուռած տիկի մը պէս սմքեցաւ ինքն իր վրայ Ղուկաս :

— Աղէկ ամմա՛, եթէ անպայման կարգուիլ կ'ու-

դես, ինչո՞ւ հայ այրի մը չես առներ. քոսուսի պէս կրննր կան, քեզի լաւ հոգ կը տանին, Եսթերը յիշել կու տան,— ըսաւ Թորոս՝ քիչ մը տատամսելէ ետք:

— Հա՛, լաւ որ յիշեցիր. այրիներու մասին կը խօսիս, բայց չես ըսեր թէ ո՞ր մէկը. երկու տարի եղաւ Եսթերը հողը յանձնելուս, տակաւին ժպիտ մը չտեսայ անոնց այտերուն վրայ, ժպի՛տ մը: Մերին լաւ կրն է. տաք սիրտ ունի, տա՛ք...:

Վիճարանութիւնը շարունակել աւելորդ սեպեց Վահան, եւ ոտքի ելաւ.

— Սխալ քայլ մը չառած, լաւ մտածէ, ըսաւ:— Օտարին աղէկը չ'ըլլար, անոնց տակը պահուածը դուն չե՛ս գիտեր. հայ այրի մը առ, դժբախտ մը երջանկացուր, — եւ պնդեց իր համոզումին վրայ, դուրս չեկած:

Բայց ամենէն խղճային Ղուկասն էր. բերանը չըզթայի տուած էր կարծես, եւ սիրտը կը զարնէր պայթելու աստիճան. «Երանի՛ եկած չըլլայի. թաւլուն ուրիշ տեղ մը խաղայի», ըսաւ մտովի, ինքնիրեն եւ նայեցաւ Նիկողոսին. դժոտ չէր նայուածքը, բայց ատելութիւն ալ չկար անոր մէջ. աչքերուն տակ կախուած էր միտը, շրթունքի նման, բայց ատելութիւն ալ չկար սիրտին մէջ, որովհետեւ մասնաւոր համակրանք մը, յարգանք մը ունէր Նիկողոսին հանդէպ. կամաւոր եղած էին միասին:

— Ծօ՛, մենք շատոնցունէ կը ճանչնանք իրար, գէնք շալկած ենք միասին, — ըսաւ վերջապէս, եւ ոտքի ելաւ երկար օ՛ֆ մը քաշելով, որ պատերը թրթռացուց՝ անակնկալի բերելով զանոնք:

Եւ անյատակ պարապութիւնը բացուեցաւ սենեակին ճիշդ մէջտեղը. Նիկողոսը ձեռքերը ծալլեց եւ նրստեցաւ անոր աջ եզերքը:

Չէ՛, առաջուան մարդը չէր այլեւս. յանկարծաւ կան լքուածութիւն մը եկած էր վրան՝ անճանաչելի դարձնելով էրիկ մարդը, Նիկողոսը: Քայլերը կ'առնէր նոյն համարձակութեամբ, քիչ մը ճիղով, բայց առողջութիւնը տեղն էր անկասկած: Իսկ ընդհանուր երեւոյթին մէջ բան մը կար փլած, քայքայուած: Նոյնիսկ փողոցի մանուկները, լակոտները նշմարած էին այս փոփոխութիւնը, եւ հիմա, աւելի համարձակութեամբ դուրս կը հանէին իրենց լեզուն, ան ալ ճամբուն ճիշդ մէջտեղը, դպրոց չհասած:

Բայց առաջին վեց ամիսը անցած էր շատ խաղաղ. նոյնիսկ իր ակնկալածէն աւելի երջանկութիւն պարգեւելով իրեն. Մերին մէկ հատիկ էր, սիրունիկ էր, անկողինի կին էր: Թէեւ այս պարագան քիչ մը նշմարելի եղած էր զիտողներուն կողմէ, որովհետեւ Նիկողոս պահ մը մոռցած էր նոյնիսկ Եսթերը, նախանձը շարժելով Սերորին, որ անընդհատ կը կուռէր կնիկին հետ՝ զոհացում չստանալուն անկէ:

— Առաջին օրերուն ես ալ դէմ էի այս ամուսնութեան, բայց քու երջանկութիւնդ տեսնելով երանի կու տամ քեզի, Նիկողոս:

Նիկողոս չէր պատասխանած, չէր ուզած վերաւորել դժբախտ մարդը՝ թոյլ տալով որ Սերորին երեւակայութեան մէջ մեծնայ ինք, հարստանայ բացառիկ կերպով: Եւ իրապէս ալ, երջանիկ պահերը անսրկաս եղած էին. Մերին կատարեալ կին էր. հոգ կը տանէր իրեն գիշեր թէ ցերեկ. բայց կրակի դունդ մըն էր, մանաւանդ ցուրտ օրերուն: «Շատ, չափազանց առատ էր, իրաւ ըլլալու համար սա երջանկութիւնը» ըսած էր Նիկողոս այդ օրերուն, առանց անդրադառ-

նալու, նոյնիսկ առանց դիտակցելու որ բնազդաբար արտասանուած այդ բառերը իմաստ պիտի առնէին վաղուան կասկածէն. եւ այդ կասկածն էր որ զինք կը մղէր ենթադրութիւններ ընելու, եւ աւելի գէշը՝ դրացիին բամբասանքները մտիկ ընելու:

— Աչքերս բռնաւ, եթէ իրողութիւնը տեղն ու տեղը չպատմեմ. ամուսինիս գերեզմանին վրայ երդում կ'ընեմ, Նիկողոս, որ չար լեզու չէ ունեցածս, թէ եւ անունս այդպէս հասած է Նազլին, բայց ատոր պատմութիւնը ուրիշ բան է, անոր ալ հախօն կու դամ, արեւոտ օր մը: Դուն ինծի մտիկ ըրէ, ես ամէն ինչ կը տեսնեմ, ան ալ գոց փեղկերու ետին. դիտեմ ցուրտ է, բայց պիտի չխեղդուինք ետ, երբեմն վարագոյրը վեր կ'առնեմ փողոցը դիտելու համար. առանձնութիւն է, Նիկողոս, հոգի մաշեցնող առանձնութիւն, հիմա որ թագուկն ալ հիւանդ է, ալ անոր տունն ալ չեմ կրնար երթալ. հիւանդին հետ ի՞նչ չարախօսես. օրէնքի դէմ է, օրէնքի: Եւ պատահեցաւ ամէն ինչ. ճիշդ ըսածիս պէս. զիս մի մեղադրեր, ես ի՞նչ յանցանք ունիմ ասոր մէջ, պատճառը դուն դիտնալու ես, դո՛ւն, Նիկողոս. կինը քուկդ է, տունը քուկդ. եթէ աւրուած, փտած բան մը կայ, ան ալ քու վիզիդ, մաւալը քու հաստ վիզիդ, Նիկողո՛ս, որովհետեւ այս կինը տեղն ու տեղը պոռնիկ է. քա՛, ինչպէս դուրս ելաւ այդ բառը բերնէս. թռչունի պէս թռաւ բերնէս, Նիկողոս, ա՛՞Ք կ'ընես. ես վարժուած չեմ բողբոլու յիշատակութիւնը ընելու, բայց այս մէկը ալ չեմ կրնար կլլել. ան ալ ցերեկ օրով, դուռ-դրացիին դիտակցութեամբ: Ըսի՛, Նիկողոսին պիտի պատմեմ. գերեզմանին վրայ երդում ըրի, որպէսզի այս ծանր մեղքը վերնայ մեր փողոցէն, դրախտի պէս փողոց էր այս մէկը, Նիկողոս, դուն այդ պոռնիկը բերի, աժան շուկայ դարձաւ այս պողոտան. ամէն ոք կը մտնէ, հրաւերի

տախտը ընող չկայ, Նիկողոս, աչքերդ չո՛րս բաց... եթէ պէտք ունիս, իմի՛նս ալ փոխ կու տամ, միայն տես իրողութիւնը. այս կինը մարդ կը բերէ կոր տունը, մա՛րդ. ան ալ՝ քոսուկն պէս երիտասարդ մը:

Եւ ախորժակով, սրտակերպազարդ բացատրութիւններով պատմեց Սրբուկ, մասնաւոր ուշադրութիւն դարձնելով մանրամասնութիւններուն, որպէսզի Նիկողոս փլի, զետին անցնի եւ իր մէջ փնտռէ մտերիմ մը. ուրիշ վարձատրութիւն չէր ուզեր. Նիկողոսին քայքայուիլը իր պարզեւը պիտի ըլլար, որովհետեւ առաջին օրէն իսկ, եսթերին մահէն ի վեր, Նիկողոս կարեւորութիւն չէր տուած իրեն. միթէ՞ ինք արժանի չէր վերջալոյսի երջանկութեան. Սեդրակէն ի՞նչ տեսած էր որ. եթէ պատմէ՝ սիրտդ կը փշուրի, այո՛. երկուքի կը բաժնուի սիրտդ ճեղքուելէն ետք: Եւ ահա, առիթը ներկայացած էր. երկու երկու ալ չորս կ'ընէ, Նիկողոս, ինծի Սրբուկ կ'ըսեն. վրէժ չէ առածս, այլ քու հոգիդ, ապրելու, երջանկանալու եւ շնչելու իրաւունքը, Նիկողոս. ես վրէժխնդր կ'իմ մը չեմ. հարցուր Փիթըրին: Եթէ հարսը փախաւ՝ տղան էր յանցացուր Փիթըրին: Եթէ հարսը փախաւ՝ տղան էր յանցացուր, ես մատ չունէի այդ խնդրին մէջ, որովհետեւ դրացիի պարտականութիւնս կատարեցի՝ հարսին կարգ մը տեղեկութիւններ տալով ամուսինին սիրուհիներուն մասին. այդքանը թուրքին ալ կ'ընեմ, թո՛ւրքին:

Բայց այդքանով չէր գոհացած Սրբուկ. դունազեղ բացատրութիւններուն միացուցած էր վհուկի իր անկեղծութիւնը եւ լեռնէն փախած դիւհարի մը պէս կատարած էր. տեղն ու տեղը ճաթած բարկութենէն, երբ օ՛Ք մը քաշելու պատրաստութիւնը տեսած էր Նիկողոս, անդիտակցաբար, բնազդաբար: «Ձէ՛, ես քու դասը կու տամ, խո՞թած ձերուկ» ըսած էր Սրբուկ, եւ այս անդամ նոր թափով, ախորժակով նկարագրած

էր թէ Մերի ինչպէս, «գործողութենէն» ետք ալ պատուհանէն կախուած էր, մերկ կուրծքերը վար թափելով համբոյրներ նետելու՝ փողոցին անկիւնը անհետացող երիտասարդին: Եւ իրաւ ալ նետած էր. սապէ՛ս:

— Սո՛ւս եղիր. սո՛ւս եղիր, շոշորթ. հիմա քեզ ոտքերուս տակ կը փշրեմ, սատկելի՛ք պառաւ:

— Այդքան էրիկ մարդկութիւն ունիս նէ զնա, այդ բող կինդ սատկեցուր, — պատասխանած էր Սըրբուկ՝ եփած ապուրին մէջ խոշոր ճանճ մը նետելով:

Վերջիշումի այս անհաճոյ ընթացքը զինք հեռուները տարաւ. բայց թմրութենէն ինքզինք քաշելով մասձումին մէջ որոնումներ կատարեց. փորձեց յիշատակ մը գտնել հոն, մութ ամպերը ցրուելու համար, բայց աւելի մխրճուեցաւ կասկածին մէջ, եւ սիրտէն բացուած մէկ հատիկ վարդն ալ թառամեցաւ, որովհետեւ ցուրտը վրայ հասած էր եւ արմատը չորցուցած՝ ճիշդ յատակէն, ամենէն վարի մասէն: Եւ հիմա, ինք, աշնան դեղնած, անուժ տերեւի մը պէս կը դողար՝ մոռցած ըլլալով վերարկուն հագնիլ:

Ճամբուն անկիւնը կանդ առաւ Նիկողոս: Մանուկները եկան ու մեկնեցան ձախ կողմէն. առաւօտ էր, բոլորին համար: Ինք կը խարխափէր մութին մէջ անծանօթին հետքը գտնելու վճռակամութեամբ: Բայց մանուկները դարձեալ եկան, այս անգամ աջ կողմէն, քանի որ կէսօրը անցած էր. ժամերը հոսած՝ մտածումին աւագանին մէջ: Չուզեց տուն դալ. թմրութիւնը այնքա՛ն հիւրասէր էր, այնքա՛ն զորով ունէր բաշխելիք, նոյնիսկ աղքատին, բոպիկ ոտքերով լակոտին, որ կօշիկը ծախած էր համբոյրի մը համար: Մայթին ճիշդ շրթունքին, յիշատակի մը վրայ կը

բարձրանար Մերիին հին տունը. պատուհանը բաց էր կոնակին վրայ, բայց Նիկողոս չուզեց նայիլ, չուզեց ետ դարձ մը ընել՝ խորապէս մխրճուած ըլլալով հին օրերու տիղմին մէջ, որովհետեւ լեռնցիի հողին սաւառնելու փորձ մը կ'ընէր, բայց թեւերը թրջուած էին, ծանրացած՝ մեկուսացումի զաղջ ջուրերուն մէջ: Քալեց արագ քայլերուն կշտոյթը քաշելով մայթերուն վրայէն:

Մերին նոյնն էր. խոշոր ժպիտը դիրուկ այտերուն վրայ, աչքերուն մէջ, որոնք դոհացումի ճառագայթներ կը ցոլացնէին առանց հրաւերի՝ զաղտաղոյի հաշիւներ ընելով: Նիկողոս զիտէր անոր ուրախութեան պատճառը. բայց զիրքը չաւրեց, կացութեան մէջ ոչինչ փոխուածի դիմակ մը անցուց ոսկորներուն վրայ եւ նոյնիսկ փորձեց կատակ մը ընել՝ մտերիմ մասերը փնտռելով կնոջ: Այսքանը բաւարար էր դրացիին շունը կատղեցնելու, Սըրբուկը պատուհան նետելու՝ մազնիսէ քաշուածի պէս: Որովհետեւ գայթակղութիւնը տարօրինակ անկիւնադարձներ կը չափէր՝ կանգ առնելով պատուհանի մը տակ, ուր ազտօտ լաթեր փռուած էին՝ տօնական օր մը յիշեցնելով:

**

Որեւէ դժուարութիւն չունեցաւ լուրը տարածելու համար Սըրբուկ: Այս իրականութեան զիտակից էր ան, բայց չմոռցաւ փէշերը հաւաքել եւ փողոցին դռները ափ առնել՝ ոստում մը ընելով Նազլիին վրայէն, որովհետեւ կ'ուզէր ճաթեցնել զայն՝ համոզուած ըլլալով որ նման տեղեկութիւն մը շատ հաճելի՛ պիտի թուէր անոր: Վրէժը լուծած էր այսպէս:

— Քա մի ըսեր, վա՛յ բռնամ. այս օրե՞րն ալ

տեսնէինք. ի՞նչ ժամանակներ են ասոնք. ի՞նչ ժամանակներ...

— Եղո՞ւս, լսեցի՞ր...

— Նիկողոսին նոր կինը բող է եղեր, բո՞ղ...

— Հալալ ըլլայ իրեն, հալա՛լ. իրեն ո՞վ ըսաւ որ օտար մը առնէ, նետէ ներս. մեղի ինչ եղեր էր, ի՞նչ...

Եւ լեցուեցան, ուռեցան, յորդեցան պարապ օրերը լքուած այրիներուն: Աթոռները սեղմ շրջանակ մը կազմեցին, սուրճի ամանները քանի, քանի՛ անդամներ յատակը չափեցին, բայց չափազանցութենէ խուսափեցան անոնք, սա տեսակ եզրակացութեան մը յանդէլով, քանի որ տեղեկութեան բուն աղբիւրը անհետացած էր իրարանցումին մէջ, եւ հակառակ ճիշդութեան, Սրբուկ անտեսուեցաւ աղմուկէն քշուելով:

— Սիրահարը տուն եկած է... (ամէնը՝ ականջ) բռնած ու դուրս նետած է Նիկողոսը, իր ներկայութեան աղտոտ, չըսուելիք բաներ ընելէ ետք. բառ մը աւելցուցած չեմ. քոռնամ եթէ ճշմարտութիւնը եղածին պէս չպատմեմ: Այս խօսքերը այնքան հաճելի թուեցան Սրբուկին որ ապշեցումի փոքր նշան մը իսկ ցոյց չտուաւ, քանի որ իրողութեան միակ տէրը ինք էր, բայց տրուած այս վերջին բացատրութիւնն ալ հաւանական կը թուէր ըլլալ, դոնէ ասանկ օրերուն, երբ զգացումներ ցնցուած են:

Լքուած, անտեսուած, աղիտութեան անձնատուր եղած կիներու խմբակ մը կայ, որ ամենէն մանր, աննշան, երբեմն նոյնիսկ ցաւառութիւն զէպք մը հողիի սնունդ կը դարձնէ՝ անով առաջնորդելու համար տկար ու վատուած սիրտը չորցած, որովհետեւ անոնք, իրենց կենսունակ օրերուն, երիտասարդի տարբարկան վա-

յէլքը ծախած են դործարանի մը անէծքով, անընդհատ մանուկներ աշխարհ բերելով, իզական պարտականութիւն մը կատարած ըլլալու դերագոյն դոհունակութեամբ, որովհետեւ միտք եւ մտածում չպահանջող այդ արարքը զիրենք մօտեցուցած է դերմնական արարածին, կատուին՝ որ այնքան ժրջանութեամբ կը կատարէ այդ դերը, կարճ ժամանակ մը ետք ճագերէն ճանչցուելու մտահոգութիւնն ալ չունենալով: Եւ այդպիսի շրջանակի մը մէջ էր Նիկողոս, եւ անոր պատիւը, Հայու բաց ճակատը, որուն վրայէն կը քայլն հիմա Սրբուկն ու Նազլին, Հոբիսիմէն եւ Թադուկը, ցեխի շերտ մըն ալ ձգելով հոն, Նիկողոսին պատիւին վրայ:

Վարի թաղէն փչող հովը փոթորիկի վերածուեցաւ վերի թաղ չհասած, Սրբուկին տունէն անցնելու սխալը դործելով. եւ որքան Նիկողոս խուսափիլ փորձեց դայթակղութեան վտանգէն, այնքան աւելի մխրճուեցաւ անոր մէջ, եւ անդիտակցարար, բնազդարար, կամովին: Գիւղը ստացաւ յորձանքի մը կերպարանքը եւ անոր սուր ծայրամասին նստեցաւ Նիկողոս, կամքէն անկախ, այրի կիներու ձեռքով: Բարձրութեան կատարէն երբ փորձեց վարի հոսանքը դիտել, զլխու պտոյտ ունեցաւ, ան ալ դէ՛ չ տեսակէն:

— Սրբուկ, Սրբուկ, ի՞նչ ըսեմ քեզի որ անունս մէկ փարայի իջեցուցիր, մէ՛կ փարայի. ես ասանկ իրնալիք մարդ չէի, բայց քայքայեցիր, տունս զլխու փլեցիր, սատկելի՛ք արարած:

Մէկ հարուածով կոկորդէն վար նետեց սուրճի վերջին կաթիլը. հաշիւը փակած էր Սրբուկ: Եւ հիմա, Ուոթըրթաուըն կը մխրճուէր իր ամենէն նախանձելի խաղաղութեան մէջ:

Լորձունքախառն համբոյր մը դրոշմեց ճակտին եւ գուռը ամուր մը դոցեց ետեւէն. յետոյ անմիջապէս ելաւ պատուհան եւ ձայնին մէջ ողորմելի քաղցրութիւն մը դնելով սա տեսակի բառեր դլորեց ձիւնին վրայ.

— Նի՛ք, չմոռնաս ապսպրանքներս, կ'ուզեմ որ թողթին վրայ արձանագրուած ապրանքները անպայման բերես. անկէ ալ Սերոբենց անցիր, հասկցիր տեսնենք թէ ի՛նչպէս եղած է խեղճ մարդուն կիներ...

Մերին էր անշուշտ:

Ինչպէ՛ս պիտի ըլլար Սերոբին կիներ. պատահածը մեծ բան մը չէր արդէն. ստոած ձիւնին վրայ իյնալով կտորած էր երկու սրունքները, քիչ մըն ալ վնասելով կոնքը, որ հաւանաբար բանի չէր դար, ցաւերու բոցն մը դարձած ըլլալով. բժիշկը շատ կը մտահոգուէր թէեւ. Հայկանոյշ եօթանասունը անցած էր, եւ սիրտն ալ իրը չէր ամբողջութեամբ: Նիկողոս գիտէր այս բոլորը, որովհետեւ Սերոբ պատմած էր իրեն, թաւուին կոճակները սխալ գիծերու վրայ դնելէ ետք՝ յանցանքը հիւանդ կնոջ սիրտին վերադրելով. թէեւ արկածէն առաջ ալ նոյն յանցանքին մէջ բռնուած էր, բայց հիմա արդարացուցիչ պատճառ մը ունէր, ինչպէս Նիկողոս կասկածելու՝ իր կնոջ անկեղծութեան վրայ: Անկիւնը դարձած պահուն հովը ետ մղեց զինք, որովհետեւ կը ձիւնէր՝ փոթորիկի մը խոստումով:

Սոստումը դրժող մը չէր Նիկողոս. արժանապատուութեան տէր մարդ մըն էր ինք հակառակ պարագաներուն, որոնք թերահաւատ ըրած էին զինք, պայմաններուն պատշաճեցնելով քայլերուն ուղղութիւնը, որ նիզակի մը պէս արձակուած էր այդ պա-

հուն՝ շուրջպար բռնած յորձանքին դէմ: Ընդդիմանալ չէր ուզեր թէեւ, հակառակ դժգոհութեան որ հողիին մէկ անկիւնը կը նստէր մեկնիլ չուզող հիւրի մը պէս: Յանցաւորը դժգոհ սիրտը չէր անշուշտ, այլ այդ անկիւնը հողիին մէջ, որ կը հիւրընկալէր վտանգաւոր այդ զգացումը: Որովհետեւ Նիկողոս գիտէր թէ ինչ կը խօսուէր իր ետեւէն՝ շրջապատուած ըլլալով վատերէ:

Ճիշդ հոն էր դարձեալ: Ճամբուն աջ եզերքը, մայթէն հինգ ոտք հեռաւորութեան մը վրայ, ուր ձիւնը աւելի երկշոտ էր, հովին պատճառով: Մանուկները չէին գար սակայն: Դիմացի պատուհանէն ծերուկ կիներ լուրը հաղորդեց՝ աչքին մէկը Նիկողոսին վրայ մոռնալով: Ան ալ տեղեակ էր պատահածին, ինչպէս ոստիկանապետը, որուն առջև սիրտը բացած էր Նիկողոս, եւ հոն դանտուածը պարպած՝ քիչ մը շուարուժով, որովհետեւ լեռնցիի արժանապատուութիւնը զգաստութեան կը հրաւիրէր զինք: Բայց Իրլանտացին հողածութեամբ ականջները յանձնած էր Նիկողոսին՝ ատենը մէյ մը «հոգ մի ըներ» մը նետելով նախադասութեան մէջ, միջակէտէն ետք: Բայց Նիկողոս քաջալերուած մարդուկին ցոյց տուած հետաքրքրութեանէն, ամօթխածութիւնը մէկդի դրած էր ձեռքի հարուածով՝ «Եթէ առիթը ներկայանայ, ես կը սատկեցնեմ այդ բոլոր» ըսելով: «Իրաւունք ունիս, վախնալու պէտք չունիս. միայն յանցանքի վրայ բռնէ այդ պոռնիկը» շեշտած էր ոստիկանապետը՝ մատները ճաթը տեցնելով, որովհետեւ մատիտով մը կը խաղային անոնք: «Հաւանաբար ան ալ նոյն ցաւէն կը տառապի» մտովի եղբակացուցած էր Նիկողոս, որովհետեւ խման դրած էին ոստիկանապետին կնոջ անունը՝ կապելաներու մէջ գիշերելուն համար: Այս պարագան ծանօթ էր բոլորին, եւ հիմա, անոր մէջ մտերիմ մը գտած ըլլա-

լու հրճուանքը կ'ըմբռնուի Նիկողոս, վստահ ըլլալով որ շահած էր անոր աջակցութիւնը, եթէ ոչ դորժակցութիւնը:

Դպրոցը փակ պիտի մնար նորէն, փոթորիկին պատճառով:

Իջնող ձիւնը մաքրած էր ամէն ինչ. վարի եւ վերի թաղեցիները իրենց վէճը թաղած էին ճերմակ վերմակին տակ, որովհետեւ բոլոր տուներն ալ իրարու կը նմանէին իրենց ամօթը ծածկած ըլլալով: Նիկողոս փողոցէն դուրս ելած պահուն այնպիսի ակնարկ մը նետեց մայթերուն որ մտածումը երկրաշարժի մը ցընցումը ապրեցաւ. ըսելիքը մոռցած էր ան, բայց ասոր կարեւորութիւնը երկար ատեն իր հետ պտըտցուց, քանի որ շատ առանձին կը զգար, մանաւանդ ասանկ օրերուն, երբ մարդիկ քաշուած են շոգի կապած փեղկերուն ետին, եւ միայն մանուկներու աղմուկն է կենդանութիւնը ապացուցանող: «Մնչպէս ըլլայ նէ, փաստ մը կը գտնեմ» մտածեց Նիկողոս՝ կարմիր լոյսը արհամարհելով: Համբերութիւն կը պահանջէր լոյսերու փոփոխութիւնը եւ ինք ժամանակ չունէր: «Սրբուկին ըսածին մէջ ալ ճշմարտութիւն մը կայ» շարունակեց մտածել եւ այդ ճշմարտութեան ապաւինելով ճամբուն միւս կողմը անցաւ ան՝ խանութ մտնելու համար. խանութէն ներս մտաւ, որովհետեւ գրպանին մէջ էր Մերիին ցանկը, ինչպէս մտածումին մէջ՝ մոռցուած նախադասութիւնը:

Խանութպանը յանդիմանական նայուածք մը նետեց Նիկողոսին, որովհետեւ հայ էր ան. կիներ փախած էր դրացիին տղուն հետ, բայց յանցաւորը ինք չէր, տարիքը մոռցած ըլլալուն. երիտասարդ կին մը գոհացնելու կարողութիւնը փրած էր իր մէջ, դիմացի պատին պէս, որուն վրայ խոշոր թուղթ մը փակցուած էր՝

ճեղքը ծածկելու համար: Բայց հակառակ այդ դէպքին, ծախած ապրանքներուն շնորհիւ, համայնքը շուտով մոռցած էր այս դայթակղութիւնը, քանի որ Սեդրակին ծախած պանիրը մէկ հատիկ էր իր տեսակին մէջ, եւ դինն ալ՝ նպաստաւոր: Եւ այս պատահութեանն օգտուելով, Սեդրակն ալ միացած էր միւսներուն՝ Նիկողոսին պատիւը հինգ փարայի իջեցնելու հաստատակամութեամբ: Եւ հիմա այս նայուածքը, որ մեռելներն ալ կը սարսուցնէ: Նիկողոս կենդանի էր հարկաւ, եւ ասոր որպէս ապացոյց ցնցուեցաւ՝ անակնկալէ բռնուած. բայց իրեն համար սովորական դարձած էին այդպիսի ընդունելութիւններ՝ շնորհիւ Սրբուկին, որ թաղապետ նշանակուեցաւ վերջին դիւտէն ետք:

Մտքը անութիւն տակ, դուռտի մը պէս դլորեցաւ մայթին վրայ: Մեռելաթաղին առջեւ սղակիրներ նոր նիւթ մը դասն, Նիկողոսին հաշուոյն: Վերի թաղէն հովը փչեց Մարտի կատաղութեամբ՝ Նիկողոսին մտածումը ցրուելով: Բայց չուզեց այցելել Սերոբին՝ հովը պատրուակ բռնելով, թէեւ պատճառը Մերին էր, անիծեալ Մերին: Դուռին առջեւ կանգ առաւ՝ բանալին շօշափելով գրպանին մէջ: Դուռէն ներս պատահածը անքերը խաղի բերաւ, որովհետեւ անա կը վազէր, ճիշդ երեւակայածին պէս. կիսամերկ երիտասարդը կը վազէր՝ խոհանոցին դուռը փնտռելով: Կասկարմիր կարած էր Մերին, քանի որ երակները պատուելու աստիճան կը պոռար, անհասկնալի, վերացական բռնորարտասանելով, սա տեսակ ճառ մը խօսելով.

— Քեզի ըսի որ Սերոբին ալ այցելէ՛... խանութ դնա... բայց ինչո՞ւ այսքան կանուխ եկար... եկա՞ր... եւ աւրեցիք ամէն ինչ, ամէն ի՞նչ... խոֆած ձերուկ... ձեր՞ուկ... դնա՛, դնա՛, հեռացիք կ'ըսեմ... հիմա պիտի ճաթիմ...:

Իրապէս ա՛լ պիտի ճաթէր, քանի որ աջ ստինքը անդիտակցարար ինկած էր շապիկէն դուրս, եւ ճչոցին տակ հասունցած ողկոյցի մը պէս կը խաղար՝ քիչ մը ձախ թեքելով:

Նիկողոս կանգնած էր դրան առջեւ. կանոյ առած էր նաեւ անոր մտածումը, դատողութիւնը՝ որովհետեւ բնազդով է որ կը շարժէր ան. եւ այդ բնազդը՝ ենթադիտակցութիւնը մարտահրաւէրով մը պատուեց՝ վտանգաւոր բաներ մը փոփոխելով ականջին, զոր չէր լսեր: Եւ ահա ձախ ձեռքը գնաց աջ անութին տակ. աջ անութիւնը նախընտրեց ան, որովհետեւ նոր գնուած ծրարը կը ճզմուէր հոն: Բացառիկ հետաքրքրութեամբ մատները իջան տոպրակին յատակը՝ դուրս հանելով տապակ մը, որ սեւ էր, Մերիին ապսպրանքին վրայ: Եւ հինգ գլխեայ այդ հրէշը սովահարի պէս ինկաւ կիսամերկ կնոջ գլխուն. հատ մը, երկու, թերեւս երեք անգամ: Թիւերը շփոթութեան մատնուեցան, քանի որ արագութեան մէջ ժամացոյցին մեծ սլաքը ափիւրհան եղած էր, շարժելու կարողութենէն զրկուած:

«Ահա այսպէս կը վերջանան այս հարցերը» ըսաւ Նիկողոս, ուշքի գալէն քանի մը բոպէ առաջ: Սթափեցաւ ան, քանի որ դետին ինկած էր Մերին եւ արիւնը կը վազէր ճակատէն, ձախ աչքէն բխելով: Իրարանցումէն օգտուելով ժամացոյցը վերադառած էր իր համարձակութիւնը, որովհետեւ աջ կողմի վրայ ինկած էր կասկարմիր տապակ մը, սեւ կոթով միայն:

Պոստոնի, 1968

(ՎԵՐՋ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

